ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վերլուծական տեղեկագիր

2018Թ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՑԱՆՑԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

№ 12

Երևան – 2018

YEREVAN STATE UNIVERSITY
CENTER FOR CIVILIZATION AND CULTURAL STUDIES

Analytical Bulletin

THE PROCESSES IN ARMENIA IN 2018: NETWORKED THINKING

№ 12

Yerevan 2018

ISSN 1829-4502

Հրատարակվում է ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Համարի գլխավոր խմբագիր՝ Դավիթ Հովհաննիսյան

Խմբագրական կազմ՝ Աննա Գևորգյան, Շուշան Կյուրեղյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան

Խմբագրական խորհուրդ՝

Դավիթ Հովհաննիսյան	բ.գ.թ., պրոֆեսոր, Արտակարգ և լիազոր դեսպան (նախագահ)
Արամ Սիմոնյան	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ,
Ռուբեն Սաֆրաստյան	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Արման Կիրակոսյան	պ.գ.դ., պրոֆեսոր, Արտակարգ և լիազոր դեսպան
Ռուբեն Շուգարյան	պ.գ.թ., Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց, Թաֆթս համալսարան (ԱՄՆ)
Աննա Օհանյան	քաղ.գ.դ. քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների պրոֆեսոր, Սթոնհիլ Քոլեջ (ԱՄՆ)
Սերգեյ Մինասյան	քաղ.գ.դ.
Հայկ Քոչարյան	պ.գ.թ., դոցենտ

© Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, 2018
© Երևանի պետական համալսարան, 2018

ISSN 1829-4502

Published by Scientific Council of Center for Civilization and Cultural Studies

Volume Editor-in-chief: David Hovhannisyan

Editorial Staff:
Anna Gevorgyan, Shushan Kyureghyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan

Editorial Board:

David Hovhannisyan	Professor and Ambassador Extraordinary and Plenipotentiary
Aram Simonyan	Doctor Professor, Corresponding Member of the Academy of Science of Armenia
Ruben Safrastyan	Doctor Professor, Member of Academy of Science of Armenia
Arman Kirakosyan	Doctor Professor and Ambassador Extraordinary and Plenipotentiary
Rouben Shougarian	Doctor, Fletcher School of Law and Diplomacy, Tufts University (USA)
Anna Ohanian	PhD in Political Science, Richard B. Finnegan Distinguished Professor of Political Science and International Relations, Stonehill College (USA)
Sergey Minasyan	Doctor of Political Science
Hayk Kocharyan	Doctor of History

© Center for Civilization and Cultural Studies, 2018
© Yerevan State University, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան
ՑԱՆՑԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 7-17

Նվարդ Մանասյան
ՑԱՆՑԵՐՈՒՄ ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ԿԱՄ ՈՉ ՍԻՆՏԱԿՏԻԿ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 18-38

Նունե Դիլանյան
21-ՐԴ ԴԱՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39-51

Շուշան Կյուրեղյան
ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ 2018թ. ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ. ՔԱՅԼ ԴԵՊԻ ՑԱՆՑԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 52-92

Հասմիկ Փարեմուզյան
ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 93-117

Աննա Գևորգյան
ԻՐԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ 2018թ. ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 118-131

Տաթևիկ Պետրոսյան
2018Թ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ 132-169

Տաթևիկ Մկրտչյան,
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 170-209

CONTENT

Davit Hovhannisyan
NETWORKS AND THE NATURE OF NETSTATE 7-17

Nvard Manasyan
THE POSSIBLE STRUCTURES OF DIVERSIONS OF EXCHANGE BASED OR NON- SYNTACTIC COMMUNICATIONS IN NETWORKS 18-38

Nouneh Dilanyan
EDUCATION IN THE 21ST CENTURY: NETWORKING CHALLENGES AND OPPORTUNITIES 39-51

Shushan Kyureghyan
THE REACTION OF ARMENIAN COMMUNITY OF MOSCOW TO THE SPRING EVENTS IN ARMENIA, 2018: A STEP TO THE NETSTATE 52-92

Hasmik Paremuzyan
THE REACTION OF ARMENIAN COMMUNITY OF KRASNODAR REGION ON EVENTS WHICH TOOK PLACE IN ARMENIA IN SPRING 93-117

Anna Gevorgyan
RESPONSE OF IRAN AND IRANIAN ARMENIANS TO 2018 SPRING EVENTS IN ARMENIA 118-131

Tatevik Petrosyan
2018 SPRING EVENTS IN ARMENIA AND THE REACTION OF THE FRENCH-ARMENIAN COMMUNITY 132-169

Tatevik Mkrtchyan,
THE REACTIONS OF ARMENIAN COMMUNITY IN THE USA TO THE SPRING EVENTS IN ARMENIA, 2018 170-209

ՑԱՆՑԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ[1]

Դավիթ Հովհաննիսյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
dhovhannisyan@ysu.am

Բանալի բառեր՝ *թվային հասարակություն, ինքնություն, ցանցեր, տեքստ, կենտրոն, ինֆորմացիոն հոսքեր, ցանցապետություն*

Բոլոր տեսակի հարաբերությունների հիմքում ընկած է գլոբալ ծրագրերի մրցակցությունը, և այդ մրցակցության մեջ տանուլ տվողները փորձում են խոչընդոտել մյուսներին, ստեղծելով տարբեր դրսևորումներ ունեցող կոնֆլիկտներ, որոնք կարող են ստեղծել ենթակառուցվածքային խցանումներ: Այսպես եղավ Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ դադարեցին աշխատել նախկինում գործող նավթամուղերն ու գազամուղերը, միասնական էլեկտրացանցերի ընդհանուր համակարգը և Խորհրդային Միությունը Պարսից ծոցի երկրների հետ կապող երկաթգիծը:

Մեգատարածաշրջանի առումով հայ-թուրքական հարաբերություններն, իհարկե, «բանալի» հարաբերություններ են, որոնց կարևորությունը ամենահակիրճ և ընդգրկուն ձևով արտահայտվում է գերմանական դասական փիլիսոփայությունից

[1] Հոդվածի հիմքում 2015թ. հոկտեմբերի 29-ին ԵՀՀ կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոցի ժամանակ հեղինակի կարդացած դասախոսության սղագրություն է: Տե՛ս https://gallery.mailchimp.com/fa7bf2f47e720697a732f2b5f/files/CTS_2015_David_Hovhannisyan_Network_state_Oct_31_2015.pdf?mc_cid=68f22af15f&mc_eid=dca68af766

եկող «Lebensraum», այսինքն՝ կենսատարածք հասկացության մեջ: Միացյալ Նահանգների համար նման կենսական տարածքներ են, օրինակ, Ղրիմը, խաղաղօվկիանոսյան Տոնգո պետությունը, Մալազիան և այլն: Կենսատարածքի ծածկույթը չափվում է իմպուլսներով, ազդակներով կամ քաղաքակրթական արդյունքների հասանելիությամբ:

Այսօր այդ կենսատարածքները քննարկելիս հնարավոր չէ շրջանցել էլեկտրոնային թվային հասարակության, բազմազան տեղեկատվական հոսքերի և համակարգերի առկայության փաստը: Մի շարք գիտնականներ գնահատում են մեր «հիմա»-ն որպես «ինֆորմացիոն շոկի դարաշրջան» մի պարզ պատճառով. անընդհատ գտնվելով այդ հոսքերի տակ, մենք վերցնում ենք դրանցից միայն այն, ինչն ունակ ենք վերցնելու, և հսկայական ծավալի ինֆորմացիա բաց ենք թողնում համապատասխան ընդունիչ չունենալու պատճառով, ինչն իր հերթին, մասնավորապես, պայմանավորված է մեր հատվածական, «բեկորային» դարձած գիտակցությամբ, մեր ոչ ամբողջական աշխարհընկալմամբ, գիտելիք գտնելու քարտեզի բացակայությամբ:

Ումբերտո Էկոն նշում է, որ «հեռուստատեսությունը աղքատացրեց հարուստին և հարստացրեց աղքատին»: Ինչո՞ւ: Որովհետև աղքատը հնարավորություն ունեցավ նայելու ինչ-որ պիեսներ, լսելու երաժշտություն, որը երբեք իրեն հասանելի չէր լինի այլ պարագայում, իսկ հարուստը ծուլացավ, դադարեց թատրոն գնալ, համերգի գնալ: Ինտերնետի պարագայում Էկոն ճիշտ հակառակն է պնդում. այն հարուստին ավելի է հարստացնում, աղքատին ավելի է աղքատացնում: Նա գրում է. «Ճակատագրի բերումով ես շատ լավ ընտանիքում եմ ծնվել, շատ լավ կրթություն եմ ստացել, երբեմն հանճարեղ մարդկանց հետ եմ շփվել, ուստի ես, մտնելով համացանց, կարողանում եմ

տարբերակել լավը վատից»: Իսկ այն մարդը, ով չունի լավ կրթություն, լավ դաստիարակություն, շրջապատ, գիտելիք կամ ինֆորմացիա ստանալու լայն հնարավորություններ, ավելի է աղքատանում, որովհետև, չունենալով լավը վատից տարբերակելու հմտություններ, վերցնում է համացանցից այն, ինչն իրեն առաջինն են հրամցնում:

Այսօր շատ է խոսվում ցանցերի մասին, որովհետև մարդկությունն ապրում է չափազանց արագաշարժ ցանցային ինֆորմացիոն համակարգում, որն ազդում է ամեն ինչի, այդ թվում նաև ընդունվող որոշումների վրա: Միացյալ Նահանգների ազգային անվտանգության գործակալությունն, օրինակ, ընդունելով որպես հիմք այն հնարավորությունները, որոնք տրվել են իրեն «Փեթրիոթ» օրենքների փաթեթով, օրական լսում և արձանագրում է տրիլիոնների հասնող խոսակցություններ, sms-ներ, մեսիջներ, սկայպային հաղորդագրություններ և այլն: Այս հսկայական ծավալի ինֆորմացիայի գրանցումը խնդրի միայն մեկ մասն է, շատ ավելի բարդ է դրանից ընտրել այն, ինչն իրոք անհրաժեշտ է, և այդ խնդրի վրա հազարավոր մարդիկ են աշխատում, լրջագույն, բարդագույն ծրագրեր են գրվում: Այս ինֆորմացիայի զտման և վերլուծության հիման վրա հնարավոր գործողությունների մի քանի սցենարներ պետք է մշակվեն, որոնք պետք է դրվեն որոշում ընդունողների սեղանին: Սխալ որոշումների ընդունման հիմնական պատճառը հենց այն է, որ ինֆորմացիոն արագությունը մի քանի մակարդակով գերազանցում է որոշումների ընդունման արագությանը և հանգեցնում է կիսաքաոտիկ վիճակի, գործընթացների վատ կառավարմանն ամբողջ աշխարհում:

Ես բաժանում եմ ցանցերը երեք տիպի. տեքստ և կենտրոն ունեցող ցանցեր, միայն կենտրոն ունեցող ցանցեր և միայն տեքստ

ունեցող ցանցեր: Տեքստ և կենտրոն ունեցող ցանցը ամենահեշտ աշխատող, բայց միաժամանակ ամենախոցելի ցանցն է:

Դիտարկենք ցանկացած տրանսնացիոնալ ընկերություն, օրինակ՝ *Ջեներալ Մոթորս* կամ *Տոյոտա* ընկերությունները, որոնք ունեն կենտրոն և ներկայացված են գրեթե ողջ աշխարհում՝ գործակալությունների, գործարանների, ավտոպահեստամասերի հավաքման կամ վաճառքի կենտրոնների միջոցով: Նման ցանցը տեքստ չունի, ունի միայն կառավարման կենտրոն: Այդ պատճառով իր աշխատանքը բավականին կազմակերպված է, բայց կենտրոնը քանդելու դեպքում այն այլևս գոյություն չունի, ի տարբերություն տեքստ և կենտրոն ունեցող ցանցի. երբ նման ցանցի կենտրոնը քանդվում է, տեքստը շարունակում է աշխատել, կամ երբ տեքստը սկսում է ջնջվել, կենտրոնն անընդհատ փոխում, լրացնում ու վերականգնում է իր տեքստը:

Տեքստն այն է, ինչն արտահայտում է արժեքային հիմքը և ինքնությունը: Ի՞նչ բան է ինքնությունը: Այն հարցերի գումարը, որոնց դու պատասխանում ես: Ինչքան շատ հարցերի ես պատասխանում, այնքան ավելի հզոր է ինքնությունդ: Ինչքան շատ «լեզուներով» հարց ես հասկանում, որքան տարբեր սեմանտիկ համակարգերի ես տիրապետում, այնքան հզոր է ինքնությունդ:

Վերցնենք մարդու կյանքը, կամ մարդու ինքնությունը, կամ տեսակը, կամ իմ, որպես հայ առաքելականի տեսակը, կամ իմ, որպես տղամարդու տեսակը, մի խոսքով՝ ինքնության որոշակի տեսակը: Սա այն արժեքային համակարգն է, որը նպաստում է բազային արժեքի պահպանմանը և ուժեղացմանը: Մենք ուղղակիորեն չենք գործում, մեր կյանքի ուղենիշները ձևակերպվում են որպես մշակութային կոդեր: Օրինակ, մարդու կյանքը որպես արժեք մշակութային կոդում ստանում է «Մի՛ սպանիր» ձևակերպումը: Սա էլ ուղղակիորեն չի աշխատում, այլ ներկայացվում է կառույցների և նորմերի միջոցով (օրենքներ,

սահմանադրություն, ոստիկանություն և այլն): Այստեղ է մշակվում և այստեղից է ուղարկվում մարդու մշակութային, քաղաքակրթական արդյունքը, որը մտնում է համաշխարհային հոսանքի մեջ, տարածվում է, շրջում է, վերադառնում է: Այս ամենի կենտրոնում մարդու բազային արժեքն է, մարդու մինիմալ անվտանգությունը: Այստեղ, սակայն, մի խնդիր կա: Երբ ինքնությունը շատ է ուժեղանում, մարդը դառնում է կոսմոպոլիտ՝ կորցնում է իրեն, սկսում է փնտրել այնպիսի հարցերի պատասխանները, որոնք երբեք չեն ծագել:

Կարելի է բերել տարբեր տիպի ցանցերի մի շարք օրինակներ: Ցանց-պետության ցայտուն օրինակ է ԱՄՆ: Չկա աշխարհում մի վայր, ուր ամերիկյան դրոշ չլինի, այսինքն՝ չլինի մի խողովակ, որի միջոցով չուղարկվեն ԱՄՆ-ի ունիվերսալ արժեքային համակարգը, դրա նորմերը և կառույցները:

Մեկ այլ հզորագույն, բայց բոլորովին այլ տիպի ցանց-պետություն է Չինաստանը: Չինական ցանցը ստեղծվել է բնական ձևով. մարդիկ արտագաղթել են, և այսօր այդ պետությունը մարդկային հզոր զանգված ունի աշխարհում:

Այն ևս ունի կենտրոն և տեքստ, բայց դրանց ներկայությունը, բացի պետության զինանոցում առկա ձևերից՝ դեսպանատուն, ռազմական խարիսխ, մշակութային կենտրոններ և այլն, դրսևորվում է նաև Չայնա Թաունների, այսինքն՝ բազում Չինաստանների առկայությամբ. այստեղ չինարեն են խոսում, չինական երաժշտություն են լսում և այլն: Սա հաղորդակցվող ֆիզիկա է: Ինչպես հաղորդակցվող անոթների պարագայում ջուրը լցվում է մի անոթից մյուսը, հավասարեցնելով մակարդակները, այնպես էլ այստեղ ինֆորմացիան Չայնա Թաունի միջոցով ինքնալցվում է, որովհետև այդ ինֆորմացիան հենց Չինաստանն է:

Ամերիկան այլ տարբերակ է: Ամերիկյան ներկայությունը նաև «փրկության բանալի» է: Ամերիկյան ցանցը նաև այն մարդիկ

են, որոնք գնում են հեռավոր, ամենավտանգավոր տեղերն անգլերեն սովորեցնելու, բուժելու մարդկանց, օգնություն ցույց տալու և այլն: Ցանցի բջիջ է *Մի Էն Էն* հեռուստաալիքը, որը հասանելի է գրեթե ամենուր: Բայց սա այլևս բնական ներկայություն չի: Սա արդեն ուղղորդված, մշակված ներկայություն է: Այս ցանցն ունի իր ենթագործիքները՝ մեկ այլ ցանց, կամ ենթացանց. օրինակ, մորմոնները, որոնք ներկայացնում են ամերիկյան ունիվերսալ արժեքները, բայց մորմոնյան հիմնավորմամբ: Այս պետություն-ցանցի աշխատանքը կառավարվում է կենտրոնից: Իհարկե հանգույցներն իրենց հետադարձ կապն ունեն և իրենց ուղարկած ինֆորմացիան կամ SOS-ը, «փրկեք մեզ»-ը, ազդում է կենտրոնի որոշումների վրա: Բայց այնուամենայնիվ կենտրոնը միակն է և բացարձակ նշանակություն ունեցողն է, ցանցը ստեղծողն է:

Հիմա անցնենք մեկ այլ, բայց մեզ համար շատ ավելի կարևոր խնդրի: Մեր առաջին համայնքները ստեղծվել են իհարկե շատ վաղուց՝ քրիստոնեությունից առաջ, բայց մենք հիմնականում դրանց ձևավորումը կապում ենք քրիստոնեության և երկու տարբեր տիպի գործունեության հետ: Առաջինը, բնականաբար, առևտուրն է. Արաբական թերակղզում պեղումների ժամանակ Տիգրան Մեծի ժամանակաշրջանի ոսկիներն ենք գտնում: Նմանատիպ գտածոներ ունենք նաև Հյուսիսային, Սկանդինավյան երկրներում: Երկրորդը ուխտագնացությունն է, հիմնականում դեպի Երուսաղեմ գնացող քարավաններն են, ճանապարհին ստեղծվող տարբեր ուխտավայրերն են և ի վերջո Երուսաղեմում հիմնված հայկական թաղամասն է: Անիի քանդվելուց հետո թափ է առնում երկրորդ մեծագույն ալիքը, հասնելով Ուկրաինա, Պոդոլսկ, Լվով, Լեհաստան, Հունգարիա, Բուլղարիա, Իտալիա: Ումբերտո Էկոյի ստեղծագործություններում, օրինակ, հանդիպում ենք Նվարդ անունը:

Այս համայնքները հիմա հիմնականում չկան, բայց դրանց հետքերը պահպանվել են: Կան հունգար-հայեր, որոնք հայերեն չգիտեն, կաթոլիկ եկեղեցի են գնում, բայց ունեն հիշողություն:

Մալազիա, Սինգապուր, Իսլանդիա, Սկանդինավիա... Այստեղ էլ հայեր կան: Եկեղեցի էլ ունեն, որը կառուցված չէ որպես եկեղեցի, որի վրա խաչ չկա, բայց դա մի վայր է, ակումբի նման մի տարածք, որտեղ հավաքվում են և այն անվանում եկեղեցի: Այսպիսով, բացի այն համայնքներից, որոնց հետ ավանդական ամուր կապ կա (ԱՄՆ, Սիրիա, Ֆրանսիա), կան նաև կենտրոնի հետ թույլ, ոչ միշտ պինդ կապած համայնքներ, երբեմն՝ խաչվող, երբեմն՝ չխաչվող: Պետք է նշել, որ այստեղ կան նաև ենթահամակարգեր. օրինակ՝ Դաշնակցությունը: Կան նաև իրենց արժեքային համակարգով, մշակութային կոդով տարբերվող ենթահամակարգեր, օրինակ, կիլիկեցիների միություն՝ արդեն (նախկին) բնակության վայրով հիմնավորված: Այսպիսի ենթահամակարգեր են նաև Ընդհանուր Բարեգործականը, հայ ոսկերիչների միությունը և այլն, ընդ որում սրանք հորիզոնական կառույցներ են ի տարբերություն կուսակցությունների, որոնք ուղղահայաց կառույցներ են՝ հիերարխիկ են:

Ինչպես տեսնում ենք, այն ցանցը, որն ունի միայն տեքստ, բացարձակ ազատ է: Մուտքը միայն տեքստի միջոցով է: Եթե դուրդ գալիս է՝ մտնում ես, ապա դուրս ես գալիս, երբ այլևս քեզ չի վերաբերում կամ չի գոհացնում: Ցանցին միանալը կախված է տեքստի գրավչությունից, ազդակի ուժգնությունից:

Երկրաշարժին հաջորդած շրջանում մեծ թվով անգամ հայերեն չխոսող մարդիկ եկան օգնելու: Ինքնությունը արձագանքեց հզոր ազդակին, ծագեց «ո՞վ եմ ես» հարցը և գտնվեց պատասխանը, որը տարավ դեպի ցանց: Խնդիրն այն է, որ ուժեղ ազդակներ շատ հազվադեպ են լինում, և դրանց միջև ընկած

ժամանակահատվածում ցանցի ներքին կապերը խամրում են, խախտվում է հաղորդակցությունը:

Այսպիսով, ի՞նչ ձևակերպում կարող է ստանալ մեր հիմնական խնդիրը:

Եթե մենք ուզում ենք համապատասխանել դարաշրջանին, պետք է կարողանալ պատասխանել կարևոր հարցերին և ստեղծել այնպիսի ուժեղ տատանումներ, որ մեր ազդակները գնան հնարավորինս հեռու: Եթե մենք կարողանանք ընդունել շատ ազդակներ, հասկանալ դրանք, լինել ժամանակի հետ համընթաց, ապա մենք պետք է ցանցի տեքստի վրա աշխատենք և ճշգրտենք այդ տեքստն ուղարկելու հասցեները: Մենք պետք է գիտակցաբար վերակառուցենք ցանցը և, ի տարբերություն Միացյալ Նահանգների կամ Չինաստանի, պետք է լինենք ոչ թե պետություն-ցանց, այլ ցանցապետություն: Ուժեղ համակարգ, մոբիլիզացիոն մեծ ռեսուրս, անընդհատ ինֆորմացիոն փոխանակման հնարավորություն ունենալու դեպքում մենք ի վիճակի կլինենք լուծել բոլոր խնդիրները:

Վերջին երեսուն տարիների ընթացքում շատ լուրջ գիտնականներ շարունակաբար քննարկում են պետության ձևափոխման խնդիրը, պնդելով, որ պետությունը չի կարող շարունակվել իր ներկայիս ձևով, այն ստեղծվել է շատ վաղուց և միանգամայն այլ իրավիճակում: Երբ «հպատակ» հասկացությունը իր տեղը զիջեց «քաղաքացի» հասկացությանը, արդեն ֆրանսիական հեղափոխության ժամանակ ստեղծվեց այն, ինչը մենք անվանում ենք ազգ-պետություն: Եվ այդ ազգ-պետությունը, բնականաբար, ուղղված էր նրան, որպեսզի, անտեսելով կրոնական գործոնը, ստեղծի պետությանը պատկանելու վրա հիմնված սոցիալական միավորում:

Տեխնոլոգիաների զարգացումը բերում է կոլեկտիվների մեծացման, քանի որ հաղորդակցման նոր եղանակները թույլ են

տալիս ավելի ծավալուն նախագծեր և ծրագրեր իրականացնել: Այդ նոր մեծ խմբերի անդամներն արդեն ոչ միայն տարբեր կրոններ և էթնոսներ ներկայացնող, այլ նաև տարբեր քաղաքացիական պատկանելություն ունեցող մարդիկ են: Ուրեմն սրանց միավորելու և խմբերի միասնականությունն ապահովելու համար բոլորովին այլ սկզբունք է պետք գտնել: Սկզբունքներից մեկը դրված է, օրինակ, Եվրամիության հիմքում: Մեկ այլ սկզբունք է կարող համարվել սունիականը, որը, սակայն, թերի է, քանի որ թույլ չի տալիս, որպեսզի գործեն ադապտացման մեխանիզմները: Էթնիկականը խնդրահարույց է, որովհետև ստիպում է քեզ փակվել, մեկուսացնում է քեզ, պատեր է շարում շուրջդ: Ո՞րն է ուրեմն ելքը:

Պետության ձևափոխումը կարող է տեղի ունենալ «վերևից», երբ վերպետական որևէ կառույց վերցնում է պետական ինքնիշխանության որոշակի մասը (Եվրասիական Միություն, Եվրամիություն), և «ներքևից», երբ պետության որոշ գործառույթներ փոխանցվում են տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց դերը կտրուկ աճում է:

Մյուս կողմից, պետք չէ մոռանալ, որ պետությունը բնորոշվում է որպես մի մարմին, որը բռնություն իրականացնելու բացարձակ մենաշնորհ ունի՝ հասարակության ներքին (ոստիկանություն) և արտաքին (բանակ) անվտանգությունը ապահովելու համար: Սա բերում է մաքսեր, տուրքեր հավաքելու իրավունքին, որն իր հերթին ծնում է լրացուցիչ ֆունկցիաներ, օրինակ՝ գաղտնալսում: Ըստ էության, սա պետության պատասխանն է ցանցերի գրոհին և ազդեցությանը: Եվ այն պետությունները, որոնք (Միացյալ Նահանգների օրինակով) իրենց ցանցը ստեղծելու բավարար հզորություն չունեն, փորձում են փակվել, իսկ փակվելով, կորուստներ են կրում, որովհետև տանուլ են տալիս ցանցին:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ երբ պետությունը կայուն, ամուր, ապահով պատ ստեղծելու հնարավորություն չունի, այն պետք է ինքը կառուցի ցանց դառնալու իր ճանապարհը, այսինքն, պետք է սկսի ստեղծել այնպիսի ընդունիչներ, որոնք, ստանալով բոլոր կողմերից եկող ազդակները, վերածեն դրանք սեփական ազդակների և ուղարկեն՝ գործի դնելով բազմախողովակ համակարգը:

NETWORKS AND THE NATURE OF NETSTATE

Abstract

Davit Hovhannisyan
Center for Civilization and Cultural Studies,
Yerevan State University
dhovhannisyan@ysu.am

Key words: *digital society, identity, network, text, center, informational networks, netstate*

Nowdays much research is done on networks because humanity is living in an extremely agile network of information systems that affects everything, including the decision-making process.

The article discusses three types of networks which are: networks with text and center, networks with text only, networks with center only. It also addresses a number of issues related to the network text, value base and identity. We must consciously rebuild the network, make sure the addresses for sending that text and build a network state. If we have a powerful system, a great mobilization resource and an opportunity to exchange information, we will be able to solve all the problems.

СЕТИ И СУЩНОСТЬ СЕТЕГОСУДАРСТВА

Аннотация

Давит Ованнисян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
dhovhannisyan@ysu.am

Ключевые слова: *цифровое общество, идентичность, сети, текст, центр, информационные потоки, сетегосударство*

Сегодня многие говорят о сетях, потому что человечество живет в чрезвычайно гибкой информационно-сетевой системе, которая влияет на все, включая процесс принятия решений.

В статье рассматриваются три типа сетей: сети с текстом и центром, сети только с текстом, сети только с центром. Автор также затрагивает ряд вопросов, связанных с сетевым текстом, ценностной базой и идентичностью. Мы должны сознательно перестроить сеть, убедиться, что существуют адреса для отправки этого текста и построить сетевое государство. Если у нас будет мощная система, мобилизационный ресурс и возможность обмена информацией, мы сможем решить все проблемы.

ՑԱՆՑԵՐՈՒՄ ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ԿԱՄ ՈՉ ՍԻՆՏԱԿՏԻԿ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նվարդ Մանասյան
nvard.margot@gmail.com

Բանալի բառեր՝ *հավասարակշռության տեսություն, սոցիալական փոխանակման տեսություն, Հեյդեր, ցանցեր, հաղորդակցություն, դիադներ, տրիադներ*

Հոդվածը քննարկում է օրենքից դուրս (մասնավորապես օրինազանց) գտնվող հաղորդակցության տեսակները սոցիալական խմբերում և դրանց ազդեցությունը հաղորդակցության մյուս տեսակների վրա՝ առաջնորդվելով Հեյդերի հավասարակշռության տեսության ու դրա հիման վրա իրականացված փորձարարական հաշվարկների վրա, ինչպես նաև փորձում ուրվագծել հնարավոր լուծումներ:

Անհատների միջև առկա հարաբերությունները նկարագրվում են հաղորդակցություններով, որոնք տեղ են գտնում սոցիալական համակարգերում՝ ցանցերում: Վերցնենք ցանցային հաղորդակցության ամենապարզ միավորը, որ ենթադրում է հաղորդակցություն երկու անհատների միջև: Իհարկե այդ միավոր հաղորդկացության կառուցվածքը բաղկացած է այդ երկու անհատների միջև հաղորդակցության մյուս միավորների կառուցվածքից, որը կարող է լինել պայմանավորված յուրաքանչյուր անհատի բազմակի ինքնությունների իմացությամբ, դրանց ճանաչողությամբ, ժամանակով, այլ առկա և ենթադրյալ հաղորդակցությունների առկայությամբ ի թիվս այլ գործոնների, միևնույն ժամանակ այդ երկու անհատների միջև միավոր

հաղորդակցությունն ունի մեկ ընդհանրություն՝ զգացողություն[1]: Հաճախ այդ զգացողությունը սիմետրիկ է, ըստ այդմ երկու անհատները համակրում կամ չեն համակրում մեկը մյուսին ավելի հաճախ, քան թե մեկը համակրում, իսկ մյուսը չի համակրում մյուսին: Նախորդիվ իրականացված դիտարկումները ցույց են տալիս, որ նման իրավիճակում անհատներից մեկը կամ մյուսը կփոխի համակրության իր տեսակը: Այս փոփոխությունը քննարկում է Հայդերը, ապա զգացողության փոփոխության ձևի մասին խոսում են նաև մի շարք այլ հետազոտողներ[2]:

Հեյդերյան տեսության համաձայն՝ երկու անհատի միջև զգացական հարաբերությունը ձգտում է սիմետրիկ կայունության (homeostasis) կամ հավասարակշռության՝ կա՛մ դրական, կա՛մ բացասական նշանով[3]: Հաղորդակցության ավելի բարդ ձևը, որը ենթադրում է երեք անձի առկայություն, նորից ձգտում է հաստատել կայունություն: Այս դեպքում յուրաքանչյուր երկուսի միջև հարաբերությունը տանելով կայունության՝ դրական նշանով հաղորդակցության դեպքում: «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» ասույթի օրինակով, երեք սուբյեկտի միջև կայունությունը հնարավոր է նաև, երբ երկու սուբյեկտներն ունեն դրական զգացողություն մեկը մյուսի հանդեպ, բայց բացասական՝ երրորդի նկատմամբ: Հեյդերը նաև ենթադրում է, որ երբ երկու

[1] Khanafiah, D., Situngkir H., Social Balance Theory: Revisiting Heider's Balance Theory for many agents. Dept. Computational Sociology, Badung Fe Institute, 2004,
Wang, Z., Thorngate, W., Sentiment and social mitosis: Implications of Heider's Balance Theory. Journal of Artificial Societies and Social Simulation vol. 6, no. 3, 2003.

[2] Osgood, C. E., Tannenbaum, P. H., The principle of congruity in the prediction of attitude change. Psychological Review, 62, 1955, pp. 42-55,
Cartwright, D., Harary. F., Structural Balance: A Generalization of Heider's Theory. Psychological Review, 6, 1956, pp. 277-293,
Newcomb, T. M., "Interpersonal balance". In Abelson, R. P., Aronson E, McGuire W. J., Newcomb T. M., Rosenberg M. J., and Tannenbaum O. H. (Eds.). Theories of Cognitive Psychology, Chicago: Rand McNally, 1968.

[3] Heider, F., The psychology of interpersonal relations. New York: John Wiley & Sons, 1958.

սուբյեկտների միջև դրական հավասարակշռությունը հաստատված է, իսկ երրորդը որևէ հաղորդակցություն դեռևս չի հաստատել և ունի զրոյական դիրք, հավանական է կինդուկցվի դեպի այդ երկուսի ձեռքբերված հավասարակշռությունը[4]:

Հաղորդակցության մյուս տեսակը, որի մասին խոսում է Հեյդերը, իսկ հետո դրա հիման վրա վերլուծություններ են իրականացնում Քարտռայթն ու Հարարին, երկու սուբյեկտների միջև գիտակցական միավորի՝ նմանության, պատկանելության, պատճառահետևանքայնության, մոտ լինելու հարաբերության հաստատումն է[5]: Եթե նախորդ զգացողության հարաբերության դեպքում գոյանում են որոշակի դրական կամ բացասական վերաբերմունքներ ու դրանք նկարագրվում են L նշանով, ապա որոշակի ճանաչողական նույնական միավորի հաստատման դեպքում նման հարաբերությունները նկարագրվում են U նշանով: Ավելին, երկկողմ հարաբերություններից եռակողմ հարաբերությունների կամ, ինչպես Հեյդերն է դրանք անվանել, դիատներից տրիադների նկարագրությանը անցնելիս երրորդ սուբյեկտը կարող է նաև լինել օբյեկտ: Այս դեպքում դիադիկ հարաբերության հավասարակշռված վիճակը հաստատվում է, եթե երկու միավորների միջև L կամ U հարաբերությունները դրական են կամ բացասական, իսկ տրիադիկ հարաբերություններում ենթադրվում է, որ բոլոր երեք հարաբերությունները դրական են կամ բացասական, կամ էլ երկուսը բացասական են, իսկ մեկը դրական: Ըստ հեյդերյան պնդման՝ ճանաչողական (U) միավորները ևս զգացականի (L) վերաբերմունքային միավորների նման հոմեոստատիկ են ու ձգտում են կայունության հաստատմանը: Փորձարարական քննարկումներում հեյդերյան տեսական պնդումը հաստատվել է, քանի որ քննարկվող խմբում

[4] Նույն տեղում:
[5] Cartwright, D., Harary. F., նշվ. աշխ.:

որոշակի անձի արտահայտած ճանաչողական միավորի շուրջ քննարկումներն, ըստ էության, վերջում հանգեցրել են դրական զգացողությամբ կայունության հաստատմանը[6]: Ավելին, ճանաչողական միավորի շուրջ յուրաքանչյուր սուբյեկտի գնահատականի ձևավորումը առանձին իրադարձություն չէ, այն պայմանավորված է ոչ միայն դիադիկ հարաբերության մյուս սուբյեկտի՝ տվյալ սուբյեկտի կողմից գնահատմամբ, այլ նաև նախապայմանավորվում է խմբում առկա մյուս սուբյեկտների ճանաչողական միավորի շուրջ (որը կարող է լինել իրադարձություն կամ օբյեկտ) հնարավոր գնահատականների ընկալմամբ տվյալ սուբյեկտի կողմից[7]: Այս փորձերի արդյունքում հեյդերյան հաղորդակցական զգացական ու ճանաչողական նույնական միավորների կուտակման գործընթացում ավելանում է նաև խմբում առկա այլ սուբյեկտների թվացյալ ճանաչողական ու զգացական առկա միավորների գնահատումը որևէ սուբյեկտի ընկալմամբ: Այդտեղ կարող են դեր խաղալ Ս կամ Լ տիպի հաղորդակցություններում հաստատուն արժեքների գրանցման մասին ցանցում իմացությունը ու դրանց ընդունման մակարդակը, որը նաև կանոնակարգվում է մետահարաբերությունների առկա մոդելներով՝ ընդունելի իմաստների առկայության պայմաններում: Սրանք կքննարկվեն հաջորդիվ:

Հեյդերյան կայունության ձգտման հասկացության նման մեկ այլ տեսաբան առաջարկում է սիմետրիայի լարումը, որպես երկու սուբյեկտների անվերջ ձգտումը որդեգրել նույնական վերաբերմունք այս կամ այն առարկայի նկատմամբ, որի լավագույն դրսևորումը հաղորդկացությունն է[8]: Ըստ այդմ,

[6] Horowitz, M. W., Lyons, J., Perlmutter, H. V., Induction of forces in discussion groups. Human Relation, 4, 1951, pp. 57-76,
[7] Նույն տեղում:
[8] Newcomb, T. M., An approach to the study of communicative acts. Psychological Review, 60, 1953, pp. 393-404.

միջանձնային հարաբերություններում մեկից մյուսին ձգտելու միտումը, հաղորդակցության հակումն ու ձգտումը ձևավորել նույնական կարծիք, և այլ կարծիքների ու դրանց կրողների աստիճանական օտարումը տևականորեն ընթացող գործընացներ են՝ հաստատելու համար կայունություն ու զրոյացնելու լարումը[9]: Այսինքն, եթե տրիադիկ հաղորդակցության մեջ գտնվող P անհատը դրական վերաբերմունք ունի O անհատի նկատմամբ և որոշակի ճանաչողական միավոր X առարկայի նկատմամբ, ապա O անհատը կհայտնվի լարման գոտում, որտեղ վերջինս X առարկայի նկատմամբ իր ունեցած տարբերության պատճառով կունենա վերաբերմունքի տատանում ու ըստ տվյալների հետզհետե համաձայնության միտվածություն կդրսևորի[10]: Ավելին, սիմետրիայի հաստատման, հետևաբար լարման զրոյացման գործընթացում դրական վերաբերմունքի (L) սուբյեկտների միջև հաստատման ընթացքը գոյացնում է ավելի հաճելի զգացողություններ, քան դրա հակառակ նշանով գործընթացի (L˜) դեպքում, որը առաջարկում է դրականության միտման գերակայությունը կայունության հաստատման նկատմամբ: Հետագայում փորձարկումներն ապացուցել են, որ դրական վերաբերմունքի ու համաձայնության համատեղումը մյուս բոլոր հնարավոր համադրություններից ամենանախընտրելի տարբերակն է եղել[11]: Հակառակ օրինաչափությունն առ այն, որ

[9] Cartwright, D., Harary. F., նշվ. աշխ.:

[10] Sussmann, M., Davis, J., Balance theory and the negative interpersonal relationship: Attraction and agreement in dyads and triads. Department of Psychology, University of Illinois, Champaign, 1975.

[11] Jordan, N., Behavioral forces that are a function of attitudes and of cognitive organization. Human Relations, 6, 1953, pp. 273-287,

Price, K. O., Harburg, E., McLeod, J. M., Positive and Negative Affect as a Function of Perceived Discrepancy in ABX Situations. Human Relations, 18, 1965, pp. 87-100,

Rodrigues, A., The Psycho-Logic of Interpersonal Relations, PhD dissertation, Ann Harbor: Michigan University Microfilms, 1966.

բացասական վերաբերմունքին որպես կանոն համադրվել է անհամաձայնությունը՝ փորձարկվել է ավելի ուշ՝ ներառելով ուսանողների ու իրենց ծնողների միջև հարաբերությունները: Այն ուսանողները, որոնք բացասական վերաբերմունք են ունեցել իրենց ծնողների հանդեպ նաև որդեգրել են ծնողների ճանաչողական միավորների նկատմամբ բացասական հավասարակշռում՝ չհամաձայնելով վերջիններիս հետ: Այս համադրությունը հետագայում անվանվել է բացասական հղման խումբ[12]: Բացասական հղման խմբերի փորձարկումները նաև ցույց են տվել, որ միևնույն խմբում գործող մի կողմից համագործակցող, իսկ մյուս կողմից չհամագործակցող անհատների որդեգրած ճանաչողական միավորների նկատմամբ խմբի մյուս անհատները հստակ որդեգրել են համապատասխանաբար համաձայնություն և անհամաձայնություն անգամ այն դեպքերում, երբ համագործակցող ու չհամագործակցող անհատների միջև կարծիքի համընկնում է գրանցվել[13]: Բացի այդ, լարման զրոյացումն ու հաղորդակցության զգայունությունը նաև մեծապես պայմանավորված է անհատների միջև առկա ընկալված կարծիքների ու կարողությունների նմանությամբ, որը ավելի գրավիչ է դարձնում այդ սուբյեկտների միջև կապերի գոյացումը[14]:

Հետևաբար, L տեսակի հաղորդկացությունը իր դրական զգացողության առավելագույն արժեքի առաջնային մեծությամբ U տեսակի հաղորդակցություններում կարող է լարումը զրոյացնել ոչ օպտիմալ տարբերակով: Մասնավորապես, երբ L տեսակի հարաբերություններում առկա է հաղորդակցության կայուն արժեք

Rodrigues, A., Effects of Balance, Positivity, and Agreement in Triadic Social Relations. Journal of Personality and Social Psychology, 5, 1967, 472-476.

[12] Newcomb, T. M., "Interpersonal balance", 1968.

[13] Sussmann, M., Davis, J., նշվ. աշխ.:

[14] Festinger, L., Theory of Social Comparison Process. Human Relations, 7, 1954, pp. 117-140.

ունեցող միավոր կամ միավորների խումբ, ապա ըստ այդ միավորների քանակի U հաղորդակցության կայունացումը իր օպտիմալության աստիճանը ավելի է կորցնում: Հետևաբար L հարաբերության բացարձակ հաստատուն արժեքի դեպքում U հաղորդակցությունը հակադարձ համեմատականությամբ բացարձակ զրոյական է: Սա սահմանային արժեք է ու այն բնականորեն անմատչելի է, սակայն անսահման ձգտման լարման մեջ է: Օրինակ՝ արյունակցական կապով փոխկապակցված երկու սուբյեկտի ու նրանց այդ կապից դուրս U հարաբերությունները, ի տարբերություն այլ երկու անհատի միջև՝ նման նախապայմանի բացակայության դեպքում, ստեղծում են լարում, որտեղ երրորդ անձը ոչ օպտիմալ լուծմանը համաձայնություն է տալիս: Պատահական չէ, որ նման կայունացումները հնարավորինս կարգավորվում են մետահարաբերությունների մոդելներով՝ նորմերով կամ օրենքներով, արգելելով նման գրաֆերի գոյացման հավանականությունը ցանցում:

Չնայած հեյդերյան տեսությունը փորձում էր բացատրել միջանձնային երկկողմ ու եռակողմ (dyads and triads) միավոր հարաբերություններում կայունության հաստատումը, հետագա փորձարարական ու տեսական շտկումներն ու վերլուծություններն այդ միավորների հարաբերությունները տարածեցին տարբեր կոնֆիգուրացիաներով հաղորդակցական հանգույցների ու ցանցերի, ուժային հարաբերությունների, սոցիոմետրիկ համակարգերի ու նյարդային հանգույցների հաղորդակցության մոդելավորումների վրա: Ըստ առաջադրված կառուցվածքային հավասարակշռության տեսության՝ երկկողմ ու եռակողմ հաղորդակցություններում հավասարակշռության ու լարման զրոյացման համադրությունները հանգեցնում են առկա կառուցվածքի որոշակի հավասարակշռության գոյացմանը, որը

սահմանվում է կառուցվածքային թեորեմի միջոցով[15]: Ըստ այդմ, ցանկացած գրաֆ (այն է՝ անձանց ցանց) մարդկանց ավելի մեծ խմբի մեջ հավասարակշռված է, միայն եթե այդ գրաֆը բաժանվում է երկու փոխկապակցված ենթախմբերի, որտեղ ներխմբային բոլոր հարաբերությունները դրական հավասարակշռության մեջ են, իսկ մյուս ենթախմբի հետ հարաբերությունները բացասական հավասարակշռության մեջ են[16]: Մաթեմատիկական մոդելավորումներն ու ավտոմատ հաշվարկները, որ ցանկացած նախնական գրաֆերի կոնֆիգուրացիայով ցանցը, որտեղ կան դրական, բացասական և զրոյական վերաբերմունքներ մի շարք իտերացիաների արդյունքում անխուսափելիորեն գոյացրել են որպես կանոն երկու գրաֆիկներով կայունության իրավիճակ, բացառություն են կազմել միայն այն դեպքերը, երբ զրոյական վերաբերմունքի տեսակարար կշիռը տվյալ ցանցում մեծ է եղել, այսինքն ըստ էության պայմանական ցանց է եղել հիմնականում[17]: Բացառիկ դեպքերում գոյացել է մեկ խումբ դրական վերաբերմունքային կապերով, որը հնարավոր է առանձին ենթադեպք է երկու խմբերով վերջնացանցի ձևավորման մեջ[18]: Այդ երկու խմբերը ներխմբային հավասարակշռության պարագայում ունեն հանրագումարային դրական կայունություն, իսկ միջխմբային հարաբերություններում մյուս խմբի արտաքին հաղորդակցվող սուբյեկտների հետ գոյացնում են բացասական հավասարակշռում և որպես խմբեր մեկը մյուսի նկատմամբ ունեն բացասական հավասարակշռում ու համարվում են բացասական

[15] Cartwright, D., Harary. F., նշվ. աշխ.:
Kadushin, C., Understanding Social Networks: Theories, Concepts, and Findings. Oxford University Press, 2012,
Hummon, N. P., Doreian, P., Some Dynamic of Social Balance Processes: Brining Heider back into balance theory. Social network, 25, 2003, pp. 17-49.
[16] Khanafiah, D., Situngkir H., նշվ. աշխ.:
[17] Wang, Z., Thorngate, W., նշվ. աշխ.:
[18] Նույն տեղում:

հոման խմբեր մեկը մյուսի համար[19]: Ավտոմատացված հաշվարկները ցույց են տվել, որ սկզբնական ցանկացած կոնֆիգուրացիայի դեպքում, եթե խմբերում առկա են միայն դրական կամ բացասական վերաբերմունքային կապեր, ապա վերջնացանցն առանց բացառության ունի կանխատեսելի ավարտ՝ անկախ դիադների ու տրիադների կոնֆիգուրացիաներից, միայն զրոյական վերաբերմունքային հարաբերությունների դեպքում է, որ վերջնացանցի գրաֆերի ձևը միանշանակ չէ[20]: Գրաֆում կամ ցանցում համընդհանուր հավասարակշռության գործակցի առաջարկված հաշվարկը ենթադրում է դիտարկել կայունացած դիադների (եթե դիտարկվում է միջանձնային հաղորդակցությունը կամ տրիադների, եթե երրորդը առարկա է կամ գաղափար) հարաբերակցությամբ առկա դիադների կամ տրիադների ընդհանուր թվի հետ[21]: Այն տատանվում է զրոյից մեկի սահմաններում: Գրաֆում ցանցի համեմատ նաև դիտարկվում է լոկալ հավասարակշռության գործակիցը, որը նույն բանաձևով է հաշվարկվում, բայց ցանցի հավասարակշռության համեմատ այդ վերջնարդյունքը հանվում է մեկ արժեքից[22]: Կարելի է ենթադրել, որ որևէ գրաֆի 0.5 գործակցին հասնելը սահմանային է և գոյացնում է վերջնացանց, եթե իհարկե զրոյական վերաբերմունքներ առկա չեն եղել նախորդիվ: Կարելի է նաև ենթադրել, որ ի տարբերություն տրիադների՝ դիադիկ հարաբերությունների վերածված ցանցում (այդպիսի օրինակ է՝ Շեքսպիրի Ռոմեո և Ջուլիետ ողբերգության երկու ընտանիքների հարաբերությունների համակարգը, նմանատիպ տարբերակները կքննարկվեն, բայց հպանցիկ) երկու իրար նկատմամբ բացասական հղումների խմբերը ցանցում

[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում
[21] Khanafiah, D., Situngkir H., նշվ. աշխ.:
[22] Նույն տեղում

ակամայից բախվելու վտանգի առաջ են, եթե գրաֆերից մեկում գոյանա տրիադիկ (աստեղ առարկայական մակարդակում իմաստների կայունացած ու զրոյացած մետահարաբերությունների մոդելի վերանայում է ընթանում, որը գոյացնում է տրիադիկ կապ) դրական վերաբերմունքային հարաբերություն մյուս խմբի սուբյեկտներից մեկի հետ: Այս դեպքին զուգահեռ կարելի է դիտարկել նաև փոքր գյուղական համայնքներում առկա հարաբերությունները, երբ հիմնականում առկա են երկու բացասական հղմամբ գրաֆեր ու դիտարկել ցանկացած տիպի հարաբերությունների կոնֆիգուրացիա, որը կիառություն ունի քաղաքական, տնտեսական կամ մշակութային խնդիրների լուծման համար:

Շեքսպիրի ողբերգությանը մոտ, բայց որոշակի առանձնահատկություններով, կարելի է դիտարկել ամուսնացած զույգի անհատներից մեկի սերն իր զուգընկերոջ լավագույն ընկերոջ հետ, որն իր հերթին ամուսնացած է[23]: Այս հարաբերությունը բնականաբար ազդելու է բոլոր առկա թվով վեց հարաբերությունների վրա (ենթադրում ենք, որ երեխաներ չկան և դիտարկվում է ոչ ընդյալնված ընտանիքի մոդելը)՝ կառավարվելով մետահարաբերությունների մոդելներով: Այդ մոդելները հարաբերությունների սինտաքսներն են, որոնք թույլ են տալիս հասարակություններին ունենալ կառուցվածքային ձև, դրանց հաղորդել համարկման կարգ՝ դրանք անվանելով նորմեր[24]: Պատահական չէ, որ ցանցերի հեյդերյան տեսության իմաստով ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացվում այս նորմավորումների ուսումնասիրություններին, քանի որ դրանք իրենց կառուցվածքով U և L հարաբերությունների ենթատեսակ են,

[23] Fiske, A. P., Metarelational models: Configurations of social relationships. Los Angeles: University of California, 2011.
[24] Նույն տեղում:

որտեղ ի տարբերություն այդ երկուսի ազատ այլ հնարավոր համադրությունների, L հարաբերությունն ունի հաստատուն բնույթ, այսինքն երկու կողմերը հստակ գիտեն, թե որքան միավոր են փոխանակելու, քանի որ փոխանակման միավորը ինքնին փոփոխական չէ: Այդ թվում սեռական հարաբերություններ, արյունակցական կապ սինտակտիկ հարաբերությունները շատ չեն փոփոխվում և շատ արագ ձեռք են բերում կայուն արժեք: Սրանք այսպիսի U փոփոխական և L արագ կայունացող հարաբերություններում ցանցին բերում են կիսակայունության, քանի որ իրականացված փորձարկումները ցույց են տալիս, որ L հարաբերությունների ֆորման ունի նախապատվություն U հարաբերությունների ֆորմայի նկատմամբ ու այդպիսի հարաբերակցությամբ ցանցը կամ գրաֆը կարող է արագ կայունանալ ու ստեղծել բացասական հղման խումբը՝ տանելով ցանցը վերջնացանցի իրավիճակին: Հետևաբար, պատահական չէ, որ հասարակական հարաբերություններում հաճախ այս տիպի կոմունալ հարաբերությունները (communal sharing) կանոնակարգվում են նորմերով ու կոդեքսներով: Նման կոմունալ հարաբերության ենթահամակարգ է նաև հարաբերությունը անգոյականի՝ աստվածային տարբեր դրսևորումների հետ ու պատահական չէ, որ այդ հարաբերությունների կազմակերպման մեջ դերակատարներն ըստ իրենց նշանակության տարբեր L հարաբերությանը առնչվող սանկցիաներ ունեն, դիցուկ կուսակրոնության օրինակով[25]:

Մետահարաբերությունների մոդելների ու դրանց սինտակտիկ բնույթի տեսանկյունից հարկ է առանձնացնել հեղինակության ինստիտուտը (authority ranking)[26] և դրա մեջ առանձին դիտարկել դատավորներին, բժիշկներին, ուսուցիչներին (ցանկը կարելի է

[25] Fiske, A. P., նշվ. աշխ.:
[26] Նույն տեղում:

շարունակել, որպես կանոն այդ դերերը խիստ կանոնակարգվում են, օրինակ լիցենզավորման եղանակով) որոնցում հաղորդակցությունը ունի պերֆորմատիվ բնույթ և կարող է փոխել իրականությունը: Այդ իմաստով երկու սուբյեկտների միջև հաղորդակցությունը, այդ թվում նաև ցանցում առկա սուբյեկտների միջև հնարավոր հարաբերություններում հաստատվում են անհավասար հաղորդակցության նախադրյալներ, այս դեպքում էլի L տիպի կապի հաստատուն արժեքին մոտ արժեքներ ձեռքբերելու արդյունքում արագ կայունացման պատճառով, քանի որ U հաղորդակցության պայմաններում հայտարարված մեկնարկը հավասար չէ, այլ պերֆորմատիվ հաղորդակցության ճանաչում ունեցող կողմը, օրինակ՝ դատավորը ի տարբերություն մյուս կողմի պերֆորմատիվ հաղորդկացության կրողն է, դրա համար շատ կարևոր է մետահարաբերությունների մոդելների սինտակտիկ անուղղակի չզուգորդվածությունը (absence of implicit associations), որը չի հանգեցնի նենգափոխման: Սրան դեռ կանդրադառնանք ավելի հանգամանալից: Այս տարբերակները կիրառվում են կրթական հաստատություններում, ավելի ցայտուն արտահայտված են համալսարաններում, բուժօգնության հաստատություններում, պատմականորեն տարբեր ուխտերում, քանի որ սրանց միավորում է օրենքով առկա նորմավորումներից կամ առաջ կամ դուրս լինելը: Այստեղ այս հարաբերությունները մանրամասն չենք քննարկի, բայց դրանք ևս ցանցում որոշակի բանաձևերով հավասարակշռումների կոնֆիգուրացիաներ են գոյացնում: Այս հոդվածի տեսանկյունից, կոմունալ հարաբերությունները չեն քննարկվելու, ինչպես նաև մասնակի կիրառությամբ են դիտարկվելու հեղինակության ինստիտուտները:

Հոդվածի տեսանկյունից, սակայն, կարևոր է քննարկել այլ կոնֆիգուրացիայի հարաբերությունները տրիադներում: Մինչ այս քննարկվել է L տիպի հաղորդակցության միավորի կայուն արժեքի հաստատման ու այդ պայմաններում U տիպի հաղորդակցության կայունացման միտումը: Այդտեղ, դիտարկվել են հաղորդակցությունների փոխանակման ու հարաբերությունների հաստատման օրենքի շրջանակներում ու նորմատիվ հարաբերություններում դեպքերը: Օրենքի *շրջանակներից դուրս հայտարարված* հարաբերությունների դեպքում կարևոր է հասկանալ U հաղորդակցությունների, U հաստատուն հաղորդակցությունների ու ցանցում գրաֆերի գոյացման կոնֆիգուրացիաներն ու դրանց հետևանքները, քանի որ դրանց արգելումը դեռևս չի նշանակում դրանց իսպառ բացակայությունը, ինչպես նաև մեծացնում է դրանց քողարկման ու նենգափոխման հավանականությունը, որը ցանցին կարող է տանել կայունությունների ձևավորման ու գրաֆերի կոնֆիգուրացիաների հաստատման, երբ բոլոր գրաֆերը տեսանելի չեն կամ տեսանելի են այլ՝ կեղծ հավասարակշռությամբ: Մասնավորապես, քննարկվելու է U հաստատուն հաղորդակցության ենթատեսակ, որն արժեքային չէ, այլ փոխարժեքային է: Կոռուպցիան նման փոխարժեքային հաստատուն փոխհարաբերություն է: Այն կարող է գոյացնել վերջնացանց, որը գործակիցը հաշվարկելը ենթադրում է հակառակ տրամաբանություն, քան դասական տարբերակներում: Ընդհանրապես, որևէ U, որն արդեն հաստատուն արժեք է ձեռք բերել ու չի քննարկվում, փոխարժեքային է, ինչպես օրինակ ծեսը կամ այլ ավտոմատ՝ վստահության փոփոխական այլևս չպարունակող հաղորդակցության ձևեր: Մշակութային իմաստով արժեքները ժամանակի ընթացքում որոշակի քանակությամբ իտերացիաների դեպքում անսահման մոտենում են փոխարժեքին ու կարող են

գոյացնել վերջնացանցեր, որոնք դիմադրություն չունեն ցանցից դուրս գրաֆերի նկատմամբ, ինչպես նաև խնդիրներ ունեն զրոյական վերաբերմունքային հաղորդկացության սուբյեկտների առկայության դեպքում: Ցանկացած տիպի գաղութացում (կենսաբանական կամ այլ) այդ գրաֆերի նկատմամբ բացասական հղումների գրաֆերի դիմակայությունն է, որոնցում սակայն գերակայում է U փոխարժեքային հաղորդակցությունը:

Հաղորդակցության այս ենթատեսակը քննարկելուց առաջ անհրաժեշտ է հղում կատարել արդարության տեսությանն (equity theory) ու սոցիալական փոխանակման տեսությանը (social exchange theory): Ըստ արդարության տեսության՝ կողմերից յուրաքանչյուրն ըստ գործադրած ջանքի գնահատում է հետվերադարձը տվյալ հաղորդկացությունը գնահատելիս. օրինակ եթե կողմերը մեկ միավոր ներդրմամբ հարյուր միավոր վերադարձ են ապահովել, ապա կարևոր չէ նախնական ներդրումը, եթե ներդրման և հետվերադարձի հարաբերակցությունը նույնն է կամ շատ մոտ է: Եթե կողմերը ներդրել են մեկ միավոր, բայց մեկը ստացել է տասը, իսկ մյուսը՝ հարյուր միավորի վերադարձ, ապա հավասարակշռությունը խախտված է: Սա գոյացնում է հետևանքներ L տիպի հարաբերության կայունացման համար, որովհետև U հարաբերության մեջ ներդրման ու հետվերադարձի անարդար հարաբերակցության դեպքում կայունացումը դժվարանում է: Հաստատուն U փոխարժեքային՝ մասնավորապես դրամական հաղորդակցությունների դեպքում սոցիալական փոխանակման տեսության տեսանկյունից խթանի (այս դեպքում խթանն ունի միայն շոշափելի հատկանիշ, խթանների ոչ շոշափելի տարբերակները չեն քննարկվում) նախորդիվ կայացած հաղորդակցություններից, որպես փոխանակման ակտեր, փոխարժեք ստացած սուբյեկտի մոտ այդ տիպի

հաղորդակցության վերարտադրության հավանականությունն ու միտումը յուրաքանչյուր նմանատիպ փոխարժեքային հաղորդակցության ավարտից հետո անխուսափելիորեն մեծանում է[27]: Սա անվերջ էնտրոպվող իրավիճակ է, նման հարաբերության մեջ հայտնված ստացող կողմը դրանից դուրս գալ չի կարող (այլ կերպ ասած կամազուրկ է) ու որպես փոխարժեք ստացած երկարատև հաղորդկացվող կողմ այդ հուշը պահում է ցանցում հաղորդակցվելիս անգամ այն դեպքում, երբ ցանցը փոխվել է: Ավելին, ջանքի ու հետվերադարձի հարաբերակցության արդարության ընկալման առկայության դեպքում կոգնիտիվ դիսոնանս չկա ու հարաբերության ձևի փոփոխության այլ խթան ևս: Բայց անգամ երբ ընկալումը առաջացնում է կոգնիտիվ դիսոնանս ու ստացող կողմը ենթադրում է, որ փոխարժեք առաջարկած կողմը ջանքի ու հետվերադարձի ավելի մեծ հարաբերակցություն ունի քան ինքը, ապա այդ դեպքում ստացող կողմը կարող է ժամանակավորապես ցանցում հաստատել այլ տիպի U հարաբերություններ միմիայն այդ հարաբերակցությունը հավասարեցնելու, բայց ոչ վերացնելու համար: Uconst/L հարաբերությունների ստացող կողմը ցանցում չի վերարտադրի այդ հարաբերության մինուս նշանով արժեքային փոփոխության դեպքում՝ օրինակ սանկցիաների տեսքով:

Ի տարբերություն ոչ փոխարժեքային հաղորդակցությունների, որտեղ սուբյեկտի համար խթանի գործակիցը փոփոխական է, քանի որ գործում են մի շարք փոփոխություններ, դրանց թվում նաև սուբյեկտների միջև փոխվստահության հաշվարկի անհրաժեշտությունը, այս դեպքում սուբյեկտի համար փոխվստահության հաշվարկի գործակիցը ստանում է մեկ արժեքը և հետվերադարձն ունի խթանի դեպքում առավելագույն

[27] Homans, G. C., Social Behaviour. Harcourt: Brace & World, 1961.

հնարավոր դրական արժեք: Այսինքն, ի տարբերություն ընկերության U առաջարկի, որտեղ հայտնի չէ թե հետվերադարձը որքանով ընկերական ու վերաբերմունքային իմաստով L հաղորդկացությունը կերաշխավորի ու կտա արդարացի փոխհատուցում, ապա U տասը հազար դրամի դեպքում ստացող կողմը կստանա 10000 դրամի L բավարարում, եթե իհարկե այդ գործարքում ստացող կողմի համար ջանքերի ու հետվերադարձի հարաբերակցությունը արդար է գնահատվել: Փոխանակման արժեքը մեծացնում է տրանզակցիայի ու դա հետագայում կրկնելու հավանականությունը[28]: Գործադրված ջանքի ու հետվերադարձի կայունության պայմաններում գոհունակության առկայությունը միայն գոյացնում է աճման միտում, հետևաբար փոխարժեքային հարաբերություններում իտերացիաները միտված են կրկնվել ու արագանալ՝ գոյացնելով առանձնահատուկ գրաֆեր, որտեղ L հաղորդկացությունը այլընտրանքի ցանկություն, որոշ դեպքերում էլ հնարավորություն չունի: Սա շատ մոտ է Lconst/U ինվերսին, օրինակ արյունակցական կամ այլ կոմունալ կապերի առկայության պայմաններում, ինչպես և այնտեղ, այս դեպքում էլ կարող են գոյանալ տոտալացնող ու օպտիմալ կայունացումը բացառող լարման մասնակի զրոյացումներ: Uconst/L հաղորդակցության մյուս սուբյեկտը, որը փոխանակում է փոխարժեքը փոխարենը պիտի ստանա մեկ այլ արժեք, որը հնարավորինս մոտ է փոխարժեքին, այսինքն հնարավորինս փոքր թվով քայլերի արդյունքում կվերափոխվի փոխարժեքի, հակառակ դեպքում այդ փոխհարաբերությունը իրավիճակային կլինի ու կրկնվելու միտում չի դրսևորի: Ասենք օրինակ՝ գումար տալը և ազատվելը, դրա լուծումից հետո այն գումարը տվող կողմի մոտ կրկնելու ցանկություն չի առաջացնում:

[28] Homans, G. C., նշվ. աշխ.:

Յուրաքանչյուր դիադում, ի տարբերություն փոխարժեքը վերցնող սուբյեկտի, փոխարժեքը փոխանցող սուբյեկտը դրանց վերադարձը կամ փոխարժեքայնացումը պիտի անի արժեքների միջոցով: Հետևաբար, մի կողմից փոխարժեքը փոխանցող կողմը պիտի կապիտալիզացնի դրա փոխարեն ստացածը, որն արժեքից դեպի փոխարժեք ավելի քիչ թվով քայլեր է ենթադրում, դրա համար էլ այդ գործարքը կայացել է, մյուս կողմից պիտի շարունակի այլ U արժեքային հարաբերություններ ստեղծել ցանցի այլ անդամների միջև: Առանձնահատուկ դեպք են հեղինակության ինստիտուտի (authority ranking) կրող սուբյեկտները, որոնք ունեն Uconst/Lconst U հաստատուն փոխարժեքային հաղորդակցության միտում ու L հաստատուն ընկալմամբ հաղորդակցության կարգավիճակ ցանցում: Մի կողմից գոհունակության բարձրացման ու դրա քայլերի կրճատման բնական ցանկությամբ արժեքային հաղորդակցությունից կտրուկ ցանկություն ունեն անցում կատարել փոխարժեքային հարաբերությունների (և այդ միտումը ամեն հաջողված տրանզակցիայի դեպքում մեծանում ու արագանում է), մյուս կողմից ունեն հեղինակության իրենց տրված անհավասար դիրք ցանցում և կարող են շահարկել L հաղորդակցությունը ու կորզել մաքսիմալ փոխարժեք: Կոռումպացված ցանկացած ծառայող ու մասնավորապես բարձրաստիճան պաշտոնյա կամ հանրային համարում ունեցող դեմք անկախ իր գործունեության ոլորտից դրանց տեսակին է պատկանում ու շատ արագ գոյացնում է գրաֆեր, որտեղ ներսում կա դրական կայունացում ու զրոյական լարում: Այդ գրաֆերը կարող են երկար ժամանակ առկա լինել ցանցերում ու գործել այլ գրաֆերի կոնֆիգուրացիաների մեջ քողարկված ու կիսաքողարկված ռեժիմում: Սրանց դուրսբերումը հնարավոր է հակառակ հաշվարկի միջոցով՝ վերջնացանցից դեպի սկիզբ: Մասնավորապես, այս գրաֆերի ուրվագծումը հնարավոր է

դառնում, երբ բավարար քանակով Uconst/Lconst հաղորդակցությունները փորձում են U/Lconst և U/L հարաբերությունները մոտեցնել Uconst/L հաղորդակցությունների ձևին: Հաղորդակցությունների կուտակած փորձի դեպքում մի կողմից հաստատուն U ձևաչափը պահելու ցանկություն ունեցող Uconst/L սուբյեկտը պիտի կարողանա իր դիրքը պահել ցանցում, մյուս կողմից պիտի կարողանա Uconst և U հաղորդակցությունները համադրել: Uconst-ի քանակի մեծացման հետ դժվարանում է U-ի հաղորդակցության կառուցվածքի պահպանումը միևնույն ցանցում, կանխելով մյուս սուբյեկտների հավասարակշռումը բացասական հղումների խմբում: Դրա համար հարկավոր է կառավարել U հաղորդակցությունների հնարավոր սահմանն ու դրանց հաղորդակցության սինտաքսները Uconst-ի տեսանելի, ենթադրելի կամ անտեսանելի պայմաններում: Դրա համար գործադրվում են (եթե արդեն առկա չեն) մետահարաբերությունների մոդելներ ու դրանք ավելի ինտենսիվանում են: Առարկայական օրինակների շարքում կարելի է նշել «Մեկ ազգ, մեկ մշակույթ», «հայկական ընտանիք», «թուրք», «հայրենասեր», «թշնամի», «դավաճան», «բարոյականություն» ու նմանատիպ սանկցավորող բառերի հաճախության մեծացումը: Լեզվական բառարանային, անգամ թվական ուսումնասիրությունը կամ դիսկուրսի վերլուծությունը կարող է դեռևս գաղտնի շրջանում ախտորոշել ախտահարման հավանականությունն ու խորքը: Դա նաև հարկ է համադրել համայնքի մեծության հետ ու այնտեղ դուրս բերել մյուս U/Lconst և U/L հաղորդակցությունների հարաբերակցությունը, ինչպես նաև տվյալ համայնքում դասական իմաստով գրաֆերի ու բացասական հղման խմբի առկայությունը: Ենթադրելի է, որ 0.5 գործակցով համայնքում լեզվական նման համադրության պայմաններում առկա է Uconst/Lconst քողարկված գրաֆ:

Բայց ինչպե՞ս է հաջողվում երկարատև քողարկել այս գրաֆերը, ինչու՞ U/L ու U/Lconst հարաբերություններում գտնվողները չեն բացահայտում ու չեն ընդվզում նման հարաբերությունների դեմ՝ գոյացնելով բացասական հղման խմբեր Uconst/Lconst ու Uconst/L հաղորդակցությամբ կայունացած գրաֆերի դեմ:

$$\frac{U(x) \to const}{Lconst} \sim \underbrace{\frac{Uconst}{L} \sim \frac{U(x)}{L(x) \to const}} \sim \frac{U(x)}{Lconst} \sim \frac{U(x)}{L(x)}$$

Բանակցության տարածքն է,երբ տրանզակցիան դեռևս արդար է ընկալվում և U/Lconst նորմալացնում է հարաբերությունը և փոխանցում հաղորդակցությունը U/Lconst ենթախմբերի սուբյեկտներին:

Ի տարբերություն փոխարժեքային հարաբերության կրող՝ ստացող կողմի Uconst նշանի, փոխարժեքային հարաբերության հաղորդակցող կողմը U(x)-const նշանով է առանձնացվել՝ հաշվի առնելով արժեքային ու փոխարժեքային հաղորդակցությունների միջև նաև սինտաքսների նախաձեռնող կողմ լինելու տարբերությունը: Դրա նման Lconst արյունակցական ու կոմունալ հարաբերությունների սանկցավորված և/կամ (այստեղ ներառվում են պերֆորմատիվ ակտի ուժ ունեցող հեղինակության ճանաչված ինստիտուտները) մետահարաբերությունների մոդելների շրջանակներում ընթացող հաղորդակցությունները տարբերկավել են L(x)-const, որոնք ներառում են չսանկցավորված, բայց ձեռքբերովի հեղինակության ինստիտուտներ (օրինակ՝ լուրջ հեղինակություն վայելող դասախոսը կամ մեկ այլ գործիչ), ինչպես նաև մետահարաբերությունների մոդելներից դուրս գործող կամ դրանց հակառակ նշանով գործող հաղորդակցության ձևեր: Սա շատ կարևոր է առանձնացնել թե՛ ախտորոշման, թե՛ ցանցում գրաֆերի ապակառուցման իմաստով:



Ցանցում քողարկված գրաֆերի հայտնաբերման համար հարկավոր է ինվերսել դիսկուրսի ու հակադիսկուրսի գրաֆերը և հաղորդակցական գործառույթներով օժտել U(x)/L(x) և ավելի մեծ կշռով U(x)/L(x)-const (հեղինակության չսանկցավորված ձևերի կրող) հաղորդկացության սուբյեկտներին, հնարավորինս արագ նրանց միջև ձևավորելով գրաֆեր: Ցանցում Uconst/L հաղորդակցության կրողներին հայտնաբերելուց ու սանկցավորելուց հետո, սա այն քայլն է, որ աստիճանաբար կչեզոքացնի Uconst/L հաղորդակցական կախվածության կրողներին: Փոքր համայնքներում դա կարելի է անել առանց տվյալ համայնքի հետ զրոյական վերաբերմունք ունեցողների ներմուծման, ավելի մեծ մասշտաբում զրոյական վերաբերմունքի կրողներին հարկ է ներմուծել ցանց միջնորդավորված ձևաչափում U(x)/L(x) և ավելի մեծ կշռով U(x)/L(x)-const հաղորդակցության կրողների հետ տևական հաղորդկացության ու տեղայնացման միջոցով: Եթե ցանցի նկատմամբ նման իրավիճակում ոչինչ չձեռնարկվի, ապա այն պարզապես կգաղութացվի:

THE POSSIBLE STRUCTURES OF DIVERSIONS OF EXCHANGE BASED OR NON- SYNTACTIC COMMUNICATIONS IN NETWORKS

Abstract

Nvard Manasyan
nvard.margot@gmail.com

Key words: *Balance theory, social exchange theory, Heider, networks, communication, diads, triads*

The article examines mostly communication forms that flow beyond legality in social groupings of various configurations and that type of communication's impact on other types of communication based on the adopted Balance theory developed by Heider, as well as other practical experimentations on that basis and further theoretical adaptations. The article also tries to suggest certain solutions.

ВОЗМОЖНОСТИ СТРУКТУР НАКЛОНЕНИЯ ОБМЕННЫХ (НЕ ЗНАЧИМЫХ) ИЛИ НЕ СИНТАКТИЧЕСКИХ КОММУНИКАЦИЙ В СЕТЯХ

Аннотация

Нвард Манасян
nvard.margot@gmail.com

Ключевые слова: *теория баланса, теория социального обмена, Гейдер, сети, коммуникация, диады, триады*

Статья обсуждает те формы коммуникаций, которые происходят в социальных группах разных конфигураций вне поля законности (легальности) и которые влияют на другие формы коммуникаций. Анализ базируется на теории баланса разработанного Гейдером и на разных экспериментах проведенных на тех же основах, а также на дальнейших теоретических адаптациях. В ряду с анализом, статья еще старается предложить некоторые решения.

21-ՐԴ ԴԱՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նունե Դիլանյան
Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարանի ավագ դասախոս
nounehd52@gmail.com

Արագացող և փոքրացող աշխարհում տեղի ունեցող գործընթացներն իրենց ընդգծված ազդեցությունն են դրսևորում մարդու, այն է՝ զգայական, բանական, հաղորդակցվող, ստեղծող/արտադրող և «խաղային» սուբյեկտի ճանաչողական կարողությունները և դրդապատճառները պայմանավորող՝ չորս տեսակի փոխկապակցված և փոխգործող հարաբերությունների տիրույթներում, որոնք կարելի է սահմանել որպես մարդ-բնություն, մարդ-մարդ, մարդ-մարդու ստեղծածը՝ մշակույթ, քաղաքակրթություն և մարդ-մարդ* (մարդ ռեֆլեկտիվ) հարաբերություններ: Այդ տիրույթներում և դրանց խաչմերուկներում կատարվողը թե՛ որպես գործընթաց, և թե՛ որպես արդյունք տալիս է ներգրավված սուբյեկտին այն, ինչը կոչվում է կրթություն:

Եթե մինչ(համա)ցանցային կրթության համար ճանաչողական գործընթացը ենթադրում էր իրականության տարբեր հատվածների հետևողական իմաստավորում, դրանց առանձնահատկությունների գրանցում և արդյունքների սահմանում որպես երևույթների այս կամ այն դաս, ինչը թույլ էր տալիս նոր տեղեկատվական հոսքերին իրենց տեղը գտնել մարդու գիտակցության մեջ որոշակի տրամաբանությամբ ձևավորվող աշխարհի պատկերում, ապա հետ(համա)ցանցային կրթությունը

ստիպված է հաշվի առնել նոր իրավիճակը[1], որի համար հատկանշական են վերը նշված հարաբերությունների հետևյալ փոխակերպումները.

1. Մարդ-բնություն հարաբերությունների բովանդակության փոխակերպումը. մարդը ստիպված է վերանայել իր նվաճողական, հարձակողական վերաբերմունքը բնության հանդեպ:

2. Մարդ-մարդ հարաբերություններում կտրուկ աճել է շփումների քանակը և տեսականին, ինչը պահանջում է լեզուների, որպես տարբեր նշանային համակարգերի ընդհանրացում կամ «ճանաչելիացում»՝ փոխգործության և փոխհարստացման հիման վրա հաղորդակցությունը արդյունավետ դարձնելու համար և որպես արդյունք՝ տարբեր ինքնությունների ջանքերը մեկտեղելու համար:

3. Մարդ – մշակույթ հարաբերություններում առաջ է եկել կանգառից դուրս գալու, (դարա)շրջանից դուրս գալու խնդիրը[2] և այդ ընթացքի արագության խնդիրը: Մի կողմից, ժամանակը աննախադեպ վազքի մեջ է, և մարդը դժվարությամբ է տանում իր և ժամանակի արագության տարբերությունը, մյուս կողմից, ստեղծելով ժամանակակից քաղաքակրթությունը բնութագրող անհրաժեշտ գործիքներ և դրանով իսկ ապահովելով մարդկության հիշողության հետևից ընկնելու համար անհրաժեշտ «գրպանային»

[1]Աբրահամ Մոլը նշում է, որ, եթե դասական մշակույթը տալիս էր մարդուն հասկացույթների այնպիսի ճշգրիտ էկրան, որի շնորհիվ նա կարողանում էր առանց դժվարության համադրել նոր և հին գիտելիքը, ապա ժամանակակից մշակույթը առաջարկում է սկզբունքորեն այլ՝ հստակ կառուցվածք չունեցող, խճանկարային, ասես բազմաթիվ անկանոն, կարճ ու երկար, իրար վրա եկող թելերից բաղկացած էկրան, որը ստեղծվում է անհատի՝ անհամար և անդադար տեղեկատվական հոսքերի մեջ մշտապես ընկղմված լինելու հետևանքով: Տես՝ А.Моль. Социодинамика культуры – М.: Издательство ЛКИ, 2008, էջ 46:

[2]Հունարենից փոխառված ἐποχή բառի «կանգառ» սահմանումը արտահայտված է նաև հայերենի դարաշրջան բառի «շրջան» բաղադրիչում:

հիշողություն, նա ժամանակ է շահել՝ իր անձնական կանգառները ապահովելու համար[3]:

4. Այս երեք տեսակի հարաբերությունների փոփոխության պատճառով հսկայական բեռ է ընկնում չորրորդի վրա, առաջնահերթ դարձնելով մարդու ռեֆլեկտիվ կարողությունների արթնացման ու զարգացման և դրանք դրսևորելու համար բարենպաստ կրթական պայմանների ստեղծման անհրաժեշտությունը: «Վերևից» դիտահայելու հնարավորություն ստեղծող անձնական կանգառը չի կարող վտանգել մարդու՝ իրեն ներգրավված զգալու և սեփական ընթացքը չդանդաղեցնելու ցանկությունը, որովհետև նման պայմաններում ազատագրված և ակտիվացած մտքի արագությունը հաղթահարում է ցանկացած արգելք:

Ակնհայտ է թվում, որ ներկայացված իրավիճակով պայմանավորված բոլոր խնդիրները կարող են և պետք է հստակեցվեն կրթության շրջանակներում, իրենց լուծումը ստանան կրթության ճանապարհին և ներկայանան որպես կրթության արդյունք: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հասկանալ՝ կարո՞ղ է արդյոք «քարտեզագրվել», ժամանակակից կրթությունը, հաշվի առնելով կրթական ուղղությունների, հարթակների, միտումների, դպրոցների երբեմն իրարամերժ բազմազանությունը:

Արդեն խոսվեց այն մասին, որ եթե նախկինում կրթությունը գնում էր դեպի տարբեր ուղղություններից եկող փոխկապակցված հասկացույթների մտավոր հանգույցների ստեղծում, այսինքն՝ գիտելիքի քայլ առ քայլ, աստիճանական կուտակում, ապա այսօրվա աշխարհի խճանկարային պատկերում այդ

[3]Մարդու քաղաքակրթական ճանապարհը ամենայն մանրամասնությամբ դիտարկված է Էլվին Թոֆլերի «Երրորդ ալիք» գրքում: Alvin Toffler, The Third Wave-https://archive.org/stream/TheThirdWave-Toffler/The-Third-Wave_Toffler_djvu.txt

հանգույցները առաջանում են հոսքերի խտության և ինտենսիվության արդյունքում: Կարելի է ենթադրել, որ այդ՝ սկզբունքորեն նոր եղանակով ստեղծվող հանգույցների տեսակարար կշիռը կախված է նրանց խտության աստիճանից: Կարելի է ենթադրել նաև, որ եթե նախկինում կրթությունը գնում էր դեպի հանգույցների ստեղծում, այսօր այն պետք է գնա դեպի հանգուցալուծում կամ, այլ կերպ ասած, հանգույցների իմաստավորում: Եթե այս նոր իրողության պատկերը համադրենք ավանդական կրթության համատեքստի հետ, ապա կհասկանանք, որ կրթության հայեցակարգը փոխելու անհրաժեշտությունը միանգամայն տեսանելի կդառնա: Վերը նշված հանգույցները կարող են իմաստավորվել միայն այն դեպքում, եթե դիտարկվեն ոչ թե որպես կրթության առարկա, այլ որպես կրթության օբյեկտ, այսինքն, մեկտեղեն տարբեր դիրքերով պայմանավորված մոտեցումներ:

Դասական կրթությունը այդ տարբեր դիրքերը դիտարկում և մատուցում է առանձին-առանձին (առանձին առարկաների տեսքով), հաճախ չկապելով իրար հետ, մինչդեռ հանգուցալուծումը ենթադրում է առարկաների փունջ, փաթեթ և ձևավորում է տարբեր առարկաների ջանքերը միավորելու պահանջ: Եթե բարձրագույն կրթության ոլորտում սա երբեմն տեղ է գտնում նոր՝ միջգիտակարգային առարկաների շնորհիվ, ապա հանրակրթությունը շարունակում է մնալ հին կաղապարների գերության մեջ: Հատկանշական է, որ աշակերտների հետաքրքրության անկումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նրանք, ապրելով ժամանակակից աշխարհում, կրթվում են անցյալի աշխարհում:

Այսպիսով, նոր կրթական հայեցակարգի մշակումը պետք է սկսվի առարկաների փաթեթները սահմանելու քայլից, իսկ սա իր հերթին կախված է նրանից, թե ինչ նպատակ է դրվում դրանցից

յուրաքանչյուրի առաջ և ըստ այդմ՝ ինչ կրթական մեթոդներ են անհրաժեշտ այդ նպատակներին հասնելու համար: Առարկաների խմբավորման ալգորիթմը կարելի է դուրս բերել, օրինակ, վերը նշված՝ մարդ-բնություն, մարդ-մարդ, մարդ-մարդու ստեղծածը ճանաչողական տիրույթներից, որոնց հատումները տալիս են կրթական «խաչմերուկներ»: Պարզ է, որ տարբեր փաթեթներում ներգրավված առարկաները կարող են կրկնվել՝ հանդես գալով այլ դերում, ստանալով այլ տեսակարար կշիռ և ստանձնելով այլ գործառույթ:

Յուրաքանչյուր կրթական փաթեթի իրականացման գործընթացը ենթադրում է ուսուցիչների/դասախոսների և աշակերտների/ուսանողների թիմային/նախագծային աշխատանք, որն ունի մի քանի առավելություններ.

- ցանկացած բնածին և մարդածին երևույթ տարբեր դիրքերից ուսումնասիրելու և ամբողջական պատկեր ձևավորելու հնարավորություն,
- ուսուցչին/դասախոսին «գրատախտակային» գիտելիք մատուցելու կաղապարներից ազատելու և, որպես արդյունք՝ աշակերտի/ուսանողի համար ավելի անկաշկանդ և ազատ մթնոլորտ ապահովելու հնարավորություն,
- միասնաբար մտածելու և (համապատասխան մեթոդների կիրառման պարագայում) թիմային աշխատանքի կարողություններ զարգացնելու հնարավորություն,
- աշակերտի/ուսանողի ինքնաճանաչման և ինքնորոշման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հնարավորություն,
- փոքր տարիքից հետազոտական կարողություններ զարգացնելու հնարավորություն;
- փոքր տարիքից տրամաբանական և պատկերավոր մտածողություն զարգացնելու հնարավորություն:

Թերևս, հարկ չկա շեշտելու, որ կրթական փաթեթները չպետք է սահմանափակվեն գիտելիքի միայն ճշգրիտ կամ միայն հումանիտար ոլորտներով: Ճիշտ հակառակը, դրանք պետք է ներառեն թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի առարկաները, ինչպես նաև արվեստը: Այլ կերպ ասած, յուրաքանչյուր փաթեթի ռեսուրսները (առարկաները) և միջոցները (մեթոդները) պետք է ծառայեն տվյալ փաթեթի նպատակին, որն իր հերթին պայմանավորված է նրանով, թե գիտելիքի՝ վերը նշված թանձրույթներից որը պետք է հանգուցալուծվի:

Կարևոր է նաև հաշվի առնել փաթեթից փաթեթ անցնելու հնարավորությունները՝ կամուրջներ ստեղծելու անհրաժեշտությունը: Քանի որ խոսք եղավ ներկայիս խճանկարային գիտելիքի մասին, շարունակելով այդ պատկերի զարգացումը, որպես փաթեթից փաթեթ անցնելու մեթոդ կարելի է առաջարկել գեղադիտակի գործելու եղանակը, որի տարրերը, մնալով անփոփոխ, ստեղծում են տարբեր նախշեր, մեր դեպքում՝ փաթեթներ: Այս պայմաններում թե՛ ներփաթեթային, թե՛ միջփաթեթային կրթական ընթացքների համար առաջնային է դառնում ռեֆլեկտիվ մտածողության զարգացումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կրթությունը ցանցային երևույթ է, ընդ որում մի քանի առումներով. որպես գիտելիքի տարբեր հանգույցները կապող համակարգ, որպես այդ հանգույցներում ներգրավված սուբյեկտների համակարգ, որպես նորանոր ազդակներ ստեղծող և արձակող, այսինքն՝ բարձր լարման շնորհիվ իր կենսունակությունը ապահովող համակարգ, որպես անհատականի, ինստիտուցիոնալի և գլոբալի հանդիպման վայրեր ստեղծող համակարգ:

Մինչև վերջերս այս ամենը կար չերևակված տեսքով, իսկ այսօր, դառնալով միանգամայն տեսանելի համացանցի շնորհիվ, այն թելադրում է կրթությանը նոր իրավիճակից բխող

մոտեցումներ, որոնք պայմանավորված են հետևյալ իրողություններով.

1. Այսօր անհատը կարող է ստեղծել իր **անձնական թվայնացված տարածքը** և գրանցել իր կրթուղին, իր մոտեցումները, խնդիրները, ակնկալիքները, հոգսերը, ծրագրերը: Այս տարածքները, մի կողմից, թույլ են տալիս անհատին դառնալ ցանցի մասնակից, մյուս կողմից՝ ապահովում են ցանցը կարևոր բովանդակությամբ: Ըստ որոշ հետազոտողների, հենց այս անհատական տարածքների վրա է խարսխվելու ապագայի կրթությունը[4]: Վերը նշված փաթեթային կրթական մոդելը թույլ կտա կրթական ոլորտում ներգրավված սուբյեկտներին այդ տարածքները լցնել արդեն ռեֆլեքսիա անցած բովանդակությամբ:

2. Արդեն նշվեց, որ ցանցային կրթության կարևոր հատկանիշներից մեկը **ինտենսիվ հաղորդակցման և սոցիալական տարածքներ ստեղծելու հնարավորությունն** է, այսինքն՝ փորձը կիսելու և ըստ ցանկության՝ տարբեր հանրույթներում ներգրավվելու հնարավորությունը: Այսպիսի ներառական համակարգի առկայության պարագայում յուրաքանչյուր անձ կարող է մուտք գործել ինչպես ուրիշ անձանց անհատական տարածքներ, այնպես էլ այլոց հետ կապող ցանցային տարածքներ: Այս կրթական վայրերում տեղի ունեցող ակտիվ շփումների շնորհիվ տեղի է ունենում մտքերի փոխանակում և արդյունքում ծնվում և փորձարկվում են գաղափարներ, մեկի միտքը զտվում և հստակեցվում է մյուսի մտքի օգնությամբ, միտքը դառնում է ընդհանուր, մեթոդաբանությունը մշակվում է հընթացս միասնաբար, այսինքն՝ նախագիծն իրականացնող թիմը կազմավորվում է կամավորության, հետաքրքրվածության և

[4]Այս մասին մանրամասները կարելի է գտնել մի խումբ հետազոտողների կողմից իրականացված աշխատության մեջ:
http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.476.2601&rep=rep1&type=pdf

սեփական կարողությունների գնահատման սկզբունքով: Նման մոտեցման պարագայում կարող են ստեղծվել տարբեր տեսակի թիմեր, որոնք կստանձնեն ինչպես միանգամայն տեսանելի և հասանելի արդյունք ենթադրող, այնպես էլ կրեատիվ, սակայն ռիսկային նախագծեր:

Դասական կրթության տեսանկյունից նման ցանցային կրթական գործելակերպի կապակցությամբ առաջ են գալիս հետևյալ կարևոր հարցերը. ինչպե՞ս է լուծվելու այդ տարածքների վստահելիության խնդիրը, ի՞նչն է ստիպելու անհատներին և/կամ խմբերին ներգրավվելու և գործելու այդ տարածքներում, պե՞տք է արդյոք վերահսկվեն նման կրթական տարածքները և վերջապես՝ ինչպե՞ս են գնահատվելու այս ցանցային գործունեության արդյունքները:

Ինչ վերաբերում է առաջին հարցին, ապա համացանցի ստեղծման պահից մշակվող տարբեր միջոցներից զատ, այս տարածքների համար վստահություն ձեռք բերելու ամենամեծ երաշխիքը, թերևս, յուրաքանչյուր անհատի ազատությունից բխող պատասխանատվությունն է, հավաստի տվյալներ տրամադրելու անձնական շահագրգռվածությունը, ցանցային համերաշխությունը, վարկաբեկվելու դեպքում ցանցային ընկերակցությունից զրկվելու վտանգը:

Սա անմիջականորեն կապված է երկրորդ հարցի հետ, որի լուծումը նույնպես բխում է ցանցի ազատությունից, ինչպես նաև ցանցի խաչմերուկներում տեղի ունեցող անցուդարձից, այդ խաչմերուկներից արձակվող ազդակների ուժգնությունից, որոնք տարբեր անհատների համար կարող են գրավիչ լինել ոչ միայն բանական՝ ռացիոնալ, այլև զգայական առումով: Ամեն պարագայում յուրաքանչյուր անհատ ինքն է որոշում իր տեղը, մասնակցության ձևը և աստիճանը ցանցի կողմից առաջարկվող այս կամ այն գործընթացում:

Պե՞տք է արդյոք նման համակարգը վերահսկվի: Այս հարցը նույնպես նպատակահարմար չէ դիտարկել մեր ներկայիս կրթության տրամաբանության դիրքերից: Եթե դուրս գանք այդ շրջանակից և ընդունենք, որ կրթությունը բազմաֆունկցիոնալ երևույթ է, որը պետք է ապահովի սուբյեկտի պատկանելության ընկալումը, ինքնարժեքորումը գործելու, անելու միջոցով, ինքնության ձևավորումը, կայացման գործընթացը, փորձառության գիտակցումը, ապա պարզ կդառնա, որ ոչ հեռավոր ապագայի կրթական տարածքների բարդ, բազմաշերտ և բազմաթիվ խաչմերուկներով հագեցած, թափանցիկ և վստահարժան ցանցը պետք է վերահսկվի ոչ թե «վերևից», այլ ինքն իր միջից, այսինքն՝ հաշվի առնի, որ իր անդամներն ունեն տարբեր կարիքներ, կարողություններ, ակնկալիքներ, հետաքրքրություններ և որ նրանք ընկալում են, հասկանում են, յուրացնում են, գործում են, արձագանքում են տարբեր եղանակներով և արագությամբ: Իսկ սա նշանակում է, որ այդ համակարգը պետք է տրամադրի իր անդամներին ճկուն կրթական քարտեզ, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը կարողանա ընտրել իր համար առավել ընդունելի և արդյունավետ ուղին:

Վերջապես՝ ամենացավոտ և լուրջ մշակման կարիք ունեցող հարցը՝ արդյունքների գնահատումը: Նախ, պետք է վերջապես խոստովանել, որ մեր գնահատման համակարգը արատավոր է և հազվադեպ է արտացոլում աշակերտի/ուսանողի գիտելիքի իրական պաշարը և կարողությունները: Ի թիվս բոլորիս հայտնի պատճառների անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ մենք, փոխառելով այլ կրթական համակարգերում մշակված գնահատման չափանիշները, չենք ապահովել և շարունակում ենք չապահովել այդ չափանիշներին համապատասխանող կրթական բովանդակությունը և մեթոդները: Մինչդեռ աշխարհն արդեն անցել է կրթության հետազոտական, լաբորատոր, նախագծային

եղանակների, ընդ որում ոչ միայն բարձրագույն, այլև միջնակարգ կրթության ոլորտներում: Այս մեթոդները, ապահովելով գիտելիքամետ, ռեֆլեկտիվ և ստեղծագործական գործընթաց և վերածելով գիտելիք ձևավորելու պարտադրանքը այն կիրառելու ցանկության (այսինքն, կրթությունը դիտարկելով ոչ թե որպես նպատակ, այլ որպես միջոց), մի կողմից, տեսանելի են դարձնում կրթական գործունեության արդյունքները, մյուս կողմից, իմաստազրկում են անգիր արածը և չյուրացվածը գնահատելու արատավոր մոտեցումը: Այսպիսով, գնահատվում է կրթական արդյունքի (ապրանքի) կիրառելիությունը և այդ արդյունքին հասնելու ճանապարհին ձեռք բերած՝ տրամաբանելու, հիմնավորելու, խնդրավորելու, ապացուցելու կարողությունները :Պարզ է, որ, ինչպես արդեն նշվեց, փոխվում է նաև ուսուցչի դերը. նա լքում է գրատախտակը և դառնում է թիմի լիիրավ անդամ:

Վերջապես, ամենաարդիական հարցը. արդյո՞ք այսօր իմաստ ունի խոսել այս ամենի մասին, հաշվի առնելով մեր կրթական իրավիճակը, կրթության ոլորտում ներգրավված շահագրգիռ կողմերի հակադիր մոտեցումները, համապատասխան մասնագետների բացակայությունը, մտածողության իներցիան, ակնհայտ ռիսկերը, ցանցային հայեցակարգը մշակելու հետ կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները՝ ներառյալ քաղաքական կամքը, մասնագիտական հմտությունները, վարձատրման և ժամանակի գործոնները, հետևողականությունը և այլն: Այս առումով կարելի է բերել առնվազն երկու՝ ներկայիս Հայաստանի քաղաքական խոսույթից բխող հիմնավորում:

1. Այսօր շատ է քննարկվում կրթության ոլորտում համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, իսկ «համակարգային» հասկացությունը ինքնին հակասում է «բարեփոխումներ» հասկացությանը. անհրաժեշտ է ոչ թե լավացնել եղածը, այլ միանգամայն տարբեր մոտեցում դրսևորել

համակարգը փոխելու հարցում: Այդ նոր մոտեցումը ունի պարզ հիմնավորում. եթե կյանքն այսօր ցանցային է, իսկ մենք անվերջ խոսում ենք կրթությունը կյանքին մոտեցնելու մասին, ուրեմն կրթությունը նույնպես պետք է դառնա ցանցային: Այլ կերպ ասած, ներկան պետք է գա ոչ թե անցյալից, այլ ապագայից: Ցանցաստեղծ բնույթ ունեն թե՛ վերը նշված կրթական փաթեթները, թե՛ միջփաթեթային գործընթացները, թե՛ միջինստիտուցիոնալ, այսինքն՝ դպրոցների և ԲՈՒՀ-երի միջև ստեղծվող համատեղ ծրագրերն ու հետազոտությունները, որոնք կարող են իրականացվել ինչպես դպրոց-դպրոց, ԲՈՒՀ-ԲՈՒՀ, այնպես էլ դպրոց-ԲՈՒՀ կապերի միջոցով: Սա թույլ կտա ստեղծել համակարգված ներքին կրթական ցանց, որի հանգույցների աշխուժությունը պայմանավորված կլինի ոչ միայն ներքին գործունեությամբ, այլև մյուս հանգույցների հետ ազդակների փոխանակմամբ: Թեև նման մոտեցման ռիսկերն ու վտանգները ավելի մեծ չեն, քան թերի կրթական համակարգի ռիսկերն ու վտանգները, այս գործը կարելի է սկսել մի քանի պիլոտային նախագծերով, որոնք կստանան պետության աջակցությունը և կներառեն վերը նշված կրթական միավորների բոլոր տարբերակները:

2. Այս ներքին ցանցի ընդլայնումը կարող է տեղի ունենալ մեկ այլ՝ քաղաքական խոսույթում դարձյալ հաճախ հնչող գաղափարի շնորհիվ, որի իմաստը համահայկականության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ հենք ստեղծելն է: Եթե վերադառնանք ցանցերի՝ արդեն հիշատակված մակարդակներին, ապա սա լոկալ-ինստիտուցիոնալ-գլոբալ շղթայի ապահովումն է, կամ ավելի նեղ շրջանակներում քննարկվող ցանցապետության կրթական հենքը, որի հիմքում ընկած է մեկ այլ՝ արժեք-կրթություն-արժեք շղթան: Աշխարհի տարբեր վայրերում և տարբեր կրթական համակարգեր ներկայացնող մեր

հայրենակիցներն անգնահատելի ռեսուրս են այդ շղթան ստեղծելու համար: Ցանցապետության գաղափարի շուրջը ընթացող քննարկումներում շեշտվում է «տեքստի», այսինքն՝ արժեքային հիմնավորման անհրաժեշտությունը: «Տեքստը» ծնվում է կայծից, իսկ կայծը ծնվում է այն խաչմերուկներում, որտեղ հանդիպում են անհատականը, ինստիտուցիոնալը և գլոբալը, այսինքն՝ հաղորդակցման ցանցային հանգույցներում, որովհետև, ինչպես ասում էր Մ. Մամարդաշվիլին[5], տեքստ ստեղծող մարդը կա, ապրում է միայն այն կետերում, որոնցով անցնում է հաղորդակցման բարձր լարման հոսանքը:

EDUCATION IN THE 21ST CENTURY: NETWORKING CHALLENGES AND OPPORTUNITIES

Abstract

Nouneh Dilanyan
Russian-Armenian University
nounehd52@gmail.com

Key words: *educational packages, global changes, networking, identity, values.*

The paper attempts to address the problem of the applicability of network-based approach to learning, with the term network being considered at several levels such as: a) creating educational packages; b) creating links between educational packages; c) creating school-to school links; d) creating HEI-to-HEI links; e) creating school-to-HEI links. The paper surveys a number of significant signs of a changing

[5]Տես М. Мамардашвили, Сознание и цивилизация. Лениздат, 2014. Сознание - это парадоксальность, к которой невозможно привыкнуть (հարցազրույց) - https://omiliya.org/article/soznanie-eto-paradoksalnost-k-kotoroy-nevozmozhno-privyknut-merab-mamardashvili

learning environment underlying the necessity of a holistic *approach* when designing new learning spaces. It also discusses the possibility of creating an all-Armenian educational network.

СЕТЕВОЕ ОБРАЗОВАНИЕ XXI ВЕКА: ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ

Аннотация

Нунэ Диланян
Российско-Армянский
(Славянский) университет
nounehd52@gmail.com

Ключевые слова: *образовательные пакеты, глобальные перемены, создание сетей, идентичность, ценности*

В статье обсуждается необходимость применения сетевого подхода к обучению, при этом термин «сеть» рассматривается на нескольких уровнях - таких как: а) создание образовательных пакетов; б) создание связей между образовательными пакетами; в) создание связей между школами; г) создание связей между вузами; д) создание связей между школой и вузом. С целью обоснования предлагаемого подхода рассматривается ряд существенных сигналов, свидетельствующих об изменении среды обучения и требующих целостного подхода при проектировании новых образовательных пространств. Обсуждается также возможность создания общеармянской образовательной сети.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ 2018թ. ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ. ՔԱՅԼ ԴԵՊԻ ՑԱՆՑԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շուշան Կյուրեղյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
shoushan.kyureghyan@ysu.am

Բանալի բառեր՝ *Մոսկվայի հայ համայնք, ցույցեր, Ռուսաստանի հայերի միություն, Ռուսաստանի հայերի միավորում, ինքնություն, ցանցապետություն*

Ընդհանուր ակնարկ

2018թ. մարտի 31-ին Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած և մինչ օրս շարունակվող իրադարձությունները, որոնք հայտնի են «թավշյա հեղափոխություն[1]» անվամբ, բուռն արձագանք ունեցան և մի շարք գործողությունների հիմք հանդիսացան օտար երկրներում գործող հայկական համայնքներում: Ցանցային ինֆորմացիոն համակարգի միջոցով տարածված հեղափոխական տրամադրությունները և գործողությունների տրամաբանությունը կարճ ժամանակ անց համակեց նաև աշխարհասփյուռ հայերին, որոնք «հեղափոխությանը» իրենց մասնակցությունն ունեցան տվյալ երկրներում գործող ՀՀ դեսպանատների և եկեղեցիների մոտ բողոքի ցույցերի, դրամական օժանդակության, սոցիալական

[1]Ոչ բռնի, խաղաղ գործողություններով ուղեկցված ցույցեր, երթեր, քաղաքացիական անհնազանդության զանգվածային դրսևորումներ Հայաստանում, որոնց առաջին ակնառու քաղաքական արդյունքներից մեկը եղավ ապրիլի 23-ին երկրի վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականը, իսկ երկրորդը՝ մայիսի 8-ին Ազգային ժողովի կողմից «ժողովրդի թեկնածու» Նիկոլ Փաշինյանին վարչապետի պաշտոնում ընտրելը:

ցանցերում շարժմանը սատարող գրառումների, իսկ երբեմն՝ անմիջական մասնակցության միջոցով:

Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հայերի արձագանքը ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին խիստ կարևոր է, եթե հաշվի առնենք, որ այստեղ հայերի թիվը միայն պաշտոնական տարբեր տվյալների համաձայն տատանվում է 1.2-2.2 մլն-ի միջակայքում[2]: ՌԴ-ը ՀՀ-ից հետո երկրորդ երկիրն է հայ բնակչության թվով: «Թավշյա հեղափոխության» օրերին ՌԴ հայկական համայնքի՝ մասնավորապես Մոսկվայի հայերի գործողությունների վերլուծությունը թույլ կտա հասկանալ, թե ինչպես է հայրենիքում տեղի ունեցածը ազդել ռուսաստանաբնակ հայերի ինքնության ցուցիչների, ինքնակազմակերպման հարթակների կազմման և ցանցայնացման արդյունավետության բարձրացման վրա:

Վերլուծության համար հիմք են ծառայել ռուսական իշխանությունների պաշտոնական հայտարարությունները, Ռուսաստանում բնակվող հայ և ռուս քաղաքագետների վերլուծությունները, հայ օգտատերերի գրառումները սոցիալական ցանցերում, Ազգերի մշակույթի Մոսկվայի հայկական թանգարան (Армянский музей Москвы и культуры наций), Հայերը Ռուսաստանում (Армяне в России), Հայերը Մոսկվայում (Армяне в Москве), Ռուսաստանի հայերի միություն (Союз Армян России), Ռուսաստանի հայերի միավորում (Объединение армян России) և նմանատիպ այլ խմբերում ծավալված քննարկումները, ռուսաստանաբնակ հայերին ուղարկված հարցաշարի

[2] ՀՀ ԱԳՆ էջի հրապարակումների համաձայն 2002թ. ՌԴ-ում անցկացված մարդահամարի տվյալներով ՌԴ-ում բնակվող հայերի թիվը 1.2 մլն: Տե՛ս http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2011/Russia.pdf:
Սփյուռքի նախարարության պաշտոնական կայքէջի հետևյալ հրապարակման մեջ ներկայացված է 2.2 մլն: Տե՛ս
http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2011/Russia.pdf

պատասխանները (տե՛ս հավելված 1), ինչպես նաև որոշ անձանց հետ խորքային հարցազրույցները:

Մարտի 31-ին մեկնարկած Նիկոլ Փաշինյանի «Իմ քայլը» նախաձեռնությունը մինչ ապրիլի 13-ը առանձնակի լայն քննարկման չէր ենթարկվում ինչպես Մոսկվայի, այնպես էլ ՌԴ այլ համայնքների նեկայացուցիչների կողմից[3]: Հարկ է նշել, որ այն առանձնապես չէր լուսաբանվում անգամ հայկական տեղական ԶԼՄ-ներով: Ռուսաստանաբնակ հայերին միավորող սոցիալական ցանցերի մի շարք խմբերի և օգտատերերի առանձին գրառումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հետաքրքրությունը ձևավորվել և ակտիվ դրսևորվել է ապրիլի 16-ին մայրաքաղաք Երևանում տրանսպորտի բնականոն գործունեության խափանման, ցուցարարների և ոստիկանության միջև բախումների և ապրիլի 17-ին ԱԺ-ում տեղի ունեցած վարչապետի ընտրությանը հաջորդած իրադարձությունների արդյունքում:

Արդեն ապրիլի 17-ին և 18-ին մոսկվայաբնակ հայ երիտասարդների մի խումբ բողոքի ակցիաներ է կազմակերպում ՌԴ-ում ՀՀ դեսպանատան շենքի մոտ, որոնք ընթանում են լարված մթնոլորտում և ավարտվում երեք հայ երիտասարդների ձերբակալությամբ: Ավելի ուշ վերջիններս բաց են թողնվում, և

[3] Արցախի հարցում Ադրբեջանի դիրքորոշման, Ռուսաստանում Տելեգրամի արգելման, Freedom House-ի զեկույցի և այլ, առավել կենցաղային հարցերի շարքում սոցցանցերում հայերին միավորող խմբերում թավշյա հեղափոխությանն առնչվող առաջին գրառումը կատարվել է ապրիլի 13-ին՝ «Միացում. Հայաստանի մայրաքաղաքում սկսվել են մասսայական բողոքի ակցիաներ» վերտառությամբ, որը գրեթե չի արժանացել հավանումների և չի մեկնաբանվել: Խմբում ցույցերի վերաբերյալ ինֆորմացիայի առատությունը նկատվում է ապրիլի 16-ից, երբ առաջին անգամ խափանվում է Երևանի մետրոպոլիտենի բնականոն գործունեությունը և տեղի են ունենում առաջին բախումները ոստիկանության և ցուցարարների միջև՝ ինչին ի պատասխան շատերը արտահայտում են իրենց դժգոհությունը և բողոքում ժողովրդի վրա կրակելու հրաման տալու համար:

դեսպանատունը հրաժարվում է բողոքել երիտասարդների դեմ[4]: Այսպիսով, ՌԴ հայ համայնքի ինքնակազմակերպման և բողոքի հասցեագրման հարթակներից մեկը հրաժարվում է ընդունել այդ ազդակները՝ մասնակիորեն սպառելով իրեն և նվազեցնելով իր հանդեպ համայնքի վստահությունը: Հավաքների անցկացման վայր է դառնում համայնքի մյուս կարևոր կառույցը՝ եկեղեցին:

Ապրիլի 19-ին Մոսկվայում տեղի է ունենում երիտասարդական հավաք, որի մասնակից երիտասարդները կոչ են անում յուրաքանչյուր օր ժամը 18:00-ին հանդիպել Մոսկվայում հայկական նորակառույց եկեղեցու բակում՝ ի աջակցություն ՀՀ-ում իշխող ռեժիմի դեմ հայտարարված հեղափոխությանը[5]: Հավաքի ընթացքում հնչում են նույն կարգախոսները՝ «Քայլ արա մերժիր Սերժին», «Մենք ենք տերը մեր երկրի», «Իյա, իրո՞ք» պաստառների ուղեկցությամբ: Չնայած ընդհանուր առմամբ հեղափոխության՝ սիրո և համերաշխության տրամաբանությանը որդեգրած հավատարմությանը, այնուամենայնիվ տարածված տեսանյութերի մեկնաբանություններում ոչ բոլոր ռուսաստանաբնակ հայերն են խրախուսում օտար հողում ՀՀ իշխանությունների դեմ ցույցերի անցկացումը[6]:

Ապրիլի 20-ին Մոսկվայի հայկական եկեղեցու բակում տեղի ունեցած հերթական հավաքի ժամանակ արդեն որպես կոչ ձևակերպվում է Հայաստան մեկնելու և ցույցերին մասնակցելու

---

[4] Посольство Армении отказалось подавать заявления в полицию на участников акции протеста, https://armenpress.am/rus/news/930861/ (16.05.2018)

[5]https://www.facebook.com/gor.aleksanyan.3/posts/1796714220348915 Տեսանյութը ֆեյսբուք սոցիալական ցանցում դիտվել է շուրջ 8000 անգամ, ունեցել մոտ 200 հավանում և 270 տարածում:

[6] Այս գրառման մեկնաբանություններում Դավիթ Անտոնյանը կոչ է անում չխայտառակվել օտար հողում և գնալ ու պայքարել հայրենիքում, ինչին ի պատասխան նշվում է, որ հավաքի հաջորդ քայլերից մեկը լինելու է կամավորների հավաքագրումը, ովքեր կգնան Հայաստան՝ տեղում մասնակցելու ցույցերին:

անհրաժեշտությունը: «Գնացեք Հայաստան, եթե հնարավորություն ունեք, և ֆիզիկապես աջակցեք ցույցերին», - հնչում է եկեղեցու բակում կազմակերպված ակցիայի հարթակից[7]:

Հետաքրքրական է ապրիլի 21-ին տեղի ունեցած ցույցի ընթացքում հնչած մտքերից մեկը՝ «Մեզի պետք չի էնպիսի երկիր, ուրդե լինեն լֆիկներ, շմայսեր, մկներ»[8] . սա հստակ ուղերձ է առ այն, որ ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում հավաքված երիտասարդները ևս պայքարում են ողջ ռեժիմի, և ոչ պարզապես Սերժ Սարգսյանի վարչապետության դեմ:

Տիրող հեղափոխական տրամադրությունների համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՌԴ-ում բնակվող մեր հայրենակիցների համար բեկումնային է դառնում ապրիլի 22-ին Նիկոլ Փաշինյանի և Սերժ Սարգսյանի տապալված բանակցությունները (մասնավորապես մարտի 1-ի վերաբերյալ հայտարարությունը) և ժամեր անց՝ Նիկոլ Փաշինյանի ձերբակալումը:

Նույն օրը Մոսկվայի հայկական եկեղեցու բակից բերման են ենթարկվում ակցիա իրականացնող տասնյակ հայեր՝ չկարողանալով մտնել եկեղեցի: Ցուցարարների պնդմամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանն է ահազանգել ոստիկանությանը և կարգադրել կողպել դռները, մինչդեռ եկեղեցու սպասավորները պնդում են և տեսանյութեր հրապարակում, որ եկեղեցին աշխատել է: Եկեղեցու բակից բերման ենթարկված 60 ակտիվիստներից 24-ի

[7] «Սերժին պիտի վերացնենք» կոչին ի պատասխան եկեղեցու բակում հավաքվածներից ոմանք բացականչում են՝ լավ մարդ ա ինքը, հլը թող հելնի, վերացնելը Աստված կորոշի, որին հետևում են նորընտիր վարչապետ Սերժ Սարգսյանին ծաղրող «Չիբուռաշկա» վանկարկումները: https://www.facebook.com/sue.rose.3994/videos/1977985489132203/?hc_ref=ARSgECZYacjVVbPOWeeJg_D_5sbhd4SWIBMelXmSsgjPjbD7WA8Xu-o0Hg03xSknu-k (21.05.2018)

[8] https://www.facebook.com/naira.hakobyan.986/posts/2007420202833275 (21.05.2018)

նկատմամբ կարգապահական տուգանքներ են կիրառվել[9]: Այստեղ ևս ակնառու է դառնում հայ համայնքներում ավանդապես մեծ դերակատարում ունեցող երկու կառույցների՝ դեսպանատան, ապա նաև եկեղեցու և համայնքի ներկայացուցիչների միջև կապի խզումը:

Ապրիլի 22-ին՝ Նիկոլ Փաշինյանի և Սերժ Սարգսյանի տապալված բանակցություններից հետո, Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչ Գերաս Ավետիսյանը կոչ է անում Մոսկվայի բոլոր հայերին ժամը 16:00-ին հավաքվել եկեղեցու հրապարակում, առանց կոչերի, լուռ, ուղղակի ձեռքերը վեր բարձրացնելով՝ աշխարհին ցույց տալու, որ մարտի մեկը կազմակերպել է Սերժ Սարգսյանը, որ նա սպառնում է հայ ժողովրդին: «Համարեք, որ այսօր ապրիլի 24-ն է, որ **այսօր վերջն** է, իսկ ով հնարավորություն ունի թռնելու Հայաստան, գնում ենք Հայաստան: Բոլորս Հայաստան: Ես հենց հիմա գնում եմ Հայաստան»: «Մեր ազգը պիտի այս ապրիլի 24-ը տոնի որպես զարթոնքի տոն, ոչ թե ողբի տոն: 100 տարի ճզմել են, հոգեզրկել են, բարոյազրկել են: Բոլորդ ոտքի, ով ինչ ձև կարողանում ա»[10]:

Այստեղ հետաքրքրական է ապրիլի 24-ի, մարտի 1-ի և համաժողովրդական շարժման գլխատման միջև համեմատությունը, որը ստիպում է ռուսաստանաբնակ շատ հայերի վերադառնալ հայրենիք և փորձել կանխել **«վերջը»:**

Ապրիլի 24-ը ամփոփում է հայոց զանգվածային ջարդերը, իսկ ավելի կոնկրետ մտավորականության, քաղաքական գործիչների և գործարարների ձերբակալումն ու զանգվածային սպանությունը,

---

[9] Տե՛ս В Москве безжалостно судят 24 армян, вышедших 22 апреля на митинг возле армянской церкви против Сержа Саргсяна https://armenia.im/6/27735819561 (20.05.2018)

[10] Գերաս Ավետիսյանի կոչը դիտել են շուրջ 64000 մարդ, 1500-ը մեկնաբանել, 1700-ը տարածել: Տե՛ս https://www.facebook.com/geras.avetisyan/videos /1719053294854458/?hc_ref=ARTJPqJPWu4eFh63vq2AiUKYWBxDsLHfayx3ETQ-_bHizrU1zr1Z_S7JobX0y_6z1Mw (22.05.2018)

որին հաջորդեց արդեն անպաշտպան մնացած կանանց, երեխաների ու ծերերի ոչնչացումը: Համաժողովրդական շարժման ղեկավարների ձերբակալումը նմանատիպ վտանգի առաջ էր կանգնեցրել փողոցում հավաքված բազմահազար հայերին, շարժումը գլխատվել էր և առաջացել էր իշխանության կողմից քաղաքացիների հանդեպ անգամ բիրտ ուժի կիրառման իրական վտանգ: Որքան շատ լիներ մարդկանց մասնակցությունը ցույցերին, այնքան իշխանությունը կաշկանդված կլիներ իր գործողություններում:

Ապրիլի 22-ի երեկոյան համայնքի ակտիվ երիտասարդների գրառումներից տեղեկանում ենք, որ հայերը քննարկում են մեքենաներով Հայաստան գալու և ցույցին միանալու հետ կապված հարցեր[11]:

Ապրիլի 23-ին, երբ դեռ Նիկոլ Փաշինյանին ազատ չէին արձակել, Մոսկվայի հայ համայքի երիտասարդները (Գեորգի Բարխուդարյանի գլխավորությամբ) կազմակերպում են ավտոերթ դեպի Հայաստան՝ «անելու իրենց քայլը Սերժիկի դեմ»[12]: Ուղերձի հեղինակը խնդրում է տարածել այն և նշում, որ Մոսկվայի հայերից շատերը գումարային աջակցություն են ցույց տալիս: Հեղինակը ընդլայնում է կոչի աշխարհագրությունը՝ ասելով, որ ցանկալի է աշխարհի բոլոր հայերը միանան իրենց: Ավտոերթի կազմակերպիչը նշում է, որ խնդիրների առաջացման դեպքում պատրաստ են հենց սահմանին վրաններ խփել և այնտեղ կատարել բողոքի ակցիա: «Մենք նույնիսկ չենք կարողացել տոմս առնել, մենք

[11] https://www.facebook.com/gor.aleksanyan.3/posts/1799683050052032 (21.05.2018)
[12] Տե՛ս https://www.facebook.com/georgi.barxudaryan.1/videos/877276365785189/ (21.05.2018)

գալու ենք ու լինենք ձեր կողքը: Պայքարեք մինչև վերջ, հուսահատ չլինեք: Եվս մեկ անգամ՝ քայլ արա, մերժիր Սերժին»[13]:

Նույն օրը, որպես աջակցություն նշվում է, որ Մոսկվայի հայ բարերարներից մեկը վճարել է 30 երիտասարդների Հայաստան մեկնելու տոմսի գումարը՝ կտրականապես դեմ լինելով անվան բարձրաձայնմանը[14]:

ՌԴ հայ համայնքի և մոսկվայաբնակ հայերի մասնակցությունը թավշյա հեղափոխությանը, որը հիշարժան զարգացումներով էր աչքի ընկնում մինչև ապրիլի 23-ը, որոշակի փոփոխություն է կրում ապրիլի 23-ից հետո: Դեսպանատան և եկեղեցու դիմաց տեղի ունեցած միջադեպերից, և արդեն Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո ՌԴ համայնքի ակտիվ ներկայացուցիչների գործունեության հարթակը ՌԴ-ից տեղափոխվում է Հայաստան:

Սոցիալական ցանցերի, մասնավորապես ֆեյսբուքի հայազգի ակտիվ օգտատերերի գրառումներից տեղեկանում ենք, որ ապրիլի 25-ին արդեն Մոսկվայից Հայաստան ժամանած ցուցարարները իրենց մեքենաներով փակել են Սախարովի հրապարակը[15]: Նրանց շարասյուները ակտիվ մասնակցում են դեպի Գյումրի և Վանաձոր կազմակերպված ավտոերթին, ինչպես նաև մայիսի 1-ին և մայիսի 8-ին Հանրապետության Հրապարակում Ազգային ժողովի նիստերի հեռարձակմանը:

Նիկոլ Փաշինյանի ընտրությանը հաջորդող ժամանակահատվածում ռուսաստանաբնակ հայերի քաղաքական ակտիվությունը և դրա արտահայտումը սոցիալական ցանցերում

[13]https://www.facebook.com/georgi.barxudaryan.1/videos/877276365785189/?hc_ref=ARQkobWehZzgwSqd7YGSF0oV8NMZ3qnKW8anbS3b5yuV1wG-kSpPS29lC3LdA_oo_zk (21.05.2018)

[14] https://www.facebook.com/gor.aleksanyan.3/posts/1800364313317239 (22.05.2018)

[15] https://www.facebook.com/gor.aleksanyan.3/posts/1802609936426010 (22.05.2018)

զգալիորեն նվազում է: Նորընտիր վարչապետը լավ ընդունելության է արժանանում մայիսի 13-ին Սոչի և հունիսի 14-ին Մոսկվա կատարած իր այցերի ընթացքում հայ համայնքի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներում: Ավելի ուշ, օգոստոսի 17-ին, Հանրապետության հրապարակում վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարման 100 օրը ամփոփող հանրահավաքին ընդառաջ ռուսաստանաբնակ հայերի «Հայերը Մոսկվայում» խմբում դարձյալ քննարկում է ծավալվում նույն օրը հավաքվելու և նոր կառավարությանն իրենց աջակցությունը հավաստելու վերաբերյալ[16]:

Նույն ժամանակահատվածում Ազգերի մշակույթի Մոսկվայի հայկական թանգարանի կայքէջում հայտարարություն է տարածվում, որը կոչ էր ռուսաստանաբնակ հայերին չմասնակցելու օգոստոսի 17-ին Մոսկվայում կայանալիք հանրահավաքին, քանի որ դրա կազմակերպիչները, նրանց իրական նպատակները հայտնի չեն և այն ըստ սահմանադրական կարգի համաձայնեցված չէ ռուսական իշխանությունների հետ[17]:

Հաջորդ ամիսներին ՀՀ-ի ներքաղաքական զարգացումները որոշ պասիվությամբ են մեկնաբանվում Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչների կողմից՝ չդառնալով նրանց օրակարգը:

«Հեղափոխության» խորհրդանիշները. պաստառներ, կոչեր, դեմքեր, դեպքեր

Թավշյա հեղափոխությունը քաղաքական նոր տեխնոլոգիաների կիրառմանը զուգահեռ հրապարակ բերեց նաև նոր կոչեր, կարգախոսներ, խորհրդանիշներ, որոնք, լինելով համախոհների նույնականացման մեթոդներ, այս կամ այն կերպ

[16] https://www.facebook.com/groups/1374370979469880/permalink/2175575166016120/ (15.08.2018)

[17] https://www.armmuseum.ru/news-blog/2018/8/16/-17- (19.08.2018)

ձևափոխվելով կամ գրեթե անփոփոխ օգտագործվում էին նաև այլ երկրներում գործող հայկական համայնքներում տեղի ունեցող սատարման ցույցերի ընթացքում: Հետաքրքիր է հասկանալ այդ կոչերի և պաստառների տեքստի փոփոխությունը կամ «Սերժիկ հեռացիր»-ի սահուն անցումը «Նիկոլ վարչապետի»-ի, որն էլ ավելի ուշ փոխակերպվում է «Հետ ենք գալու»-ի:

Այսպիսով, հենց առաջին օրերին դեսպանատան և եկեղեցու բակում ընթացող ցույցերի ժամանակ տեսնում ենք «Քայլ արա, մերժիր Սերժին», «Մենք ենք տերը մեր երկրի», «Իյա, իրո՞ք», «Սերժիկ յան տուր ապրենք» պաստառներով գրություններ, հնչում են նաև նմանատիպ վանկարկումներ[18]: Հետաքրքրական է նաև կիրիլիցայով գրված պաստառների առկայությունը, մասնավորապես՝ Армения без Сержа Саргсяна, Ереван Москва с вами, մեքենաների վրա՝ Сержик С**тир, В единстве наша сила (Ապրիլի 24-ի հավաքից), Отвергай Сержа և այլն[19]:

Մեկ այլ հետաքրքիր դրսևորում է նկատվում եկեղեցու մոտակայքում. ցուցարարները այրում են Սերժ Սարգսյանի պատկերով՝ «Ազգովի մերժում ենք Սերժին» պաստառը կամ պատռում այն և տալիս անցորդներին՝ ցույց տալով իրենց խորը ատելությունը նորընտիր վարչապետի հանդեպ: Այս մեթոդը առանձնակի կիրառություն չուներ հայաստանաբնակների շրջանում:

«Թավշյա հեղափոխության» օրերին հայկական մամուլում տարածվեցին բազմաթիվ հիշարժան արտահայտություններ, հորինվեցին անգամ անեկդոտներ: Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչ Գոռ Ալեքսանյանի պնդմամբ, երբ հոգևորականը

[18] https://www.facebook.com/groups/ArmeniaArmenianWorld/permalink/1934801223498692/, https://www.facebook.com/gor.aleksanyan.3/posts/1796714220348915 (26.05.2018)

[19] https://www.facebook.com/gor.aleksanyan.3/videos/1798858760134461/ (22.05.2018)

մոտեցել է ակտիվիստներին՝ համոզելով նրանց աղոթել՝ բողոքի ակցիաներ անելու փոխարեն, վերջինիս պատասխանել են. «Արդեն ինչքան ժամանակ ա աղոթում ենք հրաժարականի համար: Չի օգնում» [20]:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ համայնքի ներկայացուցիչներից մի քանիսը ֆեյսբուք սոցիալական ցանցում ձեռնարկում են հարցում՝ պարզելու, թե ովքեր են աջակցում ցուցարարներին, շեշտենք՝ ոչ թե Նիկոլ Փաշինյանին, այլ հենց ցուցարարներին: Վերը բերվածից պարզ է դառնում, որ հեղափոխության այս փուլում ինչպես Հայաստանում, այնպես էլ ՌԴ հայ համայնքի երիտասարդ ակտիվիստների շրջանում ձևակերպված խնդիրը Սերժ Սարգսյանի և նրա ռեժիմի հեռացումն է, դեռևս ակտուալ չէ վերջինիս փոխարինման հարցը, ուստի Նիկոլ Փաշինյանի անվամբ վանկարկումները դեռ քիչ են:

Ապրիլի 21-ի ցույցերի տեսագրության մեջ հստակ տեսում ենք, որ վանկարկումներին, իսկ ավելի ստույգ կլիներ նշել հեղափոխության խորհրդանիշներին ավելանում է ևս մեկը՝ «Նիկոլ»: Ինչպես և նկատելի է, գործողությունները և խորհրդանիշների թարմացումները ընթանում են Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին համաժամանակ:

Հանրապետության հրապարակում ավելի ուշ տեղի ունեցած բողոքի ակցիաների ժամանակ օտար երկրների հայ համայքների ներկայացուցիչների պաստառների վրա տեսնում ենք անձերից վերացարկված՝ «Ներգաղթ», «Դուխով», «Հետ ենք գալու» գրառումները:

Ինքնության վերաիմաստավորման տեսանկյունից դիտարկման արժանի է Մոսկվայի հայերի տարբեր խմբերի խնջույքները՝ ժողովրդի հաղթանակի կապակցությամբ, որոնց

[20] https://www.facebook.com/gor.aleksanyan.3?lst=100002313346133%3A100000310634557%3A1528288227 (22.05.2018)

ընթացքում հատուկ կենացներ են հնչեցվում հեղափոխությանը մասնակից աղջիկների համար՝ «աշխարհի ամենալավ աղջիկները հայ աղջիկներն են, ամենալավ մայրերը հայ մայրերն են, ամենալավ քույրերը հայ քույրերն են» բովանդակությամբ: Խնջույքի մասնակիցները փորձում են նաև վերհիշել ռազմահայրենասիրական երգեր՝ Սարդարապատի երգը, Ախպերս ու ես, Երազ իմ Երկիր՝ միասին կատարելու համար, ինչը ևս փաստում է ինքնության վերաթարմացման մասին[21]:

Հայ համայնքի ներկայացուցիչներից մեկն անգամ նկարել էր ՀՀ անձնագիրը, տեղադրել այն ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ «անձնագիր-հպարտություն» վերտառությամբ[22]: Այստեղ տեսնում ենք ինքնության ազգային բաղադրիչի որոշ ցուցիչների ակտիվացում: Կա թյուր պատկերացում, որ ինքնությունը բնորոշող արժեքային համակարգն ինչ-որ քարացած սկզբունքների ամբողջություն է, և ինքնության պահպանումը ենթադրում է հին դարերում գոյություն ունեցած մի համախմբի բացահայտում, վերականգնում և անվերապահ կիրառում: Մինչդեռ ակնհայտ է, որ ինքնությունաստեղծ երկու բաղադրիչները՝ ազգն ու հայրենիքը, դինամիկ համակարգեր են, և ժամանակային գործոնն առավել ազդեցիկներից է դրանց զարգացման համար[23]: Հայրենիքում տեղի ունեցած իրադարձությունները անխուսափելիորեն ազդել են դրանից դուրս գտնվող մեր հայրենակիցների վրա՝ այդպիսով ակտիվացնելով ինքնության ազգային համախմբի տարրերը և առաջացնելով կոնկրետ «հայ», «ՀՀ քաղաքացի» պատկանելության վերաբերյալ խորը հպարտություն: Այդ տարրերի հետագա

[21] https://www.facebook.com/laura.shagaldyan/videos/1846346728760737/ (06.06.2018)

[22]https://www.facebook.com/photo.php?fbid=1708884225840278&set=a.473904916004888.1073741825.100001561503726&type=3&theater (29.06.2018)

[23] Թորոսյան Տ. Ս., Ինքնության պահպանման խնդիրը տրանսֆորմացիոն գործընթացներում, տե՛ս http://lraber.asj-oa.am/276/1/1_Torosyan_T._S_(3).pdf

ակտիվությունը պայմանավորված է հայրենիքում իրադարձությունների հետագա զարգացմամբ, նոր՝ անընդհատ թարմացվող ազդակների առկայությամբ, հակառակ դեպքում դատապարտված է թուլացման և վերացման:

«Դուխով» կարգախոսը ևս, որն առաջին օրերից ուղեկցում էր թավշյա հեղափոխությանը իր տարածումը գտավ նաև ՌԴ-ում՝ կիրիլիցայով գրառումների տեսքով հայտնվելով շապիկների և գլխարկների վրա:

Նոր խորհրդանիշների ձևավորմանը զուգահեռ այստեղ բախվում ենք ՌԴ-ում գործող երկու կարևոր կառույցների՝ դեսպանատան և եկեղեցու խորհրդանշանականության տրոհման: Դպրոցը և եկեղեցին ավանդապես, իսկ դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանի անկախության հռչակումից ի վեր համարվել են մեր համայնքների անվտանգության, ապահովության երաշխավորն ու ինքնության մասը: Եկեղեցու և դեսպանատան դիմաց տեղի ունեցած ցույցերը և ցուցարարների ձերբակալությունը դժգոհության ալիք է բարձրացնում համայնքի երիտասարդների շրջանում, ինչն այս իրադարձությունների և իշխանափոխության հաղթանակի ֆոնին մի փոքր մեղմվել է, սակայն հետագայում կարող է նոր ճգնաժամի հիմք դառնալ:

ՌԴ քաղաքագետների կարծիքը հայաստանյան իրադարձությունների վերաբերյալ

Հայաստանում ծավալված իրադարձություններին օպերատիվ կերպով արձագանքեցին ՌԴ քաղաքագիտական շրջանակներն ու պետական մարմինները:

ՀՀ-ում ծավալվող հակահիշխանական ցույցերի վերաբերյալ առաջին գրառումը ՌԴ Արտգործնախարարության թվիթերի էջում էր, որը կոչ էր ՀՀ-ում գտնվող ՌԴ քաղաքացիներին: Այնտեղ մասնավորապես նշվում էր. «Հայաստան: 16-17.04 ընդդիմության

բողոքի ակցիաներ Երևան քաղաքում, ցուցարարները փակել են կենտրոնական մի քանի փողոցներ, խորհուրդ է տրվում խուսափել մարդկանց մասսայական կուտակման վայրերից»[24]:

Հայաստանում ստեղծված իրավիճակը տարբեր հաղորդումների և եթերների ընթացքում քննարկում էին նաև քաղաքագետները: Ընդհանուր առմամբ ռուսական քաղաքագիտական շրջանակների քննարկումներում հնչող մտահոգությունները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- Արդյոք ՀՀ-ի ներքին խնդիրների թելադրանքով է սկսվել համաժողովրդական պայքարը, թե՞ այլ (նկատի է առնվում արևմտյան) միջամտության
- Ոչ բռնի, թավշյա հեղափոխություն, թե՞ մայդան
- Արդյոք պե՞տք է միջամտել Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին, թե՞ սպասել իրադարձությունների խաղաղ հանգուցալուծմանը
- Իշխանափոխությունից հետո կփոխվի ՀՀ-ի արտաքին քաղաքականությունը, թե՞ ոչ
- Ի՞նչ քաղաքականություն պետք է վարեն ռուսական իշխանությունները Անդրկովկասյան այս կարևոր դաշնակից երկիրը չկորցնելու և դաշնակցային հարաբերությունները պահպանելու համար:

Նորագույն պետությունների միջազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսեյ Մարտինովը rusarminfo.ru-ին տրված հարցազրույցում նշել էր. «Հայաստանն ունի «բողոքի ակտիվության սեփական ավանդույթ, սակայն ես զգուշավորությամբ եմ վերաբերվում ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին, համարելով, որ ընդդիմությունը գնում է պրովոկացիայի»: «Ես ամբողջովին կողմ եմ, որ մարդիկ ունենան սեփական միտքը

[24] МИД России, Департамент ситуационно-кризисного центра, https://twitter.com/mid_rf?lang=ru (14.06.2018)

արտահայտելու իրավունք, այդ թվում նաև բողոքի, սակայն ես դեմ եմ ցանկացած պետական հեղաշրջումների և գործողությունների, որոնք ուղղված են պետությունների ոչնչացմանը»[25]:

Տարածաշրջանային ծրագրերի և օրենսդրության ինստիտուտի տնօրեն Բորիս Նադեժդինը նշում է, որ ի տարբերություն հետխորհրդային տարածաշրջանի այլ պետությունների՝ Հայաստանում իրական հնարավորություն կա ընդդիմադիր գործունեության համար, ինչի համար «նրան միայն նախանձել կարելի է»:

«Կան երկրներ, որտեղ ընդհանրապես ամբոխով փողոց դուրս գալու ավանդույթներ չկան, ինչ էլ որ տեղի ունենա, Ռուսաստանը, օրինակ, կան երկրներ, որտեղ մի փոքր այլ է իրավիճակը. վրաններ են խփում և հեռացնում նախագահին, նախագահները փախչում են, ինչպես Վրաստանում և Ուկրաինայում: Իսկ Հայաստանը միշտ էլ մեջտեղում է գտնվել»[26]:

Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, հատկապես դրանց սկզբնական փուլում, հնչում էին առավել կոշտ գնահատականներ: Մասնավորապես, Ռեգնում լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Մոդեստ Կոլերովը վստահություն էր հայտնել, որ բողոքի ակցիաները ոչ մի արդյունքի չեն բերի և ցույցերը չեն խանգարի նախորդ նախագահ Սերժ Սարգսյան զբաղեցնել վարչապետի պաշտոնը[27]:

---

[25] Что думают в России о протестах в Армении: мнения экспертов, https://rusarminfo.ru/2018/04/16/chto-dumayut-v-rossii-o-protestax-v-armenii-mneniya-ekspertov/(28.05.2018)

[26] Российский эксперт: Армении можно позавидовать, есть возможность оппозиционной деятельности, http://www.panarmenian.net/rus/news/254293/ (28.05.2018)

[27] Что думают в России о протестах в Армении: мнения экспертов, https://rusarminfo.ru/2018/04/16/chto-dumayut-v-rossii-o-protestax-v-armenii-mneniya-ekspertov/ (28.05.2018)

Ապրիլի 17-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորական ուղերձ հղեց ՀՀ նորընտիր վարչապետ Սերժ Սարգսյանին, իսկ ավելի ուշ տեղի ունեցած հեռախոսազրույցի ընթացքում կողմերը հանդես եկան դաշնակցային գործունեության հետագա զարգացումը և բոլոր ոլորտներում համագործակցությունը կարևորող հայտարարություններով[28]:

Ավելի ուշ՝ ապրիլի 18-ին, ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրիյ Պեսկովը, պատասխանելով լրագրողների հարցերին, հրաժարվել էր ՀՀ-ում տեղի ունեցողը համեմատել 2013-2014թթ. ուկրաինական դեպքերի հետ՝ համարելով դա ՀՀ-ի ներքին գործը, և մասնավորապես նշել էր. «Մենք հետևում ենք այն ամենին, ինչ տեղի է ունենում Հայաստանում, և գլխավորը, հույս ունենք, որ ամեն ինչ կարվի օրենքի շրջանակում[29]»: ՌԴ-ից ՀՀ-ի ներքին գործերին չխառնվելու ազդակը դրական է ընդունվում ցուցարարների կողմից:

Ապրիլի 23-ին ՌԴ ԱԳՆ մամուլի խոսնակ Մարիա Զախարովան իր ֆեյսբուքյան էջում գրում է. «Ժողովուրդը, որ ուժ ունի իր պատմության ամենաբարդ պահերին անգամ չպառակտվել և պահպանել հարգանքը միմյանց նկատմամբ, չնայած կտրուկ տարաձայնություններին, հզոր ժողովուրդ է: Հայաստա՛ն, Ռուսաստանը միշտ քեզ հետ է», ինչը ևս ցնծությամբ է ընդունվում ցուցարարների կողմից[30]:

Ուշադրության է արժանի նաև Ռուսաստանում բնակվող ազգությամբ հայ քաղաքագետների կարծիքը, ովքեր հաճախ

---

[28] Телефонный разговор с Премьер-министром Армении Сержем Саргсяном, http://kremlin.ru/events/president/news/57274 (06.06.2018)

[29] Տե՛ս Москва наблюдает за тем, что просходит в Армении: Песков https://rusarminfo.ru/2018/04/18/moskva-nablyudaet-za-tem-chto-prosxodit-v-armenii-peskov/ (06.06.2018)

[30] https://www.facebook.com/maria.zakharova.167/posts/10216573046828327 (05.06.2018)

բավական ագրեսիվ էին արտահայտվում «հեղափոխության» հասցեին: Ապրիլի 21-ին Ռուսաստանի հայերի միության և ՌԴ-ում բնակվող մի խումբ ընդդիմադիր հայ երիտասարդների միջև տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում էր նաև քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը, որն իր խոսքում նշեց. «Ես գիտեմ ինչպես է տեղի ունեցել Մայդանը, ինչպես է տեղի ունեցել Վրաստանում, և այն բոլոր տեղերում, որտեղ ինչպես այդ խրտվիլակն (ի նկատի ունի Նիկոլ Փաշինյանին) է ասում՝ այդ այսպես ասած՝ թավշային հեղափոխությունը…Չեն հայտարարում թավշային հեղափոխություն. երբ սկսվում է պատերազմ կամ հեղափոխություն ոչ ոք չգիտի՝ ինչպես է այն վերջանալու, հետո արդյունքից է միայն պարզ դառնում դա թավշային է, թե հիմար ու դեբիլ հեղափոխություն, որը կործանել է ու կկործանի այն ինչ հնարավոր է կործանել»:

Քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանի հայտնի արտահայտությունը ընդդիմադիր առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հասցեին ևս մեծ արագությամբ տարածվեց համացանցում, այն է «Այդ տականքը, այդ կեղտը, թելադրելու է՝ ով և ինչպես ապրի երկրում: Խայտառակություն է, ես ամաչում եմ, որ հայ եմ»[31]: Բավական կոշտ և սուր արտահայտություններով Միհրանյանը խոսում էր այն մասին, որ ընդդիմության առաջնորդին բուժվել է անհրաժեշտ: Հիշեցնենք, որ այս հայտարարությամբ վերջինս հանդես էր գալիս դեռ ապրիլի 21-ին, երբ հստակություն չկար իրադարձությունների զարգացման հարցում, իսկ ռուսական պաշտոնական մամուլը զսպվածություն էր ցուցաբերում:

Ընդդիմադիր առաջնորդի հասցեին բավական կոշտ է արտահայտվում նաև հայազգի, մասնագիտությամբ լրագրող, «News Media» լրատվականի հիմնադիր և գործադիր տնօրեն Արամ

[31] Встреча Ара Абраамяна и противников Сержа Саргсяна полностью без монтажа https://www.youtube.com/watch?v=2p6gzPucRC4 (16.06.2018)

Գաբրելյանովը՝ նրան իր գրառումներում հաճախ անվանելով ծաղրածու: Վերջինիս գրառումներից հասկանում ենք, որ նա Հայաստանը դիտարկում է որպես ՌԴ-ի կցորդի: Մայիսի 4-ին իր կատարած մի գրառմամբ Գաբրեյանովը հանրային հայտարարություն է պահանջում Փաշինյանից առ այն, որ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է, ռուսական բազան շարունակելու է մնալ Գյումրիում, Արցախը լինելու է Հայաստանի հուսալի պաշտպանության տակ և որ Ռուսաստանը Արցախի անվտանգության երաշխավորն է: Վերջինս անգամ կոչ է անում հայերին գնալ եկեղեցի և մոմ վառել ռուսների և Պուտինի համար[32]:

Արդեն Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո ՆՏՎ հեռուստաընկերության «Հանդիպան վայր» հաղորդաշարի եթերում ՀՀ-ի արտաքին քաղաքական կուրսի հնարավոր փոփոխությունները քննարկում են ռուս քաղաքագետները: «Հայաստանը աշխարհագրության գերին է, իր հարևանների հետ պատմական կապերի գերին, Ռուսական կայսրությունը Կովկաս գնաց Հայաստանը և Վրաստանը փրկելու համար, ուստի ով էլ դառնա հաջորդ վարչապետը կամ նախագահը կարծում եմ, որ ՀՀ-ի արտաքին քաղաքականությունը ռադիկալ կերպով չի փոխվի»,- նշում է քաղաքագետ Անդրեյ Օկարան[33]:

Այս և նմանատիպ բոլոր քննարկումների հիմնական թեման էր՝ ինչպես պետք է ՌԴ-ը դրսևորի իրեն, պետք է միջամտի ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին, թե շարունակի զուսպ քաղաքականություն վարել և հետևել դեպքերի զարգացմանը: Հայազգի քաղաքագետ, լրագրող Հայկ Խալաթյանը նույն հաղորդման եթերում ևս մեկ անգամ հստակ նշում է, որ Երևանում տեղի ունեցող գործընթացները միայն ներքին խնդիրների

[32] https://www.facebook.com/aram.gabrelyanov (24.08.2018)
[33] https://www.youtube.com/watch?v=_PcGkrFXKMU (15.08.2018)

վերհանումն են, ուղղված չեն Ռուսաստանի դեմ կամ արևմտաեվրոպական երկրների ուղղությամբ:

Հայազգի քաղաքագետներ Գևորգ Միրզայանը և Ալեքսանդր Սողոմոնյանը նույն հաղորդման մեկ այլ եթերում առանձնակի հիացմունքով չեն խոսում ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխության մասին: Գևորգ Միրզայանը, համեմատականներ անցկացնելով ուկրաինական Մայդանի և հայաստանյան դեպքերի միջև, նշում է, որ Հայաստանում տեղի ունեցածը նույնը չէր, ինչ Մայդանում մի պարզ պատճառով. «Հայաստանը չունի աշխարհաքաղաքական ընտրության հնարավորություն՝ կամ մահ, կամ դաշինք Մոսկվայի հետ»:

Սողոմոնյանը ևս կասկածի տակ է առնում Նիկոլ Փաշինյանի գործունեությունը, հարկ է համարում պարզել, թե ով է նրան առաջնորդում՝ ակնարկելով ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությանն իր շուրջ 2000 աշխատակիցներով: Նույն հաղորդմանը մասնակից ռուս փորձագետ, Մոսկվայի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ Նիկոլայ Պլատոշկինը կոչ է անում մեղադրանքներ չինչեցնել ու խոսել կոնկրետ փաստերով ու օրինակներով: «Դուք սեպ եք խրում հայ-ռուսական հարաբերությունների մեջ՝ վիրավորելով միլիոնավոր մարդկանց, որոնք դուրս են եկել իրենց ներքին հարցերը լուծելու»,- հայտարարում է Պլատոշկինը[34]:

Ապրիլի 29-ին «Կիրակնօրյա երեկո Վլադիմիր Սոլովյովի հետ» հաղորդման եթերում «Ժամանակի էությունը» շարժման առաջնորդ, քաղաքագետ Սերգեյ Կուրղինյանը հայտարարեց, որ «ինչպես Ուկրաինայում այդ ամբողջ թավշյա ուժը պարտվեց մինչև Մայդանը, այնպես էլ այն պարտված է Հայաստանում»: «Երևանը և Կիևը կատարելապես տարբեր իրադրություններ են. Կիևում մենք

[34] https://www.youtube.com/watch?v=N1QRtUIGTNU (16.07.2018)

բավական արագ ամեն ինչ բաց թողեցինք, այստեղ նույնպես բաց ենք թողել… Մենք կորցնում ենք Հայաստանը»[35]:

Քաղաքագետ Սերգեյ Մարկովն իր հերթին վերլուծելով ՀՀ-ում տեղի ունեցողը՝ Սերժ Սարգսյանի հրաժարականը բացատրում էր մի քանի գործոնով՝ նրա իրապես ցածր վարկանիշով, տնտեսական խնդիրներով, ղարաբաղյան կլանի գործունեությամբ, ԱՄՆ-ի ներգործությամբ և որ ամենահետաքրքրականն է՝ հայկական համայնքների ազդեցությամբ, որոնք էլ հենց ստիպեցին Սարգսյանին հրաժարական տալ[36]:

Ռուս և հայազգի տարբեր քաղաքագետների մտահոգությունները և Հայաստանում ծավալվող իրադարձությունները անմիջականորեն ՌԴ-Արևմուտք հարաբերությունների ծիրում դիտարկելու փորձերը և որպես «հերթական մայդան» ներկայացնելը զուր էին: Հեղափոխության հարթակից երբևէ չհենչեցվեցին հակառուսական ելույթներ, չբարձրացվեցին եվրոպական կամ արևմտյան այլ երկրների դրոշներ կամ այլ խորհրդանիշներ:

Առավել հետաքրքրական է Ռուսաստանում բնակվող հայազգի քաղաքագետների կարծիքների վերլուծությունը: Հայազգի քաղաքագետների ու գործիչների կոշտ ու սուր վերաբերմունքը ևս կարելի է պայմանավորել իրենց ինքնության հետ առնչվող խնդիրներով: Ինչպես արդեն նշել ենք, ինքնության բաղադրիչներից է ազգային պատկանելությունը, իսկ դրա ցուցիչներից է նաև ՀՀ քաղաքացիությունը, որը որոշ քաղաքացիների պարագայում հպարտանալու, իսկ մյուսների (օրինակ՝ Միհրանյանի) դեպքում ամաչելու առիթ էր դարձել: Այստեղ բախվում ենք մեկ այլ խնդրի. օտար հողում բնակվելու դեպքում ազգային ինքնության ճշգրտման,

[35]Кургинян: Мы теряем Армению! Вечер с Владимиром Соловьевым от 29.04.18 https://www.youtube.com/watch?v=ipq1u4fGl7o (11.06.2018)

[36] https://www.facebook.com/sergey.markov.5/posts/1451358264991834 (07.06.2018)

պահպանման ու ամրապնդման այլընտրանքը տվյալ միջավայրում ինքնության ինտեգրացիան է և որոշակի արժեհամակարգի յուրացումը: Սա սակայն եթե ոչ անհնար, ապա գոնե բավական բարդ խնդիր է ցանկացած անձի համար, քանի որ այդ ինտեգրացիան չի կարող լինել միակողմանի: Հայազգի քաղաքագետների դեպքում ՀՀ քաղաքացի չլինելու պարագայում անգամ ինքնության ցուցիչներից է «յան»-ը, ազգանունը, որը փաստում է իրենց հայ լինելը:

Այստեղ տեսնում ենք մի խումբ անձանց, ովքեր ամեն կերպ փորձել են «ինտեգրվել» ռուսական իրականությանը, ռուսական իշխանություններին հաճո մտքեր հնչեցնել (երբեմն շտապել իրենց եզրահանգումներում և առաջ ընկնել ռուսական պաշտոնական դիրքորոշման արտահայտումից), այլ կերպ ասած՝ հռոմի պապից առավել կաթոլիկ լինել: Այս երևույթը կարելի է անվանել ինքնության աղճատում և բնորոշ է ոչ միայն Ռուսաստանում բնակվող հայերին, այլ ցանկացած միջավայրի բոլոր նորագիրներին: Սա նկատում են անգամ ռուս փորձագետները, որոնք փորձում են ադեկվատ վերլուծել իրավիճակը և հաճախ սաստում հայ քաղաքագետներին: Որպես օրինակ, ռուսական առաջին ալիքի «Ժամանակը ցույց կտա» հաղորդման եթերում «Կոմերսանտ» խմբագրության միջազգային վերլուծաբան Մակսիմ Յուսինը նշում է. «Այստեղ, Ռուսաստանի ներսում, հիշեք բոլոր փորձագետներին որ գալիս են, նրանցից որևէ մեկը դրսևորու՞մ է լիբերալ դիրքորոշում, նրանք ավելի հայրենասեր են, ավելի կայսերապաշտ, քան ես՝ 100 տոկոսանոց ռուսս: Այ սա է հետաքրքիր»[37]:

Մայիսի 8-ին Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելուց հետո ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորում է վերջինիս.

[37] https://www.youtube.com/watch?v=pVBRGujp4dE&t=33s (14.06.2018)

«Ակնկալում եմ, որ Ձեր գործունեությունը կառավարության ղեկավարի պաշտոնում կնպաստի մեր երկրների միջև բարեկամական, միութենական հարաբերությունների հետագա ամրապնդմանը, Անկախ պետությունների համագործակցության, Եվրասիական տնտեսական միության և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում գործընկերական փոխգործունեության ամրապնդմանը»,- մասնավորապես ասվում էր Կրեմլի տարածած հաղորդագրության մեջ[38]:

Մայիսի 14-ին Սոչիում և հունիսի 13-ին Մոսկվայում վարչապետ Փաշինյանի և ՌԴ նախագահ Պուտինի միջև կայացած հանդիպումների ընթացքում ևս կողմերը կարևորել են հայ-ռուսական գործընկերության շարունակականությունը, ռազմական և տնտեսական համագործակցությունը և այլն[39]:

Հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների հետագա զարգացումը քննարկվեց նաև օգոստոսի 17-ին՝ Հանրապետության Հրապարակում Նիկոլ Փաշինյանի վարչապետության 100 օրը ամփոփող երթ-հանրահավաքի ավարտին: Վարչապետը իր այս ելույթով հստակ արձանագրեց, որ ՀՀ-ի արտաքին քաղաքականությունը չի փոխվելու[40]:

---

[38] Телефонный разговор с Премьер-министром Армении Николом Пашиняном http://kremlin.ru/events/president/news/57435 (21.05.2018)

[39] Մանրամասն տե՛ս http://kremlin.ru/events/president/news/57459, http://kremlin.ru/events/president/news/57774 (10.07.2018)

[40] «Ժողովուրդ, ես ուզում եմ հիմա խոսել հայ-ռուսական հարաբերությունների մասին, որովհետև վերջին շրջանում ինչ ասես հայ-ռուսական հարաբերությունների մասին չի ասվել: Մենք ասել ենք, որ արտաքին քաղաքական ռեվերսներ չեն լինելու, և մեր քաղաքականությունը, մեր նպատակներից մեկը հայ-ռուսական բարեկամությունը խորացնելն է և հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելն է»: Մանրամասն տե՛ս https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/249764159196556/ (27.08.2018)

«Բայց ես ուզում եմ մի բան ասել, որը կուզեի, որ լսեն նաև Ռուսաստանում գործող այդ փորձագետները, ովքեր անընդհատ ահազանգում են, որ Հայաստանը գնում է արևմուտք, Հայաստանը գնում է արևելք, Հայաստանը շատ գիտեմ ուր է գնում. ՀՀ-ը ոչ մի տեղ չի գնում, ամուր կանգած է իր ոտքերի վրա, ուղիղ ողնաշարով, հպարտ քաղաքացիներով և արժանապատիվ կեցվածով: Եվ հայ-ռուսական ռազմավարական բարեկամությունը խորանալու և զարգանալու է, մենք զարգացնելու ենք մեր հարաբերությունները նաև Եվրամիության հետ, մենք ԱՄՆ-ի հետ հարաբերություններում էլ ենք մեր երկրի շահերը պաշտպանում, Իրանի հետ էլ, մեր երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն էությունը մեր ազգային շահերի պաշտպանությունն է, և մենք հետևողականորեն գնում ենք այդ ճանապարհով, որովհետև դուք եք լիազորել մեզ այդպես վարվել»[41]:

Այսպիսով, ՀՀ-ում թավշյա հեղափոխության օրերին տեղի ունեցող իրադարձությունները ակտիվ քննարկվում էին ռուսական վերլուծական շրջանակների կողմից, հնչում էին տարբեր կարծիքներ և առաջարկներ ՌԴ իշխանություններին՝ թե՛ մերձիշխանական, թե՛ ընդդիմադիր գործիչների կողմից: ՌԴ իշխանությունները, սակայն, որևէ կերպ չմիջամտեցին ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին:

«Ռուսաստանի հայերի միություն» և «Ռուսաստանի հայերի միավորում». «հին» ու «նոր» կառույցներ/ցանցեր

Չնայած ՌԴ-ում գործող/գրանցված գրեթե 2400 հայկական երիտասարդական, հասարակական, բարեգործական կազմակերպությունների առկայությանը 2000թ.-ին Արա Աբրահամյանի կողմից հիմնադրված «Ռուսաստանի հայերի

[41] https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/249764159196556/ (27.08.2018)

միություն» հասարակական կազմակերպությունը տարիներ շարունակ ՀՀ իշխանությունների կողմից համարվել է ՌԴ-ում հայկական համայնքի «պաշտոնական» ներկայացուցիչը, որը միևնույն ժամանակ ներկայացված է եղել ՌԴ-ի համար ընդունելի անձանցով և անհրաժեշտության դեպքում գործիք ծառայել ՌԴ իշխանությունների ձեռքին:

Ռուսաստանի հայերի միությունը թավշյա հեղափոխության առաջին իսկ օրերին դրսևորեց ակնհայտ պրոիշխանական մոտեցում: Միության պաշտոնական կայքէջում ապրիլի 17-ին տեղադրվեց «հեղափոխությանն» առնչվող առաջին գրառումը, որն ի թիվս այլ չեզոք ձևակերպումների, եզրափակվում էր կոչով առ հայությանը. «Անհրաժեշտ է միշտ հիշել, որ մեր թշնամիները ուրախ կլինեն օգտվել Հայաստանում տիրող ճգնաժամից՝ հասնելու իրենց նպատակներին: Մենք դա թույլ տալ չենք կարող, հաջորդ սերունդները մեզ դա չեն ների[42]»:

Դրան անմիջապես հաջորդեց Ռուսաստանի հայերի միության և Հայերի համաշխարհային կոնգրեսի (ՀՀԿ) նախագահ Արա Աբրահամյանի շնորհավորական ուղերձը Սերժ Սարգսյանին՝ վարչապետ ընտրվելու կապակցությամբ[43]: Ապրիլի 21-ին միության նախաձեռնությամբ կազմակերպվեց կլոր-սեղան քննարկում, ինչպես նաև առանձին հանդիպում ցույցերում ներգրավված երիտասարդների հետ, որոնց բովանդակության առանցքային թեման մասսայական ակցիաների կազմակերպիչներին ուղղված կոչն էր՝ գնալ բանակցությունների իշխանությունների հետ՝ գիտակցելով ծանր աշխարհաքաղաքական դրության մեջ գտնվող

[42]Ներքին կրքերը արտաքին վերահաս վտանգի սպառնալիքով հանդարտեցնելու մեկ այլ կոչով հանդես էր եկել ռուս քաղաքագետ Գլեբ Կուզնեցովը՝ զգուշացնելով հայերին, որ եթե հեղափոխությունը շարունակվի, ապա Ադրբեջանը կփորձի պատերազմ սկսել և կորցրածը ետ բերել:

[43] http://sarinfo.org/sarnews/17-04-18.shtml (09.06.2018)

մեր երկրի ճակատագրի պատասխանատվության աստիճանը և դադարեցնել ապրիլի 24-ին նախատեսված բողոքի ակցիաները[44]:

Հատկանշական է, որ ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանի հրաժարականին հաջորդող հայտարարությունները ավելի մեղմ են և արտահայտում են միության աջակցությունը հայ ժողովրդին և իրադարձությունների ընթացքի խաղաղ զարգացմանը: Սրան հաջորդում են հայտարարություններ առ այն, որ Արա Աբրահամյանը կշարունակի համագործակցել այն վարչապետի հետ, որին ՀՀ սահմանադրությանը և ժողովրդի կամքի համապատասխանությամբ կընտրի Ազգային ժողովը[45]: ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների և ինֆորմացիոն հոսքերի ակտիվացման պայմաններում տեսնում ենք, որ Արա Աբրահամյանը և նրա գլխավորած կառույցը ճկուն ձևով միանում է նոր տեքստին՝ փորձելով դառնալ կամ ցույց տալ թե դառնում է այս նոր ձևավորվող, սկզբունքորեն տարբերվող ցանցի բջիջը:

Հարկ է նշել, որ Ռուսաստանի հայերի միության գործունեությունը համակողմանի քննադատության էր արժանացել դեռ 2016թ. ապրիլի քառօրյա պատերազմի ժամանակ: Այս կառույցը պարզապես սպասարկում էր ՌԴ իշխանությունների շահերը, ինչը չէր կարող գոհացնել ռուսաստանաբնակ հայերին: Չնայած ՌԴ-ում գործող բազմաթիվ հասարակական, երիտասարդական կազմակերպություններին, սա «պաշտոնապես» համարվում էր ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչը, որն իրականում չէր վայելում այդ համայնքի մի ստվար հատվածի աջակցությունը: Համայնքում առաջացած այս ճեղքը տեքստի թարմացմանը զուգահեռ «ինքնալցվեց» նոր բովանդակությամբ և հանգեցրեց նոր կառույցի ձևավորմանը:

---

[44] http://sarinfo.org/sarnews/21-04-18-2.shtml (09.06.2018)

[45] http://sarinfo.org/sarnews/archive/0518.shtml (09.06.2018)

Ռուսաստանում ապրող հայերը, չկորցնելով իրենց ինքնությունը, որոշ ժամանակ դադարել էին «պատասխանել» հայրենիքին ու դրա խնդիրներին առնչվող հարցերին: «Թավշյա հեղափոխության» օրերին ինֆորացիոն հսկայական, գրեթե միատիպ և շարունակական հոսքը ստիպում է նրանց վերստին մտածել, առաջացնում է նոր հարցեր, ստիպում փնտրել այդ հարցերի պատասխանները՝ այդպիսով թարմացնելով ինքնության ցուցիչները: Ռուսաստանաբնակ հայերի մոտ ինֆորմացիոն այս հոսքից զտվում և ձևակերպվում են խնդիրներ և դրանց լուծման հնարավոր տարբերակներ: Հենց այս ճանապարհով էլ ձևավորվում է ցանցը, որը կազմելու է ավելի մեծ հանգույցների համակարգի՝ հայկական ցանցապետության մի բջիջը: Այս ցանցը գործուն կլինի կախված միմյանց (նկատի է առնվում համայնքներին) և դեպի ՀՀ ուղարկվող հոսքերի պաբերականությունից:

Այսօր Հայաստան, Հայաստանի Հանրապետություն և հայություն տեքստը գրավիչ է և դինամիկ, դրա հետևանքով ամբողջ աշխարհը խոսում է մեր մասին, մի շարք հայեր վերագտնում են իրենց արմատները, ոմանք գումարներ ուղարկում Հայաստան, ոմանք վերադառնում են մշտական բնակության և այլն: Անհատական արարքները քննարկելիս հիշատակենք Իրինա Ալեգրովային, ով սկսում է գրել Հայաստանի մասին՝ «դա իմ պատմական հայրենիքն է»[46]: Սա ցանցում շրջանառվող տեքստի գրավչության, հայ լինելու գրավչության մասին է վկայում: Անհատներից զատ նոր կառույցներ են ստեղծվում, այլ կերպ ասած՝ ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների արդյունքում մի շարք անձանց ինքնության «թարմացում» է տեղի ունենում և դրվում է ցանցի ստեղծման հիմքը: Այն կգործի սակայն, եթե տեքստը մշտապես գրավիչ լինի՝ ասենք հեղափոխությանը հաջորդի

[46] https://armtimes.com/hy/article/137079 (07.06.2018)

տնտեսական թռիչքաձև աճը կամ այլ, նախադեպը չունեցող իրադարձություն: Ընդ որում ցանցը ակտիվ կմնա նաև կտրուկ բացասական զարգացումների՝ օրինակ պատերազմի վերսկսման դեպքում:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ձևավորվում այդ ցանցը մոսկվայաբնակ հայերի շրջանում: Նոր հարցերի ձևավորմանը զուգահեռ ռուսաստանաբնակ մեր հայրենակիցները նախաձեռնում են դրանք քննարկելու նոր հարթակ ստեղծել: Ապրիլի 24-ին ֆեյսբուքում բացված «Армянская организация» խումբը հետագայում դառնալու էր մի ամբողջ հասարակական կազմակերպության՝ Ռուսաստանի հայերի միավորման հիմք[47]: Միավորման հիմնադիրներից Մուշեղ Սահակյանը նշում է, որ ծրագրի գաղափարը եղել է դեռ մեկ տարի առաջ, թեպետ բոլորը կարծում են, որ հայերը ակտիվացել են «Ռոսնեֆտ» նավթային ընկերության փոխնախագահ, լրագրող Միխայիլ Լեոնտևի, Իլյա Սավելևի և Միխայիլ Յուրևի մասնակցությամբ սկանդալային հաղորդումից հետո[48]: Ռուսաստանի հայկական տարբեր կազմակերպությունների ներայացուցիչներ հավաքվել և որոշել են ստեղծել միավորում, որը կդառնա ցանցային համակարգ և պատրաստ կլինի արդյունավետ օգնություն ցուցաբերել ՌԴ-ում բնակվող մեր հայրենակիցներին:

Խմբի աշխատանքների սկզբնական փուլում կազմակերպության համահիմնադիր Դավիթ Ֆրանգ Տոնոեանը հրավիրել է խմբի մասնակիցներին և ռուսաստանաբնակ հայերին Ազգերի մշակույթի Մոսկվայի հայկական թանգարան՝ միասին դիտելու Նիկոլ Փաշինյանի վարչապետության ընտրությունը: Նույն

[47]Խմբի ադմիններ՝ Էդմոնդ Բաղդասարյան, Արսեն Ալեքսանյան, Դավիթ Ֆրանգ Տոնոեան, Մուշեղ Սյունի https://www.facebook.com/groups/spyurk2.0/

[48] Диаспора активизировалась: что стоит за созданием Объединения армян России, https://ru.armeniasputnik.am/society/20180614/12656013/diaspora-aktivizirovalas-chto-stoit-za-sozdaniem-obedineniya-armyan-russia.html (19.07.2018)

օրը ծրագրվել է մայիսի 17-ին կայանալիք «Սփյուռք 2.0» նախաձեռնող խմբի առաջին հանդիպումը, որի ժամանակ պետք է որոշում կայացվեր նոր բացվող կազմակերպության անվան, կազմի, նպատակների և խնդիրների, կառուցվածքի, ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ: Միավորումը ունի նաև թվիթերյան և տելեգրամյան էջեր[49]:

Խմբում լայնածավալ քննարկման ենթարկված առաջին հարցը խմբի համահիմնադիր Դավիթ Ֆրանգ Տոնոյանը ձևակերպել է այս կերպ. ի՞նչ է իրենից ներկայացնում հայկական համայնքը: Գործու՞մ է այն այսօր:

«Մենք պատասխանում ենք՝ ոչ: Պայմանականորեն, Ռուսաստանի հայերը պետք է միավորեին գործող կազմակերպությունները: Այդ կազմակերպությունների թուլությունը հանգեցրեց նրան, որ էթնիկ հայերի մեծամասնությունը չի զգում իր ներգրավվածությունը համայնքին: Նրանք մասնագիտանում են առանձին հարցերի լուծման գործում՝ մշակութային, երիտասարդական, կամավորական, բարեգործության և իրավաբանական հարթություններում:

Մենք հաջորդ սերունդն ենք՝ նոր պատկերացումներով առ այն, թե ինչ է սփյուռքը: Մենք տեսնում ենք այն որպես ցանցային միություն: Կազմակերպությունների միություն, որն ապացուցում է իր հետևողականությունը տարբեր ուղղություններում, և որի հիմքում ոչ թե անհատներն են, այլ ազգային շահերը»: Այստեղ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է նկատի առնվում «ցանցային միություն» ձևակերպմամբ: Համաձայն կազմակերպության համախոհների ելույթների և գրառումների՝ դա ՌԴ տարբեր շրջաններում գործող անհատներին և կազմակերպությունները միավորող մի հարթակ պետք է դառնա, որտեղ չի գործելու

[49] https://twitter.com/oar_page/status/1002679707593334785

հիերարխիկ կառավարում, որևէ անհատի կամքը չի թելադրվելու, այլ ցանկացած գործողություն արվելու է ազգային շահերի պաշտպանության և ինչու չէ՝ ՀՀ-ի ու Ռուսաստանի հայ համայնքի իմիջի բարձրացման համար:

Հաջորդ լուրջ քննարկումը վերաբերում է Մեծ հայրենադարձությանը, դրա կազմակերպման համար Հայաստանում պայմանների ստեղծմանը և այլն: «Հայրենադարձության համար անհրաժեշտ են պայմաններ Հայաստանում, սակայն այդ պայմանները բարդ է ստեղծել առանց հայրենադարձների: Խորհրդարանում սփյուռքի հայերից ստորին պալատի ստեղծումը չի լուծի այդ խնդիրը, իմ կարծիքով այն ոչինչ չի լուծի: Սփյուռքի հետ աշխատանքի համար խորհրդարանում ներկայացուցիչներ պետք չեն, դեռևս պետք չեն: Ավելորդ ծախսեր: Բավական է ստեղծել կոմունիկացիաներ, մտածել աշխատանքի նոր սկզբունք և այդ սկզբունքը ամեն երկրի համար պետք է տարբեր լինի: Հին մեթոդները իրենց չեն արդարացնում, եթե դրանք առհասարակ կային»,- գրում է խմբի համահիմնադիր Դավիթ Տոնոեանը[50]:

Խմբի բացման հենց առաջին օրվանից ականատես ենք առաջարկների տարափի. հնչում են առաջարկներ խմբի անդամներին ըստ մասնագիտությունների խմբավորելու և ստեղծվելիք կազմակերպության աշխատանքի ֆորմատի վերաբերյալ: Մայիսի 14-ին առաջ է քաշվում անկետա, որը անհրաժեշտ էր լրացնել նախատեսված հանդիպմանը մասնակցելու համար[51]: Այս փուլում տեսնում ենք, որ հստակ օրակարգ դեռևս չի ձևավորվել, նախաձեռնության հեղինակները հասկանում են ինչ-որ հարթակի ստեղծման անհրաժեշտությունը,

[50] https://www.facebook.com/tonoyand/posts/1992211534144223 (20.06.2018)

[51] Տե՛ս https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScFsDh6s0rMUQ5Qd4sQXM6VU1kahDw36dcGef3aNmoDd1XnnQ/viewform

սակայն դեռ լավ չեն պատկերացնում դրանով հետաքրքրվածների թիվը և աշխատանքների կազմակերպման մեթոդաբանությունը:

Նշենք, որ Ռուսաստանի ողջ տարածքից մի քանի հարյուր անկետաներ են ստացվում մայիսի 17-ին՝ նախաձեռնող խմբի անդրանիկ հավաքին մասնակցելու համար: Այս ցուցանիշը գերազանցում է կազմակերպիչների ակնկալիքը և վերջիններս ստիպված են լինում մերժել մի մասին՝ հատկապես Մոսկվայից դուրս բնակվողներին: Փոխարենը բոլոր հետաքրքրվածները հրավիրվում են մայիսի 28-ին կայանալիք կազմակերպության շնորհանդեսին[52]:

Հունիսի 7-ին, Մոսկվայի Գրանդ Մարիոթ հյուրանոցի հանդիպումների սրահում կազմակերպության բացման արարողությանը ներկա էին «Ազգերի մշակույթի Մոսկվայի հայկական թանգարանը», «Մոսկվայի հայ երիտասարդների ասոցիացիան» և «Հայաստանի բժիշկներ և կամավորներ» բարեգործական կազմակերպության ներկայացուցիչներ: Նորաբաց կազմակերպությունների ղեկավարները հայտարարեցին, որ իրենք չեն զբաղվելու քաղաքականությամբ և լոբբիզմով, որը հակաօրինական գործունեություն է համարվում, փոխարենը իրենք պաշտպանելու են ռուսահայերի իրավունքները, նպաստելու են հայրենակիցների արժանապատիվ ու դրական կերպարի ձևավորմանը, ռուս հասարակության մեջ ինտեգրմանը, ուշադրության կենտրոնում են պահելու հայոց լեզվի խնդիրը Ռուսաստանում, ջանք են գործադրելու ռուս-հայկական

[52] Ավելի ուշ որոշում է կայացվում փոխել շնորհանդեսի օրը՝ Հայաստանի նոր կառավարությունից պատվիրակներ տեսնելու ակնկալիքով: «Կարծում ենք, որ որևէ մեկի համար գաղտնիք չէ, թե որքան զբաղված է կառավարությունն այս օրերին, և ժամանակ է պետք պաշտոնական այցերի գրաֆիկի հստակեցման համար»: Մենք նաև հույս ունենք Նիկոլ Փաշինյանի վիդեոանդրադարձի»,- մասնավորապես նշվում է տարածված հայտարարության մեջ:

հարաբերությունների ամրապնդման համար[53]: Կազմակերպության բացման արարողությանը ներկա էին Ռուսաստանի 25 շրջանների ներկայացուցիչներ[54]:

Կազմակերպության հիմնական առաքելությունը Ռուսաստանում հայկական համայնքի սոցիոմշակութային ձևավորմանը նպաստելն է: Այն ստեղծվել է համախմբելու արդեն գործող անձանց և կազմակերպությունները, միավորելու նրանց պոտենցիալը և ռեսուրսները մեկ հարթակի վրա և ծառայեցնելու մեկ ընդհանուր նպատակի: Կազմակերպության համահիմնադիր Հակոբ Աբրահամյանը շեշտում է նաև, որ իրենց խնդիրն է ճիշտ ու պրոֆեսիոնալ ներկայացնել Ռուսաստանի հայերի համայնքը թե՛ Հայաստանին, թե՛ բոլոր սփյուռքահայերին: «Մեր կազմակերպությունը ստեղծված չէ ինչ-որ մեկին դեմ լինելու: Այսօր մենք անվանել ենք կազմակերպությունը Ռուսաստանի հայերի միավորում (ՕԱՐ), հետագայում գնալու ենք Ռուսաստանի այլ ռեգիոններ...Տպավորություն չստեղծվի, թե մենք փորձում ենք ինչ-որ կերպ խթանել արտագաղթը, ամեն դեպքում մեր թիրախը, ուզենք թե չուզենք, լինելու է Ռուսաստանում բնակվող հայ մարդը՝ անկախ քաղաքացիությունից: Չնայած այն բանին, որ մենք մարդկաց օգնում ենք, որպեսզի ճիշտ ինտեգրվեն ռուսական հասարակության մեջ, մենք իհարկե մեր հոգու խորքում ցանկանում ենք, որպեսզի լինի հակառակ գործընթացը, որպեսզի ռուսահայերը հայրենադարձվեն և այդպես գրագետ ձևով էլ ինտեգրվեն հայաստանյան հասարակության մեջ: Այդ ուղղությամբ նույնպես մենք ունենք ծրագիր՝ հայրենադարձության հետ կապված, որը

[53] В Москве объявлено о создании “Объединения армян России”, http://newsarmenia.am/news/politics/v-moskve-obyavleno-o-sozdanii-obedineniya-armyan-rossii/

[54]Համասփյուռք հաղորդաշարի «Ռուսաստանի հայերի միավորում. ինչու և ինչպես» հաղորդման ժամանակ այս մասին հայտարարել է կազմակերպության համահիմնադիր Հակոբ Աբրահամյանը:

սկսվում է հենց Ռուսաստանի տարածքում նրանց ճիշտ խորհրդատվության կազմակերպմամբ: Բոլորը պետք է ուղղակի իրենց զգան ապահով՝ մնալով Ռուսաստանում թե տեղափոխվելով Հայաստան, որը մեր բոլորիս հանգրվանն է ու հայրենիքը[55]:

Այստեղ ասես առաջ է քաշվում երջանիկ հայի, երջանիկ քաղաքացու կոնցեպտը, որը քանիցս ձևակերպվել է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության դրույթներում, իսկ ավելի ուշ նաև ՀՀ կառավարության ծրագրում[56]: Եթե վերլուծենք Հակոբ Աբրահամյանի միտքը, ապա ստացվում է, որ ՌԴ հայ համայնքը ինչ-որ միջանկյալ դիրքում է, փնտրտուքների մեջ է, և նրա ներկայացուցիչներին պետք է մի կողմից օգնել ինտեգրվելու ռուսական հասարակությանը, մյուս կողմից այդ հասարակությունը մերժողներին, բայց այստեղ արդեն տարիներ շարունակ բնակվող անձանց օգնել վերաինտեգրվել հայաստանյան հասարակությանը:

Կազմակերպության հիմնադիրները կարևորում են հայկական համայքների միջև կապերը: «Ինչ վերաբերում է գլոբալ սփյուռքի հետ մեր հարաբերությունների հաստատմանը դա իհարկե համաշխարհային հայության համախմբման գործընթաց է, որը շատ կարևոր է հենց հայապահպանության հետ կապված, հայկական ֆակտորի հզորացման հետ կապված, և իհարկե Ռուսաստանում կայանալուն պես մենք պետք է փորձենք Ռուսաստանում հայկական համայնքը ճիշտ ներկայացնենք ոչ միայն ռուսաստանյան հասարակությանը, այլ համայն հայությանը և փորձենք գտնել համագործակցության եզրեր նաև մնացած բոլոր

[55] Համասփյուռք. Ռուսաստանի հայերի միավորում. Հակոբ Աբրահամյան. Դավիթ Տոնոյան. Ռուսաստան 10.08.2018 , https://soundcloud.com/armradio/10082018a-4?in=armradio/sets/cnzbdumdigeh (12.08.2018)

[56] Ազատ, երջանիկ և արժանապատիվ քաղաքացի, մանրամասն տե՛ս http://www.gov.am/files/docs/2782.pdf (14.07.2018)

երկրներում գտնվող հայակակն գաղթօջախների և այնտեղ գործող հայկական կազմակերպությունների հետ»[57]:

Ուրախալի է նաև այն հանգամանքը, որ նոր կազմակերպության համահիմնադիրները, ինչպես նաև ՌԴ-ում կազմակերպված ցույցերի այլ մասնակիցներ քաղաքականապես ակտիվ են նաև «հետհեղափոխական» օրերին: Նրանց գրառումներում հաճախ ենք հանդիպում այսօրվա Հայաստանի ներաքաղաքական անցուդարձին նվիրված վերլուծություններ և մտահոգություններ, ինչպես նաև կազմակերպության առաջիկա ծրագրերի վերաբերյալ քննարկումներ:

Ֆինանսական աջակցություն

ՌԴ հայ համայնքի մասնակցությունը ՀՀ-ում տեղի ունեցող հեղափոխական գործընթացին չափելի է նաև մեկ այլ գործիքով՝ ֆինանսական աջակցության ծավալներով: Միայն Նիկոլ Փաշինյանի պաշտոնական էջում ներկայացված ամբողջական հաշվետվության համաձայն՝ հեղափոխության ընթացքում շուրջ 2.048.408.37 ռուբլի փոխանցում և նվիրատվություն է կատարվել հեղափոխության կազմակերպիչներին և աջակիցներին:

Դրամով կատարված ընդհանուր առմամբ շուրջ 73,5 միլիոն ՀՀ դրամ փոխանցման գրեթե 12 միլիոնը կատարվել է ՌԴ տարբեր տարբեր քաղաքներից ու շրջաններից, այդ թվում ՝Մոսկվա, Կրասնոդար, Սուրգուտ. Դմիտրով, Բաշկիրիա, Դոմոդեդովո, Իրկուտսկ, Յարոսլավլ, Նեֆտեկամսկ, Նիժնի Նովգորոդ, Նովոսիբիրսկ, Պոդոլսկ, Սամարսկ, Սանկտ Պետերբուրգ, Սոչի, Վլադիվոստոկ, Տոմբով, Օմսկ, Անապա, Արխանգելսկ, Բլագովեշչենսկ, Դոնի Ռոստով, Դոգոպրուդնի, Եկատիրինբուրգ,

[57] Համասփյուռք. Ռուսաստանի հայերի միավորում. Հակոբ Աբրահամյան. Դավիթ Տոնոյան. Ռուսաստան 10.08.2018, https://soundcloud.com/armradio/ 10082018a-4?in=armradio/sets/cnzbdumdigeh (12.08.2018)

Կլին, Կոլոմնա, Մագնիտոգորսկ, Միտիշի, Մուրմանսկ, Յայուտսկ, Նախոդկա, Նոգինսկ, Չելյաբինսկ, Ստավրոպոլ, Տոլյատի, Տուապսե, Տվեր և այլ բնակավայրերից[58]:

ՌԴ տարբեր շրջաններից ու քաղաքներից կան նաև ՀՀ դրամով և դոլարով փոխանցումներ: Հատկանշական է որոշ նվիրատուների անունների փոխարեն Հայ մարդ, Հայորդի, Շամշադինցի տղաներ, այս և նմանատիպ ձևակերպումները, ինչը դարձյալ խոսում է էթնիկ ինքնության ցուցիչների ակտիվացման մասին:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում 2018թ. գարնանը մեկնարկած հակակառավարական ելույթները, որոնք ավարտվեցին իշխանափոխությամբ, աննախադեպ ակտիվություն առաջացրին հայկական համայնքներում, որից անմասն չմնաց Ռուսաստանի Դաշնության՝ մասնավորապես Մոսկվայի հայությունը: Այս ամենը ցանցապետության շրջանակում դիտարկելիս պարզ է դառնում, որ ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների, ինֆորմացիոն հոսքերի ակտիվացման և ուժեղ ազդակների փոխանցման արդյունքում ցանցում տեղի է ունենում տատանումների ակտիվացում, «ՀՀ, հայ, Հայաստան» տեքստի թարմացում, ինչի գրավչության արդյունքում ակտիվանում/արթնանում են համայնքների մեր ներկայացուցիչները (թե՛ անհատները, թե՛ կառույցները) որպես ցանցի հանգույցներ և բջիջներ: Հիմնականում սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով ՌԴ տեղափոխված մեր հայրենակիցների պարագայում տեղի է ունենում ինքնության վերագիտակցում, ինքնության ցուցիչների ակտիվացում և որ ամենակարևորն է՝ ինքնակազմակերպման նոր հարթակի ձևավորում (Ռուսաստանի

[58] Ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությանն արված նվիրատվություններ https://www.facebook.com/pg/nikol.pashinyan/photos/?tab=album&album_id=2054610568192661 (04.08.2018)

հայերի միավորում), որն արդեն ևս ցանցի մի բջիջ է: Հայրենիք-համայնք, համայնք-համայնք կապը ամուր պահելու նկատառումից ելնելով անհրաժեշտ է այսուհետ ակտիվ պահել տեքստը, ինչը հնարավոր է միայն ինֆորմացիայի փոխանակման ուժեղ համակարգի գոյության դեպքում:

РЕАКЦИЯ МОСКОВСКИХ АРМЯН НА ПРОИЗОШЕДШИЕ В АРМЕНИИ ВЕСЕННИЕ СОБЫТИЯ 2018 ГОДА: ШАГ К СЕТЕГОСУДАРСТВУ

Аннотация

Шушан Кюрегян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
shoushan.kyureghyan@ysu.am

Ключевые слова: *Армянская община Москвы, демонстрации, Союз армян России, Объединение армян России, идентичность, сетевое государство*

События, логика действий и революционные настроения, стартовавшие в Республике Армении с апреля-мая 2018 года и продолжавшиеся до сих пор, были распространены на армянские общины через сетевые информационные системы.

В статье обсуждается реакция армян Москвы на события в Армении, согласно интервью с представителями общины, обсуждениям в социальных сетях и других информационных сайтах, а также заявлениям различных политологов и официальных структур.

В исследовании делается попытка выяснить, как события, произошедшие на родине повлияли на обновление индикаторов

идентичности российских армян, создание площадок самоорганизации, повышение эффективности сетеобразования.

THE REACTION OF ARMENIAN COMMUNITY OF MOSCOW TO THE SPRING EVENTS IN ARMENIA, 2018: A STEP TO THE NETSTATE

Abstract

Shushan Kyureghyan
Center for Civilization and Cultural Studies,
Yerevan State University
shoushan.kyureghyan@ysu.am

Key words: *Armenian community of Moscow, demonstrations, Union of Armenians of Russia, Association of Armenians of Russia, identity, network*

The anti-governmental demonstrations carried out in the Republic of Armenia in April and May of 2018, its following processes, the revolutionary mood and the logic of the actions spread also to the Armenian communities abroad by the network of information system.

The article discusses the reaction of Moscow-based Armenians to the events that took place in Armenia based on interviews held with some representatives of the Armenian community, discussions in the social network and other information websites, and the formal announcements of various politicians and political structures.

This study is an attempt to find out how the events taken place in the homeland impacted on the refreshment of identity indicators, the comprising of self-organizing platforms and the enhancing of networking efficiency of the Armenians settled in Russia.

Հավելված 1

Հարցման արդյունքներ

«Թավշյա հեղափոխության» վերաբերյալ մեր ռուսաստանաբնակ հայրենակիցների կարծիքը ամբողջացնելու համար նրանց խնդրեցի լրացնել օնլայն հարցաթերթիկ, որի ամփոփումը ներկայացնում եմ ստորև: Հարցմանը մասնակցել է մոտ 50 հոգի:

1. Ի՞նչ մասնակցություն եք ունեցել մարտի 31-ին Հայատանում մեկնարկած և մինչ օրս շարունակվող «թավշյա հեղափոխությանը»:

- Մասնակցել եմ ՌԴ-ում ՀՀ դեսպանատան և եկեղեցու դիմաց կազմակերպվող բողոքի ակցիաներին – 10.6%
- Մեկնել եմ Հայաստան՝ ցույցերին անմիջական մասնակցություն ունենալու նպատակով - 12.8%
- Ծավալվող իրադարձություններին հետևել և աջակցել եմ սոցիալական ցանցերի միջոցով- 87.2%
- Անտարբեր եմ եղել ՀՀ-ում ծավալվող իրադարձությունների նկատմամբ - 0%
- Ֆինանսական օգնություն եմ ցուցաբերել -2.1%

2. Ո՞ր փուլում եք սկսել հետաքրքրվել ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններով:

- Մարտի 31-ից-ապրիլի 13՝ Գյումրիում քայլարշավի մեկնարկից մինչ Երևան հասնելը - 42.6 %
- Ապրիլի 13-17՝ Երևանյան ցույցերից մինչ Սերժ Սարգսյանի վարչապետ ընտրվելը - 36.2%
- Ապրիլի 17-22՝ համաուսանողական շարժման ծավալումից մինչ Ս. Սարգսյան-Ն. Փաշինյան բանակցությունների ձախողումը- 6.4%
- Ապրիլի 22-23՝ Նիկոլ Փաշինյանի ձերբակալումից մինչ Ս. Սարգսյանի հրաժարականը - 4.3%
- Ապրիլի 23-մայիսի 1՝ մինչ Նիկոլ Փաշինյանի վարչապետության առաջին ընտրության ձախողումը - 4.3%
- Մայիսի 1-8՝ մինչ Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելը - 6.4%

- Մայիսի 8-ից՝ նոր կառավարության ձևավորումից հետո - 0
- Չեմ հետաքրքրվել - 0

3. Ինչ զգացողություններ ունեիք ՀՀ-ում տեղի ունեցող «թավշյա հեղափոխության» օրերին



4. Կա ՌԴ հայկական համայնքում գործող որևէ կազմակերպություն, որը համակարգում ողջ համայնքի գործունեությունը և ներկայացնում ՀՀ քաղաքացիների շահերը: Եթե այո՝ խնդրում ենք նշել կազմակերպության անունը:



5. Արդյունավետ եք համարում նորաբաց Ռուսաստանի հայերի միավորում (Спорк 2.0) կազմակերպության գործունեությունը:



6. ՌԴ հայկական համայնքում մինչև ՀՀ-ում իշխանափոխությունը և դրանից հետո ի՞նչ փոփոխություններ եք նկատում:



7. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ «թավշյա հեղափոխությունը» ՌԴ իշխանությունների՝ հայկական համայնքի հանդեպ տարվող քաղաքականության վրա:

- Ժամանակը ցույց կտա
- Դեռ ոչ մի
- Չգիտեմ
- Լավ
- Մինչ այդ էլ եսիմ ինչ չէր
- Դրական

- Ավելի ուշադիր ու զգույշ կլինեն
- Դժվար է ասել, ժամանակը ցույց կտա
- Չեմ կարող պատասխանել
- ՌԴ կառավարությունը հայկական համայնքի հանդեպ ոչ մի քաղաքականություն չի վարում, որովհետև այն իրենից ոչինչ չի ներկայացնում
- Դժվարանում եմ պատասխանել
- Ամենայն հավանականությամբ՝ վատ
- Կարծում եմ շատերը կցանկանան վերադառնալ Հայաստան կամ որևէ ներդրում կատարել

8. ՌԴ մեկնել եք



9. «Թավշյա հեղափոխությունից» հետո՝



10. Ինչպե՞ս եք գնահատում նոր կառավարության՝ մասնավորապես սփյուռքի նախարարության գործունեությունը:



Առաջարկների, լրացումների և «թավշյա հեղափոխության» օրերին համայնքում կատարված հիշարժան դեպքերի բաժնում մեր հայրենակիցները հիշատակել են հայկական եկեղեցու քահանայի և դեսպանատան վատ վերաբերմունքը հայերի նկատմամբ, նոր կազմակերպության բացման արարողությունը, իրենց հարազատների՝ Հայաստան մեկնելն ու այդ պատմական օրերին հայրենիքում լինելը, ինչպես նաև Նիկոլ Փաշինյանին սատարող ու Դուխով գրառումներ: Հարկ է ընդգծել, որ այս գրառումների ստվար հատվածը դարձյալ կիրիլիցայով են արվել:

ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հասմիկ Փարեմուզյան
ԵՊՀ արաբագիտության ամբիոն
hasmik.paremuzyan@gmail.com

Բանալի բառեր՝ *ցույցեր, ցանց, ինքնություն, հայկական համայնքներ, Կրասնոդար, Սոչի*

1. Կրասնոդար քաղաքի հայկական համայնքի արձագանքը ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին

2018թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններն իրենց արձագանքը գտան նաև Հայաստանից դուրս բնակվող հայերի շրջանում: Եթե այս ամենը դիտարկենք ցանցապետության տեսության դիտակետից, ապա կտեսնենք, որ ցանցի պայմանական կենտրոնում տեղի ունեցող իրադարձությունները սկսեցին փոփոփոխել տեքստը, որն իր հերթին նոր դինամիկա մտցրեց ամբողջ ցանցի գործունեության մեջ, և անգամ ցանցի ամենահեռավոր բջիջները սկսեցին արձագանքել տեքստի փոփոխությանը: Այսպիսով, արտերկրում գտնվող գրեթե բոլոր հայկական համայնքերը այս կամ այն չափով սկսեցին ներգրավվել հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին: Այս տեսանկյունից բացառություն չի նաև Ռուսաստանի ամենամեծ հայկական համայնքներից մեկը՝ Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքը, որի ներկայացուցիչներից ոմանք անգամ այդ օրերին վերադարձան

Հայաստան և Հայաստանում մասնակցեցին անհնազանդության ակցիաներին:

Կրասնոդարի բնակչությունը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվվում է մոտ 5.571.000 մարդ[1]: Հայերն այս երկրամասում բնակչության թվով երկրորդն են՝ ռուսներից հետո: Հայերի թվաքանակի վերաբերյալ հստակ տվյալներ չկան: 2010թ. պաշտոնական տվյալներով այստեղ բնակվում է 281,7 հզ. հայ[2], սակայն այլ հաշվարկներով երկրամասի հայերի թիվը տատանվում է 500-800 հազարի[3] սահմաններում, որոնց հիմնական մասը կենտրոնացած է Կրասնոդար և Սոչի քաղաքներում և դրանց մերձակա տարածքներում:

Կրասնոդարում գործում է «Ռուսաստանի հայերի միություն» հասարակական կազմակերպության մարզային մասնաճուղը, որը և համարվում է մարզի հայկական համայնքային կյանքի կազմակերպիչը: Այն ունի կայքէջ[4], որն անդրադառնում է Կրասնոդարի երկրամասի հայերի կյանքում տեղի ունեցող տարբեր իրադարձություններին՝ մշակութային և համայնքային միջոցառումներին: «Ռուսաստանի հայերի միության» մարզային մասնաճուղի գրասենյակը գտնվում է Կրասնոդար քաղաքում: Այստեղ գործում է նաև տվյալ կազմակերպության քաղաքային մասնաճյուղը: Կրասնոդար քաղաքի հայկական համայնքի մշակութային կյանքի կազմակերպման գործում իր դերն ունի նաև

[1] Население регионов России 2017: численность, крупные регионы России и фед. округа список, http://www.statdata.ru/largest_regions_russia (15.12.2018)

[2] Армяне - 6-я по численности нация в России, https://mediamax.am/ru/news/society/3406/ (15.12.2018)

[3] Հայկական գաղթօջախներ_Կրասնոդարի երկրամաս, 22.07.2017, https://soundcloud.com/armradio/22072017a-5 (14.12.2018)

[4] Краснодарское региональное отделение Союза Армян России, http://kubansar.ru (12.12.2018)

«Պաշկովյան հայկական համայնք» հասարակական կազմակերպությունը։

Ի տարբերություն «Ռուսաստանի հայերի միության» տարբեր շրջանների և քաղաքների մասնաճուղերի պաշտոնական կայքերի՝ Կրասնոդարի մարզային մասնաճյուղի պաշտոնական կայքը ոչ մի անդրադարձ չի կատարել 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում կատարվող իրադարձություններին։ Սակայն շատ հետաքրքիր է կայքի գլխավոր նկարը, որի վրա հայկական դրոշի գույներով «հեղափոխության» օրերի նկարի ֆոնին Նիկոլ Փաշինյանն ու Վլադիմիր Պուտինը միմյանց ձեռք են սեղմում։

Այս նկարը հետաքրքիր կերպով արտացոլում է կազմակերպության կողմից ուղարկվող ազդակները. ա) կազմակերպությունն ընդունում է ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների արդյունքները և եթե սա դիտարկենք ցանցապետության տեսանկյունից, ապա կազմակերպությունը նոր տեքստում կա՛մ գտել է իր գաղափարներին մոտ ինչ-որ բան և միացել է դրան, կա՛մ իր գաղափարներն է ադապտացրել նոր և ավելի ակտուալ տեքստին, բ) դրոշը հայկական ինքնության պահպանման խորհրդանիշն է, գ) Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների ձեռքսեղմումն օգտագործվում է որպես հայ և ռուս ժողովուրդների բարեկամության նշան։ Ի դեպ՝ այս վերջին ուղերձը հասցեագրված է հավասարապես և՛ հայերին, և՛ ռուսներին։

Ինչ վերաբերում է «Ռուսաստանի հայերի միության» մարզային մասնաճյուղի՝ ВКонтакте սոցիալական ցանցում ունեցած հաշվին և Одноклассники-ում ունեցած խմբին, ապա այստեղ պատկերը մի քիչ այլ է։ Այստեղ արդեն խմբի և հաշվի համակարգողները կիսվում էին «հեղափոխության» օրերին «Ռուսաստանի հայերի միության» ղեկավարության կողմից արված հայտարարություններով։

Առաջին հայտարարությունը ապրիլի 20-ին Արա Աբրահամյանի կողմից Սերժ Սարգսյանին ուղղված շնորհավորական ուղերձն է, որին անմիջապես հաջորդում է «Համաշխարհային հայկական կոնգրես»-ի և «Ռուսաստանի հայերի միության» հայտարարությունը, որտեղ մասնավորապես նշված է.

««Համաշխարհային հայկական կոնգրես»-ը և «Ռուսաստանի հայերի միություն»-ը խորապես անհանգստացած են Հայաստանում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակով, տարերային մանիֆեստացիաներով, որոնք կազմակերպվում են քաղաքական այնպիսի շրջանակների կողմից, որոնք փորձում են նախագահական իշխանությունից խորհրդարանականին անցումն օգտագործել իրենց շահերի համար»[5]:

Այս հայտարարությունները կատարվել են մինչև Սերժ Սարգսյանի հրաժարականը, այն ժամանակ, երբ ռուսական մամուլում հայտնվում էին այնպիսի լուրեր, որոնք Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները որակում էին որպես Արևմուտքի կողմից հրահրված ցույցեր և ենթադրություններ էին անում, որ այստեղ ևս ամեն ինչ ավարտվելու է Ուկրաինայի օրինակով:

Այսպիսով, «Ռուսաստանի հայերի միության» նախնական հայտարարությունները հիմնականում համընկնում էին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ Ռուսաստանում տիրող տրամադրությունների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ այս հայտարարություններն ընդհանրապես ոչ մի հավանում չեն ունեցել, իսկ ВКонтакте սոցիալական ցանցի հաշվում դրված այս հայտարարությունների

[5] Заявление «Всемирного армянского конгресса» и «Союза армян России», 17 апреля 2018, http://www.sarinfo.org/sarnews/17-04-18-2.shtml (14.12.2018)

մեկնաբանություններում խմբի անդամներից մեկը՝ Սերգեյ Ավետիսյանը, տեղադրել է հայաստանյան ցույցերից մեկի տեսագրությունը՝ «ահա իսկական Հայաստանը» մեկնաբանությամբ:

Ապրիլի 26-ին սոցիալական ցանցերում հայտնվում է «Ռուսաստանի հայերի միության» Կրասնոդարի քաղաքային մասնաճյուղի ղեկավար Ա. Եսայանի հայտարարությունը, որտեղ կազմակերպությունն իր անհանգստությունն է հայտնում Հայաստանում տիրող իրադարձությունների վերաբերյալ և քաղաքական գործընթացների բոլոր մասնակիցներին երկխոսության և անկախ քաղաքական հայացքներից բոլոր քաղաքացիների իրավունքների պաշտպանության կոչ է արվում՝ նշելով, որ խնդիրը պետք է լուծվի բացառապես իրավական ճանապարհով:

Հայտարարության մեջ նշված է նաև, որ իրենց համար շատ կարևոր են պատմական հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունները, և այն, որ պետք է չմոռանալ, որ Հայաստանը գտնվում է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում և կոչ է արվում մեղմել քաղաքական ամբիցիաները և հաշվարկել բոլոր քայլերը, քանի որ բոլոր փոփոխությունները պետք է օգտակար լինեն և ոչ թե հանգեցնեն քաոսի: Այդ իսկ պատճառով կարևոր են համարում, որ բոլոր կողմերը գործեն Սահմանադրությանը համապատասխան[6]:

«Ռուսաստանի հայերի միության» Կրասնոդարի քաղաքային մասնաճյուղի ղեկավարի հայտարարությունից հետո հաջորդ

[6] Հայտարարության ամբողջական տեքստը, որը «Երկրամաս» թերթը վերցրել է ВКонтакте սոց. ցանցում գտնվող կազմակերպության էջից: http://www.yerkramas.org/article/135953/krasnodarskoe-otdelenie-sar-prizyvaet-politicheskie-sily-armenii-dejstvovat-v-ramkax-konstitucii (20.12.2018)

հրապարակումն արվել է մայիսի 8-ին: Այն «Ռուսաստանի հայերի միության» մայիսի 4-ի հայտարարությունն է դեռևս ապրիլի 26-ին «Կոմսոմոլսկայա պրավդա» ռադիոյի եթերում Հայաստանի և հայերի հասցեին հնչած կարծիքների վերաբերյալ: Այստեղ «Ռուսաստանի հայերի միություն»-ը պարզաբանումներ է պահանջում արված հայտարարությունների շուրջ[7]:

Հետաքրքիր է այն փաստը, որ «Ռուսաստանի հայերի միություն»-ը ապրիլի 26-ի վերոնշյալ հաղորդմանն անդրադառնում է միայն մայիսի 4-ին: Տպավորություն է ստեղծվում, որ կազմակերպությունը մինչ այդ գտնվում էր սպասողական վիճակում և ոչ մի քայլ չէր ձեռնարկում մինչև այն ժամանակ, երբ արդեն նշմարվում է, որ Հայաստանում իշխանափոխությունն այլևս անդառնալի է:

Գարնանը Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների և դրանց հետևանքների մասին սոցիալական ցանցերում «Ռուսաստանի հայերի միության» Կրասնոդարի մարզային և քաղաքային մասնաճյուղերի կողմից արված վերջին հրապարակումը Նիկոլ Փաշինյանի և Վլադիմիր Պուտինի՝ Սոչիում տեղի ունեցած հանդիպման մասին լուրն է, որից հետո հեղափոխական և «հետհեղափոխական» իրադարձությունների նկատմամբ հետաքրքրությունն այլևս մարում է:

Ինչ վերաբերում է Կրասնոդար քաղաքում գործող «Պաշկովյան հայկական համայնք»-ին, ապա ապրիլի 26-ին «Երկրամաս» թերթի կայքում տեղադրվել է Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ նրանց հայտարարությունը, որտեղ ասվում է, որ «Պաշկովյան հայկական

[7] Заявление Союза армян России в связи с беспардонными и циничными высказываниями, прозвучавшими в адрес Армении и армян в эфире Радио «Комсомольская правда», 4 мая 2018, http://sarinfo.org/sarnews/05-05-18.shtml (16.12.2018)

համայնք»-ը անհանգստացած է Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ներքաղաքական իրավիճակով, որը տանում է ինչպես «Հայաստանի քաղաքացիների, այնպես էլ Սփյուռքի հայերի վտանգավոր մասնատման»[8]:

Ապա հայտատարարության տեքստում նշվում է, որ ստեղծված իրավիճակում գլխավոր խնդիրը օրինական իշխանությունների ու տարբեր քաղաքական ուժերի համակիրների միջև բախման և արյունահեղության կանխարգելումն է, ինչպես նաև ՀՀ սահմանադրությամբ հարցի խաղաղ լուծումը, քանի որ որքան երկար է տևում Հայաստանում ստեղծված իրավիճակը, այնքան մեծանում է «ոչ ընկերական» հարևանի հետ պատերազմի բռնկման, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների և զբոսաշրջային ժամանակաշրջանի տապալման պատճառով հնարավոր տնտեսական աղետի վտանգը:

Այսպիսով, Կրասնոդարի հայկական համայնքի ղեկավարները մինչև հայաստանյան իրադարձությունների հետագա ընթացքի պարզ դառնալը զգուշավորության կոչեր են անում՝ շեշտը դնելով Արցախի հարցի և երկրի ներքաղաքական անկայունության պայմաններում հնարավոր տնտեսական խնդիրների վրա: Սակայն, երբ պարզ է դառնում, որ Հայաստանում իշխանափոխություն է տեղի ունեցել, նրանք ինչ-որ կերպ փորձում են կպչել արդեն փոփոխված տեքստին և ադապտացվել նոր իրավիճակին:

Ինչ վերաբերում է «հեղափոխության» օրերին սոցիալական ցանցերում Կրասնոդար քաղաքի հայերի ակտիվությանը, ապա հարկավոր է նշել, որ նրանք բավականին պասիվ էին և՛

[8] Հայտարարության ամբողջական տեքստը http://www.yerkramas.org/article/135954/pashkovskaya-armyanskaya-obshhina-krasnodara-vidit-razres henie-slozhivshejsya-situacii-v-ramkax-pravovogo-polya?fbclid=IwAR2DDDmBvihDMuOyn6VHRr0eXwTjUvX4SxjbQr24SfREgIBrp8g4dwRDeZM (20.12.2018)

սոցիալական ցանցերում գոյություն ունեցող խմբերում, և՛ անհատական հաշիվներում: Միակ փոքր-ինչ ակտիվ խումբը ВКонтакте սոցիալական ցանցում գործող Կրասնոդար քաղաքի հայերի խումբն է, որտեղ Հայաստանում տիրող իրադարձությունների վերաբերյալ առաջին հրապարակումը տեղի է ունեցել ապրիլի 22-ին: Այդպիսով խմբի անդամներից մեկը փորձում է հասկանալ, թե արդյոք խմբակիցները հետևում են Հայաստանի իրադարձություններին: Այս հրապարակումը շատ քիչ թվով մեկնաբանություններ ունի, որտեղ այդ օրերին խմբի ակտիվ մասնակիցներից մեկը գրում է, որ միայն Կրասնոդարի հայերը ցույցեր չեն անում և առաջարկում է ցույցի դուրս գալ: Հետաքրքրական է այն փաստը, որ Կրասնոդար քաղաքում ապրիլի 23-ին եկեղեցու դիմաց հավաքվելու և ցույց անելու առաջարկները ջնջվել էին խումբը համակարգողների կողմից, ինչը հանգեցրել է, նրան, որ խմբի անդամներից մեկը համակարգողին «հանրապետական» է անվանում: Նույն օրը խմբում կիսվում են «քայլ արա մերժիր Սերժին» լատինատառ և հայատառ հեշթեգով նկարներով: Դրանից բացի հրապարակվում են հայկական դրոշով տարբեր մարդկանց լուսանկարներ: Կարելի է ենթադրել, որ նկարներում պատկերված մարդիկ հենց Կրասնոդար քաղաքում բնակվող հայեր են:

Հաջորդը ապրիլի 23-ին կատարված Սերժ Սարգսյանի հրաժարականի մասին լուրի հրապարակումն է՝ «ժողովուրդ, Սերժը վախեցավ» մեկնաբանությամբ: Հրապարակման մեկնաբանություններում մարդիկ միմյանց շնորհավորում են Սերժ Սարգսյանի հրաժարականի առթիվ, սակայն կրկին անհրաժեշտ է նշել, որ ակտիվությունը շատ փոքր է: Այս հրապարակմանը հաջորդում է ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը, Կրասնոդար քաղաքի հայկական եկեղեցու բակում «յուրայիններին» աջակցելու նպատակով ցույց անելու առաջարկ:

Այս հրապարակումն ունի ընդամենը վեց հավանում և երեք մեկնաբանություն, ինչը կրկին խոսում է սոցիալական ցանցերում Կրասնոդարի հայերի ցածր ակտիվության մասին։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ հայկական ինքնության զարթոնքը տեղի հայերի շրջանում առավել ցայտուն է դառնում այն օրը, երբ ձերբակալվում են հայաստանյան ցույցերի ղեկավարները։ Նրանցից մի մասն անգամ ցանկանում է տեղում կազմակերպել Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին աջակցող ցույցեր և ակցիաներ։ Սակայն արդեն իսկ անցկացված ցույցերի մասին տեղեկություններ չկան, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Կրասնոդարում ցույցեր այդպես էլ չեն իրականացվել։

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ հնարավոր ցույցերի տեղ ընտրվում է տեղի հայկական եկեղեցին։ Այսինքն՝ հայկական ինքնությունը կապվում է նաև հայկական եկեղեցու հետ։

Վերոնշյալ հրապարակումից հետո մինչև մայիսի 9-ը այլևս այս թեմայով հրապարակումներ չեն արվել։ Մայիսի 9-ին այս խմբի անդամներից մեկը կիսվել է «հեղափոխության» օրերի լուսանկարներից մեկով, որի վրա մասնավորապես գրված է .

«Հայաստանը աշխարհում միակ երկիրն է, որտեղ առանց արյուն թափելու հեղափոխություն է եղել։ Սա իմ երկիրն է, սա իմ ժողովուրդն է և ես հպարտ եմ, որ դրա մասնիկն եմ»։

Հրապարակման մեկնաբանություններում հայերը միմյանց շնորհավորում են։ Հարկ է նշել նաև, որ մյուս հրապարակումների համեմատ այս մեկն ամենամեծ թվով հավանումներին է արժանացել, ինչը վկայում է այն մասին, որ անգամ նմանատիպ պասիվ խմբում, հայերը նման հրապարակումը ոգևորությամբ են ընդունում։

Ինչ վերաբերում է Կրասնոդարի հայերի՝ սոցիալական ցանցերում ունեցած անհատական հաշիվներին, ապա ան այստեղ ևս ամեն ինչ շատ պասիվ է։ Շատ քիչ թվով հայեր են, որ

առհասարակ որևէ հրապարակում են արել ապրիլ-մայիս ամիսներին, իսկ եղած հրապարակումներն էլ ուղղակի ինչ-որ նկարներ են՝ Հայաստանում հնչող կարգախոսերով հեշթեգներով:

Սոցիալական ցանցերում Կրասնոդարի հայերի պասիվությունը կարող է տպավորություն ստեղծել այն մասին, որ այստեղ բնակվող հայերն անտարբեր էին ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում կատարվող իրադարձությունների նկատմամբ, սակայն այստեղ գործող համայնքային կառույցների հայտարարությունները որոշակիորեն թույլ են տալիս եզրակացնել, որ տեղի հայերն, այնուամենայնիվ, հետևում էին հայրենիքից եկող ազդակներին և նախկինում եղած տեքստի փոփոխությանը, և համայնքային ղեկավարությունը ստիպված էր արձագանքել Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին՝ սկզբում զգուշավորության կոչերով, ապա արդեն համագործակցության պատրաստակամությամբ: Բացի դրանից Կրասնոդարի հայերի ոչ անտարբեր վերաբերմունքի մասին է խոսում այն փաստը, որ այստեղ ևս սկսվել են վաճառվել «դուխով» գրությամբ գլխարկներ և շապիկներ: Սա խոսում է նմանատիպ իրերի պահանջարկի մասին, ինչն ապացուցում է այն ենթադրությունը, որ համայնքի հայերի մոտ որոշակի չափով տեղի է ունեցել ինքնության արթնացում: Իսկ այդ դեպքում սոցիալական ցանցերում հայերի պասիվությունը հավանաբար կարելի է բացատրել նրանով, որ Կրասնոդար քաղաքում և առհասարակ ամբողջ մարզում հայերի թիվը շատ մեծ է, նրանք ունեն իրենց փոքր խմբերը և հիմնականում անմիջական կապի մեջ են գտնում իրենց հայրենիքի հետ:

2. Սոչիաբնակ հայերի արձագանքը ապրիլ-մայիս ամիսների հայկական «հեղափոխությանը» և Նիկոլ Փաշինյի այցը Սոչի

2018թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին Կրասնոդար քաղաքի հայերի

արձագանքի հետ եթե համեմատելու լինենք Կրասնոդարի երկրամասի հաջորդ ամենահայաշատ քաղաքի՝ Սոչիի հայության արձագանքը, ապա կարող ենք տեսնել, որ ընդհանուր գծերով երկու քաղաքների հայության արձագանքը միանման են՝ մի տարբերությամբ, որ Նիկոլ Փաշինյանի այցը Սոչի և տեղի հայերի կողմից նրան ոգևորությամբ դիմավորելը Սոչիի ուղղությամբ բազում հայացքներ սևեռեցին:

Սոչիի բնակչությունը 2018թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում է մոտ 425 հազար մարդ[9], որի մոտ 20%-ը հայեր են, որոնց մեջ մեծ է նաև 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի առաջին քառորդն ընկած ժամանակահատվածում թուրքական կառավարության կողմից կազմակերպված ջարդերից փախած, Սոչիի տարածքում և Սև ծովի ամբողջ հարավային ափում հաստատված համշենահայերի թիվը[10]: Հայերի հաջորդ հոսքը սկսվել է 1988թ.-ից՝ Սպիտակի երկրաշարժից հետո և այժմ հայերը բնակչության թվով երկրորդն են այս տարածաշրջանում: Այստեղ նույնպես համայնքի կյանքը հիմականում համակարգվում է «Ռուսաստանի հայերի միության» Սոչի քաղաքի մասնաճյուղի կողմից: Գործում են նաև 1989թ. ստեղծված «Սևան» հայկական մշակութային կենտրոնը և այլ մշակութային կենտրոններ և կազմակերպություններ, իսկ 1995թ.-ից Ադլերում գործում է հայկական դպրոց[11], որը Կրասնոդարի մարզի միակ ամենօրյա հայկական դպրոցն է:

---

[9] 100 Крупнейших городов России по населению 2018 список РФ, http://www.statdata.ru/largest_cities_russia (15.09.2018)

[10] Наири Кундакчян, Черноморские амшенские армяне в 21 веке, 18/11/2012, http:// sarsochi.ru/2012/11/18/chernomorskie-amshenskie-armyane-v-21-veke/ (17.09.2018)

[11] Диана Мкртчян, Амшен и амшенские армяне, http://old.noev-kovcheg.ru/article.php?n=92&a=36 (20.09.2018)

Հաշվի առնելով Սոչիում բնակվող հայերի թիվը՝ բնական է թվում, որ տեղի հայերը պետք է արձագանքեին իրենց հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին։

Սոչիում բնակվող հայերը նշում են, որ Հայաստանում ընթացող իրադարձություններն այստեղ առավել հայտնի են դարձել ապրիլի 17-ին՝ ՀՀ ԱԺ-ի կողմից Սերժ Սարգսյանի վարչապետ ընտրվելու օրը։ Սոչիում բնակվող Արթուր Բաղասյանը[12] այն հարցին, թե ինչպես արձագանքեց, երբ իմացավ Հայաստանում տեղի ունեցող ցույցերի մասին, պատասխանում է, որ այդ լուրն իրեն շատ է ուրախացրել՝ չնայած նրան, որ ռուսական լրատվամիջոցներում այդ իրադարձությունները ներկայացվում էին որպես «մայդան» և որ իրեն շրջապատող մարդկանց մեծամասնությունը կարծում էր, որ դրանք «Ամերիկայի հնարքներն» են։

Սոցիալական ցանցերում Հայաստանում ծավալված անհնազանդության ակցիաները համակրող և դրանց աջակցություն հայտնող առաջին հրապարակումները հայտնվում են ապրիլի 20-ից, իսկ հայաստանյան իրադարձություններին տեղի համայնքի ղեկավարությունն առաջին անգամ արձագանքում է ապրիլի 21-ին։ «Ռուսաստանի հայերի միության» Սոչի քաղաքի մասնաճյուղի պաշտոնական կայքում տեղադրվում է մասնաճյուղի նախագահի առաջին տեղակալ Մելիք Կիվիրյանի հայտարարությունն այն մասին, որ իրենք պետք է արտահայտեն իրենց դիքորոշումը ստեղծված իրավիճակի վերաբերյալ, քանի որ իրենք հայ են։ Նա մասնավորապես նշում է. «Առաջարկում եմ

[12] Սոչիաբնակ հայ երիտասարդ, որը միակն է, ով անհնազանդության օրերի ժամանակ Սոչիում ակցիաներ անելու վերաբերյալ հարցադրումներ է արել ВКонтакте սոցիալական ցանցի սոչիաբնակ հայերի գրեթե բոլոր խմբերում։ Նրա հարցադրումները մինչ օրս անպատասխան են մնացել, սակայն դրանք թույլ տվեցին կապ հաստատել վերջինիս հետ և անցկացված խորքային հարցազրույցի արդյունքում ստանալ մի շարք կարևոր հարցերի պատասխաններ։

կապի մեջ մտնել ամբողջ շրջանի հայկական համայնքների հետ և աջակցել Երևանի ժողովրդի բազմամարդ ցույցերը, որոնք տեղի են ունենում շատ խաղաղ ճանապարհով՝ պարերերով և երգերով: Ես դեռ այսպիսի բան ոչ մի տեղ չեմ տեսել»: Ապա նա ավելացնում է, որ սա հակաօրինական կոչ չէ և որ իրենք ոչ մի ցույց չեն կազմակերպում: Նա նաև նշում է, որ իրենք պետք է մտածեն իրենց պատմական հայերնիքի ժողովրդի բարօրության մասին և որ գլխավորը ժողովրդի վիճակի բարելավումն է՝ անկախ նրանից, թե ով կղեկավարի երկիրը: Հայտարարության վերջում նա նշում է, որ ինքը խիստ դեմ է Սոչիում ինչպես նաև շրջանում և ամբողջ Ռուսաստանում որևէ ցույցի կազմակերպմանը[13]:

Այս հայտարարությունը կարծես թե ուղղված էր երեք տարբեր լսարանների. ա) տեղի հայությանը, ում հիշեցնում է, որ իրենք հայ են և պետք է դիրքորոշում ունենան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների հարցում, բ) Հայաստանի հայությանը, ում փորձ է կատարվում ցույց տալ, որ իրենք պատրաստ են բարոյապես աջակցել խաղաղ ցույցերին, գ) ռուսական իշխանություններին, որոնց ոչ ուղիղ տեքստով, բայց ասվում է, որ քաղաքի և շրջանի տարածքում հնարավոր ցույցերի կազմակերպման մեջ իրենք մասնակցություն չունեն:

Սակայն ի տարբերություն վերոնշյալ կազմակերպության տարբեր մասնաճյուղերի ղեկավարների հայտարարությունների այս հայտարարությունն առանձնանում է իր մեջ եղած որոշակի դրական երանգով և բավականին դիվանագիտորեն շարադրված տեքստով:

Սոցիալական ցանցերում Սոչիի հայությունն առավել ակտիվանում է ապրիլի 22-ին, երբ Երևանում ուժային կառույցների կողմից բերման են ենթարկվում Ազգային ժողովի

[13] Հայտարարության աբոջական տեքստը՝ http://sarsochi.ru/2018/04/21/ melik-grantovich-kiviryan-o-protestah-v-armenii/ (28.06.2018)

պատգամավորներ Նիկոլ Փաշինյանը, Արարատ Միրզոյանը և Սասուն Միքայելյանը: Մասնավորապես՝ իր ֆեյսբուքյան էջում Սոչիի հայության մի հատվածի շրջանում հայտնի երգիչ Դավիթ Թադևոսյանը տեսահաղորդագրություն է տարածում՝ դիմելով Վլադիմիր Սոլովյովին, որտեղ ասվում է.

«Սիրելի Վլադիմիր Սոլովյով, եթե Դուք հայ ազգի բարեկամն եք, ապա, խնդրում եմ, լուսաբանեք այն, ինչ կատարվում է Հայաստանում: Այնտեղ իշխանության կողմից ցուցաբերվում է բացարձակ անօրինականություն, երբ խաղաղ ցույցի ժամանակ ուժային կառույցները հարձակվում են մարդկանց վրա և տանում անհայտ ուղղությամբ: Մարդիկ պետք է իմանան ճշմարտությունը: Սա Ամերիկայի կամ Ռուսաստանի դեմ ցույց չէ, սա ցույց է կոռումպացված իշխանության և նրա առաջնորդ Սերժ Սարգսյանի դեմ: Այսօր հայ ազգին աջակցություն է պետք: Ես հավատում եմ իմ ազգին և Ձեր բարեկամությունը»:

Դավիթն ապրիլի 22-ին հանդես է գալիս նաև հեղինակային երգի կատարմամբ, որը շուտով մեծ ճանաչում է գտնում Սոչիի հայերի շրջանում: Նա նշում է, որ երգը նվիրում է «հայ ժողովրդի արժանի զավակ Նիկոլ Փաշինյանին» և բոլոր նրանց, ովքեր դուրս են եկել «հայ ժողովրդի գլխավոր թշնամու և կոռումպացված իշխանության դեմ»:

Ինչպես Կրասնոդար քաղաքում և առհասարակ աշխարհի տարբեր քաղաքներում բնակվող հայերի շրջանում, Սոչիում ևս ապրիլի 22-ին Նիկոլ Փաշինյանին և ԱԺ մյուս պատգամավորներին բերման ենթարկելու լուրը շատ բուռն արձագանք է գտնում Սոցիալական ցանցերում, մեծանում է Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ գրառումների և ցույցերի կարգախոսների կիրառման թիվը: Շատերը, ովքեր մինչ այդ չեզոք և սպասողական դիրքորոշում էին որդեգրել, սկսում են իրենց աջակցությունը հայտնել շարժմանը: Այս օրը սոչիաբնակ

շատ հայերի մոտ ակտիվանում է իրենց ինքնության հայկական մասը։ Նույնիսկ նրանց մոտ, ովքեր հայերեն չեն խոսում և լավ չեն հասկանում։

Իսկ ահա ապրիլի 23-ին՝ Սերժ Սարգսյանի հրաժարականի օրը, համահայկական տոնակատարություններից զերծ չի մնում նաև Սոչիի հայությունը։ Արթուր Բաղասյանը նշում է, որ նրանք, ովքեր տեղյակ էին Հայաստանում տիրող իրավիճակի մասին, Սերժ Սարգսյանի հրաժարականը մեծ ուրախությամբ են ընդունել, և ինչպես Հայաստանի հայերը, Սոչիի հայերը ևս նշել են այդ իրադարձությունը։

Սերժ Սարգսյանի հրաժարականը ինչպես Կրասնոդար քաղաքի հայերի այնպես էլ Սոչիի հայերի շրջանում մինչ այդ արթնացած հայկական ինքնությունը վերափոխում է ազգային հպարտության։ Այստեղ բնակվող հայերի զգալի հատվածը Սերժ Սարգսյանի հրաժարականը համարում է նաև իր սեփական հաղթանակը։ Ընդ որում՝ նրանք, ովքեր մինչ այդ դեռևս կասկածով էին վերաբերում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների լրջությանը, այժմ փոխում են իրենց վերաբերմունքը և սկսում են փոփոխված տեքստին ադապտացվելու փորձեր անել։

Սոչիի հայերի կողմից ապրիլի 23-ին տեղի ունեցած իրադարձությունները մեծ ոգևորությամբ ընդունելուն զուգահեռ նույն օրը Սոչիի հայկական համայնքի պաշտոնական կայքը տեղադրում է Սերժ Սարգսյանի հրաժարականի տեքստի ռուսերեն թարգմանությունն առանց որևէ մեկնաբանության, և մինչև ապրիլի 26-ը կազմակերպության կողմից այլևս ոչ մի հայտարարություն չի արվում։ Արդեն ապրիլի 26-ին կայքը տեղադրում է «Ռուսաստանի հայերի միության» Սոչի քաղաքի մասնաճյուղի նախագահ Հմայակ Ուստյանի հայտարարությունը, որում վերջինս նշում է, որ իրենք անհանգստացած են

անհնազանդության ակցիաների արդյունքում Հայաստանում ստեղծված իրավիճակով: Հայտարարության տեքստում ասված է նաև, որ Սերժ Սարգսյանի հեռանալը կարևոր քայլ է հայկական հասարակության ժողովրդավարական հիմքերն ամրապնդելու համար, ապա նշվում է. «Սոչի քաղաքի «Ռուսաստանի հայերի միություն»-ը կարծում է, որ նոր վարչապետին անհրաժեշտ է ընտրել Հայաստանի սահմանադրությանը համապատասխան, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում անցկացնել Ազգային ժողովի ընտրություններ»:

Հայտարարությունը ամփոփվում է այն մտքով, որ գլխավոր խնդիրը արյունահեղություն թույլ չտալն է և որ բոլոր խնդիրները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով[14]:

Այս հայտարարությունը նման գծեր ունի նույն օրը Կրասնոդար քաղաքի «Ռուսաստանի հայերի միության» մասնաճյուղի և «Պաշկովյան հայկական համայնք»-ի ղեկավարների արած հայտարարությունների հետ: Այս երեք հայտարարությունները բավականին նման են Ռուսաստանի և մյուս երկրների ու միջազգային կառույցների կողմից հնչեցրած պաշտոնական հայտարարություններին. այն է արյունահեղության կանխում և սահմանադրության շրջանակներում նոր վարչապետի ընտրություններ:

Սոցիալական ցանցերում Սոչիի հայության ակտիվության հաջորդ ալիքը տեղի է ունենում մայիսի 1-ին վարչապետի ընտրություններից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը, չընտրվելով վարչապետի պաշտոնում, կոչ է անում աշխարհի ողջ հայությանը մայիսի 2-ին դուրս գալ փողոց և շարունակել պայքարը: ՀՀԿ-ի կողմից Նիկոլ Փաշինյանի ընտրությանը դեմ քվեարկելը զայրույթի

[14] Հայտարարության ամբողջ տեքստը՝ http://sarsochi.ru/2018/04/26/ obrashhenie-soyuz-armyan-rossii-g-sochi-v-svyazi-s-situatsiej-v-respublike-armeniya/2018-04-26_204032-2/53 (18.06.2018)

և հիասթափության ալիք է բարձրացնում նաև Սոչիի հայության շրջանում, և հենց սա է պատճառ դառնում, որ մայիսի 2-ին սոչիաբնակ բազմաթիվ հայեր Հայաստանում էին և մասնակցում էին անհնազանդության ակցիաներին ոչ միայն Երևանում, այլև մարզերում: Մայիսի 2-ի իրադարձություններից հետո Միեր Մելիքսեթյանը իր ֆեյսբուքյան էջում գրառում է. «մենք լրիվ աջակցում ենք քեզ՝ որպես շարժման գլուխ և անհամբեր սպասում մեծ շինարարության սկզբին»:

Մայիսի 2-ին հաջորդող օրերին Սոչիաբնակ հայերը համացանցը ողողում են հայաստանյան ցույցերին իրենց մասնակցության մասին վկայող բազմաթիվ լուսանկարներով, որոնցում հայկական դրոշներով նկարները մեծ թիվ են կազմում: Հրապարակված լուսանկարներն ուղեկցվում են ցույցերի կարգախոսների գրառումներով, ընդ որում նախկինում օգտագործված կարգախոսներին ավելանում է «Նիկոլ վարչապետ» գրառումը:

Սոչիի հայերի կողմից համացանցը նոր հաղթական գրառումներով և հայաստանյան տոնակատարությունների լուսանկարներով է ողողվում մայիսի 8-ին՝ Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելուց հետո: Ինչ վերաբերում է համայնքի ղեկավարությանը, ապա նրանք այս առիթով որևէ պաշտոնական հայտարարություն չեն կատարում:

Հետագա օրերին սոչիաբնակ որոշ հայեր տարբեր հարթակներում փորձում են փոխել Ռուսաստանում լայն տարածում գտած այն կարծիքը, որ Հայաստանում տեղի ունեցածը ԱՄՆ-ի կողմից մշակված և իրականացված ծրագիր էր: Դավիթ Թադևոսյանը մայիսի 12-ին իր ֆեյսբուքյան էջում նշում է. «նրանց, ովքեր ասում կամ կասկածում էին, որ հեղափոխությունը հովանավորվել է ամերիկացիների կողմից, ցանկանում եմ հավաստիացնել, որ դա աբսուրդ է: Մայիսի 10-ին ես եղել եմ

Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գլխավոր գրասենյակում, որի առաջնորդը Նիկոլ Փաշինյանն է, և հանդիպել եմ Սուրեն Պապիկյանի հետ, ով մայիսի 11-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարար: Ոչ մի ակնարկ անգամ չեմ նկատել, որ այս մարդիկ ձգտում են հարստության և հարմարավետության: Նրանք համեստ, կիրթ, դաստիարակված և իրենց գործին և ազգին անսահման նվիրված մարդիկ են»:

Այսպիսով, սկսվում է Հայաստանում տեղի ունեցածը «մայդան» համարողների դեմ փոքր ցանցային պայքար, որը ծավալվում է և՛ սոցիալական ցանցերում, և՛ անհատական շփումների մակարդակում:

Սոչիի հայերը համացանցում կրկին ակտիվանում են մայիսի 13-ին, երբ Նիկոլ Փաշինյանը Սոչիում կայանալիք Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին մասնակցելու նպատակով ժամանում է Սոչի: Հարավային Ռուսաստանի հայոց թեմի պաշտոնական կայքը նշում է, որ Նիկոլ Փաշինյանն օդանավակայանից միանգամից ուղևորվել է Ադլերի Սուրբ Սարգիս եկեղեցի, որտեղ նրան դիմավորել են Հայ Առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գրշ. Տ. Մովսես եպիսկոպոս Մովսեսյանը թեմական և ծխական խորհրդի անդամներ, համայնքային իշխանության ներկայացուցիչներ, բազմահազար հայորդիներ և քահանա հայրեր[15]:

Հարկ է նշել, որ ոչ մի տեղ չի հիշատակվում Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման գնացած հայերի զոնե մոտավոր թիվը, չնայած որ նշվում է, որ բազմաթիվ հայեր են ներկա եղել այդ հանդիպմանը: Հանդիպման ժամանակ Հայաստանի նորընտիր վարչապետն իր ելույթի սկզբում նախ շնորհակալություն է հայտնում

[15] ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Ադլերի Սուրբ Սարգիս եկեղեցի 2018-05-23, http://new.armenianchurchsouth.ru/i.php?php=t3&id=104 (23.06.2018)

Ռուսաստանին (Ռուսաստանի իշխանություններին) հայերի համար ստեղծված բոլոր պայմանների համար, ապա հավելում է. «Մեր նպատատկը մեծ հայրենադարձությունն է: Մեր նպատակը հայության մարդկային, ֆինանսական տնտեսական, հոգևոր, գիտական ներուժը կամ նրա զգալի մասը Հայաստանի Հանրապետությունում կենտրոնացնելն է ու նրա անվտանգությունն ու բնականոն զարգացումն ապահովելը»:

Իր ելույթում Նիկոլ Փաշինյանը կոչ է անում Ռուսաստանի հայ և ռուս գործարարներին ներդրումներ կատարել Հայաստանում՝ շեշտելով, որ իրենց ներդրումները կլինեն պաշտպանած: Նա կարևորում է նաև հայ ժողովրդի համախբածությունը՝ նշելով, որ հայ ժողովուրդը վճռական է «շենացնելու իր հայրենիքը՝ Հայստանը և Արցախը»:

Իր ելույթի վերջում Նիկոլ Փաշիյանն անդրադառնում է հայ-ռուսական հարաբերություններին՝ ներկաներին հավաստիացնելով, որ «հայ-ռուսական հարաբերությունները լինելու են շատ ավելի ամուր, շատ ավելի դաշնակցային»[16]:

Նիկոլ Փաշինյանի ելույթի տեքստում կարելի է առանձնացնել երեք շերտ. ա) հայրենադարձության կոչ, բ) Հայաստանում նոր ներդրումներ անելու կոչ, գ) հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման հավաստիացումներ:

Այսպիսով, կարելի է նկատել, որ եթե ելույթի առաջին երկու կետերը հստակ կոչեր են և հիմնականում ուղղված են տեղի հայերին, ապա երրորդ կետն ունի որոշ հայերի, ինչու ոչ նաև ռուսների մոտ հայ-ռուսական հարաբերությունների դաշնակցային ապագայի շուրջ առաջացած տարակուսանքները և կասկածները փարատելու նպատակ:

[16] Նիկոլ Փաշինյանը ժամանել է Սոչի. Տեղի հայերը նրան դիմավորեցին եկեղեցու մոտ, NewsamChannel, մայիսի 13, 2018, https://www.youtube.com/watch?v=VN9jf6WCW58 (23.06.2018)

Նիկոլ Փաշինյանի այս ելույթը մեծ ոգևորությամբ է ընդունվում ինչպես Սոչիի հայերի, այնպես էլ ամբողջ Ռուսաստանի հայերի կողմից: Համացանցում հայտնվում են այս հանդիպման բազմաթիվ լուսանկարներ և տեսագրություններ, որոնք ուղեկցվում են հեղափոխական կարգախոսների գրառումներով: Կարևոր է նաև այն, որ այս հանդիպմանը Սոչիի հայերից բացի ներկա են գտնվել նաև Մոսկայից և Ռուսաստանի այլ վայրերից ժամանած հայեր:

Հայաստանում տեղի ունեցածի շուրջ Սոչիի հայության արձագանքի լավագույն վկան Նիկոլ Փաշինյանի ընդունելությունն է: Շատերը նշում են, որ նման բան Սոչիի հայությունը դեռ երբեք չէր տեսել: Սա նաև հետաքրքիր նախադեպ էր, քանի որ մի երկրի քաղաքացիների կողմից մեկ այլ երկրի ղեկավարի նմանատիպ ընդունելությունը և մի երկրում մեկ այլ երկրի ղեկավարի կողմից նմանատիպ՝ ցույց հիշեցնող ելույթն արտասովոր երևույթ է:

Այս հանդիպումից որոշ ժամանակ հետո Սոչիի հայության մոտ հետզհետե նկատվում է հայաստանյան իրադարձությունների նկատմամբ հետաքրքրության մարում: Մարդիկ անցնում են իրենց առօրյա կյանքին, իսկ քաղաքը սկսում է պատրաստվել ֆուտբոլի աշխարհի առաջնությանը: Այս հանդիպումից հետո համայնքի կյանքում տեղի ունեցած առօրյայից շեղվող միակ իրադարձությունը մայիսի 21-ին «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանի Սոչի կատարած այցը և տեղի համայնքի ղեկավարների հետ նրա հանդիպումն է:

«Ռուսաստանի հայերի միության» Սոչիի մասնաճյուղի պաշտոնական կայքը տեղեկացնում է, որ «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանի Սոչի կատրած այցի և Սոչիի համայնքի ղեկավարների հետ ունեցած հանդիպման ժամանակ քննարկվել են Ռուսաստանի հայկական համայնքի խնդիրները համատեղ լուծելու անհրաժեշտությունը, ինչպես նաև

անդրադարձ է կատարվել հայ-ռուսական համագործակցության շրջանակներում առաջնահերթությունների ճիշտ բաշխման հարցին[17]: Այն մասին, թե որոնք են հայ-ռուսական հարաբերություններում առկա առաջնահերթությունները, կամ «Ռուսաստանի հայերի միության» ղեկավարները ինչպես են պատրաստվում լուծել Ռուսաստանի հայկական համայնքի խնդիրները, ոչինչ չի նշվում:

Այսքանով ավարտվում են տվյալ կառույցի անդրադարձները Հայաստանին և Հայաստանի արտաքին քաղաքականությանը: Կայքի հետագա հայտարարությունները բացառապես վերաբերում են համայնքի ներսում եղած իրադարձություններին, որոնք Հայաստանի հետ ոչ մի կապ չունեն:

Ամփոփելով Հայաստանի իրադարձություններին Կրասնոդարի երկրամասի հայերի արձագանքի ուսումնասիրությունը, կարելի է ասել, որ ապրիլի 17-ը այն օրն էր, երբ Սոչիի հայկական համայնքի, իսկ ավելի ուշ նաև Կրասնոդարի համայնքի ուշադրությունը սևեռվեց դեպի հայրենիք, և հայերն սկսեցին հետևել հայաստանյան իրադարձություններին: Սրանից հետո օրեցօր նկատվում է այդ հետաքրքրության մեծացում, և արդեն ապրիլի 20-ից սկսած հայտնվում են մարդիկ, ովքեր սոցիալական ցանցերում սկսում են օգտագործել «դուխով» կարգախոսով նկարներ: Այս առումով ապրիլի 20-ը կարելի է համարել հայաստանյան ցույցերի կարգախոսների՝ Սոչիի հայության կյանք ներթափանցելու օր, սակայն եթե այլ վայրերի հայկական համայնքներում սոցիալական ցանցերում եղած խմբերը Հայաստանի իրադարձությունների քննարկման հարթակ են դառնում, ապա ինչպես Կրասնոդարի, այնպես էլ Սոչիի հայերի

[17] Встреча с Президентом Союза армян России Ара Абрамяном, http://sarsochi.ru/2018/05/21/vstrecha-s-prezidentom-soyuza-armyan-rossii-ara-abramyanom-2/ (25.06.2018)

շրջանում այս երևույթը չի նկատվում: Facebook, ВКонтакте և Одноклассники սոցիալական ցանցերում եղած հայկական խմբերն ու էջերը գրեթե ոչ մի կերպ չեն անդրադառնում հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, ինչը որոշակիորեն վկայում է նաև այն մասին, որ այստեղ դասական համայնք կոչվածը գոյություն չունի, ինչն էլ հավանաբար կապված է այն հանգամանքի հետ, որ երկրամասի հայերի մեծամասնությունը անմիջական կապի մեջ է Հայաստանի հետ, և այն հայապահպան գործառույթը, որն իրականացնում են աշխարհի տարբեր երկրներում գործող հայկական ավանդական համայնքները, այստեղ այդքան էլ ակտուալ չէ: Ի տարբերություն մյուս երկրների, Ռուսաստանի հայերի մի մասը շատ հեշտությամբ է ինտեգրվում ռուսական հասարակությանը և երբեմն միայն նման սուր իրադարձություններն են կարողանում նրանց մեջ արթնացնել հայկական ինքնությունը: Բացի դրանից, Ռուսաստանի և մասնավորապես Կրասնոդարի երկրամասի հայերն ունեն իրենց փոքր խմբերը, որոնք դեռևս չի հաջողվում միավորել համայնքային մեծ ցանցի մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ ամբողջ Ռուսաստանում գործում են «Ռուսաստանի հայերի միության» մասնաճյուղեր, որոնք Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո պատրաստակամություն են հայտնել աշխատել նոր իշխանությունների հետ և փորձում են ադապտացվել նոր տեքստին և փոփոխվող իրողություններին:

Այսպիսով, ապրիլ-մայիս ամիսների հայաստանյան իրադարձությունները բազմաթիվ հայերի «ստիպեցին» հիշել իրենց հայկական արմատները, հպարտանալ դրանցով, անմիջական կապի մեջ մտնել իրենց հայրենիքի հետ և դառնալ հայկական ցանցի ակտիվ բջիջ՝ անկախ նրանից, թե իրենք երբևէ եղել են Հայաստանում, թե ոչ, խոսում են հայերեն, թե ոչ: Բոլորը համախմբվեցին մեկ գաղափարի և մեկ տեքստի շուրջ, որը պետք է

անընդհատ փոփոխությունների ենթարկվի և շատ ճկուն լինի, որպեսզի նրանից դուրս եկող ազդակները կարողանան ցանցի բոլոր բջիջների մոտ ակտիվ պահել հայկական ինքնությունը, որը և կարող է ցանցն ավելի ամուր և կայուն պահելու հնարավորություն տալ:

РЕАКЦИЯ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ КРАСНОДАРСКОГО КРАЯ НА ВЕСЕННИЕ СОБЫТИЯ В АРМЕНИИ

Аннотация

Асмик Паремузян
Кафедра арабистики, ЕГУ
hasmik.paremuzyan@gmail.com

Ключевые слова: *демонстрации, сеть, идентичность, армянские общины, Краснодар, Сочи*

Антиправительственные демонстрации, проведенные в Армении в апреле и мае, которые привели к смене власти, качественно изменили отношение армян, проживающих за рубежом, к своей родине. Они стали пристально следить за событиями, происходящими на родине, а некоторые даже стали непосредственными участниками этих событий. Армяне, живущие в России, были очень активны с точки зрения непосредственного участия в армянских демонстрациях. Изучение реакции армянской общины Краснодара на «революционные» события очень важно, поскольку здесь армяне по численности занимают второе место после русских, и, кроме того, первая встреча армян, проживающих за рубежом, с новоизбранным премьер-министром Николом Пашиняном состоялась в Сочи. Он прибыл в Сочи для участия в заседании Высшего Евразийского экономического совета.

В данной статье была предпринята попытка анализировать реакцию армян Краснодарского края на события в Армении в апреле-мае с точки зрения теории сетегосударства: а именно этапы пробуждения армянской идентичности, попытки адаптации к новому тексту и изменяющейся сети.

THE REACTION OF ARMENIAN COMMUNITY OF KRASNODAR REGION ON EVENTS WHICH TOOK PLACE IN ARMENIA IN SPRING

Abstract

Hasmik Paremuzyan
Department of Arabic Studies, YSU
hasmik.paremuzyan@gmail.com

Key words: *demonstrations, network, identity, Armenian communities, Krasnodar, Sochi*

The anti-government demonstrations carried out in Armenia in April and May and the resulting change of authorities made a qualitative change in the attitude of the Armenians living abroad. They started to follow the events taking place in their homeland very attentively, and some of them even became direct participants in those events. Armenians living in Russia were also very active from the viewpoint of direct participation in the Armenian demonstrations. The study of the reaction of the Armenian community of Krasnodar to the "revolutionary" events is considered to be very important, for here the Armenian population is the second after the Russians, and in addition, the first meeting of the Armenians living abroad with the newly elected Prime Minister Nicol Pashinyan took place in Sochi, Krasnodar Region, where he arrived to take part in the Supreme Eurasian Economic Council session.

In the following article there was made an attempt to analyze the reaction of the Armenians of Krasnodar Region on the events which took place in Armenia in April-May from the netstate theory viewpoint: in particular referring the stages of the Armenian identity awakening, attempts to adapt the new text and the modifying network.

ԻՐԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ 2018թ. ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Աննա Գևորգյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
anna.gevorgyan@ysu.am

Բանալի բառեր՝ *Իրան, իրանահայեր, տնտեսական կապեր, հեղափոխություն*

2018 թվականի գարնանը Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ արձագանքները հայկական հին ու նոր համայնքներում թույլ են տալիս խոսել այդ հեղափոխության համազգային բնույթի մասին: Թեև ֆորմալ առումով հայ գաղթօջախների համայնքային կառույցները սերտ կապեր ունեին Հայաստանի նախկին իշխանությունների հետ, բայց երկրում տիրող ոչ ժողովրդավարական բարքերը, կոռուպցիան ու հովանավորչությունը չէին շրջանցում նաև «Հայաստան-Սփյուռք» հարաբերությունները և այդպիսով Համայնքներին նույնպես դարձնում փոփոխությունների շահառու: Անհատական մակարդակում, սակայն, հստակ տարբերակում կա ավանդական (մեծամասամբ Եղեռնի արդյունքում աշխարհասփյուռ հայության կողմից ձևավորված) ու նոր սփյուռքի (ՀՀ անկախությունից հետո Հայաստանից արտագաղթածների կողմից ձևավորված) ներկայացուցիչների վերաբերմունքի մեջ՝ կապված այս իրադարձությունների ընկալման հետ: Եթե նոր սփյուռքի ներկայացուցիչները, քաջատեղյակ լինելով հայաստանյան ներքաղաքական կյանքի նրբություններին ու առանձնահատկություններին, իրենց ակտիվ մասնակիցն են

համարում Հայաստանում տեղի ունեցող ցանկացած գործընթացի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ վերաբերմունքով են մասնակցում այդ գործընթացին, ապա ավանդական սփյուռքի ներկայացուցիչների համար Հայաստանն ավանդաբար ոչ շոշափելի, պատմական, միֆական մի երևույթ է, որի ներսում տեղի ունեցող խմորումները շատ չեն հետաքրքրել միֆական պատկերացումներով ապրողներին:

Այս մոտեցումը սկսում է փոխվել էլեկտրոնային լրատվամիջոցների շնորհիվ. Հայաստանը Սփյուռքին հասանելի է դառնում կայքերի, բլոգների, սոցիալական ցանցերի միջոցով: Ֆրանսիացի հասարակագետ Լորանս Ռիտտերը, անդրադառնալով Հայաստան-Սփյուռք երկխոսությանը, նշում է, որ էլեկտրոնային մամուլի, սոցիալական ցանցերի առկայությունն էապես փոխել է Սփյուռք-Հայաստան կապի որակը. «Իրավիճակը սկսում է փոխվել էլեկտրոնային լրատվամիջոցների շնորհիվ. Հայաստանը Սփյուռքին հասանելի է դառնում կայքերի, բլոգների, սոցիալական ցանցերի միջոցով... Հետզհետե ավելի անհնար է դառնում, որ անտեղյակ լինեն, թե ինչ է տեղի ունենում Երևանում, Մոսկվայում և կամ Լոս Անջելեսում: Հայկական սփյուռքերն այժմ միմյանց հետ ցանցով կապված են, իսկ Հայաստանի հետ կապը նշանակալիորեն փոխվել է: Հավելենք նաև, որ դրանում մեծ է ավանդական սփյուռքում հայտնված հայաստանցիների դերը»[1]:

Միաժամանակ, Մերձավոր Արևելքի տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված, ավելի ու ավելի շատ հայեր Մերձավոր Արևելքից, ՀՀ

[1] Լորանս Ռիտտեր, «Հայկական ինքնությունը սփյուռքում. Արդիականության և հայապահպանման միջև», http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenian-diaspora-ar/armenian-identity-in-the-diaspora-between-modernity-andpreservation-armenian, հղված՝ http://noravank.am/upload/pdf/DIASPORAS%20STANDPOINTS%20ON%20REPUBLIC%20OF%20ARMENIA%20GEOPOLITICAL%20ORIENTATIONS.pdf

քաղաքացիություն ձեռք բերելով ու երկքաղաքացի դառնալով, Հայաստանում անշարժ գույքի, ինչպես նաև բիզնեսների սեփականատերեր են դառնում ու այդպիսով կերպափոխվում նաև ՀՀ ներքաղաքական կյանքի մասնակցի ու շահառուի։

Իրանի հայկական համայնքը ավանդական սփյուռքի (Եղեռնից դարեր առաջ ձևավորված) ամենապահպանողական համայնքներից մեկն է, որի՝ չորսդարյա պատմությունը խարսխված է հենց ավանդույթապաշտության ու պահպանողականության վրա. իսլամական միջավայրում լինելով՝ հայկական այս համայնքի գոյատևման երաշխիքը դրսի ու ներսի միջև հնարավոր ամուր պատնեշներ կառուցելն ու սեփական ինքնության ցուցիչների հանդեպ վառ արտահայտված պաշտպանական բնազդն է եղել։ Իրանի հայկական համայնքի կապը անկախացած Հայաստանի հետ ավելի սերտ է դառնում, Իրանի հայկական համայնքի բազում ներկայացուցիչներ տեղափոխվում են Հայաստան՝ սովորելու, աշխատելու, մշտական բնակության։ Ի տարբերություն արևմտյան երկրների հայկական համայնքների, Իրանի համայնքի համար Հայաստանը կրկնակի գրավիչ է՝ ոչ միայն որպես հայրենիք, այլ նաև որպես ավելի ազատ երկիր։ Իսկ այն հանգամանքը, որ Իրանի հայկական համայնքը միակն է, որի գործածական լեզուն արևելահայերենն է[2], ավելի դյուրին է դարձնում իրանահայերի՝ Հայաստանում ինտեգրվելու խնդիրը։ Իսկ Հայաստանում հաստատված իրանցիներն էլ իրենց հերթին ավելի են ամրապնդում Հայաստանի և Իրանի հայկական համայնքի միջև եղած կապերը՝ բարեկամական, ընկերական, աշխատանքային ու բազում այլ հարաբերությունների միջոցով։

[2] Վահան Բայբուրդյան, «Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ», էջ 7, Երևան, 2013, հասանելի հետևյալ հղմամբ՝ http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2014/bayburdyan%20nor.pdf

Այս ամենով հանդերձ, սակայն, Իրանի հայկական համայնքի ընկալումները Հայաստանի մասին մեծապես ավանդական կուսակցական և հատկապես դաշնակցական պրիզմայով են անցնում: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ պատահական չի կարելի համարել, որ Հայաստանում տեղի ունեցող թավշյա հեղափոխության օրերին նույնպես, Իրանի հայկական համայնքը նախ լուռ էր, հետո անհանգիստ անորոշ փոփոխությունների մոտալուտ գալիքից, իսկ հետո, ի դեմս, Հայ Յեղափոխական Դաշնակցության, իրեն շարժման աջակից էր համարում: Թվարկածս փուլերի ընթացքում իրանահայկական մամուլում սկզբում բացակայում են, իսկ հետո հայտնվում հիշատակումներ ՀՀ իրադարձությունների մասին, հատկապես դաշնակցական «Ալիք» օրաթերթում ու այլ լրատվամիջոցներում:

Արտատպումներ հայկական մամուլից

Հատկանշական է, որ իրանական մամուլի պարբերականներում վերլուծականներ որպես կանոն չեն տպագրվում, փոխարենը արտատպվում են հայաստանյան թերթերի խմբագրականներ, վերլուծական այլ նյութեր, ինչպես նաև թարգմանաբար ներկայացվում են իրանական թերթերի այն հրապարակումներն ու վերլուծությունները, որ վերաբերում են Հայաստանին:

Այս իմաստով, հետազոտության համար առանցքային խնդիրներից էր մի կողմից ուրվագծել հայաստանյան մամուլից իրանահայկական պարբերականներում հայտնվող նյութերի բովանդակությունն ու դրանց արտատպման դինամիկան, մյուս կողմից հետևել իրանական մամուլի արձագանքներին հայաստանյան իրադարձություններին ու դրանց արտացոլմանը վերանշված մամուլում:

Այսպես, հետազոտությունը ցույց է տալիս, որ իրանահայկական մամուլում արտատպվել են մեծամասամբ չեզոք կամ որևէ կողմին լիովին չսատարող բովանդակությամբ վերլուծականներ, որոնց մեջ չկա առանձնակի ոգևորություն տեղի ունեցողի կապակցությամբ և չկա նախկին իշխանությունների հանդեպ բացահայտ քննադատություն։ Ամենից հաճախ իրանահայկական պարբերականները արտատպել են «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանի խմբագրականները։

Իրանական արձագանքներն ու իրանական մամուլի անդրադարձները

Իրանական պաշտոնական շրջանակները Հայաստանի իրադարձություններին արձագանքել են միայն Նիկոլ Փաշինյանի՝ վարչապետ ընտրվելուց մեկ շաբաթ հետո. նախագահ Ռուհանին շնորհավորական իր խոսքը ՀՀ վարչապետին փոխանցել է հեռախոսազրույցի ընթացքում։ Շնորհավորական խոսքում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը հույս է հայտնել, որ Փաշինյանի պաշտոնավարման ընթացքում «ականատեսը կլինենք երկկողմ հարաբերությունների օրեցօր զարգացմանը և խորացմանը»[3]։

Նույն օրերին Իրանում, հայկական համայնքի ջանքերով տեղի է ունենում կլոր սեղան-քննարկում իրանցի քաղաքագետ Վալի Քալեջիի և Իրանի մեջլիսի հայ պատգամավոր Ժորժ Աբրահամյանի մասնակցությամբ[4]։ Ուշագրավ է իրանցի

[3] «Փաշինյանին շնորհավորել է Իրանի նախագահը», https://www.aysor.am/am/news/2018/05/17/%D4%BB%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0/1415745

[4] «Մտորումներ Հայաստանի քաղաքական զարգացումներում Դաշնակցութեան կատալիտիկ դերի մասին»

քաղաքագետի զեկույցի վերնագիրը, որ կոչվում է՝ «Դաշնակցությունը՝ որպես հայաստանյան իրադարձությունների կատալիզատոր»: Զեկույցում, որի հայերեն թարգմանություն «Ալիք» օրաթերթը տպագրել է իր էջերում, քաղաքագետը, պատմական էքսկուրս կատարելով, ներկայացնում է Հայաստանի ներքաղաքական կյանքի առանցքային իրադարձությունները՝ անկախությունից ի վեր, և դրանց բոլորի դեպքում վճռորոշ համարում Դաշնակցության մոտեցումները, դիրքորոշումներն ու վերաբերմունքը:

Իրանական մամուլը անդրադարձել է այս իրադարձությանը ու սրանից զատ ևս մի քանի հարցազրույցներով հիշատակել Հայաստանն ու Հայաստանում կատարվող իրադարձությունները:

«Էթեմաադ» թերթում տպագրված ու մի շարք այլ պարբերականներում արտատպված «Լրագրող վարչապետը» վերտառությամբ հոդված-հարցազրույցի մեջ, օրինակ, ներկայացվում է իրադարձությունների ընթացքը, Նիկոլ Փաշինյանի կերպարը ու այնուհետև նրա հետ ունեցած հարցազրույցը, որի մեջ ընդգծվում են հայ-իրանական անսասան բարիդրացիական հարաբերությունները, այդ հարաբերությունների՝ հետագա զարգացման երկուստեք կարևորումը[5]: Հատկանշական է, որ հարցազրույցի ընթացքում իրանցի լրագրողը ՀՀ վարչապետին հարցնում է այաթոլլահ Խոմեյնիիի՝ ԽՍՍՀ առաջին քարտուղար Գորբաչովին ուղղված նամակի մասին՝ այդպիսով ակնարկելով կրոնի ու պետության փոխհարաբերությունների ու կրոնի հանդեպ պետության վերաբերմունքի մասին:

---

http://www.alikonline.ir/news/political/armenia/item/մտորումներ-հայաստանի-քաղաքական-զարգացումներում-դաշնակցութեան-կատալիտիկ-դերի-մասին

[5] نخست وزیر روزنامه نگار

http://alikonline.ir/fa/news/political /سیاسی/item/5931-نخست-وزیر-روزنامه-نگار

Հայտնի իրադարձությունների օրերին ու վարչապետ Փաշինյանի հետ հանդիպումից հետո իրանական «Իռնա» լրատվական գործակալությանը ուշագրավ հարցազրույց է տալիս Հայաստանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Քազեմ Սաջջադին. հարցազրույցը լրատվական գործակալությունը հրապարակում է «Հասարակության աջակցությամբ Փաշինյանը կկարողանա լուծել Հայաստանի խնդիրները» վերնագրով[6]: Իրանցի դիվանագետն, ըստ, էության Հայաստանի՝ որպես զբոսաշրջության կարևոր ու հետաքրքիր երկրի գովազդ պարունակող հայտարարություններ է անում, ինչպես նաև հորդորում իրանցի գործարարարներին մտածել Հայաստանում ներդրումներ անելու մասին: Հարցազրույցում Սաջջադին նշել է, որ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների ընդլայնման հարցը չպետք է լինի տեսական, գործնականում այդ ուղղությամբ պետք է լուրջ քայլեր ձեռնարկվեն և որ Փաշինյանն անձամբ դրական տեսակետներ և մոտեցումներ ունի Իրանի հետ համագործակցությունը զարգացնելու վերաբերյալ: Սաջջադին կարևորել է Հայաստանի դերը Կովկասյան տարածաշրջանում և խորհուրդ տվել Իրանի քաղաքացիներին այցելել Հայաստան :

Իրանական մամուլը հայաստանյան իրադարձությունների համատեքստում անդրադարձել է նաև Հայաստանի առաջին տիկնոջն ու հարցազրույց հրապարակել նրա մասնակցությամբ՝ «Հայաստանի հեղափոխությունը աշխարհի ամենից խաղաղ հեղափոխությունն էր» վերտառությամբ[7]: Հոդվածում արծարծվում են ինչպես Աննա Հակոբյանի՝ որպես արդեն վարչապետի տիկնոջ

---

[6] پاشینیان با پشتوانه مردمی می تواند مشکلات ارمنستان را حل کند
http://www.irna.ir/fa/News/82937668?fbclid=IwAR3ZlCMezQwTNfoRssl7QklpjHAsL8ipgVZE_3DHCpK2DZjhyfr73X4s7dc

[7] انقلاب ارمنستان صلح‌آمیزترین انقلاب دنیا
http://www.pishkhaan.net/news/86026

դերակատարության հետ կապված հարցեր, այնպես էլ ընդհանուր քաղաքական խնդիրներ:

Հայաստանին՝ որպես զբոսաշրջային կարևոր հանգրվանի, անդրադարձող իրանական լրատվականներից մեկի հրապարակումը ուշագրավ է ոչ միայն տեքստի, այլ նաև տեքստին ուղեկցող նկարի դիտանկյունից: Հայաստանը իրանցիների աչքերում գրավիչ ու հետարքրքիր ներկայացնող հրապարկմանը ուղեկցում է Հայաստանի քարտեզը՝ իր սահմանների մեջ ներառելով ոչ միայն Արցախի Հանրապետությունը, այլ նաև Նախիջևանի ինքնավար մարզն ու Զավախքը: Մի կողմ թողնելով Զավախքի՝ այդ քարտեզում հայտնվելու հանգամանքը, պետք է առանձնացնել այն համատեքստը, որը հավելյալ ուղերձներ տեսնելու հնարավորություն է տալիս Նախիջևանի՝ այս քարտեզում հայտնվելու հանգամանքին. Ադրբեջանի Հանրապետության՝ Նախիջևանի տարածքում ապակառուցողական ռազմական գործողությունների, մի շարք դիրքերի փոփոխության ու իր ռազմական հռետորաբանության մեջ Նախիջևանի հատվածում կեղծ հաղթանակների ծավալապաշտական դիսկուրսի համատեքստը այս քարտեզին հետաքրքիր իմաստ է տալիս:

Իրանական մամուլի այս հրապարակումներն իրենց ազդեցությունն են ունենում իրանահայկական մամուլի տրամադրությունների վրա, նվազեցնում այն մտահոգություններն ու զգուշավորությունը, որ առաջանում է իշխանափոխության հետ կապված:

Թեհրանի «Արաքս» պարբերականի գլխավոր խմբագիր Մովսես Քեշիշյանի խոսքով՝ Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների հատկապես անարյուն, ոչ բռնի լինելու հանգամանքը, ողջունվել է իրանական մամուլում, իսկ իրանահայ համայնքի մոտ հպարտության զգացում առաջացրել այն

հանգամանքը, որ Հայաստանի մասին խոսել են ոչ միայն իրահայկական մամուլում, այլև նաև իրանական ու միջազգային հայտնի պարբերականներում:

Այնուամենայնիվ, տարբեր հարթակներում արտահայտվում են որոշ մտահոգություններ: Դրանց մի մասը կապված է մշակութաբանական ընկալումների հետ. մասնավորապես, իրանցիների մի հատված համարում է, որ հայաստանցիները բավարար չափով աշխատասեր ու ժուժկալ չեն ու իրենց վատ սոցիալական պայմանների համար մեղադրում են իշխանություններին՝ նրանց վերագրելով բաներ, որոնց համար իրենք են պատասխանատու: Մտավախությունների մյուս հատվածը կապված է իշխանափոխությունից հետո Հայաստանի կողմից որդեգրվելիք արտաքին քաղաքականության հետ. պրոարևմտյան համբավ ունեցող իշխանությունների հետագա հնարավոր ավելի սերտ հարաբերությունները կարող են իրենց ազդեցությունն ունենալ հայ-իրանական հարաբերությունների վրա, և սա չի կարող զգուշավորություն չառաջացնել իրանցիների և հատկապես իրանահայերի շրջանում: Հեղափոխության՝ բացառապես ներքին հայաստանյան խնդիր լինելն ու դրա՝ հակակոռուպցիոն պայքարի հիմք ունենալը, սակայն, դրական ակնկալիքներ են ստեղծել իրանցի և հատկապես իրանահայ գործարարների մոտ:

Այսպես, իրանահայ գործարարներից մեկը՝ իրանահայկական «Հույս» շաբաթաթերթի արտոնատեր Լևոն Ահարոնյանը, հեղափոխությունից հետո իր հարցազրույցի ընթացքում մանրամասն կոռուպցիոն սխեմաներ է նկարագրում, որոնց առնչվել է Հայաստանում բիզնես ծրագիր ներդնելու փորձ

անելիս և հույս հայտնում, որ առաջիկայում նման խնդիրների էլ չեն բախվի[8]: Իր խոսքերով.

«Ես ինքս ահագին ներդրումներ եմ արել Հայաստան, մոտիկ ընկերներս՝ Լևոն, ի՞նչ ես անում, այսինչ բանը...ընկերներս թե՝ գի՞ժ ես դու, մարդ փող կբերի՞ Հայաստան: Այսինքն, էս մե տեղ չի, որ կարենաս փող բերես: Բայց էսի կփոխվի, ամեն ինչ կլավանա»[9]:

Գործարարը նույն հարցազրույցում պատմում է Սևանում իր ձկնաբուծական բիզնես ծրագրի մասին, որը նորարական ու բնապահպանության տեսակետից արդյունավետ ծրագիր է եղել ու մեծ ներդրումներ ենթադրել, բայց կառավարության կողմից թույլտվություն չստանալով կյանքի չի կոչվել: Այսպիսի անարդար որոշումներով կառավարությունն, ըստ գործարարի, վանել է բազում ներդրողների: Եվ Հայաստանյան իրադարձություններն իրանահայ գործարարների մոտ նախևառաջ այս մոտեցման փոփոխության ակնկալիք են ստեղծում:

Նույն խնդրին անդրադառնում են նաև Իրան-Հայաստան տնտեսական հարցերով հետաքրքրվող, իրանահայ վերլուծաբաններն ու լրագրողները. հույս հայտնելով, որ առաջիկայում հայ-իրանական տնտեսական հարաբերությունները վերբալ մակարդակից հնարավորություն կունենան անցում կատարելու գործնական հարթակ: Այս իմաստով, հատկապես թիրախավորվում է այն հանգամանքը, որ հայաստանյան բանկերը բանկային հաշիվներ չեն բացում իրանցի գործարարների համար և նախկինում իշխանությունները որևէ քայլ չեն ձեռնարկել այս խնդիրը լուծելու համար:

Իրան-Հայաստան հարաբերությունների սերտացման հնարավորությունների հետ մեկտեղ այս նույն շրջանում

[8] Հարցազրույց Լևոն Ահարոնյանի հետ, https://www.youtube.com/watch?v=9Sn7K81H6Pw

[9] Նույն տեղում

առաջացել են նաև այդ հարաբերությունների տնտեսական հատվածի համար լուրջ սպառնալիք հանդիսացող խնդիրներ. ԱՄՆ-ի Միջուկային ծրագրից միակողմանի դուրս գալն ու Իրանի հանդեպ կիրառված նոր պատժամիջոցներն ամենալուրջ խոչընդոտն են այդ խնդիրների շարքում: ԱՄՆ-ի կիրառած պատժամիջոցները իրենց բացասական ազդեցությունն են թողնում նաև իրանաեվրոպական հարաբերությունների վրա, ինչն էլ իր հերթին փակում է Հայաստանի համար ցանկալի կամուրջի դերակատարության հնարավորությունը այդ հարաբերություններում: Ավելին, այդ պատժամիջոցներն անուղղակի ազդեցություն են ունենում նաև Իրան-Հայաստան հարաբերությունների վրա: Ֆինանսական ու բանկային համակարգի վերականգնված պատժամիջոցներն, օրինակ, ուղիղ ազդեցություն են ունենում նաև հայաստանյան բանկերում հաշիվներ ունեցող իրանցիների ու իրանահայերի վրա: Քաղաքական որոշ շրջանակներ այս ազդցեցության առկայությունը փորձեցին կապել Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունների ու նոր իշխանությունների վարած քաղաքականության հետ՝ այս մտայնությունը տարածելով նաև իրանահայերի շրջանում: «Առաջին.էյ.էմ» լրատվականին տված հարցարզրույցում, օրինակ, իրանահայերից մեկը շեշտում է, որ նախորդ կառավարության ժամանակ նման խնդրի առաջ երբևէ չեն կանգնել»[10]: Այս և մի շարք այլ հարցազրույցներ ու հրապարակումներ հանրային մեծ աղմուկ բարձրացրին հայաստանյան հանրային խոսույթում ու թեև ՀՀ Կենտրոնական բանկը հանդես եկավ պարզաբանում-հայտարարությամբ, որտեղ նշեց, որ «ՀՀ ԿԲ-ն իր որևէ հանձնարարականով կամ նորմատիվ

[10] «Մեռած մարդու հետ նույն կարգավիճակն ունենք. ՀՀ բանկերը արգելափակում են իրանահայերի հաշվեհամարները», https://www.youtube.com/watch?v=e_YQHK1mpX0

իրավական ակտով չի արգելում ԻԻՀ քաղաքացիներին կամ ԻԻՀ-ից այլ անձանց սպասարկելը բանկերի կողմից» և որ «ստեղծված աժեոտաժը բնական չէ, և հետապնդում է որոշակի խմբի կամ խմբերի մասնավոր շահերը» այնուամենայնիվ, որոշ հասարակական ու քաղաքական շրջանակներ որոշ ժամանակ այս թեման ակտուալ պահեցին: Իսկ Հայ Յեղափոխական Դաշնակցությունն անգամ, հանդես եկավ կոչ-հորդորով՝ պահանջելով ՀՀ կառավարությունից ու Կենտրոնական բանկից «վերականգնել իրանահայերի խախտված իրավունքները»[11] : Այս խոսույթը, ինչպես նաև ՀՅԴ-ի Երևանի քաղաքային ու ՀՀ համապետական ընտրություններում ստացած ոչ բավարար ձայները և ՀՅԴ-ի Հայաստանյան քաղաքական դաշտից դուրս մղումն իրենց ազդեցությունն են ունեցել, բնականաբար, նաև Հայաստանից դուրս, այս դեպքում Իրանում գործունեություն ծավալող դաշնակցականների՝ Հայաստանում տեղի ունեցածի ու ՀՀ ներկա իշխանությունների հանդեպ վերաբերմունքի, ինչպես նաև նրանց պատկանող մամուլի արձագանքների վրա:

Նոր տնտեսական հեռանկարների համար մեկ այլ խոչընդոտ է Իրանի ներքաղաքական իրավիճակը, որը կարելի է նաև առաջին խնդրի հետևանքը համարել: Իրանական արժույթի արժեզրկման ու տնտեսական լուրջ խնդիրների ֆոնին Իրանում շարունակում են հակահիշխանական դժգոհություններն ու ներիշխանական պայքարը ազդեցության լծակների համար: Ներքին խնդիրների լուծմամբ ու ԱՄՆ-ի հետ հնարավոր ավելի սուր առճակատման չգնալու խնդրով մտահոգ հարևանի հետ նոր տնտեսական հարաբերությունների համար հարթակներ ձևավորելն ավելի բարդ խնդիր է դառնում հայաստանյան նոր իշխանությունների համար:

[11] «ՀՅԴ-ն պահանջում է ՀՀ Կառավարությունից ու ԿԲ-ից՝ վերականգնել ՀՀ քաղաքացիների խախտված իրավունքները», https://www.yerkir.am/news/view/160911.html?fbclid=IwAR1d4hoRCYTEQiEeRGy70jP0EQHJBEtJQ0gfsqts5g2lDEGorAqFN2oxCy

Արդյունքում, դժվարանում է նոր ծրագրերի մեկնարկը, ինչն էլ բացասական տպավորություն է թողնում հեղափոխությունից ակնկալիքներ ունեցող ոչ միայն հայաստանցիների, այլև իրանահայերի վրա:

RESPONSE OF IRAN AND IRANIAN ARMENIANS TO 2018 SPRING EVENTS IN ARMENIA

Abstract

Anna Gevorgyan
Center for Civilization and Cultural Studies,
Yerevan State University
anna.gevorgyan@ysu.am

Key words: *Iran, Iranian Armenians, revolution, economic ties*

Iran, as a neighboring country of Armenia that has some tensions with the West, had some cautious attitude towards the developments in Armenia that is Velvet revolution and the change of power. Nevertheless, after some direct contacts and after several interviews of high-level Armenian officials, it is obvious that the caution has been lessened.

The Iranian Armenian community that is one of the oldest Armenian communities in the world and the only one whose everyday language is Eastern Armenian, has a very strong ties with Republic of Armenia and developments of 2018 have its implications on the attitudes of Iranian Armenians towards the Armenian Government.

ОТКЛИКИ ИРАНА И ИРАНСКИХ АРМЯН НА ПРОИЗОШЕДШИЕ В АРМЕНИИ ВЕСЕННИЕ СОБЫТИЯ 2018 ГОДА

Аннотация

Анна Геворгян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
anna.gevorgyan@ysu.am

Ключевые слова: *Иран, армяне Ирана, революция, экономические связи*

Иран, как соседская страна Армении, у которой сложные отношения с Западом, имела осторожное отношение к событиям происходящим в Армении, то есть к Бархатной Революции. После некоторых прямых общений и нескольких интервью высокопоставленных лиц Армении, однако, очевидно, что осторожность уменьшилось.

Армянская община Ирана, которая является одной из древнейших армянских общин мира и единственной чьей повседневный язык является Восточный армянский, имеет прочные связи с Арменией и события 2018 года имеют свои отклики на отношение иранских армян к правительству Армении.

2018Թ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Տաթևիկ Պետրոսյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
tatev.petrosyan93@gmail.com

Բանալի բառեր՝ *«Թավշյա հեղափոխություն», հայկական համայնք, հին ու նոր համայնքներ, ֆրանսահայ համայնք, ինքնություն, CCAF, ՀԱՅԱՍՍԱ*

Ֆրանսիայում հայկական համայնքը բազմաբնույթ ու բազմաշերտ է, իսկ հայերի ինտեգրումը ֆրանսիական հասարակությանը տեղի է ունենում շատ արագ ու անխոչընդոտ: Այսպես օրինակ, ֆրանսահայ բառի ֆրանսերեն թարգմանությունը՝ franco arménien, դրա վառ ապացույցն է, քանի որ առաջինը հերթին շեշտվում է տվյալ անհատի ֆրանսիացի լինելու հանգամանքը: Ֆրանսահայ համայնքն ինքնակարգավորվող է, որտեղ հիմնական միջուկ համարվում է ավանդական[1] համայնքը: Նրանք այն անձինք են, ովքեր լինելով սերտ համագործակցության մեջ Ֆրանսիայի ՀՅԴ բյուրոյի հետ, առաջնային խնդիրներ են համարում Հայոց Ցեղասպանության ճանաչումը, Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումը և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը[2]: Ավանդական համայնքից դուրս առանձին անհատներ և խմբեր են

[1] Վերջին 15-20 տարիների ընթացքում Հայաստանը լքած հայերը այսպես են բնորոշում ֆրանսահայ համայնքի այն ներկայացուցիչներին, ովքեր Ֆրանսիա են արտագաղթել Խորհրդային Հայաստանից, Ցեղասպանության տարիներին ու դրանից հետո:

[2] Այս մասին իմ հետ հարցազրույցում նշեց փարիզաբնակ Հայկ Շահինյանը, ով Hayassa - ADAF-ի նախագահն է:

գործունեություն ծավալում (վերջին 15-20 տարիներին ՀՀ-ից արտագաղթածներ), ովքեր դժգոհ են Ֆրանսիայի ՀՅԴ բյուրոյի և Ֆրանսիայի հայկական ընկերությունները համակարգող խորհրդի (CCAF) վարած քաղաքականությունից՝ համարելով այն ոչ հայանպաստ[3]: Ֆրանսիայի ՀՅԴ բյուրոն մեծ ազդեցություն ունի հայկական կազմակերպությունները համակարգող հանձնաժողովի, ինչպես նաև նրանում միավորված կազմակերպությունների և ֆոնդերի վրա: Հենց այստեղ է, որ սկիզբ է առնում մի մեծ անջրպետ՝ ավանդական համայնքի և այդ համանքից դուրս գործունեություն ծավալող անհատների, խմբերի ու կազմակերպությունների միջև:

Անջրպետը, որը գոյություն ունի համայնքի ներսում, խորը արմատներ ունի: Խնդրին անդրադառնալիս համայնքի ներկայացուցիչները իրադարձությունների զարգացման հիմքերը հասցնում են 1990-ականներ, երբեմն՝ 2008 թվական: Թալին Փափազյանի պնդմամբ՝ 2008 թվականին Հայաստանում տեղի ունեցող մարդու իրավունքների բացահայտ խախտումներին անպայման պետք է անդրադառնային Ֆրանսիայում գործող հայկական լրատվամիջոցները և/կամ հայկական կառույցները, որոնք սակայն որևէ հայտարարություն չարեցին[4]: Մինչև օրս ֆրանսահայության ավանդական համայնքի շրջանում

[3] Նման դիրքորոշում կարելի էր լսել գրեթե բոլոր ելույթներում: Շեշտվում էր այն հանգամանքը, որ եթե Ս. Սարգսյանը և Ռ. Քոչարյանը մինչև այժմ ոչ մի հայանպաստ գործ չեն արել (ՀՀ տնտեսական աճ, ներգաղթ, կոռուպցիայի վերացում), հետևաբար նրանց հետ գործունեություն ծավալող և անմիջական կապի մեջ գտնվող Մուրադ Փափազյանը ևս նույն քաղաքականության կրողն է: https://www.facebook.com/infoarmenie/videos/2058567741088192/, https://www.facebook.com/infoarmenie/videos/2058562304422069/

[4] Թալին Փափազյանը՝ ֆրանսահայ համայնքի ակտիվ ներկայացուցիչ է, ով հետազոտական աշխատանք է իրականացնում Հարավային Կալիֆոռնիա համալսարանի Հայագիտության ինստիտուտում, https://www.youtube.com/watch?v=WixueeUZKOA

անտեղյակություն է, թե ինչ իրադարձություններ են տեղի ունեցել Հայաստանում 2008թ.-ի մարտ ամսին:

Համայնքից դուրս ապրող հայերը շեշտում են, որ հայկական կառույցների ներկայիս գործողությունները միայն ու միայն նպաստում են Հայաստան-Սփյուռք կապի խզմանը, քանի որ համայնքին զերծ են պահում Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին մասնակից դառնալուց[5]: Առանձնապես շեշտվում է այն հանգամանքը, որ երկար տարիներ ֆրանսահայությանը սերմանվել է զերծ մնալ Հայաստանում կատարվող իրադարձությունները լուսաբանելուց ու մեկնաբանելուց, և որ միայն Ցեղասպանության ճանաչումը պետք է ունենա կարևոր նշանակություն: Պատկերը ամբողջանում է՝ համայնքը զբաղված է եղել իր գործերով, մասնավորապես Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի առաջ մղմամբ, իսկ Հայաստանի քաղաքացիները՝ իրենց՝ բոլորովին անտեղյակ լինելով մեկը մյուսի գործունեությունից:

Ներկայիս համայնքի երիտասարդ ներկայացուցիչները ընդդիմանում են այս մոտեցմանը՝ պնդելով, որ եթե նրանք պետք է զումար տրամադրեն Հայաստանին դպրոցներ կառուցելու և այլ ֆինանսական լուծումներ պահանջող խնդիրներ կարգավորելու համար, ապա ինչու՞ պետք է զերծ լինեն այդ ամենի հետագա գործունեությանը հետևելուց[6]: Այստեղ առաջ է գալիս ևս մեկ կարևոր հակասություն, որը առավել պարզ շարադրվեց Թալին Փափազյանի՝ ՍԻՎԻԼՆԵԹ-ին տրված հարցազրույցում. «Ստացվում է, որ սփյուռքում կան երիտասարդներ, ովքեր ցանկանում են

[5] Այս հարցը ամենատարբեր առիթներով բարձրացվել է հայ համայնքի ներկայացուցիչների կողմից, https://www.facebook.com/infoarmenie/videos/2066618496949783/

[6] Մայիսի 6-ին իր ելույթում նշեց Hayassa - ADAF-ի նախագահ Հայկ Շահինյանը, https://www.facebook.com/infoarmenie/videos/2066663390278627/

անմիջական կապ ունենալ մայր հայրենիքի հետ և տեղեկացված լինել երկրի ներսում տեղի ունեցող իրադարձություններից և կան հայկական հաստատություններ, որոնք լռում են»[7]:

Սոցիալ-դեմոկրատ *Հնչակյան կուսակցության* Փարիզի ներկայացուցիչ Գևորգ Սատչյանը պնդում է. «Ֆրանսիայում կան մարմիններ, որոնք ունեն իրենց իշխանության տակ մեդիան, կան խմբեր, որոնք ունեն իրենց համակարգը, որը հիմնված է տարիների փորձի վրա և կան խմբեր, որոնք ավելի մոտ են գտնվում ժողովրդին»: Խոսելով CCAF-ի մասին շեշտում է այդ կառույցի ցանկությունը՝ ներկայացնել ամբողջ ֆրանսահայությանը, սակայն դա՝ Գևորգ Սատչյանի պնդմամբ, իրականությանը չի համապատասխանում, քանի որ այն չունի համայնքի անդամների վստահությունը և օրինական կառույց չի համարվում[8]:

Ֆրանսահայ համայնքը հենց այսպիսին էր, երբ մարտի 31-ին ընդդիմադիր գործիչ և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավարը Նիկոլ Փաշինյանը սկսեց իր քայլերթը և բարձրացրեց իր բողոքի ձայնն ընդդեմ Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Ս. Սարգսյանի վարչապետի պաշտոնում ընտրվելուն: Նիկոլ Փաշինյանի նախաձեռնությունը ստացավ «Իմ քայլը» անվանումը, որի վերջնական նպատակն էր «Թավշյա հեղափոխություն»-ը հաղթական ավարտին հասցնելը: Այս հեղափոխությունը հայկական համայնքներում տարբեր արձագանքներ ունեցավ: Ֆրանսահայ համայնքի անդամների ֆեյսբուքյան գրառումներից

---

[7] Թալին Փափազյանի հարցազրույցը ՍԻՎԻԼՆԵԹ-ին, Arménie-Diaspora: la nécessité d'une relation horizontale, հունիսի 3, https://www.youtube.com/watch?v=WixueeUZKOA

[8] Ապրիլի 29-ին Փարիզում բնակվող հայերը հավաքվեցին Կոմիտասի արձանի մոտ, որտեղ Սոցիալ-դեմոկրատ *Հնչակյան կուսակցության* Փարիզի ներկայացուցիչ Գևորգ Սատչյանը խոսեց ՀՀԿ-ՀՅԴ կոալիցիայի և Հայկական սփյուռքի մասին, https://www.facebook.com/infoarmenie/videos/2060516960893270/

կարող ենք փաստել, որ դեպքերի զարգացման վերաբերյալ մտահոգությունները սկսվեցին ապրիլի 17-ին, երբ Ազգային ժողովն ընտրեց Ս.Սարգսյանին որպես Հայաստանի Հանրապետության վարչապետ: Հենց այս օրվանից առավել ակնառու դարձավ անջրպետից առաջացած ճեղքը, որը երկար տարիներ գոյություն ուներ համայնքի ներսում:

Թավշյա հեղափոխությանն աջակցող ցույցերը նախաձեռնվեցին փոքր կազմակերպությունների, երբեմն նաև անհատների կողմից: Այստեղ էլ մեծ բաժանում եղավ, որտեղ նշմարվեց գաղափարական տարանջատվածությունը: Գործողությունները համացանցային փոխկապակցված բնույթ էին կրում, հատկապես համայնքից համայնք կապը պահելու և համակարգված աշխատելու նպատակով: Սփյուռքի հնարավորությունը առաջին հերթին ցանցայնացումն էր և ֆրանսահայ համայնքն այն օգտագործեց:

Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին Ֆրանսիայում առաջինը արձագանքեց մարսելահայությունը՝ ապրիլի 17-ին: Անհատների խումբը, որը այդ օրերին ձևավորվեց, բնորոշում էր իրեն որպես «Մարսելի աջակիցներ»: Մարսելի հայ երիտասարդները ընտրության արդյունքը պարզ դառնալուց երկու ժամ հետո՝ 16:00-ին, հավաքվեցին Մարսելի Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու մոտ, որտեղից շարժվեցին դեպի Մարսելում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն (հավաքը Մարսելի քաղաքապետարանի կողմից արտոնված չի եղել)[9]: Ակցիայի մասնակիցները մոտ 20-30 հոգի էին, ովքեր կոչով դիմեցին իրենց հայրենակիցներին. «Ձեր պայքարն արդար է, այն ուղղած է Հայաստանում արդար իշխանության վերականգնմանը,

[9] Ապրիլի 17-ին Մարսելում բնակվող հայ երիտասարդներից Նոյեմի Փիրոյանը, Նարեկ Մատինյանը և Արսեն Պետրոսյանը կազմակերպեցին մարսելահայերի առաջին հավաքը, https://www.facebook.com/events/2016352822017671/

քաղբանտարկյալների ազատմանը և վերջապես ամենակարևորը՝ հանցավոր իշխանության և Սերժ Սարգսյանի գլխավորությամբ կազմված կլանային իշխանության վերացմանը, դեմոկրատիայի հաստատմանը: Այսուհետ, ՀՀ անօրինական իշխանության ցանկացած ներկայացուցիչ Մարսելում ստանալու է ոչ հյուրընկալ ընդունելություն՝ բողոքի ակցիաներ, արդար բողոքի արտահայտում, անհնազանդության ակցիաներ: Պահանջում ենք արդարության վերականգնում, ուսանողների նկատմամբ բռնությունների, մտավորականության հանդեպ ճնշումների դադարեցում և ՀՀ-ում ի վերջո օրինական իշխանության հաստատում»[10]:

Երիտասարդները հյուպատոսարանում բարձրացրեցին իրենց բողոքի ձայնը և դատապարտեցին ՀՀ իշխանությունների որդեգրած քաղաքականությունը: Ակցիայի մյուս մասնակիցները հյուպատոսության դարպասներին փակցնում էին Հայաստանի դրոշը, «մերժիր Սերժին» գրությամբ պաստառներ, Սերժ Սարգսյանի նկարները, որոնք հիմնականում պատռված էին: Հյուպատոսարանում մի քանի րոպե մնալուց հետո երիտասարդները դուրս բերեցին Սերժ Սարգսյանի նկարը և շենքի դիմաց այրեցին[11]: Այս ընթացքում հյուպատոսության դիմաց ոստիկանական ուժեր կուտակվեցին: Հայերի պնդմամբ նրանք եկել էին հյուպատոսի խնդրանքով, որպեսզի ձերբակալեին ակցիայի

[10] Մարսելում բնակվող հայերը ներխուժեցին Մարսելում ՀՀ Գլխավոր հյուպատոսարան, https://www.youtube.com/watch?time_continue=48&v=DxMxT3uOM-4

[11] Մարսելի ՀՀ Գլխավոր հյուպատոսարանում հայ երիտասարդները տեսանկարահանել են դատարկ պատը, որտեղ ժամանակին կախված է եղել Ս. Սարգսյանի նկարը, https://www.facebook.com/jorjo.darmenie/videos/10155658915683681/?fref=ufi,_այնուհետև հյուպատոսարանի առջև այրել են Ս. Սարգսյանի նկարը, https://www.facebook.com/noyemi.piroyan.9/videos/202653 8777598798/

մասնակիցներին[12]: Ակցիայի մասնակիցները հյուպատոսությունից անմիջապես ուղևորվեցին Բորելի այգի, որպեսզի պլանավորեն հետագա անելիքները և քաղաքապետարան դիմում ներկայացնեն՝ ցույցերն արտոնված անցկացնելու համար: Այս ակցիան ամբողջությամբ լուսաբանվեց և Ֆրանսիայի հանրության ուշադրությանը ներկայացվեց Nouvelle d'Armenie լրատվական կայքի միջոցով[13]: Նույն ժամերին սոցցանցերում տարածվեց նաև ֆրանսահայերի հռչակագիրը ընդդեմ Սերժ Սարգսյանի և նրա դաշնակիցների: Հռչակագրում նշված էր, որ ֆրանսահայերը, ՀՀ քաղաքացիություն ունեցող և Ֆրանսիայում բնակվող հայերը չեն ճանաչում այնպիսի կազմակերպությունների օրինականությունը, ինչպիսիք են՝ CCAF-ը (Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդ), Ֆրանսիայի ՀՅԴ բյուրոն (քաղաքական կուսակցություն), ՀԲԸՄ-ը (Հայկական բարեգործական ընդհանուր միություն) կամ այլ ցանկացած կազմակերպություն, որը կներկայացնի Ֆրանսիայի հայ համայնքի ձայնը, քանի որ ոչ մի կառույց ֆրանսահայերի շրջանում վստահություն չի վայելում[14]: Հռչակագրում դատապարտվում էր ՀՀ իշխանությունների որդեգրած բռնի քաղաքականությունը

[12]Համացանցում առցանց տեսանյութերի միջոցով տեղեկացնում են, որ Գլխավոր հյուպատոսարանի առջև հյուպատոսի խնդրանքով ավելի շատ ոստիկաններ են հավաքվել, քան ակցիայի մասնակիցներն են, https://www.facebook.com/noyemi.piroyan.9/videos/2026447494274593/

[13] Nouvelles d'Arménie-ին Փարիզում գործող ֆրանս-հայկական լրատվական կայքէջ է, որը տեղեկատվություն է տարածում Հայաստանում և Սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Nouvelles d'Arménie-ի տնօրենը Արա Թորանյանն է: http://www.armenews.com/article.php3?id_article=157237

[14] Վերջին 15-20 տարիներին Հայաստանը լքած, ինչպես նաև ավելի վաղ Ֆրանսիա տեղափոխված հայերի մի զգալի մասը պնդում էր, որ Ֆրանսիայում գործող հայկական պետական կառույցների ղեկավար կազմերից և ոչ մեկը չի ընտրվել ֆրանսահայերի անմիջական ընտրությամբ (ղեկավար կազմում կան նաև անձինք, ովքեր չունեն հայկական ծագում) և չեն զբաղվում համայնքի ներսում առկա խնդիրների լուծմամբ:

(ամենաթողություն, կոռուպցիա, ազատամարտիկների նկատմամբ բռնություններ և այլն)։ Դատապարտվում էր նաև ցույցերի ժամանակ ուսանողների և մտավորականների նկատմամբ իրականացված բռնությունների և Հայաստանում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ վերոնշյալ կազմակերպությունների լռությունը։ Հռչակագրում նշվում էր, որ իրենց ձայնը ուղղում են նաև Ֆրանսիայի իշխանություններին, որպեսզի նրանք այլևս դրամական աջակցություն չցուցաբերեն վերոնշյալ կազմակերպություններին, քանի որ դրանք միայն ծառայում են կուսակցական շահերի։ Պահանջում էին հատուկ ուշադրության արժանացնել ՀՀ-ում մարդու իրավունքների խախտումների, խոսքի ազատության, քաղբանտարկյալներին ազատ արձակելու հարցերը։ Մասնավորապես նշվում էր, որ Ֆրանսիայում գործող հայկական կազմակերպությունները անմիջական կապի մեջ գտնվելով Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ, երկրորդային տեղ են հատկացնում համայնքին[15]։

Ապրիլի 18-ին բողոքի ակցիաներ սկսեցին իրականացվել նաև Փարիզում։ Երիտասարդների առաջին քայլերը եղան համացանցի միջոցով կազմակերպվող ցույցերի մասին տեղեկատվության տարածումը, մեկնաբանություններ գրելը, ֆրանսիական մամուլին հարցազրույցներ տալը, դեսպանատներ նամակներ ուղարկելը՝ պարզաբանելով, որ այն անձինք, ովքեր այդ օրերին բանակցում են իրենց անունից՝ չեն համարվում օրինական իշխանության կրողներ։ Ըստ էության, այս ամենը մի նպատակ ուներ՝ ցույց տալ, որ նույնիսկ հայկական համայնքները Սերժ Սարգսյանի կողքին չեն։

[15] Déclaration des Arméniens de France contre le régime de Serge Sarkissian et de ses alliés. https://www.change.org/p/minist%C3%A8re-des-affaires-%C3%A9trang%C3%A8res-de-la-r%C3%A9publiquefran%C3%A7aise-d%C3%A9claration-des-arm%C3%A9niens-de-france-contre-le-r%C3%A9gime-de-serge-sarkissian-et-de-ses-alli%C3%A9s

Ժամը 14:00-ին ֆրանսահայերը հավաքվեցին Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատան առջև: Այստեղ շարժման գլուխ կանգնած էր փարիզաբնակ Հայկ Շահինյանը, ով անդադար աշխատում էր այդ օրերին՝ առցանց ելույթներ ունենալով: Նա թարգմանում և մեկնաբանում էր Նիկոլ Փաշինյանի բոլոր ելույթները և խոսում ֆրանսահայության հետագա անելիքների մասին: Հանդես էր գալիս կոչով և փորձում համախմբել Մարսելի, Փարիզի, Լիոնի (Լիոնում որոշակի պասիվություն էր նկատվում) և այլ քաղաքների հայերին: Կոչերը շատ արագ տարածվում էին համացանցում, քանի որ բոլորը մեկնաբանություններում տեղեկացնում էին հավաքի և այլ մանրամասների մասին, իսկ այն մարդկանց, ովքեր չէին կարողանում մասնակցել, կոչ էր արվում մնալ տանը և համացանցի միջոցով տեղեկացնել մնացածին Հայաստանում և Ֆրանսիայում տեղի ունեցող զարգացումների մասին: Ֆեյսբուքյան անխտիր բոլոր գրառումները պարունակում էին դրական երանգներ, քաջալերող խոսքեր և հաղթական շնորհավորանքներ:

Ապրիլի 19-ին համացանցում տարածվեց ֆրանսահայության հետագա քայլերը մանրամասնող մի հայտարարություն, որը մեծ ոգևորությամբ ընդունվեց հայերի կողմից: Կոչ էր արվում ակցիաներին մասնակցելով Հայաստան ուղարկել մի էներգիա, որը կփաստեր, որ այդ պայքարը նաև Ֆրանսիայում բնակվող հայինն է: Խոսվում էր հայկական համայնքի պաշտոնական հաստատությունների պահպանած լռության համար նրանց պատասխանատվության ենթարկելու մասին: Մասնավորապես ասվում էր, որ չպետք է թույլ տալ, որ ֆրանսահայության միտքը փորձեն զբաղեցնել այլ գաղափարներով և հետ պահեն ներկա իրավիճակին մասնակցություն ունենալուց: Իսկ վերջում նշվում էր, որ դեռ երկար ժամանակ կպահանջվի, որպեսզի փոփոխությունները արդյունք տան թե՛ Հայաստանում, և թե՛

Ֆրանսիայում: Շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ այդ բոլոր գործողությունները քաղաքական ետնաբեմ չունեն, կուսակցական որևէ կառույցի չեն ենթարկվում և բացառապես Հայաստանի ապագայի համար մտահոգվող հայերի քայլեր են: Ապրիլի 19-ին արդեն տեղեկություններ տարածվեցին, որ մի քանի ֆրանսահայեր Հայաստան են ժամանել ցույցերին մասնակցելու նպատակով: Ցույցերի ժամանակ շատ հաճախ կարելի էր լսել, վերադարձող հայերի մասին, ովքեր հույս էին հայտնում, որ այսուհետ ապրելու են ազատ ու անկախ երկրում:

Ապրիլի 20-ին Փարիզում 10-15 հայեր կարողացան մուտք գործել Հայաստանի Հանրապետության դեսպանատուն: Նրանք հնարավորություն ընձեռեցին դեսպանատան դիմաց հավաքվածներին առցանց հետևել իրադարձությունների զարգացմանը: Նախ փորձեցին պարզել՝ արդյոք Սերժ Սարգսյանի նկարը դեռ կախված էր պատից, թե՝ ոչ: Պարզվեց նկարն արդեն իսկ հանված էր դեսպանատան աշխատակիցների կողմից, իսկ դեսպանատան աշխատակիցն էլ վստահեցրեց, որ այլևս նկարը չեն տեղադրի, քանի որ Սահմանադրության մեջ չկա այնպիսի կետ, ըստ որի նախագահի/վարչապետի նկարը պետք է փակցված լինի[16]: Բողոքի նոր ալիք բարձրացավ, երբ պարզ դարձավ, որ շենքը մի քանի հարկանի է, բայց երբ հայերին ընդունում են դեսպանատանը՝ տանում են նկուղային հարկ: Այս քայլը ընդունվեց որպես հայ ազգին նվաստացնող արարք: Ամբողջ ընթացքում ֆրանսահայերին ուղեկցում էր մի անձ, որն այդպես էլ չներկայացավ և հորդորեց ակցիայի մասնակիցներին դուրս գալ դեսպանատան տարածքից՝

[16] Մարի Բերբերյանը, Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատնից, ֆեյսբուքյան ուղիղ հեռարձակմամբ ցույց էր տալիս ակցիայի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը, ապրիլի 20, https://www.facebook.com/marie.berberian/videos/vb.1249566912/10211484838897173/?type=2&theater

շեշտելով, որ նա իրավասու չէ լսել հայերի բողոքը։ Մի քանի րոպե դեսպանատանը շրջելուց հետո ակցիայի մասնակիցները դուրս եկան դեսպանատնից։

Ապրիլի 20-ին Մարսելի հայությունը կրկին հավաքվեց հայկական եկեղեցու դիմաց։ Ակցիայի մասնակիցները կրում էին սպիտակ վերնաշապիկներ, որտեղ կարելի էր նշմարել «մերժիր Սերժին» գրառումը[17]։ Վերջին մի քանի տարիներին Ֆրանսիա արտագաղթածներից շատերի ելույթներում կարելի էր լսել հետևյալը, որ հայրենասեր չեն լինում միայն Էրդողանին քննադատելու համար, կամ էլ Հայաստանին գումար ուղղարկելիս և կոչ էին անում բոլոր հայկական կառույցներին, այդ թվում եկեղեցուն, դպրոցներին, մշակույթի կենտրոններին միանալ իրենց բողոքի ակցիային։ Ապրիլի 21-ին Նիցայում և Լիոնում նույնպես ցույցեր եղան ընդդեմ Սերժ Սարգսյանի վարչապետության և ամբողջ ռեժիմի։ Նիցայում ժամը 19:00-ին հայությունը հավաքվեց Հայկական այգում, այստեղ ընդհանուր առմամբ կարելի էր հաշվել 300-400 հայերի։ Նիցայաբնակ հայերից պետք է հիշատակել հայտնի սոմելիե, Ֆրանսիայում հայկական գինիների դեսպան Վարդուհի Թովմասյանին, որն ապրիլի 24-ին ժամանեց Հայաստան ցույցերին մասնակցելու նպատակով, շեշտելով, որ վերջացել է լաց ու կոծի ժամանակները, ինչպես նաև առցանց տեսահաղորդագրություններով տեղեկացնում էր Նիցայում բնակող հայերին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին։ Հարցազրույցներից մեկում Վարդուհին նշեց, որ հեղափոխության ավարտից հետո Ֆրանսիայի և Հայաստանի միջև

[17] Համացանցում լուսանկարը տարածել էր ֆեյսբուքյան օգտատեր Մարսելի հայերի խումբը, ապրիլի 20, https://www.facebook.com/photo.php?fbid=429072304182065&set=a.103098046779494.1073741827.100012378962772&type=3&theater

գինեգործության ոլորտում նոր համագործակցության հնարավորություն կարող է ի հայտ գալ[18]:

Լիոնում հայերը հավաքվեցին Ցեղասպանության հուշարձանի մոտ, իսկ այնուհետև Euronews-ի դիմաց: Ակցիայի մասնակիցների պաստառները հիմնականում Նիկոլ Փաշինյանի և Աննա Հակոբյանի նկարներն էին, որտեղ գրված էր «մեր վարչապետ»: Իրադարձությունների կիզակետում նորից հայտնվեց Հայկ Շահինյանը: Նա իր ընկերների հետ անձամբ էր ուղևորվել Լիոն՝ համայնքի անդամների շրջանում ակտիվություն առաջացնելու նպատակով: Հայ երիտասարդներից մի քանիսը հարցազրույցներ տվեցին Euronews-ին՝ տեղեկացնելով ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների մասին[19]:

Ապրիլի 22-ին, Նիկոլ Փաշինյանին ձերբակալելուց հետո, CCAF-ը ֆեյսբուքում տարածեց հայտարարություն, համաձայն որի կոչ էր անում ազատ արձակել Նիկոլ Փաշինյանին և երկխոսության էր հրավիրում երկու կողմերին: Որոշ ֆրանսահայեր արձագանքը ուշացած որակեցին՝ պնդելով, որ Դաշնակցությունը այլևս տեղ չի ունենալու նոր կառավարությունում[20]: Մի քանի ժամ անց՝ «Ապրիլի 24-ը միասնության կոչ» հայտարարությանը ի պատասխան, համացանցում տարածվեց Փարիզի հայ երիտասարդների բաց

[18] Վարդուհի Թովմասյանի հարցազրույցը «Հրապարակ» լրատվական կայքին, հունիսի 10, https://www.hraparak.am/posts/5b1cee2cf0e18906e041b86b/%D5%B9%D5%AF%D5%A1%D6%80-%D5%B0%D5%AB%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BA%D5%A5%D5%BF%D6%84-%D5%A7-%D5%AC%D5%AB%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%B6%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9

[19] Լուսանկարում պատկերված են Լիոնում բնակվող հայերը, մայիսի 6, https://www.facebook.com/HayassaADAF/photos/pcb.1794742190820552/1794741964153908/?type=3&theater

[20] CCAF-ի հայտարարությունը Նիկոլ Փաշինյանին ազատ արձակելու վերաբերյալ, https://www.facebook.com/ccaf.sud/photos/a.437220579815043.1073741828.414173015453133/810467002490397/?type=3&theater

նամակն ուղղված CCAF-ին[21]: Կոչ էին անում մեկտեղել բոլոր ֆրանսահայերին և բացատրել Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները, բարձրացնել տեղեկատվության մակարդակը: Եվ իրոք, որ CCAF-ի ֆեյսբուքյան էջում Հայաստանում տեղի ունեցող ցույցերի վերաբերյալ որևէ գրառում չկա, այլ միայն հղումներ ու մտքեր են Հայոց ցեղասպանության մասին: Նորից ու նորից շեշտվում էր հայկական կազմակերպությունների անգործությունը և զգուշացնում էին, որ նման քաղաքականության շարունակությունը հայկական համայնքում հանգեցնելու է վստահության ամբողջական կորստի, քանի որ կարևորագույն որոշումների ընդունման ժամանակ հայ համայնքի անդամների կարծիքը հաշվի չի առնվում: Այնուհետև առավել մանրամասն ներկայացվում էր մնացած, ոչ պակաս կարևոր հիմնավորումները: Այստեղ մասնավորապես շեշտվում էր համանախագահ Մուրադ Փափազյանի անունը: Նրա հրաժարական ներկայացնելու մասին պահանջները հնչում էին դեռ շարժման առաջին օրից, բայց առավել մեծ թափ ստացան Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո: Բախման հիմքում մասնավորապես ընկած էր այն հանգամանքը, որ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը հայտնել էր իր անվերապահ աջակցությունը Սերժ Սարգսյանի վարչապետի պաշտոնին նշանակվելու համար: Հետևաբար Մուրադ Փափազյանը ևս լինելով դաշնակցական իր անմիջական աջակցությունն էր հայտնել: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ցույցերի ժամանակ բազմաթիվ ելույթների ընթացքում ֆրանսահայությունը շեշտում էր, որ եթե ֆրանսահայերի մեծամասնությունը դեմ է ներկա վարչակարգին, ապա ինչպե՞ս Մուրադ Փափազյանը կարող է կողմ արտահայտվել ներկա իշխանությունների քաղաքականությանը:

[21] Nous avons le devoir de l'unité, mais pas au prix du silence, INFO ARMÉNIE, https://www.facebook.com/notes/info-arm%C3%A9nie/nous-avons-le-devoir-de-lunit%C3%A9-mais-pas-au-prix-du-silence/2053263674951932/

Իսկ նրա ղեկավարած CCAF-ը բնորոշվում էր որպես քաղաքականացված կառույց, որը ունի փակ համակարգ, որտեղ չկա բազմակարծություն և ժողովրդավարություն:

Մուրադ Փափազյանի հրաժարականի մասին մի քանի անգամ խոսել է Սոցիալ-դեմոկրատ *Հնչակյան կուսակցության* Փարիզի ներկայացուցիչ Սարո Մարդիրյանը: Նրա տեսահաղորդագրությունների մեկնաբանություններից ակնհայտ է դառնում, որ Ֆրանսիայում կա հակասություն նաև Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության և Սոցիալ-դեմոկրատ *Հնչակյան կուսակցության միջև:* Դաշնակցականներից ոմանք պնդում էին, որ Սարո Մարդիրյանը իրավասու չէ քննադատել Մուրադ Փափազյանին, քանի որ ժողովրդավարության, մարդու իրավունքների ոլորտներում խնդիրները լուծելու համար հնչակյանները ևս որևէ քայլ չեն արել: Շեշտվում էր, որ Մուրադ Փափազյանը երկար տարիներ իրեն նվիրել է Հայկական հարցը բարձր ատյաններ հասցնելուն, իսկ հիմա հայի համար պետք է առաջնային լինի թուրքի և ադրբեջանցու հետ կռիվը, քանի որ հայի իրական թշնամին իր հարևաններն են: Ի պաշտպանություն Սարո Մարդիրյանի՝ ոմանք էլ պնդում էին, որ նա դեռ 20 տարի առաջ էր իր ձայնը բարձրացրել անարդարության դեմ և չպետք է թույլ տալ, որ դաշնակցականները սև ջուր լցնեն հնչակյանների և Սարո Մարդիրյան վրա[22]:

Ապրիլի 22-ին նաև ստրասբուրգահայությունը ոտքի կանգնեց և իր աջակցությունը հայտնեց ռեժիմի դեմ պայքարող հայրենակիցներին: Նույն օրը ենթադրվում էր, որ Էդմոն Մարուքյանը ելույթ էր ունենալու Եվրոխորհրդարանում, սակայն

[22] Սարո Մարդիրյանի ֆեյսբուքյան տեսանյութը ՀՅԴ-ի գործունեության վերաբերյալ և հայերի արձագանքը, տեսանյութը դիտվել է ավելի քան 3,500 անգամ, ապրիլի 25,
https://www.facebook.com/Saro.Mardiryan/videos/10156738499268115/

նրա ելույթը տեղափոխվեց ընդմիջումից հետո և նա չկարողացավ բարձրաձայնել մարդու իրավունքների խախտումների և պատգամավորներին ձերբակալելու հարցերը, սակայն նշեց, որ բողոքի ձայնը փոխանցել է ԱլԳ խմբի Հայաստանի համազեկուցողներին: Դրսում Էդմոն Մարուքյանը հանդիպում ունեցավ հայերի հետ և խոսեց ՀՀ-ում տեղի ունեցող վերջին իրադարձությունների մասին: Պատգամավորը նշեց, որ Նիկոլ Փաշինյանին արդեն ազատ են արձակել, սակայն իրավիճակը պայթունավտանգ է, քանի որ զինվորականներ են միացել ցուցարարներին: Կոչ արեց բոլորին լինել ավելի համախմբված և հենց Ֆրանսիայից ճնշումներ գործադրել ներկա իշխանությունների վրա[23]:

Ստրասբուրգահայությունը հաջորդ օրերին ևս շարունակեց իր բողոքի ձայնը արտահայտել: Բողոքի ցույցերը կազմակերպվել են նաև Հայկական եկեղեցու դիմաց: Ցույցերը իրենց բնույթով հանգիստ էին, մասնակիցները հիմնականում լսում էին հեղափոխության խորհրդանիշը դարձած երգեր և կրկնում հեղափոխության ընթացքում հաճախ լսվող արտահայտություններ՝ «քայլ արա, մերժիր Սերժին», «Սերժիկ հեռացի՛ր», «Սերժիկ մարդասպան», «Նիկոլ», «Սերժիկ հանցագործ», «հաղթանակ», «Սիգնալ տուր, մերժիր Սերժին»[24]: Հայ համայնքի ներկայացուցիչների ելույթները հիմնականում ֆրանսերեն էին, որպեսզի թե՛ հայերը, և թե՛ ֆրանսիացի անցորդները կարողանային տեղեկանալ ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին: Սակայն

---

[23] Ստրասբուրգում ապրող հայերը ակցիա են իրականացնում Եվրոխորհրդարանի մոտ, տեսանյութը՝ Արմեն Սարգսյանի, ապրիլի 23, https://www.facebook.com/100011206111901/videos/576730499377149/

[24] Ապրիլի 23-ին Ստրասբուրգում իրականացված ցույցից երկու հատված, https://www.facebook.com/100011206111901/videos/vb.100011206111901/576688252714707/?type=3, https://www.facebook.com/100011206111901/videos/vb.100011206 111901/576691302714402/?type=3

հետաքրքրականն այն է, որ ցուցարարների մեջ եղել են նաև ծագումով ֆրանսիացիներ: Այս փաստը բացատրվում է նրանով, որ նրանք եկել էին սատարելու իրենց ընկերներին և իրենց նպաստն էին բերում Հայաստանում օրինական իշխանության հաստատմանը, իսկ փողոցով անցնող մեքենաներն էլ, տեսնելով հայկական դրոշներ, իրենց աջակցությունն էին հայտնում՝ ազդանշաններ տալով: Հայերի պնդմամբ՝ մեքենաները եղել են և՛ հայերի, և՛ այլ ազգի ներկայացուցիչների:

Ապրիլի 22-ին մարսելահայությունը բողոքի ակցիա իրականացրեց հայկական եկեղեցու դիմաց (մոտավորապես 200-300 հոգի), որի ընթացքում տասնյակ հայեր ելույթներ ունեցան: Այնուհետև շարժվեցին դեպի Մարսելում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսարան[25]: Հիմնականում շեշտվում էր այն հանգամանքը, որ Սերժ Սարգսյանի պատճառով է, որ նրանք գտնվում են մայր հայրենիքից հեռու և բաժանված: Ակցիայի ժամանակ հիմնականում վանկարկում էին «միացում», «մերժիր Սերժին», «տուն ենք ուզում գալ», «մենք գալիս ենք», «Սերժիկ հեռացիր», «ազատություն Նիկոլին», «ազատություն Սասունին», «քայլ արա», «մենք ձեզ հետ ենք», «մահ ռեժիմին», «ոչ հայոց ազգի պառակտմանը», «մենք բոլորս Սասնա ծռեր ենք», «հայերը ողջ են», «ոչ ապօրինի վարչակարգին», «կեցցե հայ ժողովուրդը»[26]: Հատուկ շեշտադրմամբ անընդհատ փաստում էին, որ կազմակերպիչ չկա իրենց գործողություններում և ամեն բան ինքնաբուխ է, քանի որ իրենք մի ցեղի, մի հայ ազգի զավակներ են:

[25] Մարիամ Կնյազյանը առցանց հեռարձակում էր Մարսելում բնակվող հայերի քայլերթը դեպի Մարսելի Գլխավոր հյուպատոսարան, https://www.facebook.com/mariam.kniasian?hc_ref=ART_KAOkkx3ivGBq8Ngfb2TgUkpBT9VkADLj2KWEZtxFzdKyUbs27OcWLb006rH33UY

[26] Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատան առջև իրականացված ցույցի նկարներից, https://www.facebook.com/photo.php?fbid=2022114984776417&set=pcb.2022115218109727&type=3&theater

Անարդարացի էին համարում Սերժ Սարգսյանի վարչապետությունը՝ այն համարելով Հայաստանի Հանրապետության բռնապետություն դառնալու սահուն ճանապարհ: Սերժ Սարգսյանին մեղադրեցին, որ Հայաստանի Հանրապետությունը տարածքային կորուստներ է ունեցել ապրիլյան պատերազմի ժամանակ, և որ զինվորները կռվել են 80-ականների զենքերով: Համայնքի ներկայացուցիչները ողջունեցին Նիկոլ Փաշինյանի աշխատանքը, բայց մեկ անգամ ևս հավաստիացրեցին, որ իրենք կանգնած են ոչ թե մեկ անհատի կամ մեկ կուսակցության կողքին, այլ իրենց քույրերի ու եղբայրների, որոնք Հայաստանում են և պայքար են մղում հանուն իրենց ապագայի[27]: Չնայած այս ոգևորությանը, որը նկատելի էր ֆրանսահայության մեջ, կային նաև ավանդական համայնքի վառ ներկայացուցիչներ, ովքեր քարկոծում էին երիտասարդների հեղափոխական գրառումները և շեշտում, որ նրանք նպաստում են հայ ազգի պառակտմանը, ինչն անընդունելի է:

Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններից անմասն չմնաց նաև Պուատիեյի հայկական համայնքը: Հայ երիտասարդների գործողությունները այստեղ ավելի շատ տեղեկատվության տարածմանն էր ուղղված (մոտավորապես 500 հայեր): Պուատեի հայկական համայնքի ղեկավար Անուշ Գրիգորյանը ինձ հետ զրույցում ասաց հետևյալը. «Տարիներ շարունակ մենք ունեցել ենք երկիր, որի կառավարող մարմինների մասին խոսելն էնքան տաբու ա եղել, ինչքան Թուրքիայում Հայոց Եղեռնից խոսալն ա.. Մեր երկրում չի եղել օրինականություն, արդարություն, «զաթո» եղել ա կաշառակերություն, անօրինականություն, անպաշտպան ժողովուրդ, որի միակ

[27] Մարսելում բնակվող Նոյեմի Փիրոյանի ուղիղ հեռարձակումը Մարսելի հայկական եկեղեցու դիմաց կազմակերպված բողոքի ակցիայից, ապրիլի 22, https://www.facebook.com/noyemi.piroyan.9/videos/2028803230705686/

նպատակը երկրից հնարավորինս շուտ փախչելն էր... Ստեղծվել ա սփյուռքը, որտեղ 10 միլիոնից ավել մարդիկ են ապրում, այդ թվում և ես ու ընտանիքս՝ մեր սեփական երկրում ապրելու փոխարեն։ Մեր երկրում չկա էն իշխանությունը, որը ժողովրդի կողքին ա, ու գործում ա ժողովրդի շահերի ուղղությամբ»։ Հենց սա համարեց հիմնական պատճառ, ինչը ստիպել էր այսօրվա երիտասարդներին ոտքի կանգնել ու պայքարել իրենց վաղվա օրվա համար։ Հենց սա հիմք համարեց նրա և համայնքի այլ անդամների կողմից ցուցաբերված աջակցության համար։ Նրա պնդմամբ՝ քնած ու մեռած հույսեր կային, որ այդ օրերին նորից կենդանացան և սա ուրիշ հեղափոխություն էր, քանի որ սրա մեջ կար մարդասիրություն։

Պուատիեում հնչել են կոչեր՝ Սերժ Սարգսյանի հրաժարականի, Նիկոլ Փաշինյանի ազատման, կառավարության փոփոխության վերաբերյալ։ Մշակույթի կենտրոնի մոտակայքում իրազեկող ակցիաներ են արել, բողոքի տեքստը թարգմանել են ֆրանսերեն ու թաղային մշակույթի տան պատերին փակցրել, որպեսզի ֆրանսիացիներին իրազեկեն ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների մասին։ Նրանց միացել են նաև տեղի ռուսական համայնքի անդամները, քանի որ մեծ մասը հայ կանայք են, որոնք ամուսնացել են ռուս տղամարդկանց հետ։ Ցույցերի օրերին Պուատիեում կայացել է «Աշխարհը տոնի մեջ» թաղային տոնը, որտեղ ներկայացվել է Հայաստանը։ Հետաքրքիրն այն է, որ ֆրանսիացիները համայնքի անդամներից տեղեկություններ էին ուզում ստանալ ոչ թե հայկական մշակույթի, բնության, այլ հենց հեղափոխության մասին։ Հիմա արդեն Պուատիեյում ապրող ֆրանսիացիները հայկական դրոշ տեսնելիս արտաբերում են հետևյալ խոսքերը. «Հայաստան, թավշյա Հայաստան, էս ինչ արեցիք դուք»։ Հայերը երբեմն կատակում էին, որ այս

հեղափոխությունը իրականում բռնի էր, քանի որ բոլորը լավ գոռում էին։

Ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց։ Հրաժարականի մասին լուրը մեծ ոգևորությամբ ընդունվեց ֆրանսահայերի կողմից։ Օրվա կարգախոսը դարձել էր «ազատ, անկախ Հայաստան»-ը, ֆեյսբուքում կարելի էր տեսնել հետևյալ գրառումը՝ «հպարտ եմ, որ հայ եմ, քանի որ հայը առաջին ազգն է, ով խաղաղ հեղափոխության միջոցով կարողացավ բարձրացնել իր արդար բողոքի ձայնը և ոչ մի զոհ չպահանջվեց»։ Տարածվեցին տեսահոլովակներ, որոնց միջոցով կարելի էր պատկերացում կազմել այդ օրերին ֆրանսահայերի կատարած աշխատանքի մասին[28]։ Շատերը թե՛ ելույթների ժամանակ, թե՛ մեկնաբանություններում խոսում էին այդ բոպեներին ապրած զգացողությունների մասին՝ շեշտելով, որ չէին կարողանում զսպել արցունքները։ Չնայած զգացմունքային տեսքստերին՝ ֆրանսահայերից շատերը սկսեցին խոսել ամբողջ ռեժիմի տապալման մասին՝ պնդելով, որ միայն Սերժ Սարգսյանի հրաժարականը բավարար չէ Հայաստանը զարգացման ուղիով տանելու համար։ Մասնավորապես, համայնքի երիտասարդ ներկայացուցիչներից մեկը նշեց. «Հայ ժողովրդի պայքարը չի ավարտվել, քանի որ այն ուղղված չէ միայն Սերժ Սարգսյանի դեմ, այն նաև ուղղված է նրա դաշնակիցների և ռեժիմի դեմ։ Հայերը չեն լինելու և ոչ մի ազգի ստրուկը, հայերը այսուհետ լինելու են ազատ ու անկախ»[29]։

---

[28] Մարսելի հայկական մշակույթի կենտրոնի հայկական պարի ուսուցչուհի Լիլիթ Սարիբեկյանը պատրաստել է այդ օրերին մարսելահայության իրականացրած գործողություններն ամբողջացնող տեսահոլովակ, https://www.facebook.com/lilit.saribekyan.9/videos/2166684316674910/

[29] Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատան առջև իրականացված ցույցից մի հատված, ապրիլի 25, https://www.facebook.com/infoarmenie/videos/2058563767755256/

Ռեժիմի տապալման մասին խոսելիս բարձրաձայնում էին նաև քաղբանտարկյալներին ազատ արձակելու հարցը: «Մենք բոլորս Սասնա ծռեր ենք» արտահայտությունը հետաքրքիր գաղափարական ընկալումներ էր պարունակում իր մեջ: Ֆրանսահայերը «Սասնա ծռեր»-ին դիտարկում էին որպես հայ ազգի ազատագրության համար պայքարած անհատների, որոնք անօրինական կալանավորվել էին: Նրանք այն անհատներն էին, որոնք մի կողմ դնելով անձնական շահերը՝ գիտակցաբար պայքար էին մղել հանուն վաղվա ազատ ու անկախ Հայաստանի:

Ապրիլի 24-ին համացանցում տարածվեց հայտարարություն՝ ապրիլի 25-ին, ժամը 17:00-ին Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատան առջև հավաքվելու նպատակով: Հայտարարությունում մասնավորապես նշվում էր, որ Նիկոլ Փաշինյանը կոչ է արել շարունակել պայքարը և ճնշում գործադրել ՀՀ իշխանությունների վրա: Ապրիլի 25-ին ՀՅԴ-ն հաշվի առնելով առկա իրավիճակը հայտարարեց քաղաքական կոալիցիայից դուրս գալու մասին: Հայտարարությունում նշված էր, որ Ազգային ժողովը պետք է ընտրի ժողովրդի վստահությունը վայելող վարչապետ, ում ձևավորած կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը ներառող ծրագիրը պետք է նպատակ հետապնդի՝ լիցքաթափել ներքաղաքական լարվածությունը, հաղթահարել քաղաքական ճգնաժամը, հստակ առաջնահերթություններ նախանշել և երաշխավորել կուտակված խնդիրների լուծումը, լիարժեք ժողովրդավարական պայմանների ապահովմամբ նախապատրաստել և անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Հաջորդ օրը Ֆրանսիայի Դաշնակցական բյուրոն իր աջակցությունը հայտնեց հայությանը՝ շեշտելով, որ նաև իրենց երկխոսության կոչերը նպաստեցին հարցի խաղաղ լուծմանը: Հետագա օրերի համար կարգախոս դարձավ

«Արի՛ միանա՛նք, յառա՛ջ գնանք» նախադասությունը[30]: Իսկ արդեն ապրիլի 25-ին տարածվեց հայտարարություն, համաձայն որի ՀՅԴ-ն մայիսի 1-ին պաշտպանելու էր Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը: Սակայն սա ևս իր բողոքի ձայնն արթնացրեց հայության շրջանում՝ Դաշնակցականներըորակվեցին որպես դավաճաններ: Մասնավորապես «Հայկական վերածնունդ» կազմակերպության[31] ներկայացուցիչ Շանթ Ոսկերիչյանը շեշտեց, որ Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո Մուրադ Փափազյանի ֆեյսբուքում տեղադրած հոդվածը չի համապատասխանում իրականությունը (Դաշնակցությունը ունեցավ իր ներդրումը հարցը խաղաղ ճանապարհով լուծելու հարցում): Շանթ Ոսկերիչյանն իր ելույթում ասաց. «Ես էլ մեկնաբանության մեջ նշեցի, ախր Մուրադը ինչ է արել, 20 տարի է, ներողություն, Քոչարյանին և Սերժիկին մեղմ ասած պնակալեզություն են անում և ինչ որ կա ուտում են, բաժանում են: Ըսի, որ դուն ստախոս ես և օպորտունիստ ես: Եվ գիտեք ի՞նչ, անմիջապես հանեց ինձի: Աս է իրա դեմոկրասիի գաղափարը, հասկանում եք»[32]: Բողոքի ակցիան այս ամենից հետո նոր թափ ստացավ, որի ընթացքում հաճախակի կարելի էր լսել

[30] Դաշնակցության Ֆրանսիայի բյուրոն տարածեց իր նոր կարգախոսը՝ Հայաստանում սկիզբ առաջ «Թավշյա հեղափոխության» վերաբերյալ, մայիսի 1,https://www.facebook.com/fradachnaktsoutioun/photos/a.501431813395704.1073741827.501407193398166/880785638793651/?type=3&theater

[31] «Հայկական վերածնունդ»-ը սփյուռքի քաղաքացիական շարժում է, որը նպատակադրվել է սփյուռքի հանձնառությունը առավելագույնս ծառայեցնել հայ ազգի ամենաթանկ հարստության՝ Հայաստանի պետականության զարգացմանը: Շարժման առաջնորդները վստահ են, որ այս նպատակը իրականացնելու ճանապարհը սփյուռքի մարդկային կարողությունը ամենաարդյունավետ ձևով Հայաստանին նպաստ բերելն է, օգնելով նրան հաղթահարել իր ներքին և արտաքին մարտահրավերները, ինչպես նաև հայրենի քաղաքացիական շարժումների և այլ բարեփոխական խմբերի հետ սերտ կապեր հաստատելը:

[32] Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատան առջև իրականացված ցույցից մի հատված, ապրիլի 25, https://www.facebook.com/infoarmenie/videos/2058562304422069/

հետևյալ նախադասությունը. «Դաշնակցություն դավաճան, Հանրապետական դավաճան, Հանրապետականին ուզում եք՝ ոչ, Դաշնակցությանն ուզում եք՝ ոչ, երկուքն ալ գրողին ծոցը»[33]: Հիմնական պատճառը նրանում էր, որ դեռ բողոքի ցույցերի առաջին իսկ օրերից ֆրանսահայությունը կոչերով դիմել էր ՀՅԴ Ֆրանսիայի բյուրոյին, հայկական եկեղեցուն, հայկական մշակույթի տանը՝ իրենց միանալու համար, սակայն նրանց կոչին ոչ մի պաշտոնական արձագանք չէր եղել: Հայ երիտասարդներից մեկը՝ Արմենը, ով ապրում և սովորում էր Փարիզում շարունակեց Շանթ Ոսկերիչյանի խոսքը. «Երբ իմացա, որ ՀՅԴ-ն դուրս է գալիս կոալիցիայից, շատ զարմացա: Ինչպես կարող է ՀՅԴ-ն, որ երկար տարիներ գոյատևում է, անընդհատ սխալվի ու միանա այն ուժերին, որոնք հակահայկական են: Եթե առաջ միացել էին երիտթուրքերին ու գիտենք ինչ եղավ՝ Հայոց ցեղասպանությունը, ապա հիմա միացել են երիտհանրապետականներին: Եթե նրանք են հենց հրաժարվել հանրապետականներից, նշանակում է, որ ռեժիմի վերջը եկել է: Մեր երկիրը պետք է ապրի լավ, ինչի՞ մեր երիտասարդները պետք է ուրիշ երկրները ծաղկեցնեն և ամբողջ ներուժը տան այլ երկրներին, իսկ Հայաստանը լինի այս վիճակում: Պետք է կերտենք ուժեղ Հայաստան, որի մասին միշտ մտածել ենք»[34]: Ֆրանսահայերի մոտ հարց է առաջանում՝ եթե երկիրը մասնատվում է, եթե երկրում ներքին թշնամին խժռում է տնտեսությունը և չի նպաստում ՀՀ-ի զարգացմանը, ապա ինչու՞ է պետք Թուրքիայի նախագահի՝ ցեղասպանության ճանաչումը, եթե երկիր չեն ունենալու[35]:

[33] Ապրիլի 25-ին իրականացված ցույցից մի հատված, https://www.facebook.com/infoarmenie/videos/2058562304422069/

[34] Մեկ այլ տեսանյութ ապրիլի 25-ին տեղի ունեցած ցույցից, https://www.facebook.com/infoarmenie/videos/2058538067757826/

[35] Ինձ հետ հարցազրույցում նշեց փարիզաբնակ Հայկ Շահինյանը

Լարվածությունը հասավ իր գագաթնակետին, երբ անդրադառձ կատարվեց ապրիլի 19-ին «Օրակարգից դուրս» հաղորդաշարին Հրանտ Մարգարյանի տված հարցազրույցին: Հրանտ Մարգարյանը մասնավորապես նշում էր. «Հայաստանում դուրս է եկել բնակչության այն մասը, որը դժգոհ է ստեղծված իրավիճակից: Մենք գիտեինք այդ դժգոհությունների մասին և դրա համար էլ կոալիցիայի մեջ մտանք Հանրապետական կուսակցության հետ, որպեսզի համատեղ ուժերով կարողանանք հարցին լուծում տալ, և ստորագրել էինք համապատասխան համաձայնագիր այդ պատճառները վերացնելու համար: Սակայն մեր ճիգ ու ջանքը բավարար արդյունք չէր տվել և ընթացքը դանդաղ էր և այդ դանդաղ ընթացքն էլ առիթ տվեց, որ ժողովուրդը դուրս եկավ փողոց: Դաշնակցությունը տարբեր առիթներով հրապարակ է իջել, որ կարողանա ստեղծված իրավիճակը օգտագործել և լուծել երկրում սկիզբ առած դժգոհությունները: Դաշնակցությունը հանդես էր եկել քաղաքական խորհրդակցությունների հարթակ ստեղծելու նախաձեռնությամբ: Ամեն ինչ կամ ոչինչ չպետք է լինի, և հարցը միայն կոնսենսուսով պետք է լուծել, պետք է այս անգամ այս ամենից առավելագույն արդյունք ստանանք: Վստահ եմ, որ ժողովրդի կողմից բարձրացված դժգոհությունը ոչ թե մեկ անձի դեմ է, այլ երկրում գոյություն ունեցող կոռուպցիայի և ամենաթողության, մենաշնորհի դեմ է և կարելի է այս հարցը կոնսենսուսով լուծել»[36]: Նրա խոսքերը միանշանակ չընդունվեցին և շատ ու շատ հարցեր առաջացան: Մարդիկ սկսեցին ավելի շատ գրառումներ կատարել, թե վերջիվերջո Դաշնակցությունը ժողովրդի

[36] Առաջին ալիքի «Օրակարգից դուրս» հաղորդման շրջանակներում ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը խոսեց Դաշնակցության քաղաքականության և «Թավշյա հեղափոխության» մասին, ապրիլի 19, https://www.facebook.com/arfdofficial/videos/2140769105938444/UzpfSTM3NjY1Njc4MjUyMzQzNDo4MTMxNzAyMTg4NzIwODY/?hc_ref=ARS3Dd2IB6F8drmeKzOvPeMtnSF7pKqLlAu54EaJSKxFGLPRm9pMa3dxCYz1qgJCrFs&fref=nf

կողքին է թե՞ իշանության, և ե՞րբ է Դաշնակցությունը սթափվելու։ Ապրիլի 25-ի շատ ելույթներում կարելի էր լսել մտավախություններ՝ արտաքին ուժերի հնարավոր միջամտության մասին։ Մասնավորապես, շեշտվում էր, որ Ռուսաստանը Հայաստանում ունի ռազմական մեծ ուժ և այն կարող է օգտագործել ի աջակցություն ներկա իշխանությունների։ Ակցիայի մասնակիցներից Պարեն անունով մի անձնավորություն պնդում էր, որ վերոնշյալը իրատեսական է, քանի որ Ռուսաստանը երբեք այսքան ջերմ հարաբերությունների մեջ չի եղել Թուրքիայի և Ադրբեջանի հետ[37]։ Նա ավելեց նաև, որ Արցախը արդեն մի քանի տարի է որոշված է, որ անցնելու է Ադրբեջանին, որպես իրենց սև բարեկամության երաշխիք և դրա համար թե՛ Սփյուռքը և թե՛ Հայաստանը պետք է զգոն լինեն արտաքին միջամտություն թույլ չտալու համար։ Մեկ այլ հայ շարունակեց Պարենի խոսքը. «Երբ Լևոն Տեր-Պետրոսյանը վերադարձավ քաղաքականություն, իր խոսքերն եմ փորձում հիշեցնել, «ավգյան ախոռները» մաքրելու համար, իմիջիայլոց «ավգյան ախոռներ»-ի հիմքը ինքը դրեց, որը փորձեց բնակեցնել ՀՀՇ-իզմով, այնուհետև ՀՀԿ-ն խլեց նախաձեռնությունը և դարձավ այդ ախոռի մշտական բնակիչը։ Այսօր ի՞նչ է անում Նիկոլը, սովորական մի բան, ես շատ եմ մտածել, ինքը հասկացավ, որ մեր մանուկ Հայաստանին ճիճվակրությունն է պատել, ճիճվաթափություն է անում։ Էդ ճիճուները այսօր մենք զգում ենք, ժամ առաջ ուզում են փախչել խորտակվող նավից և այս ժողովուրդը, որ փողոցում է՝ կերտում է Հայաստանը, որտեղ չի լինելու ամբարտավանություն, չի լինելու ստախոսություն, չի լինելու խաբեբայություն, զոռբայություն, փողը չի դառնալու արժեք իրենց համար, այլ արժեք են լինելու մարդկային հատկանիշները։ Մոտավորապես 1918թ-ին և 2018թ-ին

[37] Ապրիլի 25-ին Փարիզում իրականացված ցույցից մի հատված, https://www.facebook.com/infoarmenie/videos/2058536477757985/

գրեթե միևնույն պայքարի մեջ ենք: Մի դեպքում մենք պայքարում էինք երիտթուրքերի դեմ, հիմա պայքարում ենք հայաստանյան երիտթուրքերի դեմ: Այսպիսով, Նիկոլը՝ Հայաստանում և Կարո Փայլանը՝ Թուրքիայում՝ խորհրդարանի մեջ, միևնույն պայքարն են տանում՝ կերտելու նոր Հայաստանը, մեր երազանքների Հայաստանը, այն Հայաստանը, որը եկել է արդեն և մենք ականատեսն ենք: Այլևս հայ ժողովուրդը չի ապրելու «ավգյան ախոռում»՝ Լևոնի խոսքով ասած»[38]:

Ապրիլի 29-ին Փարիզում բնակվող հայերը հավաքվեցին Կոմիտասի արձանի մոտ: Միակ թեզը, որ անընդհատ պտտվում էր հայերի ելույթներում, վերաբերում էր հեղափոխության հաղթական ավարտին, որը տեղի էր ունենալու միայն ու միայն Նիկոլ Փաշինյանի ՀՀ վարչապետ ընտրվելու ճանապարհով: Նույն օրը ֆրանսահայերից մեկը՝ Սմբատ Մաթևոսյանը, երդվեց, որ վրեժխնդիր կլինի յուրաքանչյուրից, ով կա՛մ կփորձի ժողովրդից խլել այս հաղթանակը, կա՛մ կփորձի պետության վրա ձեռք բարձրացնել[39]:

Ապրիլի 30-ի կեսգիշերին, Նիկոլ Փաշինյանը առցանց ելույթ ունեցավ և տեղեկացրեց հայությանը, որ Սերժ Սարգսյանը ՀՀԿ-ի հետ գիշերային մի հանդիպման ժամանակ որոշել է տապալել ժողովրդի թեկնածուի վարչապետ ընտրվելու հնարավորությունը: Նա կոչ արեց հայությանը հավաքվել հարյուր հազարներով հանրապետության հրապարակում[40]: Այս տեսանյութը շատ արագ

---

[38] Ապրիլի 25-ին Փարիզում իրականացված ցույցից մի հատված,https://www.facebook.com/infoarmenie/videos/2058536761091290/

[39] Ապրիլի 29-ին Փարիզում իրականացված ցույցից մի հատված, https://www.facebook.com/infoarmenie/videos/2060507860894180/

[40] Ապրիլի 30-ին իր ֆեյսբուքյան էջում Նիկոլ Փաշինյանը տարածեց տեսանյութ՝ «Փորձում են տապալել ժողովրդի թեկնածուի ընտրությունը: Կոչ եմ անում վաղը առավոտվանից հավաքվել Հանրապետության հրապարակում» վերնագրով: https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/2034036716916713/UzpfSTEwMDA

տարածում գտավ ֆրանսահայերի շրջանում և նորից շահարկվեց այն ֆաստը, որ ՀՅԴ կրկին երես թեքեց հայ ժողովրդից։ Մարսելահայությունը որոշեց հաջորդ օրը վաղ առավոտյան հավաքվել հետագա քայլերը ծրագրելու համար։ Մայիսի 1-ին Ազգային ժողովը քննարկում էր ժողովրդի թեկնածուի վարչապետի պաշտոնում ընտրվելու հարցը։ Քննարկումը շարունակվեց գրեթե 8 ժամ, ինչը դժգոհության ալիք բարձրացրեց ինչպես Հայաստանում, այնպես էլ Ֆրանսիայում։ Ֆեյսբուքյան մեկնաբանություններին հետևելիս կարելի էր նշմարել տարբեր կարծիքներ։ Ոմանք պնդում էին, որ ցուցարարները պետք է գրավեն Ազգային ժողովի շենքը, որոշներն էլ շեշտում էին, որ նույնիսկ Հանրապետական կուսակցության անդամների կողմից տրված հարցերին հենց իրենք՝ հանրապետականները չեն կարող պատասխանել, քանի որ դրանք 30 տարվա կուտակված հարցեր էին, որոնք լուծելը շատ դժվար է։ Կարծիքներ հնչեցին, որ Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելը ի հայտ կբերի բոլոր կեղծիքների ակունքները, դրա համար էլ հանրապետականները պայքարում են մինչև վերջին շունչը՝ դա թույլ չտալու համար։ Քվեարկության արդյունքներից հետո Հայկ Շահինյանը ֆեյսբուքյան իր էջում շուրջ մեկ ժամ ֆրանսերենով (քանի որ բոլոր հայերը չէ, որ հասկանում են հայերեն) ներկայացրեց, թե ինչ է կատարվել օրվա ընթացքում և այնուհետև կոչ արեց հայությանը մայիսի 6-ին ժամը 13։00-ին հավաքվել Կոմիտասի արձանի մոտ[41]։ Տեսանյութը դիտեցին ավելին քան 10,000 օգտատերեր, 497 օգտատեր տեսանյութը տարածեց համացանցում, իսկ ավելի քան 402 օգտատեր կիսվեցին

wMDAwMDg4OTU0MDozMDYwNjExMjk0OTk0MTQ6NzU6MTUxNDc5MzYwMDoxNTQ2MzI5NTk5Oi02NjExNDQzMDQ5NTE2OTQ2OTAz/?hc_ref=ARTYQd3RDQDWVSEaEe06oFRyY1vuZYhY9fNnvIoW3HGPAlvtxcA7SVmgqF_NAO3B1Sc

[41] Հայկ Շահինյանի տեսանյութը, որտեղ անդրադարձել է Նիկոլ Փաշինյանի ապրիլի 30-ի կոչին,
https://www.facebook.com/infoarmenie/videos/2061135114164788/

մեկնաբանություններով։ Մեկնաբանությունները վերլուծելիս ակնհայտ դարձավ, որ տեսանյութը դիտել են Ֆրանսիայի տարբեր քաղաքներում բնակվող հայերը, որոնք մեկնաբանությունների միջոցով փորձեցին պլանավորել ու համակարգել իրենց գործողությունները։

Քվեարկության արդյունքները պարզ դառնալուց հետո Մարսելի հայ համայնքի անունից ֆեյսբուքյան բաց նամակ ուղարկվեց Ազգային ժողովի պատգամավոր Շուշան Պետրոսյանին՝ հետևյալ բովանդակությամբ. «Մարսելի հայ համայնքը բոյկոտում է ձեզ։ Օտար երկրում կարոտից լսում էինք ձեր հայրենասիրական երգերը։ Այսօր երեխաներս մեծացան և զարմանքով հարցրին, թե ինչպես կարող էր այդ հայրենասիրական երգեր երգող (արվեստագետը) դեմ լինել իր ժողովրդին։ Վստահ եղեք, որ բացատրեցի։ Ձեր սկավառակները ջարդվեցին և նետվեցին աղբը։ Եվ իմ հարյուրավոր աշակերտները գիտեն, թե ինչու ձեր ոչ մի երգի տակ պար չեմ բեմադրել և չեմ բեմադրի»։

Պուատիեում նույնպես մայիսի 1-ից հետո եղան ակցիաներ։ Ինչպես նշում է Պուատիեի հայկական համայնքի ղեկավար Անուշ Գրիգորյանը. «Մենք էլ հետ չմնացինք։ Դա բոլորիս խնդիրն էր՝ Հայաստանում ապրող թե Հայաստանից դուրս, հայերի խնդիրն էր ու մեր ձայնը Հայաստանից դուրս երևի ավելի լսելի կլիներ, որովհետև այլազգի ներկայացուցիչներ կխառնվեին։ Դրսի մարդկանց աչքը ավելի մեծ դեր ա խաղում։ Համոզված էինք, որ ապրիլի 24-ին Հայաստանում ներկա գտնվող մարդկանցից «ամոթը» ստիպեց էտ քայլն անել, Նիկոլն ինքն ասաց, որ ուրիշ ժամկետ ա առաջարկվել, բայց ինքը պնդել ա էդ օրվա հրաժարականը ու տենց էլ էղավ։ Էդ օրը լինելու էին օտարերկրյա լրատվամիջոցներ, ու ամբողջ աշխարհով տարածվելու էին հակասերժական

գաղափարները: Դրա համար մարդն իր ոտքով հետ կանգնեց, ապրի ինքը»[42]:

Մայիսի 5-ին տարածվեց մի հետաքրքիր հայտարարություն փարիզաբնակ հայերի կողմից: Նախաձեռնությունում նշվում էր, որ մայիսի 8-ը հայտարարվում է Հայաստանի ժողովրդին զորակցելու օր, քանի որ այդ օրը լինելու է պատմական օր հայ ժողովրդի համար: Հայտարարությանը կից ներկայացվում էր նաև օրակարգը, համաձայն որի ժամը 10:00-ից սկսած հետևելու էին Ազգային ժողովի ուղիղ հեռարձակմանը, իսկ ընդմիջմանը իրավաբան, քաղաքական վերլուծաբան Ռաֆֆի-Ֆիլիփ Գալֆայեանը ներկայացնելու էր Հայաստանի Սահմանադրությունը, Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը և վիճարկումների ամփոփումը: Ժամը 12:00-ին սկսվելու էր հայկական երգն ու պարը[43]: Մայիսի 6-ին Փարիզի հայերը հեռախոսազրույց ունեցան այսօր արդեն Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանի հետ: Հեռախոսազրույցում Արայիկ Հարությունյանը նշեց. «Սփյուռքի ներկայացուցիչների գործողությունները կարևոր դերակատարություն են ունենում Հայաստանում իշխանափոխության հետ կապված: Էդպես պահելով, դուք մեծ աջակցություն եք ցուցաբերում գործընթացին, իսկ ինչ վերաբերում է մայիսի 1-ի ընտրությունից հետո, ես համոզված եմ, որ շատ պատգամավորներ համապատասխան եզրակացություններ արել են և մայիսի 8-ին համենայնդեպս նրանց մի մասը կքվեարկի ժողովրդի թեկնածուի օգտին: ... Եթե ճգնաժամը խորանա, ապա պատասխանատվությունը ընկնելու է յուրաքանչյուր պատգամավորի վրա, և ունենք բոլոր սցենարների

[42] Այս մասին ինձ հետ հարցազրույցում նշեց Պուատիեի հայկական համայնքի ղեկավար Անուշ Գրիգորյանը:

[43] Journée de solidarité avec le peuple d'Arménie, Event hosted by Péniche Anako and Charjoum le mouvement, https://www.facebook.com/events/226071871485335/

հետ կապված մեր պլանները, ինչպիսին ունեցել ենք վերջին 35 օրերին։ Իսկ ինչ վերաբերում է սփյուռքին, ապա ամենամեծ ձեռքբերումը սփյուռքի համախմբումն է, ընդ որում ոչ թե Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգի, այլ ներքին քաղաքական օրակարգի շուրջ, ինչը մեզ շատ է ուրախացնում, քանի որ տարիներ շարունակ մենք ցանկացել ենք, որպեսզի Հայաստանի ներքին խնդիրները դառնան սփյուռքի, ընդ որում սփյուռքի լայն շրջանակների օրակարգը և հիմա սա շատ թանկ է մեզ համար և ապագա կառավարությունում մենք հաշվի ենք առնելու այս հանգամանքը։ Նախորդ իշխանությունների ակնկալիքը սփյուռքից եղել է՝ գումարը մեզ տուր, մնացածի հետ գործ չունես, ... իսկ մենք կոչ ենք անում մեր սփյուռքի ներկայացուցիչներին գալ և տեր կանգնել իրենց պետությանը»[44]։

Մայիսի 7-ին ֆեյսբուքում տարածվեց հայտարարություն, համաձայն որի մայիսի 8-ին ժամը 14:00-ին մարսելահայությունը հավաքվելու էր Մարսելի հին նավահանգստի մոտ[45]։ Փարիզում բնակվող հայերը ևս միացան ակցիային և որոշեցին սպիտակ վերնաշապիկներ կրել՝ ի նշան հաղթանակի։ Մայիսի 8-ին Նիկոլ Փաշինյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ։ Այս լուրը մեծ ցնծությամբ և տոնախմբությամբ ուղեկցվեց այս լուրը Մարսելում, Փարիզում և այլ քաղաքներում[46]։ Տոնախմբության ժամանակ Մարսելի հայկական դպրոցի տնօրեն Կարեն Խուրշուդյանը, հայկական պարի ուսուցչուհի Լիլիթ Սարիբեկյանը

[44] Մայիսի 6-ին Փարիզում իրականացող ակցիայի ժամանակ տեղի հայերը հնարավորություն ունեցան հեռախոսազրույց ունենալ Արայիկ Հարությունյանի հետ, https://www.facebook.com/infoarmenie/videos/2066432616968371/

[45] Grand rassemblement pacifique en soutien au peuple d'Arménie, https://www.facebook.com/events/590880537959133/

[46] Մարսելի հայկական դպրոցի տնօրեն Կարեն Խուրշուդյանը իր ֆեյսբուքյան էջում տասնյակ լուսանկարներ էր տեղադրել մայիսի 8-ին Մարսելում տեղի ունեցած տոնախմբությունից, https://www.facebook.com/karen.khurshudyan/media_set?set=a.10155153875071152.1073741837.614966151&type=3

ոգևորիչ ելույթներ ունեցան: Լիլիթ Սարիբեկյանը մասնավորապես նշեց, որ հետ է վերադառնում Հայաստան՝ ապրելու նոր, ազատ ու անկախ Հայաստանում: Լիլիթն իր խոսքում նշեց, որ չնայած ինքը և իր երեխաները նույնպես միացել են այս պայքարին, սակայն նա նույնքան իրավունքներ չունի ինչքան այն մայրերը, որոնք Հայաստանում կանգնած էին իրենց զավակների կողքին և աջակցություն էին ցուցաբերում, իսկ իր երեխաներն էլ այդքան իրավունք չունեն ինչքան Հայաստանում ապրող երիտասարդները, որոնք օր ու գիշեր պայքարում էին: Նա ներողություն խնդրեց, որ այդ օրերին հայաստանաբնակների կողքին չի եղել: Վերջում կոչ արեց յուրաքանչյուր ուսուցչի, յուրաքանչյուր հայի սերմանել գալիք սերնդին, որ հայը մեկն է, հայրենիքը մեկն է, և որ սփյուռքի ներկայացուցիչները Հայաստանում հյուր չեն, դա նրանց երկիրն է: Կոչ արեց սերմանել բարություն, ինքնություն, ազգանվիրություն և հավերժ պարել, քանի որ հայ ազգը պարով է թուրքի դիմաց դուրս եկել ու մինչ այսօր պարում է ու կպարի[47]: Ելույթներից հետո սկսվեց տոնական երգ ու պարը[48]:

Փարիզում հայերը նույնպես կազմակերպեցին տոն՝ հայկական երգ ու պարով համեմված[49]: Բոլոր հավաքվածները պնդում էին, որ այս 30 տարիների ընթացքում այսպիսի համախմբում ու այսպիսի ուրախություն երբեք չէին տեսել Հայաստանում:

---

[47] Նոյեմի Փիրոյանի տեսանյութը Մարսելում հայերի կազմակերպած տոնախմբությունից, https://www.facebook.com/noyemi.piroyan.9/videos/2036478249938184/UzpfSTEwMDAwMDAwMDg4OTU0MDozMDYwNjExMjk0OTk0MTQ6MTA6MTUxNDc5MzYwMDoxNTQ2MzI5NTk5Oi01MTE3NzUyMzM1ODQyNzMyNTI1/?hc_ref=ARTYQd3RDQDWVSEaEe06oFRyY1vuZYhY9fNnvIoW3HGPAlvtxcA7SVmgqF_NAO3B1Sc

[48] Մարսելի հայկական դպրոցի տնօրեն Կարեն Խուրշուդյանի տեսանյութը տոնախմբությունից, https://www.facebook.com/karen.khurshudyan/videos/10155152364736152/

[49] Info Arménie-ի առցանց տեսանյութը մայիսի 8-ի տոնախմբությունից, https://www.facebook.com/infoarmenie/videos/2064311200513846/

Մայիսի 9-ին ՀՅԴ Ֆրանսիայի բյուրոն տարածեց Մուրադ Փափազյանի խոսքը ուղղված թե՛ հայությանը և թե՛ Ֆրանսիայի իշխանություններին: Հայտարարությունում Մուրադ Փափազյանը խոսում էր հայ երիտասարդների պայքարի, ոգու ու հաղթանակի մասին, միևնույն ժամանակ դիմում Ֆրանսիայի իշխանություններին Հայաստանի Հանրապետության ներկայիս իշխանությունների հետ հարաբերությունները նոր ու խորը վերադասավորման տանելու համար: Այստեղ հիմնական շեշտը դրված էր երկկողմ ապրանքաշրջանառության, էժան աշխատուժի, կրթական ոլորտում համագործակցության վրա: Շեշտում էր նաև Ֆրանսիայի ունեցած դերակատարությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում և հիշեցնում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ամպագոռգոռ հայտարարություններն այն մասին, թե իբր Երևանը ադրբեջանական քաղաք է: Վերջում եզրափակում էր ասելով, որ հոկտեմբերին Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնը գալու է Հայաստան Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին մասնակցելու և սա շատ լավ պահ կլինի տեսնելու արդյո՞ք Ֆրանսիան նախաձեռնությունը իր ձեռքը կվերցնի և նոր թափ կհաղորդի «հայկական գարնանը»[50]:

Մայիսի 23-ին, երբ Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը մեկնեց Ֆրանսիա՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) 10-րդ նախարարական գագաթնաժողովին և Բոլոնիայի գործընթացի 5-րդ քաղաքական համաժողովին մասնակցելու՝ հարցազրույց տվեց Info Arménie-ին: Հարցազրույցում Արայիկ

[50] FRA DACHNAKTSOUTIOUN FRANCE , «La France doit engager une réorientation profonde de ses relations tant économiques que diplomatiques avec l'Arménie», https://www.facebook.com/notes/fra-dachnaktsoutioun-france-%D5%B0%D5%B5%D5%A4-%D6%86%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%A1/-la-france-doit-engager-une-r%C3%A9orientation-profonde-de-ses-relations-tant-%C3%A9conomi/885140671691481/

Հարությունյանը նշեց, որ վերջին տարիներին հայերենը աղավաղվել է, և Հայաստանում բնակվող հայերը հիմնականում գրում են կա՛մ լատինատառ հայերենով, կա՛մ ռուսատառ հայերենով: Շեշտեց, որ սա անթույլատրելի է, քանի որ վնաս է հասցնում լեզվին: Խոսելով Ֆրանսիայում արևելահայերեն դասավանդելու հնարավորության մասին Արայիկ Հարությունյանը նշեց, որ դեռևս այս հարցը նոր կառավարությունում չի քննարկվել և գուցե ներկայացվելիք կառավարության ծրագրում այն տեղ գտնի:

Հունիսի 3-ին Փարիզում կայացավ ՀԱՅԱՍՍԱ դաշնության փարիզյան համաժողովը՝ «Կառուցենք վաղվա Հայաստանը և Սփյուռքը» խորագրով: Համաժողովի ընթացքում խորհրդի հիմնադիր անդամները խոսեցին Սփյուռքի մեջ առկա օրհասական խնդիրների մասին, կազմեցին նոր աշխատանքային խմբեր, սկսեցին նոր անդամների գրանցման գործընթացը և մշակեցին Հայաստան-Սփյուռք մերձեցման առաջիկա ծրագրերի իրականացման օրակարգը: ՀԱՅԱՍՍԱ դաշնության նախագահ Հայկ Շահինյանը ներկայացրեց դաշնության մեջ արդեն իսկ ընդգրկված կառույցներին՝ «Ազատ ձայն», «Միտք», «Հայ Հելք», «Արարատ-Սփյուռք», «Միասին» և այլ ֆրանս-հայկական միությունների, որոնք միտված են պաշտպանելու հայ ժողովրդի շահերը քաղաքական դաշտում, իրագործելու տարբեր կրթական ծրագրեր:

Չնայած դրական երանգներին ու գովեստի խոսքերին, համայնքի ավելի երիտասարդ անդամները մեկ անգամ ևս ընդգծեցին, որ պետք է պահանջատեր լինել նոր կառավարությունից, որպեսզի նույն ամենաթողության մթնոլորտը չլինի Հայաստանում, որպեսզի կառավարությունը սթափ դատի և հաշվետու լինի Հայաստանին ու Հայաստանի քաղաքացուն: Երիտասարդներից

մեկը նշեց. «Մենք պետք է կարողանանք պահել մեր իրավունքները ու լինել պահանջատեր: Վերջիվերջո՝ մենք ենք տերը մեր երկրի»[51]:

Հայաստան-Համայնքներ կապը պահելու և այն ավելի ամրացնելու համար ֆրանսահայերը ունեն միևնույն դիրքորոշումը: Մասնավորապես շեշտվում է, որ այսուհետ կապը ավելի ամուր պետք է պահել, քանի որ որոշակի անհանգստություն կա հայի գենը թե՛ արտերկրում և թե՛ հայրենիքում պահելու հարցում: Հայ ազգի ապագան այլ երկրում չեն պատկերացնում, շեշտելով, որ հայը պետք է մնա Հայաստանում և ծաղկեցնի պապերից ժառանգած հողը: Վերոնշյալ խնդիրը լուծելու միակ ուղին տեսնում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատուկ համակարգի ներդրման մեջ, որը կնպաստի հայրենադարձության կազմակերպմանն ու խրախուսմանը:

Ապագայի ծրագրերի մասին Պուատիեի հայկական համայնքի ղեկավարը շեշտեց հետևյալը. «Միշտ ասում էի չեմ ուզում գնալ հիասթափվել, ուզում եմ հեռվից լավը տարածել ու դրանով բավարարվել: Շատ մարդիկ հիմա ի սրտե ուզում են հետ գնալ՝ ժամանակի հարց է, բոլորն էլ կվերագտնեն իրենց նոր Հայաստանում՝ էլ չկա կաշառակեր, սեփական արժեքների մասին մտածող իշխանություն, հայը կարող է իր երկրում ապրել, այնքան հույսեր են ծնվել, որ վաղուց մահացած էին: Հուսամ մի օր կգնամ Հայաստան ու միայն լավը կտեսնեմ»[52]:

Ֆրանսիայում հայկական ընկերությունները համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազյանի պնդմամբ. «Հայաստան–Սփյուռք փոխհարաբերությունը ապագայում լինելու է փոխշահավետ: Այն պետք է լինի աշխատանքային, գործնական: Մենք պետք է աշխատենք: Պետք է արագացնենք և ավելի մեծ թափ

[51] Փարիզում՝ Կոմիտասի արձանի մոտ, տեղի ունեցած ակցիաներից մեկը՝ https://www.facebook.com/infoarmenie/videos/2060516174226682/

[52] Իմ հետ զրույցում նշեց Պուատիեի հայկական համայնքի ղեկավարը

տանք Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, որոնք ռազմավարական բնույթի են»[53]: Նրա նկատառմամբ. «Մինչև հիմա պարզապես խոստումներ են հնչել, բայց արդեն ժամանակն է գործելու: Հիմա է, որ սկսվում է ամենադժվար շրջանը: Հեղափոխությունը դեռ չավարտվեց: Հեղափոխությունը պետք է որ շարունակվի, և այդ խոստումները, որ ժողովրդական շարժմանը Փաշինյանը տվեց, պետք է հարգվեն»[54]:

«Թավշյա հեղափոխություն»-ը փաստորեն նաև հայկական համայնքների զարթոնքն էր: Առաջին իսկ օրվանից կոչ էր արվում հայկական համայնքներին ևս իրենց մասնակցությունը և աջակցությունը բերել հեղափոխությունը հաղթական ավարտին հասցնելու համար: Համակարգված և տեղեկատվական համակարգի ակտիվ ու ճիշտ օգտագործման շնորհիվ Ֆրանսիան նույնպես ընդգրկվեց հայկական ակտիվ համայնքների շարքում: Ֆրանսիայում բնակվող հայերի շրջանում տեսակետների բախումը ի հայտ եկավ արդեն առաջին իսկ շաբաթվա ընթացքում: Մի մասը պնդում էր, որ բռնություն թույլ տալ չի կարելի, մյուսը փորձում էր օգտագործել զանազան ցանցային միջոցներ, մեկ այլ խումբ անձամբ էր եկել Հայաստան՝ տեղում օգնություն ցուցաբերելու, իսկ ոմանք էլ փորձում էին ընդհանրապես չարձագանքել Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Հենց այստեղ է, որ Ֆրանսիայում առավել քան երբևէ նկատելի դարձավ հայկական հին և նոր համայնքների միջև դեռ վաղուց սկիզբ առած տարանջատումը: Հին համայնքի անդամները Ֆրանսիայում ծնված անձինք են, որոնք մշտապես հեռու գտնվելով մայր հայրենիքից՝ տեղեկացված չեն եղել Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններից: Լինելով

[53] Tert.am-ի հարցազրույցը Մուրադ Փափազյանի հետ, 12.05.2018, http://www.tert.am/am/news/2018/05/12/Murad-papazyan/2683625

[54] Tert.am-ի հարցազրույցը Մուրադ Փափազյանի հետ, 01.06.2018, http://www.tert.am/am/news/2018/06/01/Murad-papazyan/2701005

ցեղասպանություն վերապրածների ժառանգներ՝ հայրենիքին ծառայելը, նրա մի մասնիկը դառնալը տեսնում են Ցեղասպանության հարցի բարձրացմամբ: Նման պատկերացում ունենալու համար պարարտ հող է հանդիսացել Դաշնակցության Ֆրանսիայի բյուրոյի՝ Հայաստանի մասին առաջին տեղեկատվության աղբյուր լինելը, նրա կազմակերպած մի շարք միջոցառումներն ու ճամբարները, որոնք մեծամասամբ նվիրված են եղել Հայոց Ցեղասպանության ճանաչմանը և դրա շրջանակներում հայրենասիրական ոգու դաստիարակմանը: Տարիներ շարունակ ֆրանսահայությանը հորդորվել է զերծ մնալ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելուց և մեկնաբանելուց, իսկ երկրում գործող հայկական կազմակերպությունները, ինչպես նաև հայկական համայնքի վերնախավը անմիջական կապի մեջ են գտնվել Հայաստանի Հանրապետության նախկին իշխանությունների հետ, որոնք անվերապահորեն խրախուսել են նման քաղաքականությունը:

Առավել տեղյակ լինելով մերօրյա Հայաստանի ներքին խնդիրներից՝ Ֆրանսիայի հայկական նոր համայնքի անդամների շրջանում բողոքի ակցիաները առավել զգայուն արձագանք ունեցան: Նոր համայնքն, ի տարբերություն հին համայնքի, ավելի ամուր կապ ունի մայր հայրենիքի հետ, առավել տեղեկացված է և հայրենիքը լքել է սոցիալական, տնտեսական ու քաղաքական մի շարք պատճառներից ելնելով: Նրանք փորձեցին անել ավելին քան կարող էին, որպեսզի պարարտ հող նախապատրաստեն ապագայում վերոնշյալ պատճառները վերացնելու համար, ինչի արդյունքում գործողությունները դարձան առավել պլանավորված ու համակարգված, քան՝ երբևէ:

Իրադարձությունների զարգացման նման ընթացքը ցույց տվեց, որ ցանցային տեղեկատվական համակարգը շատ արագ գործեց: Եթե մինչ այս համայնքը որպես կառույց եղել է ցանց և գործել

բավականին կազմակերպված՝ ունենալով միայն ղեկավարող կենտրոն, ապա հիմա, երբ այդ կենտրոնը գոյություն չունի նշանակում է, որ ցանցը նույնպես քանդվելու է: Այսօր ստեղծվել է մի իրավիճակ, երբ ցանցն ունի միայն տեքստ և մուտքը դեպի ցանց կախված է տեքստի գրավչությունից: Նման ցանցի առկայության վառ օրինակ կարելի է համարել 2016 թվականին փարիզաբնակ հայ երիտասարդների կողմից ստեղծված HAYASSA-ն (Assemblée Démocratique des Arméniens de France), որն առավել ակտիվ գործունեություն սկսեց իրականացնել 2018 թվականի ապրիլի 28-ից սկսած[55]: Ասամբլեայի հիմնական նպատակն է իր մեջ միավորել հայկական այն կազմակերպություններն ու միությունները, որոնք CCAF-ի անդամ չեն և ճանաչում են Ասամբլեայի կանոնադրությունը: Հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետության շահերի առաջ մղումը, Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ մշտական կապի ստեղծումը, Հայաստանի իշխանություններին սփյուռքի առջև ծառացած խնդիրների և մտահոգությունների մասին տեղեկատվության տարածումը: Առաջնահերթությունների շարքում է համահայկական նախագծի իրականացումը և փոխգործակցումը ինչպես մյուս երկրների համայնքների, այնպես էլ Հայաստանի և Արցախի միությունների և կազմակերպությունների հետ, որոնք կընդունեն Ասամբլեայի կանոնադրությունը: Կան սահմանված մի շարք գաղափարական առաջնահերթություններ՝ ՀՀ-ն, Արցախը, Սփյուռքը չեն կարող լինել երեք առանձին միավորներ: Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ապագան առաջնային նշանակության են, ՀՀ կառավարության օրակարգում ԱՀ-ում վերաբնակեցումը կարևորագույն նշանակություն պետք է ունենա, ՀՀ-ն պետք է առաջատար դերակատարություն ունենա և

[55] ՀԱՅԱՍՍԱ-ի պաշտոնական կայքէջը, https://www.hayassafrance.com/

ներկայացնի ՀՀ քաղաքացու շահերը, ՀՀ-ն և Սփյուռքը չեն կարող պատանդ լինել որևէ կուսակցության, ռեժիմի կամ անհատի, ՀՀ-ն չպետք է լինի որևէ արտաքին ուժի վասալը և ՀՀ-ն չի կարող իր ազգային ինքնիշխանությունը փոխանցել այլ ուժի, Սփյուռքը պետք է օգտագործի իր ներուժը հայապահպանության գործին նպաստելու համար։ Նման պարագայում առաջ է գալիս ինքնության և պատկանելության պահպանման խնդիր, ինչպես նաև ինստիտուցիոնալ խողովակներ ստեղծելու անհրաժեշտություն, որպեսզի դրանք նպաստեն հորիզոնական հարաբերությունների զարգացմանը։

2018 SPRING EVENTS IN ARMENIA AND THE REACTION OF THE FRENCH-ARMENIAN COMMUNITY

Abstract

Tatevik Petrosyan
Center for Civilization and Cultural Studies,
Yerevan State University
tatev.petrosyan93@gmail.com

Key words: *"Velvet Revolution", Armenian Community, old and new Communities, French-Armenian Community, identity, CCAF, HAYASA*

This article discusses the reaction of French-Armenians towards Armenian "Velvet Revolution" and describes the sequence of actions during those days. The bases for the research can be considered the social websites such as: Facebook, Instagram, YouTube, various news websites as well as a series of statements made by officials, interviews with the community members.

One of the main conclusions of the research is that the French-Armenian community can be considered one of the most active Armenian communities whose voice can be heard even in French political circles. It became obvious that the community members have their own policy and

ideas how to strengthen the relations between Diaspora and Armenia. On this way, the research enables us to find out that there are great ideological differences between the Armenian old and new communities in France.

ВЕСЕННИЕ СОБЫТИЯ 2018 ГОДА В АРМЕНИИ И РЕАКЦИЯ ФРАНКО-АРМЯНСКОЙ ОБЩИНЫ

Аннотация

Татевик Петросян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
tatev.petrosyan93@gmail.com

Ключевые слова: *"Бархатная революция", армянская община, старая и новая община, франко-армянская община, идентичность, CCAF, ХАЙАСА*

В статье обсуждается реакция французских армян на "Бархатную революцию" в Армении, а также описывается ход событий. Основой для этого исследования являются социальные сети (Facebook, Instagram, YouTube и другие информационные сайты), отдельные интервью с членами сообщества, заявления официальных лиц.

Одним из основных выводов исследования является то, что французско-армянская община может считаться одной из самых активных армянских общин, чей голос имеет вес во французских политических кругах. Исследование дало возможность выявить, что существует большая идеологическая разница между старой и новой армянской общинами во Франции.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 2018թ. ԳԱՐՆԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Տաթևիկ Մկրտչյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
tmkrtchyan@ysu.am

Բանալի բառեր. *թավշյա հեղափոխություն, ինքնություն, ԱՄՆ, հայ համայնք, ցանցային պայքար, Գլենդել, Լոս Անջելես, ՀԲԸՄ, Հայ դատի հանձնախումբ*

Ամերիկահայ համայնքը թերևս ամենաբազմազան և բազմաշերտ համայնքներից է և հայկական սփյուռքի կարևորագույն տարրերից: ԱՄՆ-ի համայնքի ձևավորման պատմությունը[1] և վերջին 10 տարիներին տեղի ունեցած միգրացիոն գործընթացները հաշվի առնելով, որոնց թվային տվյալները դեռ ամբողջությամբ հաշվարկելի չեն, պարզ է դարձնում համայնքի բազմազանության և բազմատարրության հանգամանքը: Թերևս բնակվող հայերի մեծաթվությամբ ԱՄՆ-ը երրորդն է՝ Հայաստանի

[1] Հայերն ԱՄՆ-ում հայտնվել են դեռևս 17-րդ դարի առաջին կեսին, սակայն համայնքը ձևավորվել է 19-րդ դ. 70-ական թթ. վերջին: Հայերը զանգվածաբար ԱՄՆ են գաղթել 1890-ական թթ., Օսմանյան կայսրությունից, սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918թթ.) ԱՄՆ-ում բնակվում էր 60 հազ. հայ, 1915թ. Մեծ եղեռնից հետո (1920- 1924թթ.) ԱՄՆ է գաղթել շուրջ 21 հազ. հայ, ներգաղթի նոր ալիք է եղել Երկրորդ համաշխարհային պատերազմից (1939-1945թթ.) հետո, ապա՝ 1950-ական թթ., որը մեծ ընդմիջումներով շարունակվում է ցայսօր: 1994թ. ԱՄՆ հայերի թիվը հասել է 1 միլիոն մարդու, 2003թ.՝ 1.200.000-ի, 2006թ.՝ 1.270.000-ի: Այս տվյալները վերցված են Մալխասյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, 2007, էջ 94:

Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից հետո: Այն զգալիորեն ազդվում է և միևնույն ժամանակ իր ազդեցությունն է գործում Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում: Հայաստանում 2018թ. գարնանը տեղի ունեցած հայտնի դեպքերը, որոնք դեռևս հայտնի են, որպես Թավշյա հեղափոխություն, մեծ արձագանք են գտել աշխարհասփյուռ հայության շրջանում: Հեղափոխությունից անցել են ամիսներ, բայց գնահատականները թերևս և՛ հասարակության, և՛ թե մասնագետների շրջանում հետևյալն է, որ եթե չասվի էլ, որ տեղի է ունեցել հեղափոխություն, ապա Հայաստանի Հանրապետությունում 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցածը զարթոնք կամ առնվազն այս կամ այն չափով խանդավառություն է առաջացրել համայն հայության համայնքներում, որից անմասն չէր կարող մնալ ԱՄՆ-ի հայկական հսկայական համայնքը: Իհարկե խանդավառության աստիճանը անմիջականորեն կախված է տվյալ համայնքի կազմից և առանձնահատկությունից. հասկանալի է, որ Լոս Անջելեսում խանդավառությունը շատ ավելին է եղել, քան Վաշինգթոնում կամ Նյու Յորքում: Եթե միայն հաշվի առնենք այն հանգամանքը, որ վերջին 10-20 տարիների մեկնածներն այլ հետաքրքրությամբ և մասնակցությամբ են արձագանքել Հայաստանում տեղի ունեցող հեղափոխությանը, իսկ այսպես կոչված ավանդական, պահպանողական կազմով գերակշռող համայնքների ներկայացուցիչները կամ այս կամ այն ինստիտուցիոնալ կառույցները որոշակի զգուշավորություն և դանդաղկոտություն են ցուցաբերել իրենց արձագանքման, մեկնաբանության և ներգրավվածության հարցում:

Այս բազմազանության համատեքստում էլ պետք է հասկանալ և վերլուծել ԱՄՆ-ում հայկական «համայնքների» արձագանքը Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Այստեղ մենք

համայնքներն օգտագործում ենք հոգնակի և չակերտներում, որպեսզի ցույց տանք նահանգից նահանգ միմյանցից տարբեր լինելը՝ պայմանավորված կազմով, թվով, առաջացման և հետագայում համալրման պայմաններով և այլն: Ցանկանում ենք նշել, որ հիմնականում ընդգրկել ենք այն համայնքների ուսումնասիրությունը, որը հնարավոր է եղել հետազոտել օնլայն տիրույթում, առանց դաշտային աշխատանքների հնարավորության. հիմնականում Լոս Անջելես (Գլենդել), Ֆլորիդա (Մայամի), Նյու Յորք:

Կարևոր եմ համարում այս բազմազանության մեջ քննարկել որպես օրինակ Հայ հեղափոխական դաշնակցության վերաբերմունքն այդ օրերին Հայաստանում տիրող իրավիճակին: Օրինակ ակնկալել, որ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը ԱՄՆ-ում կարող էր ազատորեն և արագ արձագանքել Հայաստանում տիրող իրավիճակին՝ հայտնելով հստակ դիրքորոշում գործընթացների հատկապես սկզբնական ժամանակահատվածում, պարզապես սխալ կլիներ: Այստեղ կարևոր է նշել մի քանի հանգամանք, որոնք էլ մեծապես ազդել և ազդում են այս կառույցի դիրքորոշման վրա:

Նախ, հայաստանյան Հայ հեղափոխական դաշնակցությունը եղել է նախկին կառավարության կոալիցիայի մաս: Երկրորդ, որքան էլ հասկանում էին, որ տվյալ գործընթացը կարևոր է ներհայաստանյան վիճակի փոփոխության համար, դաշնակցական շրջանակներում երկու մոտեցումն էլ կար. և՛ կողմ, և՛ դեմ: Դեմ լինելու հիմնական մտավախությունը, սակայն ոչ այդքան բուն գործընթացների սխալական կամ ճիշտ լինելուն էր վերաբերում, որքան պետականությանը չվնասելու և այն չվտանգելու հարցի շուրջ եղած մտավախությունների համատեքստում էր ներկայացվում: Բացի վերոնշյալից իրականում ավանդական համայնքներում նախկին իշխանությունների դեմ բողոք գրեթե չի նկատվել. նրանք միշտ էլ փորձել են դրական լույսի ներքո ներկայացնել Հայատանի

Հանրապետությունը և այն ներկայացնել միայն առաջընթացի և զարգացման համատեքստում:

Այս հեղափոխության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ ՀՀ քաղաքացին լինելով կարևորագույն դերակատարը, միևնույն ժամանակ հայ ժողովրդի հավաքականության վրա ապավինելով, ցանցային գործիքներից առավելագույն կերպով օգտվելով, ցույց տվեց քաղաքացու հնարավորությունների լայն շրջանակը, ինչը մարդուն անհրաժեշտ է ժողովրդավարական արժեքների կիրարկման հարցում:

Մեկ այլ առանձնահատկություն էր նաև իրադարձությունների հսկայական տեղեկատվական հոսքը և հսկայածավալ համաժամանակյա լայվ կոչված հեռարձակումները և՛ ներհայաստանյան, և՛ թե աշխարհով մեկ հայկական համայնքներում անցկացվող բողոքի գործողությունների, ինչն էլ իր հերթին հանգեցրեց նաև համաշխարհային ԶԼՄ-ների լայն անդրադարձի:

Այս ամենին ավելանում է Հայաստանում գտնվողների և Հայաստանից դուրս գտնվողների անձնական շփումների և տեղեկատվության արագ փոխանակման և շրջանառման հնարավորությունները: Այդ օրերին գրեթե չի եղել մեկը, որը չստանար իր արտասահմանյան բարեկամներից զանգ կամ հաղորդագրություն երկրում իրավիճակը անձնական հարթության մեջ ներկայացնելու և պարզաբանելու խնդրանքով, ինչպես նաև ոգևորող և պայքարը չդադարեցնելու հորդորներով: Այս ամենն էլ իր հերթին հանգեցրեց շղթայական մի երևույթի. տարբեր տեղերից մարդիկ խմբերով այցելում էին Հայաստան՝ հեղափոխության անմիջական մասնակից դառնալու և պայքարին միանալու ցանկությամբ:

Այս հեղափոխությունը նաև առնաձնահատուկ էր այնքանով, որ այն ներկայացավ աշխարհին, որպես ներհայաստանյան քաղաքացիական անհնազանդության մի դրսևորում, որն իր բնույթով

բացառապես խաղաղ էր, սիրո և հանդուրժողականության կարևորագույն ենթատեքստով, սակայն, որի իրագործման համար ներհայաստանյան մոբիլիզացիան, ցանցայնացումը քիչ էր. անհրաժեշտ էր համահայկական ընդվզում և մոբիլիզացիա աշխարհում գտնվող հայ համայնքների շրջանում ևս, ինչն էլ տեղի ունեցավ տեղում կոչերի և տեղի համայնքների ջանքերի շնորհիվ՝ ներհայաստանյան իրադարձություններին ի արձագանք: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև մեկ այլ կարևոր մասնակցության ձևաչափի մասին, առանց որի դժվար կլիներ պատկերացնել թավշյա, ոչ բռնի, ժողովրդավարական հեղափոխության իրականացումը և այն որպես ներհայաստանյան և սեփական ցանցային հնարավորությունների օգտագործման արդյունք հռչակելը: Աշխարհասփյուռ հայությունը բացի տեղերում բողոքի գործողություններ կազմակերպելուց և օնլայն հարթակներով ակտիվ տարածումից, անմիջական ֆինանսական աջակցություն է ցուցաբերել: ԱՄՆ-ից մասնակցության թվերը հաշվարկվել է՝ ըստ ոչ բռնի, թավշյա, ժողովրդավարական հեղափոխությանն արված նվիրատվությունների նախնական-ամբողջական հաշվետվությունից, որը կարելի է տեսնել Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան էջում[2]: ԱՄՆ-ից մոտ 310 քաղաքացի ուղարկել է 33899200 դրամ և 5968 դոլար: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ ցանցային պայքարի որդեգրումը թավշյա հեղափոխության հաղթանակի գրավականներից մեկն էր:

Այս ամենը հաշվի առնելով՝ ուսումնասիրվել է իրադարձությունների ժամանակահատվածում և դրան հաջորդած մի քանի ամիսներին ամերիկահայ համայնքի թե՛ ավանդական ինստիտուցիոնալ կառույցների արձագանքը, թե՛ տեղում

[2] Ոչ բռնի, թավշյա, ժողովրդավարական հեղափոխությանն արված նվիրատվությունների նախնական-ամբողջական հաշվետվությունը տես՝ https://www.facebook.com/nikol.pashinyan/photos/a.2054610568192661/2054610651525986/?type=3&theater / (մուտք՝ 15.06.2018):

կազմակերպված բողոքի ակցիաները և այդ ակցիաների ժամանակ հնչած տեքստերի բովանդակությունը, վիրտուալ ուղերձների, սոցիալական ցանցերում շարժմանը աջակցող գրառումներ և նմանատիպ գործունեություն ծավալելը, համայնքի ներկայացուցիչների կողմից դեպի Հայաստան արված այցերը, ֆինանսական օգնության չափերը և այդ ամենի ազդեցությունը, որոնք էլ հետհեղափոխության շրջանում կարևոր ուղենիշ են հանդիսանում հետհեղափոխական Հայաստանի և համայնքների համատեղ գործունեության համար:

Ի վերջո այս հեղափոխությունը հանգեցրեց Հայաստան-Սփյուռք (հայկական համայնքներ), համայնք-համայնք կապերի և հարաբերությունների ակտիվացմանն ուղղված նոր մոտեցումների և ծրագրերի վերաիմաստավորման ու վերաձևակերպումների անհրաժեշտությանը, ինչն էլ հնարավորություն է ստեղծում ցանկության դեպքում ավելի ակտիվացնել Հայաստան-համայնքներ կապերը և առավել գրագետ և լիարժեք օգտագործել փոխադարձ ներուժը:

Աշխարհասփյուռ հայ համայնքների առկայությունը մեր պետական գործունեությանը հաղորդում է մի կարևոր առանձնահատկություն. հաշվի առնել աշխարհասփյուռ հայության համայնքային հնարավորությունները, ներուժը և այդ ամենը ծառայեցնել Հայաստանի Հանրապետության և միևնույն ժամանակ համայն հայության շահերին:

Ամերիկահայ համայնքներում բողոքի գործողությունների ժամանակագրության փորձ

Առաջին արձագանքները, որ կարելի է տեսնել ամերիկահայ համայնքի ներկայացուցիչների կողմից ապրիլի 11-ին էր, երբ տարածվեց կոչ իրազեկում ապրիլի 13-ին ժամը 18:30 Գլենդելի

քաղաքապետարանի դիմաց կայանալիք բողոքի ցույցի վերաբերյալ[3]: Տեսաուղերձը պարունակում էր կադրեր Հայաստանում տարբեր տարիներին տեղի ունեցած բողոքի գործողություններից՝ Շանթ Հարությունյանի, Սասնա Ծռերի, այլ իրադարձությունների, որոնց ժամանակ ոստիկանությունը բռնի ուժ է կիրառում: Իսկ տեքստը հետևյալն էր. Սիրելի՛ հայրենակիցներ, ապրիլի 9-ից Սերժ Սարգսյանի ապօրինի և հանցավոր իշխանությունն ավարտվել է: Համայն հայությունն ունի ընդամենը 7 օր կանխելու հանցավոր ռեժիմի վերարտադրությունը: Կոչ ենք անում միավորվել և անել մեր քայլը՝ ի աջակցություն Հայաստանում ապրող մեր քույրերի և եղբայրների: Ուրբաթ՝ ապրիլի 13-ին, երեկոյան ժամը 6 անց կես Գլենդելի քաղաքապետարանի առջև կկայանա հանրահավաք: Բոլորիդ ներկայությունը պարտադիր է»[4]:

Փաստորեն կարելի է ասել, որ այս ակցիան նախաձեռնվել էր խորհրդանշական մի ամսաթվով և ժամով, որը դեռ մարտի 31-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր Գյումրիից, որ ապրիլի 13-ին, ժամը 18:30 մենք հույս ունենք, որ Հայաստանի Հանրապետության հարյուր հազարավոր քաղաքացիներ կկատարեն իրենց քայլը դեպի Ազատության հրապարակ, դեպի ազատ Հայաստան[5]:

Ապրիլի 13-ին Գլենդելի քաղաքապետարանի դիմաց բողոքի ակցիայում ելույթ ունեցողները նշում էին, որ գիշեր ցերեկ հետևում

---

[3] Կոչ-իրազեկումը տեղադրվել է ապրիլի 11-ին յութուբում Լոս-Անջելեում բնակվող և Ամգա (Armenian Media Group of America/AMGA) հեռուստաալիքի (այն գործում է 1999թ., մանրամասն տեղեկատվության համար տես՝ http://www.amga.tv/index.php?option=com_k2&view=item&layout=item&id=16&Itemid=281) լրագրող Արթուր Սահակյանի կողմից, կոչ-իրազեկման տեսահոլովակը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=RgLkR5BQx2o (մուտք՝ 15.06.2018):

4 Տեսահոլովակում հնչում էր Արաքսյա Վարդերեսյանի Սիրտս ինչպես երգը: Տեսահոլովակի դիտումները մոտ 12000 են (2018թ հոկտեմբերին):

[5] Գյումրիից Նիկոլ Փաշինյանի քայլի ազդարարումը տե՛ս՝ https://www.a1plus.am/1604593.html (մուտք՝ 10.04.2018):

են Հայաստանում տիրող իրավիճակին[6]: Նրանք շեշտում էին, որ առայժմ խաղաղ բնույթ է կրում բողոքի ակցիաները, սակայն քանի որ արդեն ճանապարհներ են փակվում և քաղաքացիական անհնազանդություն է սկսվում Հայաստանում, իսկ լուրեր են պտտվում, որ ոստիկանական մեծ ուժեր են կուտակվել Երևանում, Ամերիկայում բնակվող հայերը անհանգստացած են այս ամենով: Հանրահավաքի հիմնական նպատակը հռչակագիր հղելն էր Հայաստանի իրենց քույրերին և եղբայրներին ի սատարումն նրանց պայքարի: Վարողը նշում է, որ առաջին կոչը Հայաստանի ոստիկանությանը պետք է ուղղենք, որպեսզի չփորձվեն հանկարծ որևէ քաղաքացու վրա ձեռք բարձրացնեն, ուժ կիրառեն[7]:

Հետաքրքրական է, որ բողոքը հակառուսական տրամադրության տպավորություն է թողնում առաջին հայացքից, երբ տեսնում ես Մերժիր Սերժին. Ո՛չ հանցավոր համակարգին պաստառի կողքին մի շարք հակառուսական պաստառներ փակցված Գլենդելի քաղաքապետարանի շենքին՝ Putin hands off from Armenia (Պուտին ձեռքերդ հեռու Հայաստանից), Մեր քայլը, Ոչ ռուսական իմպերիալիզմին, ինչպես նաև վիրավորական որոշ արտահայտություններ: Սակայն արդեն խոսացողների մոտ հստակեցվում է, թե ինչ ենթատեքստ ունի այդ հակառուսականությունը: Խոսելով երկրի ողբերգական և ծանր իրադրության մասին, ելույթ ունեցողներից Սահակ Միքայելյանն ասում էր, որ այս վիճակի միակ մեղավորը նախկին իշխանություններն են եղել և հատկապես Սերժ Սարգսյանը, որին համեմատում էին Նարիմանովի հետ, իսկ հակառուսականությունը

6 Հանրահավաք Գլենդելի քաղաքապետարանի դիմաց, մերժում ենք Սերժին, բողոքի ակցիայի 47 րոպե տևողությամբ տեսաձայնագրությունը տես՝ https://www.youtube.com/watch?v=CUEtecIhKvg (մուտք՝ 15.04.2018):

7 Հանրահավաք Գլենդելի քաղաքապետարանի դիմաց, 2-4 րոպեները, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=CUEtecIhKvg (մուտք՝ 15.04.2018):

արտահայտվում էր նրանով, որ «Սերժը մեր պետությունը դարձրել է խալիֆաթ, ինքն էլ ֆեոդալն է, ում մեջքին կա ռուս ցարը, որը իրա հովանավորն է: Վե՛րջ, ինքը չի ճանաչում մեր երկրի քաղաքացիներին որպես քաղաքացի, նրանք իրեն պետք են, որպեսզի իր խանութներից օգտվեն, իր եղբոր հարկերը վճարեն, նրանք միայն ու միայն վճարելու համար են…»: Ընդհանուր առմամբ հակառուսականությունը դիտարկվում էր հակապուտինության և ռուսական իմպերիալիզմի դեմ: Պարբերաբար շեշտվում էր, որ անհրաժեշտ է ազատվել այս հանցավոր բանդայից՝ Հանրապետական կուսակցությունից, որի առաջնորդը՝ պապան, այդպես են նրան կոչում՝ Սերժիկ Նարիմանովն է[8]:

Ելույթ ունեցողներից մեկն էլ խոսում էր միասնական լինելու անհրաժեշտության մասին. «Մեր համայնքի հիմնական նպատակը հետևյալն է: Բոլոր քաղաքական կուսակցական ուժերի միասնականություն մեր նվիրյալ մտավորականների, քաղաքագետների, մշակույթի և արվեստի գործիչների միասնություն, ժողովրդի հետ միասին ասեն ո՛չ այդ բռնապետական ռեժիմին, բոլորին կոչ եմ անում, զարթոնքի կոչ եմ անում մշակութային բոլոր կազմակերպություններին, որպեսզի մի կողմ դնեն իրենց հակասությունները և միասնական հանդես գան: Միավորվենք, ոտքի ելնենք և պայքարենք մեր հայրենիքը բուժելու այդ քաղցկեղից»[9]:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ համայնքի ներկայացուցիչներն այս սկզբնական շրջանում մի տեսակ դիստանցավորում էին իրենց հեղափոխության առաջնորդ՝ Նիկոլ Փաշինյանից, ինչը սակայն ժամանակի ընթացքում փոխվում է: Նրանք մասնավորապես նշում էին. «Մենք անում ենք մեր քայլը, մենք չենք անում անձերի համար, այլ անում ենք համասփյուռ հայության

[8] Հանրահավաք Գլենդելի քաղաքապետարանի դիմաց, մերժում ենք Սերժին, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=CUEtecIhKvg, (մուտք՝ 15.04.2018):
[9] Նույն տեղում՝ 12-13:50 րոպեները:

համար: Ռուսամտությունը և ռուսավախությունը հանե՛ք, մեզ կպատժի, Ադրբեջանին և Թուրքիային բաց կթողնի մեր վրա, իսկ դրանք մեզ կուտեն… ո՛չ, մենք մեր հույսը պետք է դնենք մեր վրա: Ունենք հզոր բանակ, հզոր ժողովուրդ»: Ահա այսպիսի դիսկուրս էր տարվում այս հանրահավաքում:

Երգահան Արմեն Մովսիսյանն էլ իր խոսքի մեջ Սերժ Սարգսյանին ստախոս մարդ է անվանում, քաղաքական իմպոտենտ, ինտրիգների վարպետ, հյուսիս-հարավի փողերը ուղղակի կերան, ասում էր թե դա լինելու ա արյունատար անոթ Հայաստանի համար, բայց պարզապես ստում էր… Նա էլ Սերժին համեմատեց Բերիայի հետ[10]:

Ապրիլի 13-ի Գլենդելի հանրահավաքի վերջում արված հայտարարություն-հռչակագրի տեքստը սղագրվել է ելույթից[11]:

«Կայացավ հանրահավաք ի աջակցություն Հայաստանի ընդվզող ժողովրդի: Մենք՝ Լոս Անջելեսի հայ համայնքի ներկայացուցիչներս, հայտարարում ենք, որ զորավիգ ենք գաղութատիրական համակարգի դեմ ապստամբած հայրենաբնակ հայ ժողովրդին: Կոչով դիմում ենք.

ՀՀ ուժային կառույցներին. Զերծ մնացեք իրենց իրավունքների և հայրենիքի ազատագրման համար ոտքի կանգնած մեր քույրերի և եղբայրների դեմ որևէ ուժի և բռնի գործողությունների կիրառումից:

ՀՀ ընդդիմադիր քաղաքական ուժերին և գործիչներին. Մի կողմ դրեք տարաձայնությունները ու համախմբվեք հանուն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի և հայ ժողովրդի:

---

[10]Հանրահավաք Գլենդելի քաղաքապետարանի դիմաց, մերժում ենք Սերժին, Արմեն Մովսիսյանի ելույթը է 17-26 րոպեները, https://www.youtube.com/watch?v=CUEtecIhKvg, 39-40:35 րոպեները (մուտք՝ 15.04.2018):

[11]Նույն տեղում՝ 39-40:35 րոպեները:

Աշխարհասփյուռ հայությանը. Սիրելի՛ հայրենակիցներ, միացեք ու սատարեք հայրենաբնակ հայ ժողովրդի ողջ ազատագրական պայքարին և եկեք միասնաբար բարձրացնենք այդ պայքարը համազգային, համահայկական մակարդակի:

Վերջապես աշխարհի առաջադեմ և ազատասեր ժողովուրդներին կոչ ենք անում սատարել հայ ժողովրդի ազատագրական պայքարը և նպաստել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական, ազատական, անկախ և ժողովրդավարական պետականության կերտմանը:

Կեցցե՛ այն Հայաստանը, որ վաղն է գալու, կեցցե՛ ազատ անկախ և միացյալ Հայաստանը»:

Հետաքրքրական է, որ Ամերիկայի տարբեր քաղաքներում հավաքվածներին կոչ էին անում անպայման զանգել, խոսել Հայաստանում բնակվող իրենց բարեկամների, ծնողների, ընկերների, բոլորի հետ, որպեսզի նրանք դուրս գան փողոց, քանի որ Ամերիկայում գտնվելով՝ իրենց հույսը նրանք են: «Ժամանակն է, որ զարթնի արժանապատիվ քաղաքացին», հավաքն ավարտվում է այս խոսքերով:

Ամերիկահայերի և հատկապես Գլենդելի հայության պարագայում, մի փոքր ավելի լավ իրազեկում ապահովելով, արդեն ամսի 16-ին մարդկանց թիվը զգալիորեն աճել էր:

Ամերիկայում բնակվող հայտնի ակտիվ վլոգեր Թագուհի Վարդանյանը, որն ունի իր պաշտոնական վիդեո էջը և պարբերաբար հրապարակում է վլոգ, ապրիլի 16-ին փոքրիկ մեկ ու կես րոպեանոց մի տեսաուղերձ է հրապարակում «Առայժմ վլոգ չեմ տեղադրելու» վերնագրով [12], որն ուներ մոտ 6000 դիտում: Այս տեսաուղերձում նա ասում է, որ ժամանակավոր վլոգ չի

[12]Թագուհի Վարդանյանի No vlogs for now, «Առայժմ վլոգ չեմ տեղադրելու» տեսաուղերձը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=00bZubfZkx0, (մուտք՝ 18.04.2018):

տեղադրելու, թեև կան երկու շատ ուրախ թեմաներով վլոգեր, բայց որոշել է կարճ տեսաուղերձով տեղյակ պահել Հայաստանում տիրող իրավիճակի մասին և մինչև Հայաստանում իրավիճակը չկայունանա և պարզվի, չի թողարկվի: Նա մասնավորապես նշում է, որ ինքը քաղաքականությունից չի խոսում գրեթե երբեք, նախ ֆիզիկապես հեռու է և շատ բաներ չգիտի, համարում է, որ պետք է քիչ խոսել, բայց «Ամեն դեպքում կա մի համընդհանուր համամարդկային ճշմարտություն. ազատության և արդարության համար պայքարը մարդկության ամենաազնիվ և վեհ մղումն է, որն արժանի է հարգանքի»: Վերջում հույս է հայտնում, որ ՀՀ իշխանությունները կկարողանան հարգանքով վերաբերվել և որոշումներ կկայացնեն խղճի և գիտակցության հիման վրա[13]:

Ինչո՞ւ հենց ամսի 16-17-ն են հանդիսանում այն մեկնարկային ամսաթվերը, որից հետո ամերիկահայ համայնքը սկսում է ակտիվություն ցուցաբերել: Արդեն ամսի 17-ին Սերժ Սարգսյանին Ազգային ժողովում վարչապետ ընտրեցին 77 կողմ, 17 դեմ ձայների հարաբերակցությամբ[14]: Իսկ դրան նախորդել էր ապրիլի 16-ին Բաղրամյան փողոցում ոստիկանների կողմից ձայնային նռնակների օգտագործմամբ բողոքի ակցիան ցրելու փորձը, որի հետևանքով մոտ 46 տուժող է եղել, որից վեցը ոստիկանության աշխատակիցներ, և վնասվել էր հենց ինքը շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանը[15]: Այս ամենը զուգորդվում էր արդեն Գյումրիում և Վանաձորում ընթացող

[13] Թագուհի Վարդանյանի No vlogs for now, «Առայժմ վլոգ չեմ տեղադրելու» տեսաուղերձի 1-1:38 րոպեները, https://www.youtube.com/watch?v=00bZubfZkx0, (մուտք՝ 18.04.2018):

[14] Ընտրության հետ կապված նյութը կարելի է տեսնել այստեղ՝ https://www.azatutyun.am/a/29173107.html, (մուտք՝ 18.04.2018):

[15] Այս մասին տե՛ս՝ Առողջապահության նախարարություն. Երևանի բուժհաստատություններ է դիմել 46 քաղաքացի, https://www.azatutyun.am/a/29170888.html, «Կոչ եմ անում Ոստիկանությանը ձայնային նռնակներ չօգտագործել». Փաշինյան, https://www.azatutyun.am/a/29170945.html, (մուտք՝ 18.04.2018):

բողոքի ակցիաներով[16]: Հասկանալի է, որ բռնության կիրառումը և վարչապետի անխափան ընտրությունը մի տեսակ կարևոր խթան են դառնում իրադարձությունների աշխարհագրության ընդլայնման համար[17]:

Ապրիլի 17-ին ամերիկահայ հայտնի դերասանուհի Արսինե Խանջյանը բաց նամակ է հղում Սերժ Սարգսյանին[18]: Նույն օրը Հանրապետության հրապարակում կայացած հանրահավաքում Նիկոլ Փաշինյանն անդրադառնում է այդ նամակին մասնավորապես ասելով՝ «Սիրելի՛ ժողովուրդ, սփյուռքահայ դերասան Արսինե Խանջյանը բաց նամակ է հղել Սերժ Սարգսյանին և այդ նամակում մի այսպիսի խոստովանություն կա. պարզվում է մի քանի տարի առաջ Սերժը նրա հետ զրույցում ասել է, թե հայ ժողովուրդը ոչխարի հոտի պես է: Արսինե Խանջյանն իր նամակում փորձում է բացատրություն գտնել և ասում է՝ գուցե, դուք քաղաքական ճնշման տակ էիք և դրա համար այդպես ասացիք:

Սիրելի՛ Արսինե, ուզում եմ ասել, որ դա չէ պատճառը, որ նման արտահատություն է արել: Դրա պատճառն այն է, որ նա ողջ իր կյանքում շփվում է ՀՀԿ խմբակցության պատգամավորների հետ, և, ահա, այդ հոտի կողմից նա հռչակվել է ՀՀ վարչապետ: …Շատերը կասեն՝ այսօր ոչինչ չփոխվեց և Սերժ Սարգսյանն էլի առաջին դեմքն է: Ես պատասխանատու հայտարարում եմ, որ ամեն ինչ փոխվել է, քանի որ Սերժ Սարգսյանը չունի հպատակ ժողովուրդ և

---

[16] Գյումրիում բողոքի ակցիաների մասին տե՛ս՝ https://www.azatutyun.am/a/29170936.html, (մուտք՝ 25.04.2018): Վանաձորում՝տե՛ս՝ https://www.azatutyun.am/a/29170879.html, (մուտք՝ 25.04.2018):

[17] Բաղրամյան փողոցի բախումը տե՛ս՝ https://www.azatutyun.am/a/29170945.html, https://www.youtube.com/watch?v=RAWnGmB5ed4, (մուտք՝ 18.04.2018):

[18] Ամբողջական բաց նամակը տե՛ս Արսինե Խանջյանի ֆեյսբուքյան էջում՝ https://www.facebook.com/ArsineeKhanjian/posts/2509192605973530?__tn__=K-R, (մուտք՝ 18.04.2018):

կառավարելու ժողովուրդ, և ՀՀ քաղաքացին չունի Սերժ Սարգսյան անունով վարչապետ»[19]:

Նույն օրը, մի փոքր ավելի ուշ, երբ Նիկոլ Փաշինյանն անդրադառնում էր հրապարակում հավաքվածների բազմաթվությանն, ասելով, որ այն այսքան բազմամարդ վերջին անգամ եղել է Սիսթեմ օֆ Դաուն խմբի համերգի ժամանակ, իր խոսքն ուղղում է Սերժ Թանկյանին. «Այս ամբիոնից ուզում եմ դիմել Սերժ Թանկյանին... ահա այդ նույն ժողովուրդը կանգնած է այս հրապարակում, դու պարտավոր ես գալ Երևան և կանգնել այս ժողովրդի կողքին։

Սիրելի՛ Արսինե, նամակ գրելու կարիք չկա, որովհետև բաժանորդը անհասանելի է, վեր կաց, արի՛ Երևան»[20]:

Արսինե Խանջյանը ապրիլի 19-ին, Երևանի կենտրոնում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ Բեռլինից ուղիղ հեռախոսակապով իր սատարման խոսքն ուղղեց ներկաներին[21]: Իսկ ապրիլի 20-ին Արսինե Խանջյանը, որը գտնվում էր Բեռլինում, որտեղ ապրիլի 21-ին Գորկի թատրոնում տեղի էր ունենալու իր «Հոգիների աճուրդ» ներկայացումը, որին պետք է հաջորդեր լիբանանահայ երգչուհի Այլին Խաչադուրյանի համերգը, այս տեղեկատվությանը զուգահեռ իր ֆեյսբուքյան էջում տեսաուղերձ է հրապարակում և կոչ է անում բոլոր հայերին, ովքեր Բեռլինում են, միանալ նույն օրը ժամը 12:30 Բեռլինում Հայաստանի դեսպանատան առջև կայանալիք բողոքի միջոցառմանը, և ասում է, որ ամենքս չենք կարող

[19] Այս հատվածը կարելի է տեսնել՝ https://epress.am/2018/04/17/%D4%B1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A5%D5%AE%D6%8A%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A8.html, (մուտք՝ 17.04.2018):

[20] Նույն տեղում՝ 8:10-9:10 րոպեները:

[21] Արսինե Խանջյանի ֆեյսբուքյան էջից, տեքստը տե՛ս՝ https://www.facebook.com/ArsineeKhanjian/posts/2510941869131937?__tn__=K-R, տեսաձայնագրությունը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=sEMJYBU9YHk&fbclid=IwAR1newMjns7ykilt_zKvq_HXOgXZgWExRBP2RviAd1eqta-8cSFlgzPTuoY, (մուտք՝ 19.04.2018):

Հայաստանում լինել, բայց այլ վայրերում մեր դեսպանատների մոտ կարող ենք մեր բողոքի ձայնը բարձրացնել. Հայաստանը պետք ունի մեզի, մենք էլ պետք ունինք Հայաստանի[22]:

Ապրիլի 22-ին նա 15 րոպեանոց լայվ/ուղիղ հեռարձակում է միացնում Բեռլինում սովորող հայաստանցի ուսանողների հետ[23], ապրիլի 23-ին տարածում է Հայաստանի քաղաքացիների արած կոչը Սփյուռքին[24]: Արսինե Խանջյանը ժամանում է Երևան, նաև մասնակցում է ապրիլի 27-ին՝ Գյումրիի ավտոերթին և ելույթ է ունենում Գյումրիում: Էմոցիոնալ ելույթի վերջում, խոսելով Հայաստանի ներքին անկախություն ունենալու կարևորության մասին, հույս է հայտնում, որ Հայաստանն իր վախը կոտրելուց հետո կօգնի նաև Սփյուռքին իր վախերը հաղթահարել[25]:

Կարևոր դերակատարում ունի հեղափոխության օրերին նաև հայտնի ռոք երաժիշտ, System of a Down խմբի մենակատար Սերժ Թանկյանը և նրա այս կամ այն ձևաչափով մասնակցությունը՝ սկսած ֆեյսբուքյան գրառումներից, մինչև սատարող և խորհրդատվական տեսաձայնագրություններով, մինչև Հայաստանի Հանրապետություն

---

[22] April 21, 12:30 - Protest at the Embassy of the Republic of Armenia in Berlin, https://www.facebook.com/ArsineeKhanjian/videos/2511499889076135/?__xts__[0]=68.ARCVPbn_RPe_JV2gxJklZPwvnFHHOZhrICj35Y2Vrn65GTjlRNICHlURNhaujeCJkh4h1SvUcaUWt1Xm_qe0ZcFa2gr5GEFCK8OvhYhc8ka7u1bw_wFRSesV24yKaSWH1o5A3ArdFU_HdZpi9JZgJsUqBnUNVsUk5UnUrPEcnS7_8J9_87y_kGe3ZoP9cS3lkdjP9hGRAhL5nTFFdGzlK0qywnLDjbz-7Y3xCB8HEyh0DqKZlymAWo-tUk01rxRoQsvg22Ong94izJ_hQdjwsGrebdn2FkYclXIWq9d1vdCY5-mXYSe7GpjECKgjb1AdEf5_NnRfo4kS6CP0D0sjuogR-Ch2Y81cvqryTA&__tn__=-R (մուտք՝ 22.04.2018):

[23] Հայաստանցի ուսանողների հետ զրույց Բեռլինում, https://www.facebook.com/ArsineeKhanjian/videos/2512397448986379/, (մուտք՝ 25.04.2018):

[24] Կոչի բովանդակությունը տես՝ https://www.facebook.com/ArsineeKhanjian/photos/a.2172115573014570/2513448482214609/?type=3&theater, (մուտք՝ 15.05.2018):

[25] Արսինե Խանջյանի ելույթը Գյումրիում տե՛ս՝ https://www.facebook.com/azatutyun/videos/1916512575060777/UzpfSTIxNDEzNjE5NTk0MjMyNjU6MjUxNjgwNTkzMTg3ODg2NA/, (այս ուղերձն ունի 126.138 դիտում, 2018թ. դեկտեմբեր ամսի տվյալներով), (մուտք՝ 27.04.2018):

նրա ժամանումով, ինչպես նաև միջազգային լրատվամիջոցներով հեղափոխության մասին իր տված հարցազրույցներով:

Սերժ Թանկյանի շուրջ հեղափոխության օրերին Հայաստանում ապատեղեկատվություն էր տարածվում հատկապես նրա Երևան ժամանելու վերաբերյալ: Նա յութուբի իր ալիքում անդրադարձել է Հայաստանի ներքաղաքական իրավիճակին: Նա ոչ հաստատել էր, որ գալու է, ոչ էլ հերքել: Գրել է, որ գիտի, որ շատերն իրեն սպասում են, ինչպես նաև խորհուրդներ է տալիս, թե ինչպես ցուցարարներն իրենց պահեն: Ահա հատված ապրիլի 20-ին նրա արված ուղերձից[26]. «Առաջին, հեռու մնալ «գունավոր հեղափոխության» տերմինաբանությունից, քանզի այն ընդհանրացվում է Արևելք/Արևմուտք առճակատման հետ: Մեր պայքարը Արևելքին կամ Արևմուտքին կողմ կամ դեմ լինելը չէ, այլ այն արդարության եւ առաջադիմական փոփոխության համար է: Մենք չենք ուզում որևէ կայսրության վասալ պետությունը լինել, մեզ պետք են լավ հարաբերություններ բոլորի հետ:

Երկրորդ, Ձեր պահանջները կոնկրետացրե՛ք: Առաջարկում եմ պահանջել, որ Սերժ Սարգսյանը ոչ միայն հրաժարական տա վարչապետի պաշտոնից, այլ նաև հրաժարվի իր կուսակցության առաջնորդը լինելուց: Այնուհետև ես կպահանջեի բարեփոխումների փաթեթ, որը կզբաղվեր այն բոլոր անարդարություններով, որոնք մեզ հայտնի են՝ կոռուպցիա, շրջակա միջավայրի աղտոտում և այլ բաներ՝ ներկայացնելով հստակ ժամանակահատված նոր կառավարությանը դրանք իրականացնելու համար: Եթե բարեփոխումները տեղի չեն ունենում, ապա ես ամսաթիվ կնաշանակեի ապագա նոր բողոքի ցույցերի համար, այս անգամ պահանջելով խորհրդարանի հրաժարականը և նոր խորհրդարանական ընտրություններ:

[26] Սերժ Թանկյանի տեսաուղերձը տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=q_iTStVljbs (մուտք՝ 04.05.20018):

Երրորդ, շարունակե՛ք ձեր խաղաղ դիմադրությունը, խուսափե՛ք սադրիչների թակարդներից, նրանք կստանան իրենց անարդարությունը, երբ նրանց ղեկավարները մի օր կազատվեն աշխատանքից, և նրանք ստիպված կլինեն գալ ձեր մոտ աշխատանք խնդրելու համար: Շարունակեք լինել ճկուն, արդար, անկեղծ և սիրող, շարունակեք ոստիկանության հետ վարվել եղբայրների և քույրերի պես, քանի որ նրանք այդիսին են իրականում: 2015-ին Էլեկտրիկ Երևանի բողոքի ընթացքում ես այնքան ոգեշնչված էի, որ գրեցի «Էլեկտրիկ Երևան» երգը: Ես շուտով այն պատշաճ կերպով կթողարկեմ: Այժմ, ես ձեր համար կկատարեմ մի փոքրիկ հատված երգի ցուցադրական տարբերակից: Ես սա նվիրում եմ ձեզ բոլորիդ Հայաստանում: Սիրում եմ Ձեզ»:

Վերջապես մայիսի 7-ին Սերժ Թանկյանը ժամանում է Հայաստան: Նրան դիմավորում է Նիկոլ Փաշինյանը և նրանք ավտոերթով ժամանում են Երևանի Հանրապետության հրապարակ, որտեղ Սերժ Թանկյանը ելույթ է ունենում, իսկ վերջում երգում է նաև մի կտոր իր Արագիլ երգից[27]: Նա նաև Ազգային Ժողովում էր, երբ մայիսի 8-ին կայացան Հայաստանի Հանրապետության վարչապետի ընտրությունները: Մայիս 8-ին Սերժ Թանկյանը ինտերվյու է տալիս ԲԻԲԻՍԻ-ին և վերջում հարցադրում անում. «Ասե՞ք ամեն օր կարելի է տեսնել հեղափոխություն, որը տեղի է ունեցել առանց մեկ փամփուշտի, առանց որևէ զոհի, խաղաղ և սիրո մթնոլորտում»[28]: Մի քանի օր անց մայիսի 13-ին երկու ռոպեանոց հարցազրույց է տալիս

[27] Ժամանելու, դիմավորելու և հրապարակում տեղի ունեցած իրադարձությունների ամբողջական 3 ժամյա տեսանյութը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=Cwe0mMYzHNM, (մուտք՝ 7.05.18):

[28] Serj Tankian speaks on Armenia's Velvet Revolution | BBC News 2018 https://www.youtube.com/watch?v=lh1tvn2bWZs, (մուտք՝ 9.05.18):

Ալ-Ջազիրա հայտնի լրատվականին կրկին Թավշյա հեղափոխության թեմայով[29]:

Ժամանակագրորեն հետ վերդառնանք այդ ընթացքում Ամերիկայում կատարվող իրադարձություններին: Ապրիլի 19-ին Գլենդելում համայնքի ակտիվ գործիչ Թագուհի Վարդանյանը կրկին մի տեսաուղերձ է պատրաստում, որում նշում է, որ ինչպես արդեն տեղյակ էր պահել հերթական վլոգը դադարեցրել են և հետևելու են Հայաստանում տիրող իրավիճակին[30]: Ամսի 19-ին Լոս Անջելեսի Արցախի փողոցում կայացած բողոքի ակցիայի ժամանակ բազմաթիվ մարդիկ էին հավաքվել: Հիմնական լոզունգներից և նպատակներից մեկն այն էր, որ Հայաստանում գտնվող մարդիկ իմանային, որ Գլենդելում բնակվող հայերը Հայաստանում գտնվող իրենց քույրերի և եղբայրների կողքին են: Մարդիկ դրոշներով, պաստառներով հավաքվել էին Արցախի փողոցում և Ուրարտու սրճարանի ֆոնին էր տեղի ունենում այս ողջ բողոքի գործողությունները, երբեմն երբեմն հնչում էր հեղափոխության օրերին խորհրդանիշ դարձած Քայլում եմ երգը:

Թագուհին իր մտահոգություններում նշում էր հատկապես այն միտքը, որ իրենք չեն հասկանում, թե ինչպես կարող են գործող իշխանությունները փողոցում գտնվող մարդկանց անտեսել, և անընդհատ շեշտել, որ նրանք չեն արտահայտում ողջ ժողովրդի շահերը և ցանկությունները[31]:

---

[29] Rock star Serj Tankian on Armenia's Velvet Revolution | Al Jazeera English, https://www.aljazeera.com/news/2018/05/rock-star-serj-tankian-armenias-velvet-revolution-180513115318340.html (մուտք՝ 16.05.2018):

[30] Armenians rally in Glendale, Հայերի բողոքի ցույցը Գլենդելում վերնագրված Թագուհի Վարդանյանի պատրաստած նյութը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=xDVg3J6B9_w_(մուտք՝ 20.04.2018)

[31] Armenians rally in Glendale, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=xDVg3J6B9_w_(մուտք՝ 20.04.2018):

Համայնքի ներկայացուցիչների այդ օրվա հիմնական ուղերձը հետևյալն էր, որ Ամերիկայի համայնքը քաղաքակիրթ միջոցներով ասում է, որ մերժում է Սերժին և իր հանցավոր կառավարությանը, իրենք ինչքան ասում են բարեփոխում ենք անում, էնքան մարդ ա երկրից գնում, մոտ 380 հազար մարդ երկրից հեռացել է… Այսօրվա Հայաստանի իրավիճակը ներկայացնելիս ասում էին: «Ունենք 30 տոկոս աղքատություն, 18 տոկոս գործազրկություն, դրանք էլ պաշտոնական տվյալներն են, ուրեմն իմացե՛ք, թե ինչպիսի իրավիճակ է իրականում: Տաս տարի ունեին, որպեսզի ինչ որ բան անեին երկրի համար, թալանելուց բացի այլ բան չեն արել»: Այնուհետև բողոքի ակցիայի մասնակիցներին հարցնում է, դուք հույս կապում եք Սերժի և իր իշխանության հետ, ժողովուրդը բղավում է՝ ո՛չ, և շարունակում է, թե մեր հույսն այն երիտասարդներն են, որոնք դուրս են եկել փողոց և մերժում են Սերժին և իր կառավարությանը[32]:

Ահա մի քանի կարևոր ուղերձ, որոնք հնչել են այդ օրը ելույթ ունեցող անձանց կողմից.

- Ոչ ոք իրավունք չունի խեղդելու հայ երիտասարդ երիտասադրուհիի կամքը, հույսը և ապագայի հանդեպ ունեցած խորին վստահությունը:

- Հայաստանում երիտասարդները ոտքի ելան և ապացուցեին, որ ազատ անկախ Հայաստանում պետք է ապրի ազատ և անկախ քաղաքացին:

- Մեզի չի հետաքրքրե, թե ով է ղեկին, սակայն մեզի կհետաքրքրե, որ ղեկին ըլլացող մարդը ըլլա արդար, ըլլա այն անձը, որ ժողովուրդը համաձայն է, ժողովուրդը միաձայն է և ժողովուրդը կաջակցի[33]:

---

[32] Armenians rally in Glendale, 6:45-8 րոպեները, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=xDVg3J6B9_w, (մուտք՝ 20.04.2018):

[33] Նույն տեղում՝ 3:30-4:06 րոպեները:

Հայ ռոք երգիչ «Էմփի Ռեյ» խմբի նախկին մենակատար Սարգիս Մանուկյանը ելույթ է ունենում և ասում. «Այսօր Հայաստանում ծնվել և ապրում է մի այնպիսի սերունդ, որը կարող է իր մտածածը բարձրաձայնել, այս նույն սերունդն է, որ կրկնվեմ երեկվա հավաքի ասածով, որ հաղթել է ապրիլյան պատերազմը, այս սերունդը անպայման հաղթելու է, թեև չեմ կարող ժամանակի առումով ասել, թե երբ, բայց հաղթանակն անկասելի է լինելու: Մենք միշտ ասում ենք, Նիկոլը չի կարա, Լևոնը չի կարա, էդ մարդը արեց իրա քայլը, բայց էդ մի մարդուց ոչ մի բան կախված չի, եթե մեզնից ամեն մեկը ինչքանով կհասկանա և կանի իր քայլը այ, դրանից է կախված հաղթանակը: ֆեյսբուքում լայք դնելով, յութուբ նայելով կամ կոֆեի սեղանի շուրջ մեծ-մեծ խոսալը ոչինչ չի կարող անել, միայն անմիջական մասնակցիային կյանքն է, որ կարող է փոփոխություն բերել մեր երկրում»[34]:

Այդ օրը հետաքրքրական միտք է հնչում, որ Ռուսաստանի համայնքները տարիներ շարունակ լռում էին, և ահա նրանք էլ են պայքարի դուրս եկել: Երբ որ բոլորը անհույս էին, այս երիտասարդները հույս և լույս բերեցին հայոց աշխարհին: Երբ տեսնում ենք զարթոնքը, որ երիտասարդները ոտքի են կանգնել, վեր են կանգնել ծնկից և ուղղել իրենց մեջքերը, հպարտության մեծ զգացում ենք ունենում[35]: Ընդհանուր մթնոլորտը հետևյալն էր. հնչում էր խորհրդանիշ դարձած իմ քայլը երգը, մեքենաները դրոշներով շրջում են, արդեն վանկարկում են Նի՛կոլ, Նի՛կոլ:

Գլենդելի քաղաքապետ Զարեհ Սինանյանը նույնպես ելույթ է ունենում և մասնավորապես ասում է հետևյալը. «Ինձ ապացուցին, որ ես սխալ էի, որ հույսս կորցրել էի, բայց մեր երիտասարդները

[34] Armenians rally in Glendale, 8-9 դրպեները, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=xDVg3J6B9_w, (մուտք՝ 20.04.2018):
[35] Armenians rally in Glendale, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=xDVg3J6B9_w, (մուտք՝ 20.04.2018):

Հայաստանում դուրս են եկել փողոց և ուզում են պարզ բաներ, որ արժանապատիվ ապրեն իրենց հայրենիքում, կայանան իրենց հայրենիքում, ընտանիք կազմեն իրենց հայրենիքում, ուզում են արտահայտվել իրենց հայրենիքում, չեն ուզում հեռանալ»:

Հետաքրքրական է, որ ելույթների բովանդակությունը տարբերվում է ելույթ ունեցողների թե՛ տարիքային, թե՛ ավանդական, թե՛ նոր համայնքի ներկայացուցիչ լինելու հանգամանքով պայմանավորված: Վերջին տարիներին Հայաստանը լքողների համար ավելի շատ հետաքրքրում էր այն, թե ինչպես են թալանել և հասցրել ժողովրդին աղքատության և արտագաղթի, ուստի նրանք հիմնականում շեշտում էին այն ամենը, ինչ տեղի է ունենում երկրում տնտեսական և քաղաքական տեսանկյունից, իսկ ամերիկյան հին ավանդական համայնքի ներկայացուցիչներն (թեև նրանց մասնակցությունը սկզբնական շրջանում պասիվ էր) ավելի շատ խոսում էին մարդու իրավունքների, օրենքի գերակայության, արժանապատիվ կյանքով ապրելու մասին, և հատկապես կարևոր է, որ շեշտում էին, որ իրենք ցեղասպանություն ապրած ազգի ներկայացուցիչներ են, և իրենց համար շատ կարևոր է, որ սեփական ոստիկանությունը նման կերպ չի կարող վարվել իր ժողովրդի հետ[36]:

Ապրիլի 21-ին համացանցում հայտնվեցին նաև տեսաձայնագրություններ ի թիվս աշխարհի տարբեր քաղաքներում նաև Նյու Յորքում կայացած բողոքի ակցիայից[37]: Չմոռանանք, որ իհարկե գլենդելահայության մասնակցայնության հետ չեն կարող մրցել այլ քաղաքները, սակայն ակտիվությամբ նաև աչքի ընկավ Նյու Յորքը: Նյու Յորքում են գտնվում ՀԲԸՄ-ի, ՀՕՖ-ի, Հայ դատի

[36] Armenians rally in Glendale, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=xDVg3J6B9_w_(մուտք՝ 20.04.2018):

[37] Այս բողոքի ակցիայի մասին տե՛ս՝ https://old.hetq.am/arm/news/87907/boxoqi-akcianer-nyu-yorqum-prahayum-ev-glendelum-lusankarner.html, http://asekose.am/hy_AM/news/11/264419-couycer-asxarhi-tarber-qaxaqneroum-enddem-serj-sargsyani-varcapetoutyan.html (4:23-4:47 րոպեները), (մուտք՝ 25.04.2018):

հանձնախմբի, Ամերիկահայ ուսանողների միության կենտրոնական գրասենյակները, Թեքեյան և Համազգային մշակութային միությունների, բազմաթիվ վայրերի հայրենակցական միությունների և այլ երիտասարդական և կենտրոնական գրասենյակներ: Ապրիլի 23-ին պաստառներ էին, Քայլ արա՛, մերժի՛ր սերժին, Ես Նիկոլ եմ, և անգլերենով գոռում էին, “no more Serj”[38].

Ապրիլի 22-ին ցույց է տեղի ունենում Ֆլորիդայի եկեղեցու բակում մի քանի տասնյակ հայեր պաստառներով դրոշներով բողոքի ակցիա էին անում, որի ընթացքում վանկարկում էին քայլ արա՛, մերժի՛ր Սերժին, և ասում, որ ձեր պատճառով է, որ էստեղ ենք ու արտագաղթել ենք[39]: Հետաքրքրական է, որ Ֆլորիդայի հայ համայնքի ներկայացուցիչների վեբ կայքում օգոստոսի վեցին տարածվում է մի հայտարարություն, ըստ որի օգոստոսի 26-ին տեղի է ունենալու Հայաստանի Թավշյա հեղափոխությունը նշելու մի տոնական միջոցառում[40]:

Հայաստանում Նիկոլ Փաշինյանի և Սերժ Սարգսյանի կարճատև հանդիպումը և դրանից ժամեր հետո Նիկոլ Փաշինյանի, Սասուն Միքայելյանի և Արարատ Միրզոյանի առևանգում/ձերբակալությունը դառնում է այն պահը, որից հետո բողոքի ակցիաները դառնում են ամենօրյա նաև գլենդելահայության համար: Ապրիլի 22-ին փաստորեն երկու տեղում է եղել հավաք և երթ, Արցախի

[38] Այս բողոքի ակցիայի մասին տե՛ս՝ https://www.face book.com/mamadoyan/videos/10215600328471589/, http://asekose.am/ hy_AM/news/11/264419-couycer-asxarhi-tarber-qaxaqneroum-enddem-serj-sargsyani-varcapetoutyan.html (4:23-4:47 րոպեները), (մուտք՝ 25.04.2018):

[39] Ցույցեր աշխարհի տարբեր քաղաքներում՝ ընդդեմ Սերժ Սարգսյանի վարչապետության, տե՛ս՝ 4:04-4:22 րոպեները, http://asekose.am/hy_AM/news/11/264419-couycer-asxarhi-tarber-qaxaqneroum-enddem-serj-sargsyani-varcapetoutyan.html, (մուտք՝ 25.04.2018):

[40] Հարավային Ֆլորիդայի հայերի կողմից Թավշյա հեղափոխությունը տոնելու հայտարարության պոստերը տե՛ս՝ https://flarmenians.com/2018/08/06/south-florida-celebration-marking-armenias-velvet-revolution/ (մուտք՝ 10.07.2018):

պողոտայում և Գլենդելի քաղաքապետարանի դիմաց: Հենց այդ օրը՝ ապրիլի 22-ին «Բողոքի գործողություններ Գլենդելում» վերնագրով մի նոր լայվ է հեռարձակում Թագուհի Վարդանյանը, որն այս անգամ առանց մոնտաժելու պարզապես հեռախոսով լայվ նկարահանում է, որտեղ երևում է, թե ինչպես են ինքնաբուխ քայլերթ անում հայերը, թե ինչպես է ոստիկանությունը ուղղակի մեքենաներով տեսաձայնային ազդանշաններով խնդրում մայթերով քայլել, ինչպիսի ոգևորվածություն կա և զգացվում է, որ ամենից շատ վախենում են, որ հանկարծ ոստիկանությունը կարող է բռնի ուժ գործադրել Հայաստանում: Վանկարկում էին, Սերժիկ հեռացի՛ր, Հայաստանը մոռացի՛ր, Ազատություն Նիկոլին, քայլ արա՛, մերժի՛ր Սերժին[41]: Այս ցույցը մի տեսակ իր մեջ զայրույթ էր պարունակում, մի տեսակ քաոտիկ իրավիճակ էր, բոլորը դուրս էին եկել փողոց ու իրենց բողոքն էին արտահայտում՝ ի պատասխան Երևանում Նիկոլ Փաշինյանին բռնելու, մարդիկ ինքնաբուխ դուրս էին եկել, քայլում էին դրոշներով, վանկարկելով միացե՛ք, միացե՛ք: Մեքենեաների մի հսկայական շքերթ էր, բղավոցներով, ազդանշաններով, բարձր հայկական երաժշտությամբ և դրոշներով զարդարված:

Իսկ Թագուհի Վարդանյանը պարբերաբար պատմում էր, թե ինչ է որոշվել հյուպատոսարանի մոտ տեղի ունեցած ակցիայի ժամանակ: Որոշվել է, որ ամեն օր տեղի կունենան հավաքներ, մինչև Հայաստանում ժողովուրդը կհասնի իր ուզած հաղթանակին: Տեղեկացրեց նաև, որ վաղը՝ ամսի 23-ին ժամը 2-ին Բըրբանքի եկեղեցու մոտ են հավաքվելու, մոմավառություն է լինելու, բայց կարծում էր, որ հիմնական նպատակն այն է, որ պահանջեն հոգևորականությունը ներկայացնող մարդիկ նույնպես միանան ժողովրդին, քանի որ նրանց հիմնական առաքելությունը դա է,

[41] April 22, 2018, Protests in Glendale, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=iTgVHXAYftA, (մուտք՝ 23.04.2018):

կանգնել ժողովրդի կողքին: Իսկ երեկոյան ժամը 7-ին հավաքվում են քաղաքապետարանի դիմաց[42]:

Ամերիկյան լրատվամիջոցների անդրադարձ տեղի ունեցավ հատկապես ապրիլի 22-ին Գլենդելում տեղի ունեցած բողոքի գործողություններից հետո, որն իրոք մարդաշատ է եղել և քաղաքով մեկ տարածվել էր: Այդ օրն էլ ամերիկյան ABC 7, FOX 11 հեռուստաալիքները ռեպորտաժներ են պատրաստել իրադարձությունների կիզակետից՝ ներկայացնելով Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները և նաև Գլենդելի հայության մասնակցության նշանակությունը այս գործընթացում[43]:

Ապրիլի 28-ին Թագուհին կրկին մի տեսանյութ է հրապարակում, որը վերնագրված էր Լոս Անջելեսի հայերը Հայաստանի իրավիճակի մասին[44]: Այստեղ Գլենդելի քաղաքապետ Զարեհ Սինանյանն է սկսում խոսել. «Այսօր հակահեղափոխական ակտիվ գործունություն է սկսվել, որպեսզի չեղարկվեն ժողովրդի ձեռք բերած հաջողությունները»:

Գլենդելահայության կողմից արված մի քանի ուղերձ-կոչ եմ առանձնացրել այդ հոլովակից.

- Հիմա ամենակարևոր քայլը, որ մեր ժողովուրդը պետք է անի, դա վստահելն է շարժման առաջնորդին՝ Նիկոլ Փաշինյանին և նրա կողքին կանգնած մարդկանց, վստահել և չտրվել տարբեր տեսակի խոսակցությունների:

---

[42] April 22, 2018, Protests in Glendale, 12-14 րոպեները, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=iTgVHXAYftA, (մուտք՝ 23.04.2018):

[43] Armenians rally in solidarity with anti-government protesters in Armenia, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=TasYg9HWkIQ (մուտք՝ 15.05.2018), Thuousands of local Armenians protest election results in their homeland, April 22, 2018, https://abc7.com/politics/socal-armenians-protest-election-results-in-their-homeland/3380671/ (մուտք՝ 24.04.2018):

[44] Armenians of Los Angeles on the situation in Armenia. Լոս Անջելեսի հայերը Հայաստանի իրավիճակի մասին, տեսանյութը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=7J6HZ8n0Wm8, (մուտք՝ 24.04.2018):

- Ժողովուրդն ունի լավ առաջնորդ, որը կարողանում է ճիշտ կողմնորոշվել և ճիշտ որոշումներ կայացնել:

- Ես այսպիսի միասնականություն չեմ էլ հիշում, թե երբ եմ տեսել, այս միասնությունը կոտրել, դա առնվազն դավաճանություն է:

- Սիրելի հայրենակիցներ, մենք հեռվում ենք, բայց նույն հոգեկան սպասումների մեջ ենք, գիտեմ, որ հոգնել եք, բայց մենք այլևս նման հնարավորություն չենք ունենա:

- Մեր ժողովրդի պահանջները արդար են, մեր ժողովրդի առաջնորդների նպատակները ազնիվ են:

- Իմացե՛ք, ձեր մեջ արթնացել է մեր հայկական գենը, որը կազմավորվել է մեր քաղաքակրթության էն, ինչ ասեմ, ծննդյան ժամանակներից, քաղաքակիրթ լինելը գենետիկորեն պահանջ է, արդարության և իրավահավասարության պահանջով, որ մեր Հայկ նահապետից է մնացել:

- Ժողովրդի հաղթանակը պետք է գրանցվի, ապահովվի, որովհետև այդ հաղթանակն է, որ ոգեշնչելու է մեր այսօրվա սերունդը, դրսում ապրող հայերին, սերմանելու, արթնացնելու մեր մեջ հայրենիք վերադառնալու միտքն ու ցանկությունը:

- Մի՛ մարեք մեր մեջ հայրենիք վերադառնալու հույսը:

- Ըլլանք Հայաստանում, թե սփյուռքի մեջ, մենք պարտավոր ենք ապահովելու մինչև օրս ժողովրդի գրանցած հաղթանակը:

- Քույրեր և եղբայրներ, մենք հաղթել ենք ճակատամարտը, բայց պետք է հաղթենք պատերազմը:

- Քաղաքական առևտուր չի լինելու, սա սիրո հեղափոխություն է:

- Ժողովուրդը հաղթանակել է, և մենք շուտով այն տոնելու ենք:

- Նոր դժվար ժամանակներ են սպասվում, բայց լավ ժամանակներ[45]:

---

[45] Armenians of Los Angeles on the situation in Armenia. Լոս Անջելեսի հայերը Հայաստանի իրավիճակի մասին, տեսանյութը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=7J6HZ8n0Wm8, (մուտք՝ 24.04.2018):

Թագուհի Վարդանյանը ինքն է խոսում ասելով՝ այս շարժումը շատ ավելի մեծ նշանակություն և իմաստ ունի, քան պարզապես ներկա իշխանությունը մեկ այլ իշխանությամբ փոխելն է: Սա մեր հնարավորությունն է հավատալու մեր ուժերին, սա այն հնարավորությունն է, որը բաց թողնել չի կարելի:

Թագուհին նաև մայիսի 14-ին մոտ կես ժամանոց ժամանակագրական մի տեսանյութ է պատրաստել թավշյա հեղափոխության վերաբերյալ[46]: Այստեղ նա արդեն որոշ ժամանակ անց պատմում է, թե ինչպիսի զգացողություններ են ունեցել իրենք այդ օրերին: Հետահայաց պատմում էր, որ ունեցել ենք պատմական ապրիլ և հաղթական մայիս: Այս տեսաձայնագրությունը կարևոր է, իրադարձությունների ժամանակագրական և էմոցիոնալ իրադրությունը հասկանալու համար: Նա ասում էր, որ ապրիլի 22-ի ակցիայի ժամանակ մեր մոտ այնպիսի տպավորություն էր, որ մենք զնում էինք հրապարակ, ոչ միայն նույն զգացումներն ու նույն մտքերն ունեինք, մենք կարծես դարձել էինք մեկ մարմին, նույն ռիթմով էինք շնչում և արտաշնչում, չեմ չափազանցնի, եթե ասեմ, որ Գլենդելը դարձել էր Երևան[47]:

Հաջորդ րոպեներին նա պատմում էր, թե ինչպիսի ուրախություն էր, երբ ապրիլի 23-ի վաղ առավոտյան իմացել են Սերժ Սարգսյանի հրաժարականի մասին[48]: Ապրիլի 23-ին արդեն համընդգրկուն էր դարձել գլենդելահայության և Լոս Անջելեսի հայերի մասնակցությունը գործողություններին ի աջակցություն Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Ֆեյսբուքյան ակտիվ օգտատերերից Ռոման Մուշեղյանը պարբերաբար լայվ

[46] Armenian Velvet Revolution, Թավշյա հեղափոխություն, 35 րոպե տևողությամբ, (այն հոկտեմբեր ամսին ուներ մոտ 65000 դիտում), տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=nuQyruzUOks&feature=youtu.be (մուտք՝ 10.09.2018):

[47] Նույն տեղում՝ 8:30-9:30 րոպեները:

[48] Նույն հոլովակում՝ 10-11 րոպեները:

հեռարձակումներ էր հրապարակում իրադարձությունների կիզակետից: Ամսի 23-ի Գլենդելի քաղաքապետարանի մոտ հավաքն է տեղադրել համացանցում, ինչպես նաև մեկ այլ տեսանյութ, թե ինչպես են քաղաքով մեկ, ինչպես Երևանում անընդհատ ազդանշաններով, Հայաստանի Հանրապետության դրոշներով շրջում ողջ քաղաքով մեկ[49]:

Հետաքրքրական էր Թագուհի Վարդանյանի Թավշյա հեղափոխությանը նվիրված տեսապատմության ապրիլի 24-ի օրվա մասին հատվածը, երբ նշում է, որ այս անգամ այլ կերպ էր ապիլի 24-ը. մի կողմից սգում էինք, մյուս կողմից ուրախանում և այս իրարարամերժ զգացումներով էլ գնացինք Թուրքիայի դեսպանատուն: Իրոք տեսապատմության 11:25-ից մինչև 14 րոպեները ցույց էին տալիս նրա ասած տխրություն և խինդ ասվածի արտացոլումը մարդկանց սրտերում և աչքերում[50]:

Ապրիլի 25-ից ամերիկահայերը հայտնվում են տեղեկատվական հոսքերի ազդեցության ներքո, ինչպես նշում է Թագուհին, դուխից գցող տեղեկատվության հոսքերի ներքո էին, սակայն դա նրանց միասնական լինելու ավելի մեծ խթան էր:

Ապրիլի 29-ին ամենաբազմամարդ հավաքն էր, որտեղ արդեն կարելի էր տեսնել խորհրդանիշների փոփոխություն, Նիկոլի նկարներով մայկաներ, գլխարկներ, արդեն Նիկոլ վարչապետ պաստառներով, նույնիսկ բեմից հարցնում էին, ովքեր են կողմ, որ Նիկոլը լինի վարչապետ, և բոլորը մեկ մարդու պես ձեռք էին բարձրացնում[51]:

---

[49] Ռոման Մուշեղյանի ֆեյսբուքյան էջից՝ https://www.facebook.com/roman.musheghyan/videos/1868188506546516/ (մուտք՝ 10.09.2018):

[50] Armenian Velvet Revolution, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=nuQyruzUOks&feature=youtu.be (մուտք՝ 10.09.2018):

[51] Ամսի 29-ի հանրահավաքի հատվածը 19-24 րոպեներին տե՛ս՝, Armenian Velvet Revolution, Թավշյա հեղափոխություն, տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=nuQyruzUOks&feature=youtu.be (մուտք՝ 10.09.2018):

Մայիսի 1-ի ընտրությունների մասին պատմող նյութը ևս հետաքրքրական է, քանի որ ցույց է տրվում, թե ինչպես են ամերիկահայերը օր օրի իրավիճակի փոփոխությանը հետևում հայրենիքում և կարողանում նոր մարտահրավերներից ելնելով իրենց էմոցիաների փոփոխությունները արձանագրել և ադապտացվել այդ իրավիճակին[52]: Մայիսի 1-ի ընտրություններից հետո, նոր հանրահավաքներ են կազմակերպվում, որտեղ կրկին ամերիկահայերը զայրացած էին և ելույթները ավելի խտացրել էին ՀՀԿ-ի հանցավոր բանդայի դեմ: Այստեղ ասում են, որ ստորագրահավաք են անում, որ այդ 55 անձանց պետք է զրկել Միացյալ Նահանգներ մուտք գործելու հնարավորությունից: Խնդրագիր դիմումագիր են պատրաստել ուղղված ԱՄՆ կառավարությանը: Ինչպես նաև առաջարկում էին կաթվածահար անել նաև այստեղի կառավարման համակարգը, Հյուպատոսարանին կոչ են անում փակել դռները և գալ միանալ բողոքի ցույցին[53]:

Հիմնականում շատ էմոցիոնալ էին, ասում էին, որ բավական է կառչել աթոռներից, և իհարկե անդրադառնում էին Ազգային ժողովում հնչած հանրապետականների մտքերին և հատկապես Արցախի հարցում նրանց արած մանիպուլյացիաները շատ էին զայրացրել ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներին, որոնցից մեկն ասում էր, պատկերացնում եք Ադրբեջանի կողմից նման արկածախնդրության արդյունքը. տաս միլիոն մարդ հասնելու է Հայաստան Արցախը պաշտպանելու:

---

[52] Նույն տեղում՝ 24-28:30 րոպեները:

[53] Ռոման Մուշեղյանի ֆեյսբուքյան էջից մոտ մեկ ու կես ժամանոց լայվ հեռարձակում հանրահավաքից, (52-57 րոպեները), տե՛ս՝ https://web.facebook.com /roman.musheghyan/videos/1877131238985576/?t=0 (մուտք՝ 10.09.2018):

Հետաքրքիր էր նաև հետևել մայիսի 7-ի հանրահավաքին, երբ ամերիկահայերը ի աջակցություն և համաձայնություն Հայաստանում ժողովրդի կողմից մայիսի 8-ին սպիտակ հագնված գալ Հանրապետության Հրապարակ, իրենք էլ նախորդ երեկոյան էին հավաքվել, ժամային տարբերության պատճառով նրանք ավելի վաղ էին իրականացրել սպիտակ վերնաշապիկներով, դուխով վերտառությամբ կամ Նիկոլ Փաշինյանի նկարով հագուստներով հանրահավաքը: Մի տեսակ տոնական տրամադրություն էր նկատվում: Իսկ արդեն մայիսի 8-ին քվեարկությունից հետո նրանց հավաքը լիակատար տոնական էր, արդեն բազում պաստառներ հեղափոխություն գրված, ինչպես նաև մեծ տորթ վրան անգլերենով գրված Թավշյա հեղափոխության հաղթանակը, երգ ու պար, քիչ տեքստ, հիմնականում հպարտության մասին, հաղթանակի մասին, այս ամենի պատմականության մասին[54]:

ԱՄՆ-ի հայկական հասարակական և քաղաքական կառույցների պաշտոնական արձագանքները գարնանային իրադարձություններին

ԱՄՆ-ում հայկական այս կամ այն կազմակերպության ներգրավվածությունը և մասնակցությունը դժվար է ամբողջական ներկայացնել, իրադարձությունների արագ և ինքնաբուխ լինելու պատճառով, սակայն որոշ կառույցների պաշտոնական մոտեցումները նրանց հայտարարություններով հնարավոր է վերլուծել:

Հայ բարեգործական ընդհանուր միությունը՝ ՀԲԸՄ-ը, (www.agbu.org) աշխարհի խոշորագույն, շահույթ չհետապնդող հայկական կազմակերպությունն է: Գլխամասային գրասենյակը

[54] Armenian Velvet Revolution, Թավշյա հեղափոխություն, 28:30-34 րոպեները, տե՛ս՝ https://www.youtube.com/ watch?v=nuQyruzUOks&feature=youtu.be (մուտք՝ 10.09.2018):

գտնվում է Նյու Յորքում: ՀԲԸՄ-ը կրթական, մշակութային և մարդասիրական ծրագրերի միջոցով պահպանում և զարգացնում է հայկական ինքնությունն ու ժառանգությունը՝ յուրաքանչյուր տարի առնչվելով աշխարհով մեկ սփռված շուրջ 500,000 հայերի կյանքին:

ՀԲԸՄ-ը ապրիլ-մայիսյան դեպքերին չէր կարող չարձագանքել: Առաջին պաշտոնական արձագանքը եղել է ապրիլի 21-ին հետևյալ բովանդակությամբ[55]: «ՀԲԸՄ-ը ինչպես բոլոր հայերն աշխարհում, հետևում է Հայաստանում տեղի ունեցող զարգացումներին և բողոքի ցույցերին: Սփյուռքը այս ամենին խորը մտահոգությամբ է հետևում: Մենք պաշտպանում ենք քաղաքացիների՝ ազատ խոսքի և խաղաղ հավաքներ կազմակերպելու իրավունքը. այս արժեքները հիմք են կազմում ժողովրդավարության և ժողովրդավարական պետություն կառուցելու գործում: Չնայած որ խորապես մտահոգիչ է երկրում տիրող ուժգին դժգոհությունը, մենք ոգևորված ենք, մեր հասարակության հատկապես ակտիվ երիտասարդության ներգրավվածությամբ: Հայաստանը անցում է կատարում նախագահական կառավարման համակարգից վարչապետական կառավարման, որը անհրաժեշտաբար պետք է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին երկրի կյանքում որոշում կայացնելու հարցում ավելի մեծ մասնակցության հնարավորություն ընձեռի: Հաշվի առնելով Հայաստանի առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները, ՀԲԸՄ-ը կոչ է անում մտահոգված կողմերին ներգրավվել երկխոսության մեջ և բացեիբաց քննարկել այն բոլոր հարցերը, որոնք հուզում են համայն հայությանը և կառուցողական կերպով մշակել լուծումներ: Մեր ազգի առջև ծառացած խնդիրները մենք կարող ենք լուծել միայն միասնաբար աշխատելով»:

[55] Statement by AGBU on the Demonstrations in Armenia, April 21, 2018, https://agbu.org/news-item/statement-by-agbu-on-the-demonstrations-in-armenia/ (մուտք 22.04.2018):

Հաջորդ հայտարարությունը եղել է ապրիլի 23-ին «Ժողովրդավարությունը գործողության մեջ» վերնագրով [56] : «Հայաստանի ժողովուրդը նոր ուղղությամբ է տանում մեր ժողովրդի ապագան: 2018թ ապրիլի 13-ից նրանք ցուցաբերեցին իրենց հավատարմությունը ոչ բռնի, քաղաքացիական միտվածությանը խաղաղ ցույցերի և կազմակերպված բողոքի հանրահավաքների միջոցով, երբեք չընկրկեցին նույնիսկ ամենաանորոշ պայմաններում: Նրանց նպատակների միասնությունը առաջ է բերում հույս, և հիմք է դնում ուժեղ ժողովրդավարական հաստատությունների ստեղծմանը օրենքի գերակայության պայմաններում: Հավասարապես կարևոր է այն, որ աշխարհն ընկալի Հայաստանի քաղաքացիների ժողովրդավարական ոգին և նրանց՝ կառուցողական փոփոխություններում իմաստնությամբ գործելու պոտենցիալը: Միայն սա արդեն պատճառ է լավատեսության և ազգային հպարտության:

ՀԲԸՄ-ը շարունակելու է պաշտպանել այս արժեքները, որոնք զուգորդում էին այս պատմական շարժմանը, ինչն էլ հանգեցրեց խաղաղ կարգավորմանը, նախկին նախագահ Սերժ Սարգսյանի կողմից մարդկանց ձայնը հարգելու որոշման միջոցով»:

Միևնույն ժամանակ նաև նշվում էր, որ հաջորդ օրերն ու շաբաթները ավելի կարևոր են, անհրաժեշտ է իմաստնություն, ազգային միասնություն այս իրավիճակից դուրս գալու համար[57]:

Ապրիլի 30-ին ևս մեկ հայտարարությամբ են հանդես գալիս[58]:

---

[56] AGBU Statement on Democracy in Action, 23 April,2018, https://agbu.org/news-item/agbu-statement-on-democracy-in-action/ (մուտք՝ 15.05.2018):

[57] Ամբողջական հայտարարությունը տե՛ս՝ https://agbu.org/news-item/agbu-statement-on-democracy-in-action/, (մուտք՝ 15.05.2018):

[58] AGBU and Current Events in Armenia: A Message to Our Leadership, 30 April, 2018, https://agbu.org/news-item/agbu-and-current-events-in-armenia-a-message-to-our-leadership/, (մուտք՝ 15.05.2018):

Իսկ Նիկոլ Փաշինյանին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում հանգրվանային կարևորություն ունեցող ընտրության առթիվ ՀԲԸՄ-ը շնորհավորանք է հղում[59]:

Ապրիլի 30-ին ԱՄՆ-ի մի շարք հայկական ուսանողական ասոցիացիաներ հանդես եկան նամակով՝ ի համերաշխություն Հայաստանում տեղի ունեցող ուսանողների կողմից առաջնորդվող ժողովրդական շարժմանը: «Որպես սփյուռքում նոր սերնդի ներկայացուցիչներ, մենք կանգնում ենք մեր հայ գործընկերների կողքին կոռուպցիայի դեմ և ժողովրդավարական կառավարման համար մղվող պայքարում»,- ասված է նամակում[60]:

ԱՄՆ հայության ինքնության պահպանման, համայնքի զարգացման հարցում կարևոր դեր են կատարում նաև 1972թ. Վաշինգտոնում հիմնադրված Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի հայկական համագումարը, որոնք, մասնավորապես, ներկայացնում են հայության և Հայաստանի շահերն ամերիկյան պաշտոնական ատյաններում:

Հայ դատի հանձնախումբը (Armenian National Committee of America)[61], որի տնօրենն է Արամ Համփարյանը, Հայաստանում ապրիլ ամսվա ընթացքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ ոչ մի հայտարարությամբ հանդես չեկավ, ոչ իրենց կայքում, ոչ կազմակերպության ֆեյսբուքյան էջում, և ոչ էլ տնօրենի անձնական էջում այդպես էլ չկային որևէ հայտարարություն կամ վերաբերմունք Հայաստանյան իրադարձություններին: Իսկ

[59] AGBU congratulates Nikol Pashinyan on his election as the new Prime Minister of the Republic of Armenia, 8 May, 2018, https://agbu.org/news-item/agbu-congratulates-nikol-pashinyan-on-his-election-as-the-new-prime-minister-of-the-republic-of-armenia/ (մուտք՝ 10.05.2018):

[60] Armenian Student Associations across the U.S. Pen Letter in Solidarity with Student-Driven Movement in Armenia, https://armenianweekly.com/2018/04/30/asa-solidarity/, (մուտք՝ 5.09.2018):

[61] Հայ դատի հանձնախմբի էլեկտրոնային էջը տե՛ս՝ www.anca.org:

Համփարյանի էջին հղվող կոչերը կամ խնդրանքները, որ գուցե Հայ դատի հանձնախումբը որևէ դիրքորոշում հայտնի, այդպես էլ մնում էին անպատասխան, ինչպես օրինակ նման մի հարցադրում էլ արել էր, ֆեյսբուքյան օգտատեր Արսեն Խառատյանը, հետևյալ տեքստով. «Ես ցանկանում եմ կոչ անել Հայ դատի հանձնախմբի մեր ընկերներին և գործընկերներին: Արդյոք դուք չեք ցանկանում օգտագործել ձեր հսկայական ռեսուրսները կոնգրեսմեններին և կոնգրեսմենուհիներին, սենատորներին, տեղական պաշտոնյաներին և այլոց ուղղորդել, որպեսզի նրանք կոչ անեն Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներին խաղաղ կերպով հանձնել քաղաքական իշխանությունը ժողովրդին: Ի վերջո, ձեր քաղաքական կուսակցությունը դուրս է եկել կոալիցիայից և միացել է Հայաստանի ժողովրդին»: Սա նա ուղղել էր Արամ Համփարյանին և Էլիզաբեթ Չուլջյանին[62]:

Մայիսի 8-ին հրապարակվում է Հայ դատի հանձնախմբի պաշտոնական մոտեցումը Հայաստանում տեղի ունեցող խաղաղ փոփոխությունների վերաբերյալ վերնագրելով՝ Հայաստանի խաղաղ, ժողովրդավարական, սահմանադրական փոփոխությունները ամրապնդում են ԱՄՆ-Հայաստան համագործակցությունը[63]:

Հետաքրքրական է, որ Հայ հեղափոխական դաշնակցության վարքագծի և հետագա անելիքների շուրջ ներհամայնքային որոշ քննարկումներ նույնպես տեղի են ունենում իրադարձություններից մի քանի ամիս անց:

[62] Արսեն Խառատյանը մայիսի 2-ին, իր էջին տարածելով Հայ դատի հանձնախմբի ֆեյսբուքյան էջը, հանդես էր եկել նման մի գրառմամբ: Գրառումն արվել էր անգլերեն:

[63] ANCA: Armenia's Peaceful, Democratic, Constitutional Transition Strengthens U.S.-Armenia Partnership, https://armenianweekly.com/2018/05/08/anca-armenia-transition/ (մուտք՝ 10.05.2018):

Արսինե Խանջյանի ֆեյսբուքյան էջում հունիսի 13-ին տեղադրված է Վարագ Գեցեմանյան[64] մի հոդված[65], որի մասին նա գրում է. «Վարագ Գեցեմանյանի վերջերս գրված մի հոդվածը հստակ ձևակերպված, ճիշտ ժամանակին և տեղին պատասխան է Հայ հեղափոխական դաշնակցության դիրքորոշմանը, որը հայտնել են կուսակցության որոշ ներկայացուցիչներ իրենց հրապարակումներում կուսակցության ներկա դիրքորոշումների և իրենց հասցեին հնչող քննադատությանն ի պատասխան: Գեցեմանյանի քննադատությունը պարզ, մտածված, և հատկապես մտորելու և քննարկման միտված վերլուծություն է, քաղաքական կուսակցությունների պատասխանատվության և բնության շուրջ խելացի նկատառումներով, որոնք պետք է նորովի ձևակերպվեն և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում տեղի ունեցած իրադարձությունները և փոփոխությունները հաշվի առնելով: Նա ցույց է տալիս հայկական կյանքում մեծ նշանակություն ունեցող արժեքավոր կառույցի ներսում պատմական, քաղաքական և ինստիտուցիոնալ ներքին խոչընդոտները և թե ինչպես երիտասարդ սերունդը կարող է

[64] Վարագ Գեթսեմանեանը ծնունդով Լիբանանից ամերիկահայ է, Փրինսթոնի համալսարանի ասպիրանտ, կենսագրությունը տե՛ս՝ https://nes.princeton.edu/people/varak-ketsemanian?fbclid=IwAR1kOmDAPiC6RoVpecO1Co0AOBRREYoexKvKs67sVmqqcsUHW-mhEod5HN8 (մուտք՝ 16.06.2018):

[65] Հոդվածը ամբողջությամբ առկա է Արսինե Խանջյանի էջում՝ https://web.facebook.com/ArsineeKhanjian/photos/rpp.2141361959423265/2549608875265236/?type=3&theater (մուտք՝ 16.06.2018), իսկ տվյալ հոդվածի ակզբնաղբյուրը ներկայում հասանելի չէ իրական լինքով՝ http://yerakouyn.com/?p=155789&fbclid=IwAR3StZQPYh0e8PxVQ-JTXU4ghdEwG5m4qfosN_ASu-I6SqxhJDwh0YO3ZO0:

և մարտահրավեր է նետում ներքին փոփոխությունների և ռեֆորմների անհրաժեշտության համար»[66]:

«Հպարտ եմ, որ հայ եմ»

Հպարտ եմ, որ հայ եմ արտահայտությունը գերիշխող է դարձել հետհեղափոխության հատկապես ամերիկահայ համայնքի ներկայացուցիչների շրջանում: Գարնանային իրադարձությունները իրոք հույս են արթնացրել իրական ժողովրդավարական արժեքներով, օրենքի գերակայությամբ, մարդու իրավունքների պաշտպանվածությամբ Հայաստանի Հանրապետություն ունենալու հարցում, իսկ ամերիկահայ համայնքի համար, որպես ամուր և ժողովրդավարական հայրենիք ունենալու երաշխիք և հնարավորություն է ստեղծվել:

Երկրորդ, իրոք հպարտություն է, խաղաղ հեղափոխություն իրականացնել և ամբողջ աշխարհի ուշադրությունը սևեռել մի փոքրիկ երկրի վրա, որի գոյության մասին անգամ շատերը կարող է չիմանային, իսկ համաշխարհային ԶԼՄ-ները տարիներ շարունակ նույնիսկ մի տեղեկատվություն չհրապարակեին Հայաստանի Հանրապետության մասին:

Բացի դա ամերիկահայ համայնքի համար, որտեղ քիչ զումարներ չեն ծախսվում այս կամ այն հայկականության շահերին առնչվող հարցի վերաբերյալ լոբբիստական գործունեության շրջանակում, այս ամենը նորանոր հնարավորություններ է կարծես ընձեռում:

Այս ամենին կարծես պատահաբար, թե բարեբախտաբար ավելանում է, առաջին Հայաստանի Հանրապետության հարյուրամյակը, որն էլ իր հերթին նշանակում է բազմաթիվ

[66] Արսինե Խանջյանի ֆեյսբուքյան հունիսի 13-ի գրառումը տե՛ս՝ https://web.facebook.com/ArsineeKhanjian/photos/rpp.2141361959423265/2549608875265236/?type=3&theater, (մուտք՝ 15.06.2018):

համահայկական կառույցների հարյուրամյակներ, ինչպես նաև խորհրդանշական էր նաև հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հարյուրամյակի համընկնումը: Ի հավելումն այս ամենի, մի կարևոր իրադարձություն ևս համընկավ հետհեղափոխական իրադարձություններին. այս տարի Վաշինգթոնում ամենամյա Սմիթսոնյան ինստիտուտի կողմից անցկացվելիք Սմիթսոնյան ֆոլքլայֆ փառատոնում Հայաստանը ներկայացվող երկրներից մեկն էր: Այս փառատոնը ևս մեծ հետաքրքրություն էր առաջացրել, որը շատ խորհրանշական էր և կարևոր այն տեսակետից, որ տեղի էր ունենում հեղափոխությունից անմիջապես հետո՝ թողնելով որոշակի տրամադրություն, իհարկե նախապես լավագույն ձևով կազմակերպած փառատոնում[67]:

Հպարտության զգացման խոսույթը առկա էր և՛ հեղափոխության օրերին ամերիկահայերի շրջանում, և՛ դրանից հետո էլ ամիսներ անց: Նման մի օրինակ էլ Ալեքսիս Օհանյանի հունիսի 28-ի ֆեյսբուքյան գրառումը. «Ես հրավիրված էի հանդիպելու վարչապետ Փաշինյանի հետ և նրա հետ խոսել եմ Ինիշիրլայզդ քափիթալի իմ տեսլականի մասին. թե ինչ ենք մենք տեսնում աշխարհով մեկ սթարթ ափ համայնքների հետ աշխատելով, և թե ինչ «կարժենա» Հայաստանի համար ազգի ուղեղային ներուժից առավելագույնս օգտվել կարողանալու պարագայում:

Ես նրան ասացի, ես երբեք այսքան հպարտ չեմ եղել որքան Թավշյա հեղափոխությունից հետո և նրանց ադմինիստրացիայի կողմից կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների, Հայաստանում ինովացիային և ձեռնարկատիրությանը զարկ տալու և աշխարհով մեկ սփռված մեր համայնքներին միավորելու համար: Ահա այսպիսին է ուժեղ գործադիր ղեկավարությունն այսօր: Դուք

[67]Armenia, Creating Home. https://festival.si.edu/2018/armenia, (մուտք՝ 9.09.2018):

ունեք իմ աջակցությունը» (վերջում Հայաստանի Հանրապետության դրոշն էր պատկերված)[68]:

Հայկական համայնքների հետ հարաբերությունը պետությունը պետք է իրականացնի բազմախողովակ համակարգի միջոցով: Այն չի կարող թելադրվել մեկ կենտրոնի կողմից և ընկալելի և ընդունելի լինի հայկական բազմաթիվ և բազմազան համայնքների համար, հաշվի առնելով նաև հենց տվյալ երկրներում համայնքների մեջ եղած կառույցների միջև դեռ գերիշխող հիերարխիկ և ոչ հորիզոնական հարաբերությունները: Նախկին զուգահեռ գործողությունների անարդյունավետությունը համայնքների ներսում արդեն սպառել է իրեն, և անհրաժեշտ են հորիզոնական կապեր թե՛ համայնքների ներսում, թե՛ Հայաստանի Հանրապետության հետ: Հայաստանի Հանրապետությունը հետհեղափոխական շրջանում արդար, ազնիվ, օրենքի գերակայությամբ երկիր/հայրենիք լինելու հնարավորություն են տեսնում հատկապես ամերիկահայերը. ՀՀ-ը, նման ազդակներ ուղարկելով այսօրվա ցանցայնացված աշխարհում, կարող է ակնկալել համապատասխան արձագանքներ, որոնք էլ պետք է օգտագործվեն բոլոր կողմերի ներուժի և հնարավորությունների արդյունավետ օգտագործման համար:

Հայրենիք-աշխարհասփյուռ համայնքներ փոխհարաբերության լավագույն մոդելը ցանցապետությունն է, որում կապերը հորիզոնական են, որտեղ չկա միակենտրոն տեքստ, սակայն Հայաստանի Հանրապետությունը, որպես հայերի համար ինքնության կարևորագույն հանգրվան, անվտանգության երաշխիք, կարող է լինել համայնքների համար ուղենիշ և գրավչության ցանցային կարևոր մի բջիջ, որն էլ կհանգեցնի նրան, որ համայնքներում բնակվող հայերը կձգտեն դառնալ այդ գրավչության մի մասը, մասնակցել այդ գրավչության առաջընթացին և իրենց

[68] Ալեքսիս Օհանյանի ֆեյսբուքյան հունիսի 28-ի գրառումը տե՛ս՝ https://web.facebook.com/alexis.ohanian/posts/10104413556574056, (մուտք՝ 29.06.2018):

հպարտության և ինքնության մի կարևոր բաղադրիչն էլ հենց կլինի այդ ցանցի մի օղակը լինելը:

Համակարգված ներքին կարգի պարագայում հանգույցների աշխուժությունը՝ հայկական գրավչության ուժեղ ազդակների փոխադարձ առկայության դեպքում, որը պայմանավորված կլինի ոչ միայն ներքին գործունեությամբ, այլև մյուս հանգույցների հետ ազդակների փոխանակմամբ, կհանգեցնի ճիշտ հասցեատերերին գտնել՝ հնարավորություն տալով ցանցի յուրաքանչյուր բջիջի իր պահանջմունքներից ելնելով գործել և ստեղծել ցանցային տատանումներ:

THE REACTIONS OF ARMENIAN COMMUNITY IN THE USA TO THE SPRING EVENTS IN ARMENIA, 2018

Abstract

Tatevik Mkrtchyan
Center for Civilization and Cultural Studies
Yerevan State University
tmkrtchyan@ysu.am

Key words: *Velvet Revolution, identity, USA, Armenian community, net struggle, Glendale, Los Angeles, AGBU, Armenian National Committee of America.*

The Armenian community in the United States today is probably one of the most diverse and important communities in the world and is second only to that of Russia in numbers. Although the number of Armenians in the US is unknown today, speculation puts the number from anywhere between 1.000.000 to 2.000.000. The Armenian community, due to the immigration history and patterns since 1890s until today with undoubtedly the largest Armenian community in Los Angeles, has its influences and influenced itself from the Republic of Armenia.

It is very important to analyze how Armenians of different communities reacted to the spring events happened in Armenia, known as Armenian Velvet

Revolution. This article discusses the reactions of both Armenian traditional institutions and Armenian communities of different states mainly in Los-Angeles (Glendale), Miami (Florida), New York. The events happened in the Armenian communities of US of those days such as mass demonstrations, virtual video and text messages, social media coverage of all these events, financial support from the communities to the revolutionary group in Armenia, travels from the communities to Armenia in order participate in the process itself are important directives of future cooperation model for the post-revolutionary netstate such as Armenia with its worldwide communities.

РЕАКЦИЯ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ США НА ВЕСЕННИЕ СОБЫТИЯ В АРМЕНИИ 2018

Аннотация

Татевик Мкртчян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
tmkrtchyan@ysu.am

Ключевые слова: *Бархатная революция, идентичность, США, армянская община, борьба за сети, Гленде́йл, Лос-Анджелес, ВАБС, Армянский национальный комитет Америки*

Армянская община США на сегодняшний день является одной из наиболее разнообразных и влиятельных общин мира, по численности она уступает лишь армянской общине РФ. Несмотря на то, что точная численность армян в Соединенных Штатах неизвестна, согласно различным данным она колеблется от 1 до 2 миллионов человек. Армянская община США с момента образования в 1890-ых годов и в результате миграционных потоков до сегодняшнего дня имеет самую разнообразную структуру. Армянская община США, в том числе и наибольшая по численности община Лос-Анджелеса, и Армения

оказывали и продолжают указывать друг на друга значительное влияние.

Очень важно проанализировать, как различные армянские общины реагировали на весенние события в Армении, которые известны под названием «бархатная революция». В статье рассматривается реакция, как традиционных армянских институтов, так и армян различных штатов, в частности Глендейла (Лос-Анджелес), Флориды (Майами) и Нью-Йорка. Армянская община США реагировала на события в Армении массовыми демонстрациями, некоторые записывали видео или текстовые сообщения, иные оказывали финансовую поддержку протестующим в Армении. Все это, а также многочисленные представители армянской диаспоры, которые приехали в Армению для непосредственного участия в демонстрациях, являются прекрасной основой будущей кооперационной модели для создания сетегосударства, коим является постреволюционная Армения с многочисленными армянскими общинами в различных точках земного шара.

2018 թ.

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական համալսարան
Ալեք Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ
Հեռ.՝ (37460) 710594
Էլ.փոստ՝ cccs@ysu.am
www.cccsysu.com